



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2361

1867

ԹԻԱՅ ԳՐԱՎԱՐԱՆ

ԴԱՍԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ-ԱԶԳԱՅԻ ԱՅԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՈ

ՀՀՅԱՅԻ ԿՈՐԱՐԱՅՑ

ՀՈՏԱՐ Ա.



ԿԱՅՏԱԿ ԽՈՏՈՎ ԱԿ ՊԵՏՈ  
ՏՊԱԳՐԱԲՐԵՒՆ ՀԱՅԱԿԱՎԱ ԳՅՎԱՅՐԱՆ

1879-80

9(47925)  
4-38

Suray 70/78 = Mugis

Surp = mugicye

9(47-995)

Գ-32 ՄԻԱՅ ԳԱՓԱՄԱԺԵԱՆ

ԿՐ

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

ՀԱՅ-ԱԶԳ Պ-Ա ՅԻՇ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ի Գ Է Ս Ս

Ա Զ Գ Ա Ց Ի Ն Վ Ա Ր Գ Ա Ր Ա Ն Ա Ց

Խ օ չ է  
33202

Հ Ա Տ Ո Ր Ա .



Կ Ո Ս Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Ջ Լ Ի Ս  
Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Յ Ո Վ Ս Ե Փ Ա Յ Գ Ա Ձ Ե Ա Ն

1879

30742-4.2

Ա. Ռ. ԸՆԹԵՐՑՈՂԱՅԻ

Աղգային պատմութեան ներկայ դասագիրքս , զոր  
ի պէտս աղգային վարժարանաց խնամով պատրաս-  
տած եմ , կը նուիրեմ յօգուտ ուսանողաց , և այս  
առթիւ հարկ կը համարիմ երկու խօսք ընել նորա  
ոգւոյն և պարունակութեանը մասին :

Պատմութիւնն , ինչպէս յայտ է , իրաց և դէպ-  
քերու կենդանի նկարագիրն է , որ անցեալը կը ներ-  
կայէ իր ամբողջութեամբն և աղջի մը կեանքը կը  
պատկերէ երկիւզած հաւատարմութեամբ , հետեւա-  
բար պատմութիւնը չոր ու ցամաք դիտութիւն մը  
չէ , ինչպէս կ'ըմբռնեն ոմանք , այլ զիտութեան այն  
կարեւոր ճիւղն է , որ ընկերական բարին ու գեղե-  
ցիկն ուսուցանելու մեծ ու վսեմ պաշտօնն ունի , և  
այսպէս անհրաժեշտ է որ իր յատուկ տեղն ունենայ  
մեր աղգային վարժարանաց ուսմանց հիմնազրին  
մէջ , ու մեծ խնամով և լուրջ ուշադրութեամբ ա-  
ւանդուի աղգային մանկաւոյն , որպէս զի նորա  
մտացն հետ սիրտն հրահանգուի աղգային բարոյա-  
կանութեամբ և կամքը կրթուի , այն է , սիրտն ու  
զգացումներն աղնուանան , մէկ խօսքով Աղջին ու  
Հայրենեաց ծառայելու պատրաստուին :

Աւելորդ է ըսել թէ ներկայ Պատմութեան Դա-  
սագիրքս՝ որ մինչ ի վերջին ժամանակս կը հասնի ,  
ոոյն ոգւով և նպատակաւ պատրաստուած է :

Պատմութիւնս կը բովանդակէ իրաց և դէպքերու  
նկարագրութենէն զատ՝ չին Հայաստանի աշխարհա-  
գրութիւնը , աղգային սովորութիւններ , օրէնսդրու-  
թիւններ , կարգեր , կանոններ՝ որչափ որ կը ներէին

2012

2004

13857-580-

Դասագրքիս դիրքն ու պարունակութիւնը , կրօնքը ,  
արհեստները , վաճառականութիւնն ու միջոցները ,  
և ներքին ու արտաքին քաղաքականութիւնը :

Տեղ տեղ տեսութիւններ աւելցուցի , որ մեծա-  
րոյ Դասատուաց իբր ուղեցոյց կրնան ծառայել :

Պատմութեան Դասագրքիս երկրորդ հատորին  
տպագրութենէն ետեւ՝ մտադիր եմ նախակրթարա-  
նաց համար համառօտ դասագիրք մ'ալ հրատարա-  
կել , որոյ տպագրութիւնն ալ քիչ օրէն սկիտի կրնայ  
աւարտիլ :

Հետեւաբար ներկայ Պատմութիւնս եթէ կարե-  
նայ օգուտ մ'ընծայել ազգային մանկուոյն , և աղ-  
գայնոց կողմէ ընդունելութիւն գտնել , իմ աշխա-  
տութեանս վարձքը լիովին ընդունած սկիտի համա-  
րիմ և համարձակութիւն ստանամ' ուրիշ երկասիրու-  
թիւններ ալ 'ի լոյս ընծայելու :

ԱՅՐՁՆ

Ա. Ա. Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ն Ո Ւ Ե Ր

Տ. Տ. Ն Ե Ր Մ Է Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Վ Ա Բ Ր Փ Ա Պ Ե Տ Ե Ը Ե Ն

Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ա Ն Կ Ո Տ

Ե Ւ

Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ժ Հ Ա Յ Յ Ո Յ

Չ Օ Շ

Վեհիդ մեծանուն, ազգասիրիդ անձնուրաց  
Զերկոց իմ՝ ծընունել գամ՝ նըլիրել՝ ի պարտևաց,  
Զի դու զիտացեր դիպող տովից յերաշխէւ  
Մատնի մասն չափ, կենագործել զհայինած վեպ.  
Թռ զի՞ն գործեցեր, ծանեան ձորս որբ յանել  
Ռ' գմիմ՝ լզգիո հօտ առանց Հովուիդ տեսանել,  
Մակայն զոր ներկայալ քեզ եւ Ազգիդ զըլացաւ  
Յերկունս ապագաց առց ծընունդ, այս վարձ բան:

ԵՐԿԱԾԻՐՈՂՆ

... ՄԻՆԱԼ Է ՓԵՆՏԻ Գ Ա Փ Ա Մ Մ Ա Ը Ե Ա Ն

ՈՂՋՈՑՆ Ի ՔՐԻՍՏՈՆ

Հայ մանկանոյն օգակի եւ դաստիարակութեան մեծ գործին Զերովանն ծառայելու բարի ճպատական Հայոց Պատմութեան դասագիրը մը շարադրել եւ իման նուիրել էք :

Զեր դասագրին մինչեւ Մարգարեաց գլուխը, զոր թերթ առ թերթ իման մատուցիր, կարդալով՝ ուրախ եղայ Զեր աշխատասիրութեան վրայ, կը յուսամ՝ որ ՚ի յանարտ կը հասուցանէիր Զեր գործը Ցեառն յաջողութեամբ՝ ազգասիրական եւ կրօնասիրական ոգի եւ իւանդ միշտ վաս պահելով Զեր այս երկասիրութեան մէջ :

Օրինելով զԶեզ՝ զԶեզ Աստոհոյ եւ Զեր Պատմութիւններ Ազգին կը յանձնարարեն:

1879 Հոկտ. 18  
ի Պատրիարքարանի Հայոց  
ԳԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ  
Կ. Պոլսոյ

Մնամ՝ աղօթարար  
ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ  
Ն Ե Ր Մ Է Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Վ Ա Բ Ր Փ Ա Պ Ե Տ Ե Ը Ե Ն

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐՑ. Ո՞րն է Հայաստանի սահմանը :

ՊՈՏՈՍԻԱՆ. Հայաստանի սահմանն է արեւելքէն կասպից ծովս ու Պարսից երկիրը . հարաւեն Ասորեստան , Միջագետք , Ասորիք ու կիլիկիա . արեւմուտքէն Փոքր-Ասիա ու հիւսիսէն Խաղտիք , Կողքիս , Վիրք և Աղուանք :

Հ. Հայաստան աշխարհը երկրագընտիս ո՞ր աստիճաններուն ներքե կիյնայ :

Պ. 52-67 երկայնութեան և 36-42 լայնութեան աստիճաններուն մէջ կիյնայ :

Հ. Հայաստանի ընդարձակութիւնը ո՞րքան կը հաշուի :

Պ. Հին աշխարհագիրներէն ոմանք աւելի և ոմանք պակաս կը դնեն , բայց հիմակուան ճիշդ հաշիւներուն նայելով՝ 18-20,000 քառակուսի աշխարհագրական մղոն ( Գերմանական ) է :

Հ. Հայաստանի լեռներուն մէջ գլխաւորները որո՞նք են :

Պ. Հայաստանի լեռներուն մէջ գլխաւորներն են Արարատ կամ Մասիս լեռը , Կորդուաց լեռնք , Տաւրոս լեռանց մէկ մասն , որ իր հարաւային սահմանին վրայ է , և Անտիոքոս ( Փոքր Հայաստանի մէջ ) :

Հ. Ասոնցմէ զատ ուրիշ լեռներ ալ կա՞ն :

Պ. Կան ուրիշ փոքր լեռներ ալ , ինչպէս են

Արագած, Սուկաւէտ, Նպաստ, Գեղ, Ծաղկաց  
Եւառն, Վարագ, Սիմեոնյն:

Հ. Որո՞նք են Հայաստանի մեծ գետերը:

Պ. Հայաստանի մեծ գետերն են Եփրատ կամ  
Արածանի, Տիգրիս կամ Դվլաթ, Երասխ, Կուր  
և Ճորոխ:

Հ. Կան ասոնցմէ զատ ուրիշ գետեր ալ:

Պ. Ասոնցմէ զատ կան նաև Փոքր գետեր ալ,  
որք են Ալիս ու Մելսո, (Փոքր-Հայոց մէջ) Գայլ  
գետ, Ախուրեան, Քասախ և Տղմուտ:

Հ. Հայաստանի լիճերը որո՞նք են:

Պ. Հայաստան գլխաւոր երկու մեծ լիճ ունի,  
որք են ծով Բինունեաց կամ Ոշտունեաց (Վա-  
նայ ծով) և ծով Գեղամայ: Ասոնք ինչպէս անու-  
նէն կ'երեւայ, խիստ մեծ ըլլալնուն համար ծով  
կը կոչուին:

Ասոնցմէ զատ կայ նաև կապուտան կամ Որ-  
միայ ծովը, որ Հայաստանի արեւելեան-Հարա-  
ւային սահմանին վրայ է:



## ԲԱԺԱՆՄՈՒԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հ. Հայաստան գլխաւոր քանի՛ մաս կը բաժ-  
նուի:

Պ. Հայաստան գլխաւորաբար երկու մաս կը  
բաժնուի, այսինքն Փոքր-Հայք և Մեծ-Հայք:

## ՓՈՔՐ-ՀԱՅՔ

Հ. Ո՞րն է Փոքր-Հայոց սահմանը:

Պ. Փոքր-Հայք սահմանակից է արեւելքից Մեծ  
Հայոց, հարաւէն Ասորւոց ու կիլիկիայի, արեւ-  
մուտքից բուն կապաղովկիոյ և հիւսիսէն Պողէ-  
մոնիական կապաղովկացւոց ու Պոնտոսի:

Հ. Որո՞նք են Փոքր-Հայոց գլխաւոր լեռները:

Պ. Փոքր-Հայոց գլխաւոր լեռներն են Անտի-  
տաւրոս լեռանց շարքը:

Հ. Որո՞նք են Փոքր-Հայոց գլխաւոր գետերը:

Պ. Փոքր-Հայոց գլխաւոր գետերն են Մելսո  
և Ալիս:

Հ. Փոքր-Հայք քանի՛ նահանդ կը բաժնուի:

Պ. Փոքր-Հայք չորս նահանդի կը բաժնուի.

1. Առաջին Հայք, 2. Երկրորդ Հայք, 3. Երրորդ  
Հայք, 4. կապաղովկիա:

Հ. Ո՞ւր կիյնայ Առաջին Հայք:

Պ. Փոքր Հայաստանի մէջտեղը:

Հ. Որո՞նք են գլխաւոր քաղաքները:

Պ. Առաջին Հայոց գլխաւոր քաղաքներն են  
Մելիտինէ, Սամոսատա և այլն:

Հ. Երկրորդ Հայքն ուր է:

Պ. Կիլիկիոյ հիւսիսային կողմն է, որ Տաւրոս  
լեռանց շղթայովը կը բաժնուի:

Հ. Որո՞նք են գլխաւոր քաղաքները:

Պ. Գլխաւոր քաղաքն է կոկիսոն:

Հ. Երրորդ Հայքն որ կողմն է:

Պ. Փոքր-Հայոց հիւսիսային մասը կ'ենայ:

Հ. Որո՞նք են գլխաւոր քաղաքները:

Պ. Գլխաւոր քաղաքներն են Սեբաստիա, Նի-  
կոպօլիս և այլն:

Հ. Կապադովիկիան ուր կիյնայ :

Պ. Կապադովիկիա կամ Գամիրք կոչուած նահանգն Հայաստանի արեւմտեան ծայրն է :

Հ. Որո՞նք են գլխաւոր քաղաքները :

Պ. Կապադովիկիոյ գլխաւոր քաղաքներն են Մաժաք կամ կեսարիա, Նազիանզ, Եւդոկիա ևն :

### ՄԵՇ-ՀԱՅՔ

Հ. Ո՞րն է Մեծ-Հայոց սահմանը :

Պ. Մեծ-Հայոց սահմանն է արեւելքէն կասպից ծովս ու Պարսից (յառաջագոյն Մարաց) Ատրպատական նահանգը, արեւմուտքէն՝ Փոքր Հայք, Հիւսիսէն՝ Կողքիս, Վիրք և Աղուանք, հարաւէն՝ Ասորիք, Միջադետք և Ասորեստան :

Հ. Բոլոր Մեծ-Հայք քանի նահանգ կը բաժնուի :

Պ. Մեծ-Հայք տասն և հինգ նահանգ կը բաժնուի, որք են

1. Բարձր Հայք
2. Չորրորդ Հայք
3. Աղձնիք
4. Տուրուբերան
5. Մոկք
6. Կորճայք
7. Պարսկահայք
8. Վասպուրական
9. Արցախ
10. Սիւնիք
11. Փայտակարան

12. Ուտի

13. Գուգարք

14. Տայք

15. Այրարատ

### ԲԱՐՁՐ-ՀԱՅՔ

Հ. Բարձր-Հայք Հայաստանի որ կողմն է :

Պ. Մեծ-Հայոց հիւսիսային-արեւմտեան ծայրն է :

Հ. Դիրքն ինչպէս է :

Պ. Շատ բարձր ըլլալուն ամեն կողմ մեծ ու պղտիկ գետեր կ'արձակէ, որոց մէջ գլխաւորներն են Եփրատ, Երասխ ու Ճորոշ :

Այս նահանգին մէջ շատ մը ներմուկներ կան:

Հ. Բարձր-Հայոց նահանգը քանի գաւառ կը բաժնուի :

Պ. Ինը . 1. Գարանաղի, 2. Առիւծ, 3. Մընձուր, 4. Եկեղեց, 5. Մանանաղի, 6. Դերջան, 7. Սպեր, 8. Շատգոմք և 9. Կարին :

Հ. Դարանաղի գաւառին գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Դարանաղեց գլխաւոր քաղաքներն են Անի, Թորդան և այն :

Հ. Դարանաղեց գաւառին վրայ մասնաւոր բնէ գիտելիք կայ :

Պ. Այս գաւառին մէջն է Մանեայ այրք ըսուած տեղն, ուր Ս. Կղիբոր Լուսաւորիչ վախճանեցաւ . հոս է նաև Սեպուհ կոչուած լեռը :

Հ. Եկեղեց գաւառին գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Երիշն կամ Երիզայ, Խախ, Թիշն աւան,  
Զըմէս, Վասակերտ և այլն :

Հ. Դերջանի մէջ ո՞ր գլխաւոր դիւղը կայ :

Պ. Բագայառինջ :

Հ. Սպեր դաւառին մէջ ո՞ր գլխաւոր քաղաք-  
ները կան :

Պ. Սմբատաւան, Բաբերդ :

Հ. Կարնոյ դաւառին մէջ ո՞ր գլխաւոր քաղաք-  
ներն ու դիւղերը կան :

Պ. Կարին որ Բարձր-Հայոց ամենէն մեծ դա-  
ւառն է, գլխաւոր քաղաքն է Կարնոյ քաղաքը,  
որ միանդամայն թէոդուպօլիս ալ կը կոչուի : Այս  
դաւառը շատ մը գիւղեր ալ ունի, որոց մէջ ան-  
ուանի են Մարադ, Արծաթի և Արածն կոչուած  
դիւղերը :

#### ՉՈՐՐՈՐԴ-ՀԱՅՔ

Հ. Զորբորդ-Հայքն Հայաստանի ո՞ր կողմը կի-  
նայ :

Պ. Բարձր-Հայոց հարաւային կողմը, և արեւ-  
մուտքէն սահմանակից է Երկրորդ-Հայոց, արե-  
ւելքէն՝ Տուրուքերան նահանգին, և հարաւէն՝  
Աղձնեաց :

Հ. Զորբորդ-Հայոց լեռներուն վրայ ի՞նչ դի-  
տելիք կայ :

Պ. Այս նահանգին լեռներուն մէջ որութեալ, որութեալ  
հանքեր կան :

Հ. Զորբորդ-Հայք քանի՞ դաւառ ունի :

Պ. Ութը. 1. Խորձն, 2. Հաշտեանք, 3. Պաղ-

նատուն, 4. Բալահովիտ, 5. Ծոփք, 6. Հանձիթ,  
7. Գորէք, 8. Դէղիք :

Հ. Խորձէնի մէջ ո՞ր դիւղը կայ :

Պ. Մորմորանս դիւղը :

Հ. Հաշտենից մէջ :

Պ. Մուշեղայ, Ոլորայ և Գիրեհ դիւղերը :

Հ. Պաղնատան մէջ :

Պ. Պաղին բերդը :

Հ. Ծոփքի մէջ :

Պ. Ծոփք՝ Զորբորդ-Հայոց նահանգի ամենէն  
մեծ դաւառն է, և որոյ գլխաւոր քաղաքն է  
Մարտիրոսաց քաղաքը կամ Նվիրկերտ. ասկէ զատ  
կան նաև Մամբէ, Բնաբեղ, Կարկատակերտ և  
այլն քաղաքները :

#### Ա. Դ Ձ Ն Ի Ք

Հ. Աղձնեաց նահանգն ուր կիյնայ :

Պ. Մեծ-Հայոց հարաւային-արեւմտեան կող-  
մը, և հիւսիսէն սահմանակից է Զորբորդ-Հայոց,  
հարաւէն՝ Ասորուոց երկրին ու Միջազետաց: Բեր-  
քերն են երկաթ, նաւթ ու դիմոր:

Հ. Աղձնեաց նահանգը քանի՞ դաւառ կը բաժ-  
նուի :

Պ. Տասը. 1. Արդն, 2. Նվիրկերտ, 3. Ֆեղ, 4.  
Կեթիկ, 5. Տատիկ, 6. Աղնուածոր, 7. Խերհեթք,  
8. Գղեղ, 9. Սանոձոր կամ Սալնոյ ձոր, 10. Սա-  
սուն:

Հ. Աղձնեաց նահանգին դիւղաւոր քաղաքը  
ո՞րն է :

Պ. Աղձնեաց նահանգին դիւղաւոր քաղաքն է

Տիգրանակերտ, զոր Տիգրան Ա. շինած է . գիւ-  
ղերուն մէջ ալ երեւելի է բառաէջ աւանը :

### ՏՈՒՐՈՒԹԵՐԱՆ

Հ. Տուրուրերան նահանդն Հայաստանի ո՞ր  
կողմը կիյնայ :

Պ. Տուրուրերան նահանդը Չորրորդ-Հայոց ա-  
րեւելեան կողմը կիյնայ . բերքերն են գաղպէ ,  
մեղք , մաշկամիրդ ( հաւանականաբար շագա-  
նակ ) երկաթ և ճերմակ նաւթ :

Այս նահանդին մէջ է բզնունեաց ( վանայ )  
ծովը :

Հ. Տուրուրերան նահանդը քանի՞ գաւառի կը  
բաժնուի :

Պ. Տամն և վեց . 1. Խոյթ , 2. Ասպակունիք ,  
3. Տարօն , 4. Աշմունիք , 5. Մարդաղի , 6. Դաս-  
նաւորք , 7. Տուարածատափ , 8. Դալառ , 9. Հարք ,  
10. Վարաժնունիք , 11. Բզնունիք , 12. Երեւարք ,  
13. Աղիովիտ , 14. Ապահունիք , 15. Կոր , 16. Խոռ-  
խոռունիք :

Հ. Տուրուրերան նահանդին մեծ գաւառը  
ո՞րն է :

Պ. Տարօն :

Հ. Գլխաւոր քաղաքներն ու գիւղերը որո՞նք են:

Պ. Գլխաւոր քաղաքներն են Յաշտիշատ , Վի-  
շապ , Մծուրք և Զիւնկերտ . իսկ գիւղերն են  
Հացեկք , Ծաղիկ , Կուառս , Գոմկունք , Մեղտի ,  
Խորնի և Կուառս . նաև Մուշ և Մեղտի աւան-  
ներն ու Ռդկան բերդը :

Հ. Աշմունիք գաւառի գլխաւոր քաղաքը ո՞րն է :

Պ. Երիղ քաղաքը :

Հ. Հարք գաւառին գլխաւոր քաղաքը ո՞րն է :

Պ. Մանաւազակերտ կամ Մանազկերտ քաղա-  
քը :

Այս գաւառին մէջ է մեր Հայկ նահապետին  
շինած առաջին գիւղն՝ Հայկաշէն , և Հերեան  
գիւղը :

Հ. Բզնունեաց գաւառն ո՞ւր կիյնայ :

Պ. Վանայ ծովուն քովերը կիյնայ բզնունեաց  
գաւառը , և Վանայ ծովն ալ այս գաւառին ան-  
ուամբն յառաջագոյն բզնունեաց ծով կը կոչուէր :

Հ. Աղիովիտ գաւառին վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Առաջին Արտաւազդին ( Տիգրան երկրոր-  
դին որդւոյն ) ատենն այս գաւառը թագաւորա-  
կան ցեղի գաւառ եղաւ , որովհետեւ Արտաւազդ  
եր եղբայրներն ու քոյրերն հոս բնակեցուց :

Հ. Աղիովիտ գաւառին գլխաւոր քաղաքը ո՞րն  
է :

Պ. Զարիշատ . հոս է նաև Արճէշ քաղաքը :

Հ. Ապահունեաց գաւառին մէջ ո՞ր գլխաւոր  
գիւղը կայ և հոն ի՞նչ պատահած է :

Պ. Այս գաւառին մէջ էր Դալարիս կամ Ածուղ  
գիւղն՝ ուր Պարսիկք Տիգրան Բ. թագաւորին աշ-  
ուլներն հանեցին :

### Մ Ա Կ Ք

Հ. Մոկք նահանդն ո՞ւր կիյնայ :

Պ. Աղձնեաց նահանդին արեւելեան կողմը , ու-

ըու սահմանակից է Տաւրոս լեռանց մեկ մասը :  
Բերքերն են մանրագոր ու կաքաւ :

Հ. Մոլաց նահանգը քանի՞ դաւառ կը բաժնուի :

Պ. Ինը . 1. Խշայր , 2. Միւս Խշայր , 3. Խոց գաւառ , 4. Առուենից ձոր , 5. Միջայ , 6. Առանձնակ Մոկք , 7. Արքայից դաւառ , 8. Արդաստովիտ , 9. Զերմաձոր :

#### ԿՈՐՃԱՍՔ

Հ. Կորճէից նահանգն ուր կիյնայ :

Պ. Կորճէից նահանգը Մոկաց նահանգին արեւելեան կողմն է . հարաւէն՝ Ասորեստանի և հիւսիսէն՝ Պարսկահայոց սահմանակից է :

Այս նահանգին մէջն է Կորդուաց լեռանց շրթայն , որ իր անունը Կորդուք գաւառէն առած է : Գլխաւոր բերքն է զառիկ :

Հ. Կորճէից նահանգը քանի՞ դաւառ կը բաժնուի :

Պ. Տասն և մէկ դաւառ . 1. Կորդուք , 2. Վերին Կորդուք , 3. Միջն Կորդուք , 4. Ներքին Կորդուք , 5. Այտուանք , 6. Այդառք , 7. Մորթողանք , 8. Որսիրանք , 9. Կարաթունիք , 10. Ճահուկ , 11. Փոքք Ազքակ :

Հ. Կորդուաց դաւառին բնակչացը վրայ ի՞նչ դիտելիք կայ :

Պ. Այս դաւառին բնակիչներն այնքան անուանի են , որ ուրիշ պատմագիրներ զանոնք իրեւ ուրոյն թագաւորութիւն կը յիշատակեն :

#### ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

Հ. Պարսկահայք նահանգն ուր կիյնայ :

Պ. Կորճէից արեւելեան-հիւսիսային կողմը , Առըրպատական նահանգին քովը կիյնայ :

Հ. Պարսկահայք նահանգը քանի՞ դաւառ կը բաժնուի :

Պ. Ինը դաւառ կը բաժնուի , որք են 1. Այլի կամ կուրիճան , 2. Մարի , 3. Թբափի , 4. Ացուերս , 5. Ըսնայ , 6. Տամբերս , 7. Զարեհաւան , 8. Զարեւանդ , 9. Հեր :

#### ՎԱՍՊՈՒԻՐԱԿԱՆ

Հ. Վասպուրական նահանգն ուր կիյնայ :

Պ. Վասպուրական՝ որ Հայաստանի ամենէն մեծ նահանգն է , Պարսկահայոց հիւսիսային-արեւմըտեան և Այրարատ նահանգին հարաւային կողմը կիյնայ :

Հ. Քանի՞ դաւառ կը բաժնուի :

Պ. Երեսուն և վեց . 1. Ռշտունիք , 2. Տոսք , 3. Բաղունիք , 4. Արճիշակովիտ , 5. Աղովիտ , 6. Կուղանովիտ , 7. Առբերանի , 8. Դառնի , 9. Բուժունիք , 10. Առնյոսան , 11. Անձեւացիք , 12. Առըրպատունիք , 13. Երիթաւնիք , 14. Մարդաստան , 15. Արտաղ կամ Շաւարշան , 16. Ակէ , 17. Աղբակ մեծ , 18. Անձախաձոր , 19. Թոռնաւան , 20. Ճուաշ , 21. Ռոտկրճունիք , 22. Մեծնունիք , 23. Պալունիք , 24. Գուկան , 25. Աղանդոստ , 26. Պատսպարունիք , 27. Արտաշէղեան , 28. Արտաւանեան , 29. Բաքան , 30. Գարիթեան , 31. Գաղ-

ըիկեան , 32. Տանկրիայն , 33. Վարաժնունիք , 34.  
Գողթն , 35. Նախճուան , 36. Մարանդ :

- Հ. Ո՞ւր կիյնայ Ռշտունեաց գաւառը :
- Պ. Բզնունեաց (վանայ) ծովուն քովերը :
- Հ. Որո՞նք են դլխաւոր քաղաքները :
- Պ. Մանակերտ , Ռստան և այլն :
- Հ. Այս գաւառին մէջ ի՞նչ պատմական շէնքեր  
կան :

Պ. Նարեկայ վանքը և Բղնունեաց ծովուն մէջ  
ալ Աղթամարայ վանքն , ուր կը նստի Աղթամա-  
րայ կաթողիկոսը :

Այսձաքեարս կոչուած լեռն ալ նոյն ծովուն  
քովերն է :

- Հ. Տոսր գաւառն ուր կիյնայ :
- Պ. Բզնունեաց ծովուն արեւելեան կողմը :
- Հ. Ո՞րն է դլխաւոր քաղաքը :
- Պ. Շամիրամակերտ՝ որ նաև վան ալ կը կոչ-  
ուի : Ունի բազում դիւղեր , որպէս են Արտա-  
մէտ , Ահեւականից և այլն :

Այս գաւառին մէջ է նաև Վարագայ լեռն ու  
համանուն վանքը , որ հայրենանուէր Խրիմեանի  
վանահայրութեան օրով խիստ արդիւնաւոր և  
Ազգին օգտակար եղած է ընտիր աշակերտներ  
հասցնելով : Խրիմեանի բաղմարդիւն Սըծուի վաս-  
պուրականն ալ հոս հրատարակիլ սկսած է :

Հ. Առբերանի գաւառին դլխաւոր քաղաքը  
ո՞րն է :

- Պ. Բերկրի քաղաքն և Առեստ անուն դիւղը :
- Հ. Արտազ գաւառն ուր կիյնայ :
- Պ. Այրարատ լեռն արեւելեան-հարաւային

կողմերը : Գլխաւոր քաղաքն է Շաւարշան . իսկ  
դիւղերն են Աւարայր , Ներսեհապատ և Եղինդ :

- Հ. Գողթն գաւառն ուր կիյնայ :
- Պ. Երասխ գետին քովը . խիստ ընտիր գինի ու-  
նի և ժամանակաւ ազգային երգիչներ ու բա-  
նաստեղծներ շատ կային :

Այս գաւառին մէջն է ձուղայ կամ ջուղայ  
աւանն՝ որ հիմա չին-ջուղայ կ'անուանի :

- Հ. Նախճուան գաւառն ուր կիյնայ :
- Պ. Երասխ գետին քովերը . գլխաւոր քաղա-  
քը նոյնպէս Նախճուան կամ Նախիջեւան կը կոչ-  
ուի :

### Ս Ի Ւ Ն Ի Ք

- Հ. Սիւնեաց նահանգն ուր կիյնայ :
- Պ. Այրարատ գաւառին արեւելեան կողմը ,  
Երասխ գետին և Արցախ նահանգին մէջ , և շատ  
ամուր տեղեր ունի :

Հ. Սիւնեաց նահանգը քանի՞ գաւառ ունի :

- Պ. Տան և Երկու , որք են 1. Երնջակ , 2. Ճա-  
հուկ , 3. Վայոց Ճոր , 4. Գեղարքունի , 5. Ռատք ,  
6. Աղահէճք , 7. Ծողակ , 8. Հաբանդ , 9. Բաղք ,  
10. Ջորք , 11. Արեւելք , և 12. Կուսական :

Հ. Գեղարքունեաց գաւառին վրայ ի՞նչ դի-  
տելիք կայ :

- Պ. Այս գաւառին մէջ է Գեղամայ ծովս , որ  
Սեւան անունով կղզի մ'ալ ունի և Գեղ լեռը :  
Դլխաւոր տեղն է Գեղամի , զոր Գեղամնահապե-  
տը շինեց , և յետոյ իր գառնուկ կամ գառնիկ  
անուն թոռան անունովը գառնի կոչուեցաւ :

Հ. Երնջակ և Բաղր գաւառաց վրայ ի՞նչ դիմելիք կայ :

Պ. Երնջակ գաւառը համանուն բերդ մ'ունի .  
Նոյնպէս Բաղր գաւառն ալ Բաղաբերդ անունով  
Երեւելի բերդ մ'ունի :

### Ա Ր Ց Ա Խ

Հ. Արցախ նահանգն ուր կիյնայ :

Պ. Սիւնեաց նահանգին արեւելեան կողմը , և  
շատ անտառներ ունի :

Հ. Արցախ նահանգը քանի՞ գաւառ ունի :

Պ. Տասն և երկու , որք են 1. Միւս Հարանդ ,  
2. Վայկունիք , 3. Բերդաձոր , 4. Մեծկուանք ,  
5. Մեծիրանք , 6. Հարճանք , 7. Մուխանք , 8.  
Պիանք , 9. Պարծկանք , 10. Սիսական Ռատան , 11.  
Քուստիփառնէս , և 12. Կողթ :

### Փ Ա Յ Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Հ. Փայտակարան նահանգն ուր կիյնայ :

Պ. Երասխ գետին քովը և արեւելքէն սահ-  
մանակից է կասպից ծովուն և արեւմուտքէն՝ Ու-  
տի նահանգին :

Այս նահանգին բերքերուն մէջ Երեւելի է  
բամպակը , որ շատ առատութեամբ կ'արտադրի .  
ունի նաև տեսակ մը ինքնիրեն բումնող դարի ալ :

Հ. Փայտակարան նահանգը քանի՞ գաւառ ու-  
նի :

Պ. Տասն և երկու , որք են 1. Հրաքոտպերոժ ,  
2. Վարդանակերտ , 3. Եօթնփորակեան բագինք ,  
4. Ռոտիրազա , 5. Բաղանոսոտ , 6. Առոսպիժան ,

7. Հանի , 8. Աթլի , 9. Բագաւան , 10. Ապանդա-  
րամապերոժ , 11. Որմղղպերոժ , և 12. Ալեւան :

Այս նահանգին դվաստոր քաղաքն է Փայտա-  
կարան :

### Ո Ւ Տ Ի

Հ. Ուր կիյնայ Ուտի նահանգը :

Պ. Արցախ նահանգին և կուր գետին մէջ՝ Ե-  
րասխայ արեւմուեան կողմը :

Հ. Ուտի նահանգը քանի՞ գաւառ կը բաժնուի :

Պ. Եօթը . 1. Առանոսոտ , 2. Տոկի , 3. Ոռտ-  
պացեան , 4. Աղուէ , 5. Տուչքասակ , 6. Գարդ-  
ման , և 7. Ուտի առանձնակ :

Հ. Ուտի առանձնակ գաւառուն մէջ ո՞ր դվաս-  
տոր քաղաքը կայ :

Պ. Պարտաւ անուն Երեւելի քաղաքն ու Խաղ-  
խաղ և այլն :

### Գ Ո Ւ Գ Ա Ր Ք

Հ. Գուգարք նահանգն ուր կիյնայ :

Պ. Ուտի նահանգին արեւմուեան կողմը . հա-  
րաւէն սահմանակից է Այրարատ նահանգին և  
հեւսիէն Վրաստանին :

Հ. Գուգարաց նահանգը քանի՞ գաւառ ունի :

Պ. Ինը . 1. Զորափոր , 2. Ծորափոր , 3. Կող-  
բափոր , 4. Տաշիր , 5. Թոռեղք , 6. Կանդարք , 7.  
Արտահան , 8. Ջաւախսք , և 9. Կղարջք :

Հ. Զորափոր գաւառին մէջ ո՞ր անուանի գիւ-  
ղը կայ :

Պ. Արքունաշէն գիւղն ու կայեան բերդը :

Հ. Տաշիր գաւառին մէջ ո՞ր գլխաւոր քաղաք-ները կան :

Պ. Շամշողդէ և Լոռի քաղաքներն ու Բզնունիք և Օձուն գիւղերը :

Հ. Կանդարք գաւառին մէջ յիշատակութեան արժանի լինչ կայ :

Պ. Լեռոն մթին կոչուած լեռը :

### ՑԱՅՔ

Հ. Տայք նահանդն ուր կիյնայ :

Պ. Արեւելքէն գուգարք նահանդին, հարա-էն, Այրարատայ և հիւսիսէն՝ կողքիսի սահմանակից է. շատ բերդեր և ամրոցներ և պատուական մրգեղէն ունի :

Հ. Տայք նահանդը քանի՞ գաւառ ունի :

Պ. Տայք նահանդն ինը գաւառ ունի, որք են 1. կող, 2. Բերդացփոր, 3. Պարտիզացփոր, 4. ձակք, 5. Բուխա, 6. Ոքաղէ, 7. Ազորդ, 8. Կափոր, և 9. Ասեացփոր :

Հ. Տայք նահանդին գլխաւոր տեղերը որո՞նք են :

Պ. Հաւաճիչ, Մկնայառինջ, Արահեղ, Զենակը և Որջնահաղ գիւղերն ու Երախանի բերդը :

### ԱՅՐԱՐԱՑ

Հ. Այրարատ նահանդին սահմաններն որո՞նք են :

Պ. Այրարատ նահանդը՝ որ Հայ թագաւորաց սեպհական երկիրն էր, արեւելքէն սահմանակից է Սիւնեաց ու Վասպուրական նահանդներուն,

արեւմուտքէն՝ Բարձր-Հայոց, հարաւէն՝ Տուրուքերանին ու Վասպուրականին և հիւսիսէն Տայոց և Գուգարաց :

Հ. Որո՞նք են այս նահանդին գլխաւոր լեռներն ու գետերը :

Պ. Գետերն են Երասխ ու Քասախ. Գայլոտայ ծովակ անունով պղտի լիճ մալ ունի. իսկ գըլխաւոր լեռներն են Այրարատ՝ (Մասիս) որոյ անունով կը կոչուի նաև բոլոր նահանդը, Արագած, Նզատ, Սուկաւէտ և այլն: Բերքերուն մէջ երեւելի է Որդան ըսուած կարմիր ներկը՝ որ կարմիր որդ մէ. ասկից զատ՝ զանազան անասուններ, թռչուններ, պտուղներ և հանքեր ունի:

Այս նահանդին մէջ է մեր ազգային կծմրածնայ եկեղեցին և վանքը, ուր կը նստի ամենայն Հայոց Ա. Կաթողիկոսը :

Հ. Այրարատ նահանդը քանի՞ գաւառ ունի:

Պ. Քասան գաւառ ունի, որք են, 1. Բասեն, 2. Գարեղեանք, 3. Արեղեանք, 4. Վահեւունիք, 5. Արշարունիք, 6. Բագրեւանդ, 7. Ծաղկոտն, 8. Շիրակ, 9. Վանանդ, 10. Արագածոտն, 11. Ճակատք, 12. Մասեացոտն, 13. Կոդովիտ, 14. Աշոցք, 15. Նիդ, 16. Կոտայք, 17. Մաղաղ, 18. Վարաճնունիք, 19. Ջատան, և 20. Դուին :

Հ. Բասեն գաւառին մէջ ո՞ր գիւղերը կան :

Պ. Վաղարշաւան, Որդորու, Ոսխայ, Ալվար, Դու, Բողբերդ, Աւկամի և Գոմաձոր և այլն :

Հ. Արշարունեաց գաւառին մէջ ո՞ր գլխաւոր քաղաքներն ու գիւղերը կան:

Պ. Երուանդաշատ, Բագարան և Երուանդակերտ քաղաքներն ու Սրբագերս և կապրյութերդերն ու Շիրմաց գիւղը և կազզուան. Հոսէ նաեւ Ծննդոց կոչուած անտառն և Երուանդաւան կամ Մարաց մարդ գաշտը, որուն վրայ պատմութեանս կարգին մէջ պիտի խօսինք:

Հ. Բագրեւանդայ գաւառին մէջ ի՞նչ նշանաւոր տեղեր կան:

Պ. Բագրեւանդ՝ որ Բասեն և Արշարունեաց գաւառներուն մէջ է, ունի նպատ լեռը: Քաղաքներն են Զարեհաւան և Վաղարշակերտ. իսկ գիւղերն ու աւաններն են՝ Բագաւան կամ Դիցաւան, Բլուր՝ ուր Ս. Սահակ վահիճանեցաւ, Եղեգեակ, Զիրաւ, Բերդկունք, Խու, Արծեակ և այլն:

Հ. Ծաղկուն գաւառին վրայ ի՞նչ գիտելիք կայ:

Պ. Ծաղկուն գաւառին մէջ է Շահապիվան լեռը, որ Հայոց զօրաց բանակատեղին էր:

Այս լերան վրայ Վարշակիի ջերմուկք անունով ջերմուկ մը կայ:

Հ. Շիրակ գաւառին վրայ ի՞նչ գիտելիք կայ:

Պ. Շիրակ բարեբեր գաւառ մ'է, որոյ գլխաւոր քաղաքն է Շնի. իսկ գիւղերն են Երազդաւորք, Որմուանի, Արդինայ և այլն:

Հ. Վանանդ գաւառին վրայ ի՞նչ գիտելիք կայ:

Պ. Վանանդ գաւառին գլխաւոր քաղաքն է Կարս, ուր քրիստոնէութեան տասներորդ գա-

րուն պղտի թագաւորութիւն մ'ակսաւ և կոչուեցաւ թագաւորութիւն կարուց: Վանանդ գաւառի միւս քաղաքներն ու գիւղերն են Զարիշատ քաղաք և Խնեւանից, Ոդմուռ և Դրապաշտ գիւղ և այլն:

Հ. Արագածոտն գաւառին վրայ ի՞նչ գիտեմք կայ:

Պ. Արագած լերան քովիերն ըլլալուն համար այս գաւառն ալ նոյն լերան անունովն Արագածոտն կոչուեցաւ, որոյ գիւղերն ու աւաններն են Աղքք և Կուաշ աւան և Օշական, Թալին, Վըժան, Եղիվարդ և այլն գիւղերը:

Հ. Ճակատք գաւառին մէջ ո՞ր գլխաւոր գիւղը կայ:

Պ. Այս գաւառին գլխաւոր գիւղն է Կողը:

Հ. Մասեացոտն գաւառին մէջ ո՞ր գլխաւոր գիւղը կայ:

Պ. Այս գաւառին մէջ որ Արարատ լերան քովիերն է, Ակոսի գիւղը կայ:

Հ. Կոդովիտ գաւառն ո՞ւր կիյնայ:

Պ. Մասեացոտն ու Ծաղկուն գաւառներուն սահմանակից է: Գլխաւոր տեղերն են Դարին կամ Դարեւնից բերդ, Արծափ գիւղ և այլն:

Այս գաւառին մէջ շինուեցաւ Արշակաւանը, որուն պատմութիւնը տես պատմութեանս ընթացքին մէջ:

Հ. Նիդ գաւառին գլխաւոր տեղուանքը ո՞րնէք են:

Պ. Բջնի քաղաքն ու Փառամահակերտ գիւղը:

Հ. կոտայք գաւառին գլխաւոր տեղերը որո՞նք են :

Պ. կոտայք գաւառին գլխաւոր քաղաքն է Երեւան . իսկ գիւղերն են Այլաբերից , Ովսյից , Զագ և այլն :

Հ. Մազաղ գաւառին գլխաւոր տեղերը որո՞նք են :

Պ. Բերդկունք կամ Գիւղ Բերդկաց և կակազյ գիւղերը :

Հ. Դուին գաւառին մէջ ո՞ր գլխաւոր տեղերը կան :

Պ. Դուին և Մարակերտ քաղաքները :

Այս գաւառին մէջ է Շարուրայ դաշտն ու Խոսրով երկրորդին տնկած երկու անտառներն , որք Խոսրովակերտ և Տաճար Մայրի կանուանէին :

Հ. Այրարատ գաւառին գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Վաղարշապատ , Արտաշատ և Արմարի քաղաքները . այս վերջինը թագաւորանիստ մայրաքաղաք էր . իսկ գլխաւոր գիւղերն են Ընջին կամ Արդեանս , Արած ու Արկովի :

Հ. Արտաշատ քաղաքին մօտ յիշատակութեան արժանի ինչ չէնքեր կային :

Պ. Անահտայ Երազամոյն կամ Երազացոյց կոչուած մեհեանը :

Հ. Ներկայ պատմութեանս մէջ յիշուած քաղաքներէն ու գիւղերէն զատ ուրիշ քաղաքներ և գիւղեր չկային Հայաստանի մէջ :

Պ. Ասոնցմէ զատ շատ մը քաղաքներ և գիւ-

ղեր ալ կային հարկաւ , բայց անուննին պատմութեանց մէջ յիշատակուած չըլլալուն համար մեղի անծանօթ մնացած են . իսկ այն անունները՝ զորս յիշատակեցինք պատմութեանս մէջ , Մովսէս Խորենացիին աշխարհագրութենէն և ուրիշ հաւատարիմ պատմագիրներէ առնուած են : Նոյնպէս պէտք է իմանալ նաև բերքերուն և կենադանեաց համար , յորոց ոմանք այսօր զանազան դժբաղդ պատճառներով պակսած են և աւելցածներ ալ կան :

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԽ ՀԱՅՈՑ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ

Հ. Ո՞րպիսի է Հայաստանի դերքն ու կլիման :

Պ. Որովհետեւ Հայաստանի մակերեւոյթը միակերպ չէ , և ըստ որում Հայաստան աշխարհի մէջ կան այնպիսի տեղեր որ բարձր են , և կան ալ՝ որ ցած , և թէ երկիրն արդէն լեռնային է , այս պատճառաւ ալ Հայաստանի բերքերը և կլիման զանազան տեղեր իրարմէ տարբեր են , թէև Հայաստանը բարեխառն գոտիին ներքեւ կիյնայ :

Հ. Այս պատճառէն ի՞նչ արդիւնք յառաջ եկած է :

Պ. Սա արդիւնքն յառաջ եկած է որ Հայաստանի շատ կողմերը կան այնպիսի կենդանիներ և տունկեր՝ որք այրեցած գոտիին կը պատկանին , կան՝ որ բարեխառն գոտիին կը վերաբերին և կան ալ՝ որ սառուցեալ գոտիին կը պատկանին :

Հ. Հայաստանի կլիմային զանազանութիւնը երկրին բնակչացը վրայ ի՞նչ ներդործութիւն ըրած է :

Պ. Հայաստանի կլիմային զանազան տեղեր ունեցած զանազանութիւնը երկրին բնակչացը վերայ զանազան ներդործութիւն ըրած է , ինչպէս ըրած է տնկոց և կենդանեաց վրայ . զոր օրինակ Մոկաց աշխարհի բնութիւնն ու երկինքը աստղաբաշխութեամբ և ուրիշ դիտութիւններով պարապելու ներդործութիւնն ըրած էին ժողովը դեան վրայ :

Հ. Գողթն գաւառի կլիման ի՞նչ ներդործութիւն ըրած է :

Պ. Գողթն գաւառի կլիման և գինին բնակչաց վրայ բանաստեղծութեան ոգի յառաջ բերած էր , որ մեր քաջ նախնեաց գործքերը կ'երդէին իրենց անմահ քնարաւը :

Հ. Ունեաց , գուգարաց և Արցախուն նահանգաց կլիման ի՞նչ ներդործութիւն ըրած է :

Պ. Յիշեալ նահանգաց կլիման ներշնչած է այն կողմերու Հայոց սրտին մէջ պատերազմական սյն ազատ հոգին , որով պատրաստ էին միշտ հայրենեաց ազատութեանն համար իրենց արիւնը թափելու :

Հ. Հայաստանի մէջ ի՞նչ տեսակ բերքեր կան :

Պ. Տեղւոյն և կլիմային յարմար բերքեր , ինչպէս են ցորեն , հաճար , գարի , վուշ , բամպակ , թուզ , սերկեւիլ , նուռ , պիստակ , շագանակ , նուշ , վարունգ , գղտոր , մեղր , ձիթենի , յամիկ , մուրտ ծառը , տօսախ ծառը , լոշտակ բոյսը եւայլն : Ծնտիր էր նաեւ Հայաստանի գինին , մանաւանդ Գողթն գաւառինը և Ռւտի ու Այրարատ նահանգներունը : Խիստ ընտիր էր նաեւ Հայաստանի ծիրանը , որ եւրոպացիք Հայաստանէն եւրոպա ալ տարին :

Հ. Ասոնցմէ զատ ուրիշ ի՞նչ տեսակ բերքեր կային :

Պ. Զանազան տեսակ ինկեղճներ , ինչպէս են՝ քարախունկ և պտղատունկ . երեւելի էր նոյնպէս գաղրէն , որ մանանայի պէս քաղցր է և կը դտնուի հիմա մէկ քանի ծառոց տերեւներուն վրայ . գաղրէն կարնոյ և Սասունի մէջտեղի երկիրներուն մէջ կայ :

Հայաստանի մէջ կային նաեւ բնական անտառ-ներ, ինչպէս են Սիւնեաց և Գուգարաց աշխարհի անտառները . ասոնցմէ զատ կային նաեւ ար-ուեստական անտառներ, զորս մեր Հայոց թա-դաւորները անկել առւած էին :

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵջ ԳՏՆՈՒԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Հ. Հայաստանի մէջ ի՞նչ տեսակ կենդանիներ կային :

Պ. Եղջերու, վարազ, վայրի այծ, ցիռ ( վայ-րի էշ ) հասարակ էշ, ջորի :

Խիստ ընտիր էր նաև Հայաստանի ձին թէ գե-դեցկութեան և թէ ուժեղութեան կողմանէ, մա-նաւանդ նժոյգ ըսուած տեսակը, որ աւելի խը-նուսի կողմերը կը գտնուի, որ ժամանակաւ ըստ մեծի մասին Հայոց թագաւորներն ու իշխանները կը գործածէին :

Կենդանեաց և բերքի մասին մէջ յիշատակու-թեան արժանի են Որդան-կարմիր կոչուած մանր ձճին, որ աւելի Արարատ նահանդին մէջ կը գըտ-նուի . ձկանց մէջ ալ անուանի են կարմրախայտը, տառեխը և գեղարքունին :

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԶԱՆՆԵՐՆ ՈՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Հ. Հայաստանի մէջ ի՞նչ տեսակ գազաններ կան :  
Պ. Առիւծ, ինձ, վագր, ընձուղտ, գայլ ևն :  
Հ. Ի՞նչ տեսակ թռչուններ կան :

Պ. Ագուաւ, կաքաւ, սաղ, բաղ, փոր կամ կարապ և ուրիշ զանազան թռչուններ՝ մանա-ւանդ Արարատայ, Բարձր-Հայոց և Զորրորդ-Հա-յոց մէջ :

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԵՐԸ

Հ. Հայաստանի մէջ ի՞նչ տեսակ հանքեր կա-յին :

Պ. Հայաստանի մէջ շատ տեսակ հանքեր կան, որ անդործ թռղուած են, ինչպէս են Մանանաղի, Դարանաղի, Տուրուբերան և Աղիովիտ գաւա-ռաց հանքերը . ունի նաև շատ մը աղի հանքեր, որ աւելի կը գտնուի Բագրեւանդայ գաւառին մէջ և այս գաւառին կողք գիւղը : Աղձնեաց և Տուրուբերան գաւառաց մէջ կը գտնուին երկա-թի, պղնձի, կապարի և ուրիշ տեսակ հանքեր . Բարձր-Հայոց, Սպերի, և Զորրորդ-Հայոց մէջ՝ արծաթի և Արարատայ զանազան կողմերն՝ ինչ-պէս Աղձնեաց Արզն գաւառը՝ աղի հանքեր :

Հ. Հայաստանի մէջ ի՞նչ տեսակ աղնիւ քարի հանքեր կային :

Պ. Բիւրեղ կամ սառնատեսակ, Եղնդաքար


կամ սարդիօն , շափիւղ , զմրուխտ , ակատ , մեւ  
սաթ , մարմարիօն , որ մինչև այսօր ալ կան . իսկ  
հասարակ կիճեր , ինչպէս նաև զանազան գոյն-  
զգոյն հրաբուղիսի քարեր խիստ շատ կան :

Շամիրամ՝ Ասորեստանեայց թագուհին Հա-  
յաստանի ժայռերէն քար մը կտրել տուած է ,  
որոյ երկայնութիւնն 130 և լայնութիւնը 25 ոտք  
էր :



## ՀԱՅ-ԱԶԳԱՅԻՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հ. Ի՞նչ կը սորուեցնէ Հայ-ազգային պատմու-  
թիւնը :

Պ. Հայ-ազգային պատմութիւնը կը սորուե-  
ցնէ մեր ազգին ծագումը , կազմաւորութիւնը ,  
ծագման թուականը , Հայրենիքը , Հայրենեաց  
սահմանները , երկրին գերքը , օդը , կլիման ,  
տարածութիւնը , բերքը , վաճառականութիւնը ,  
արհեստները , մշակութիւնը , ժողովրդեան վարքը ,  
բարքը , բնաւորութիւնը , նկարագերը , ազգային  
սովորութիւնները , առանձին կեանքը , կրօնքը ,  
բարոյականը , ծեսերը , արարողութիւնները , նա-  
խասպաշարումները , Փիգիգական և բարոյական  
առաւելութիւններն ու պակասութիւնները , վար-  
չական եղանակը , օրէնքները , կարգերն ու կա-  
նոնները , արտաքին յարաբերութիւնները , քա-  
ղաքականութիւնը , պատերազմներն և նոցա-  
պատճառն ու արդիւնքը , ազգային հարստու-  
թեանց ծագումն ու անկումը և նոցա պատճառ-  
ները և վերջապէս այն ամենը՝ որ մեր ազգային  
կեանքին կը պատկանին :

## ՊԱՑՄՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Հ. Ընդհանրապէս առնլով ի՞նչ է պատմութեան հոգին :

Պ. Պատճառ և արդիւնք, ուստի և իրաւամբ կրնամնը կոչել պատմութեան իմաստասիրութիւնը, առանց որոյ պատմութիւնը չոր ու ցամաք և տաղակալի է<sup>(1)</sup>:



(1) Այս մասին փրայ յատկապէս կը հրաւիրենք մեր ազգային վարժարանաց մեծարգոյ հոգաբարձուաց, տեսչաց և գասատուաց խորին ուշազրութիւնը. վասն զի առանց լաւ ուսանելու ազգային բովանդակ կեանքը, չէ կարելի Ազգին իրական պէտքերը գիտնալ և բուն ազգային դաստիարակութեան ուղղութիւն մը գծել, որ միակ շարժառիթն է ազգային ապագայ վերածնութեան:

## ԲԵԺԱՆՄՈՒԽ

### ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆՑ

Հ. Հայ-ազգային պատմութիւնը քանի՛ ԴՐԵ-խաւոր մասերու կը բաժնուի:

Պ. Զորս՝ Հայկազանց հարստութիւն, Արշակունեաց, Բագրատունեաց և Ուուրինեանց:

Հ. Ե՞րբ կ'սկսի Հայկազանց հարստութիւնը և որքան ատեն կը տեւէ:

Պ. Հայկազանց հարստութիւնը կսկսի Քրիստոսէ 2350 տարի յառաջ որ կը տեւէ 1800 տարի, և Աղեքսանդր մեծի Հայաստանի տիրելովը կը դադրի՝ Քրիստոսի յաշխարհ դալէն 330 տարի յառաջ:

Սոյն հարստութեան կործանումէն մինչև 180 տարի Հայաստան անխխանական վիճակի մէջ մերթ Մակեդոնացւոց և մերթ Սելեւկիացւոց իշխանութեան ներքեւ կը մնայ:

Հ. Ե՞րբ կ'սկսի Արշակունեաց հարստութիւնը:

Պ. Քրիստոսէ 150 տարի յառաջ և 583 տարի դիմանալէ ետք՝ կը վերջանայ Քրիստոսէ 452 տարի ետքը:

Սոյն երկրորդ հարստութեան դադրելէն ետև՝ Հայաստան 452 տարի անխխանութեան մէջ մնաց և մերթ Պարսիկ, մերթ Հայ և մերթ Արարացի կուսակալներու և ոստիկաններու ձեռօք կառավարուեցաւ:

Հ. Ե՞րբ կ'սկսի Բագրատունեաց հարստութիւնը:

Պ. Քրիստոսէ 885 տարի ետքը և 160 տարի տեւելէ ետև՝ կը վերջանայ Քրիստոսէ 1045 տարի ետքը։

Սպահ հարստութեան կործանումէն ետև՝ Հայաստան դարձեալ անիշխանութեան մատնուեցաւ, և Յունաց, Պարսից և Հագարացոց արշաւանաց ասպարէղ եղաւ։

Հ. Ե՞րբ կ'սկսի Ռուբինեանց հարստութիւնը։  
Պ. Քրիստոսէ 1080 տարի ետքը՝ կիլիկիոյ մէջ, և 296 տարի տեւելէ ետք՝ կործանեցաւ Քրիստոսի 1375 թուականին, որմէ մինչև Հիմա Հայաստան անիշխանութեան վիճակի մէջ է և Երեք տէրութեանց՝ Ռուսի, Պարսից և Տաճկաց միջնամամուած։

## ՀԱՅԿԱԶԱՆՑ ՀԱՐՍՑՈՒԹԵԱՆ

### ՍՏՈՐԱԲԻԺԻՆԱԿԻՐԸ

Հ. Հայկազանց հարստութիւնը քանի՞ գլխաւոր ժամանակներու կը բաժնուի։

Պ. Երեք. առաջին, Տանուտիրական նահապետութիւն՝ Հայկէն մինչև Արամ. Երկրորդ՝ Զինուորական նահապետութիւն կամ կիսարքայք Արամէն մինչև Պարոյք, և Երրորդ՝ Թագաւորութիւն՝ Պարոյրէն մինչև Վահէ, որոյ օրովք վերջացաւ Հայկազանց հարստութիւնը Քրիստոսէ 330 տարի յառաջ։



## ՀԱՅ-ԱԶԳԱՅԻՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

— ՀՀՀՀ —

### ՄԱՍՄԱԿ

ՏԱՆՈՒՑԻՐԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ

(Հայկ, իւր գործերը, մահը եւ իւր յաջորդները),  
Նախքան գՔրիստոս 2550 տարի։

Հ. Ի՞նչպէս եղաւ Հայ աղդին ծագումը։

Պ. Ջրհեղեղէն ետև մարդիկ երբ Ասորեստանի կողմը գաղթեցին, ուրիշ ջրհեղեղէ աղատ մընալու ամբարտաւան խորհրդով ուղեցին հոն մինչեւ ամպերն հասնող աշտարակ մը կառուցանել, որու շինութեանը ձեռնարկեցին, բայց յանկարծ լեզուները խառնակելով՝ ձեռնարկնին ՚ի գլուխ չելաւ։

Այս միջոցին իրենց գլխաւորը՝ Բել (Նոյ նահապետին թոռան Գամ որդւոյն թոռան որդին) Երկրորդ ամբարտաւան խորհուրդ մը յղացաւ։

Հ. Ի՞նչ էր այդ խորհուրդը։

Պ. Ուղեց բոլոր մարդոց վրայ միահեծան և բացարձակ տէր ըլլալ և Աստուծոյ պէս պաշտուիլ ամենէն. ուստի և աշտարակին շինութեան տեղը՝ որ Սենարայ գաշտին մէջ էր, պատերազմի գաշտի փոխուեցաւ. վասն զի զանազան կուսակցութեանց բաժնուեցան և բահն ու բրիչը՝ զորս աշ-

տարակին շինութեամն համար կը դործածէին ,  
զէնքի փոխուեցան , և բել ամենէն զօրաւորը  
գտնուելով՝ յաղթեց շատերուն և զինք թագա-  
ւոր հրատարակեց :

Հ. Գործն ասանկով կրցաւ վերջանալ :

Պ. Պատերազմողաց մէջ ազատասէլն Հայկ ա-  
րի ու հաստաբազով իշխանը՝ (որ նոյ նահապե-  
տին Յարեթ որդւոյն թոռան որդին է) , իր աս-  
կաւաթիւ կողմնակիցներովն երկար ատեն բելայ  
դէմ պատերազմելէ ետև՝ տեսնելով որ իր մար-  
դոց նուազութեանը պատճառաւ դիմադրու-  
թիւնն այլ եւս շարունակելը վտանգաւոր է և  
նկատելով բելայ բունաւորութիւնը՝ որում յա-  
ռաջադրյն տեղեակ էր , չուզեց հնազանդիլ և  
իւր երեք հարիւրի չափ որդիքը , թոռունքը և  
ծառաներն առած գնաց հիւսիսային կողմերը ,  
և հոն լերան մը մօտ դաշտի մը մէջ բնակեցաւ ,  
ուր յառաջուց գտնուողներն ալ սիրով իրեն հը-  
նազանդեցան :

Հ. Հայկ ի՞նչ ըրաւ հոն :

Պ. Հոն գիւղ մը շինեց և իր կադմոս թոռա-  
նը (Արմենակայ որդին) յանձնեց և նոյն տեղե-  
րուն կողմնապահ կարգեց . իսկ ինքը (Հայկ)  
հիւսիսային-արեւմոեան կողմերը գնաց , ուր լեռ-  
նադաշտի մը վրայ հաստատեց իր բնակութիւնը .  
Լեռնադաշտն Հարք անուանեց . գիւղ մ'ալ շի-  
նեց , և իր անունովն Հայկաշէն կոչեց : Հոս դըտ-  
նուողներն ալ որ սակաւաթիւ էին , սիրով հնա-  
զանդեցան :

Հ. Հայկայ այս ձեռնարկին ի՞նչ արդիւնք ու-  
նեցաւ :

Պ. Բել՝ Հայկայ բաժնուիլն ու կազմած ա-  
ռանձին իշխանութիւնն իրեն նախատինք համա-  
րելով ուզեց նախ քաղցրութեամբ հնազանդե-  
ցնել . ուստի իր որդւոյմէն մին քանի մը հոգ-  
ւով Հայկայ պատգամաւոր զրկելով ըսաւ « ինչու  
գնացեր ցուրտ ու սառած երկիրներ բնակեր ես ,  
եկու քու ցուրտ հպարատութիւնդ մէկդի թող և  
երկիրներուս մէջ ուզած տեղդ բնակէ » :

Հ. Բելայ այս պատգամն ի՞նչ ընդունելութիւն  
դտաւ :

Պ. Հայկ ցուրտ պատասխան մը տալով այս  
պատգամաւորներուն՝ ճանբու դրաւ :

Հ. Հայկայ ըրած մերժումն ի՞նչ արդիւնք ու-  
նեցաւ :

Պ. Բել սաստիկ բարկացած հրաման տուաւ  
եր զօրաց որ պատերազմի պատրաստուին և շուտ  
մը Հայկայ վրայ քալեց :

Հ. Հայկ ի՞նչ նախզդուշութիւն ձեռք առած  
էր :

Պ. Հայկ՝ որ քաջ տեղեակ էր Բելայ գոռող  
բնաւորութեանը , առաջուց ամեն բան կարգա-  
դրեց , իր քիչւոր զօրքը կարգի դրաւ և իր մար-  
դիկներով Բզնունեաց կամ վանայ ծովուն քով  
բանակեցաւ և անոնց քիչ մը հանդիսաւ տալէ ե-  
տեւ՝ սոյն քաջալերիչ խօսքերն ըրաւ . « թշնամ-  
ւոյն զօրացը հետ զարնուելու սկսելնուս պէս ,  
ջանացէք որ անոնց բոնաւոր իշխանին կեցած

կողմը բուռն զօրութեամբ զարնենք, և կամ քաջութեամբ մեռնինք և միայն մեր ինչքն ու ստացուածքն անոր թողունք, և կամ զարնենք զայն ու սպաննենք, զօրքը ցրուենք, և յաղթութեան փառքն ստանանք » :

Հ. Բել ի՞նչպէս պատրաստուած էր :

Պ. Բել գլուխն ամուր երկաթէ սաղաւարտ, կուրծքն ու կոնսակը կարծր պղնձէ տախտակներ, թեւերն ու ոսութներն անգծելի զրահով պատած, մէկ ձեռքն ահագին վահան մը բռնած և միւս ձեռքն ալ մեծ նիղակ մը, իր բանակին առջեւն անցած՝ լեռնէն վար կ'իջնար :

Հ. Հայկ ի՞նչ ըրաւ, երբ Բելսյ դալը տեսաւ :

Պ. Զօրքն անմիջապէս եռանկիւնի ձեւով իր երկու կողմը շարեց . աջ կողմն իր Արմենակ, խոռ ու Մանաւաղ որդիքը կեցուց, խոկ կադմոն և իր որդւոց քաջերէն երկու հոգի ալ ձախ կողմը դրաւ, որոնք ճարտար սուր շարժող և քաջ ու կորովի աղեղնաւոր էին, և ահա Հայկ այսպէս կազմ ու պատրաստ կեցաւ :

Հ. Բել ի՞նչ շարժում ըրաւ :

Պ. Բել՝ որ հաստատապէս միտքը դրած էր թէ Հայկ չկրնար դիմագրել, և թէ իր զօրաց ահակին քաղմութիւնը տեսածին պէս պիտի հընաղանդի իրեն, ուստի իր զօրքը լերան վրայ թողուց և անոնց քաջերէն գունդ մը զօրք առած սկսաւ դէպ ՚ի յառաջ դալ Հայկայ բանակը դիտելու :

Հ. Հայկ ի՞նչ ըրաւ այս միջոցիս :

Պ. Հայկ՝ որ պարագայէ օդուտ քաղել խիստ լաւ դիտէր, շուտ մ'իր զօրաց պատերազմի նշան տուաւ . սաստիկ զօրութեամբ յարձակեցաւ թըշնամնոյն վրայ և թշնամնոյն հսկաներէն շատեր դետինը բռուեցան :

Հ. Ի՞նչ վճռական արդիւնք ունեցաւ այս անակնկալ յարձակումը :

Պ. Բել այս անակնկալ դիպուածէն շփոթած ու այլայլած՝ թէև քիչ մը ժամանակ ջանաց ինքզինքն պաշտպանել, բայց տեսնելով որ վտանգն իրեն կ'սպառնայ, սկսաւ փախուստ տալ և երթակ դէպ իր բանակը, որպէս զի իր ամբողջ զօրութիւնն առած գայ Հայկայ հետ պատերազմելու . Հայկ նորա միտքն իմանալով յառաջ խոյացաւ, լարեց իր լայնալիճ աղեղը և այնպիսի բուռն ուժգնութեամբ մը նետեց, որ նետը սլացաւ գընաց Բելայ կուրծքի պղնձէ տախտակը ծակեց և կոնկէն դուրս ելաւ, որով չնչասպառ դետինը փուռեցաւ : Բելայ անհամար զօրքը ցիր ու ցան փախան և պատերազմի դաշտն հարուստ աւարով Հայոց մնաց :

Հ. Հայկ իր թշնամնոյն յաղթելէն ետև ի՞նչ ըրաւ :

Պ. Պատերազմին տեղը քաղաք մը շինեց և անունն Հայք դրաւ, որմէ նոյն գաւառին անունն ալ Հայոց ձոր ըսուեցաւ . Բելայ մեռած տեղը գերեզնաւ անուանեց (ասկէ մնացած է գերեզման բառը), և հրաման ըրաւ որ Բելայ մարմինը զմուսելով տանին Հարք դաւառը բարձր տեղ մը

թաղեն՝ յանմահ յիշատակ իր փառաւոր յաղթութեանն և 'ի խրատ ու զգուշութիւն ապագայից, որք տեմնեն ամբարտաւան մարդուն վիճակը :

Հ. Ի՞նչ եղաւ Հայկայ յաղթութեան հետեւանքը :

Պ. Հայկայ յաղթութեան սքանչելի հետեւանքն այն եղաւ որ Հայ-ազգին ծաղումն ու Հայկազանց հարստութիւնն սկսաւ այսպիսի փառաւոր և յաջող կերպիւ :

Հ. Հայկ ինչպէս վարեց իւր իշխանութիւնը :

Պ. Հայկ հայրաբար կառավարեց իր ազգը շատ տարիներ, շնութեամբք զարդարեց երկիրը և ժամանակին յարմար կարդադրութիւններ ըրաւ ու օրէնքներ հաստատեց :

Հ. Մեր ազգն ուսկից Հայ կը կոչուի :

Պ. Հայկ նահապետին անուամբը, ինչպէս նաև Հայոց երկիրն ալ Հայստան :

Հ. Ի՞նչպէս մարդ էր Հայկ և ի՞նչ գեղեցիկ առաւելութիւններ ունէր :

Պ. Հաստաբազուկ, քաջարի ու երկայնահասակ մէկն էր. բնութեամբ ազատասէր և մոռք իմաստուն և արդարակորով :

Հ. Հայկայ ազատասիրութիւնն ինչքն յայտնի է :

Պ. Հայկայ ազատասիրութիւնն անկէ յայտնի է որ նախ Ասորեստանի մէջ բելայ բռնութեանը դէմ պատերազմեցաւ, երկրորդ՝ երր տեսաւ թէ նորա զօրաց բազմութեանն յաղթել անկարելի է,

փոխանակ անձնատուր լինելու՝ հեռացաւ գնաց ազատ երկիր մը, և երրորդ՝ բելայ խրոխատ պատգամին ու սպառնալեացն առջև փոխանակ վատաբար խոնարհելու՝ արիաբար դէմ կեցաւ, և մինչև իսկ իր քիչւոր զօրքերովլը պատերազմելու քաջութիւնն ունեցաւ, որ հաստատուն սկզբան և առողջ բարոյականի տէր անձանց յատուկ է :

Հ. Հայկայ իմաստութիւնն ինչքն յայտնի է :

Պ. Հայկայ իմաստութիւնն անկէ յայտնի է որ երր բել քիչւոր զօրքով իր բանակը դիտելու եկաւ, առիթթը չփախցնելով՝ պարագայէն օգուտ քաղեց, որով ինքզինք ու իրենները վտանգի ենթարկելէ ազատելով՝ հասաւ իր բուն նպատակին :

Հ. Հայկայ արդարասիրութիւնն ինչքն յայտնի է :

Պ. Հայկայ արդարասիրութիւնն անկէ յայտնի է որ իր թշնամւոյն յաղթելէ և իր նպատակին հասնելէ ետև՝ չգնաց թշնամւոյն երկրին ու ժողովրդոցը տիրելու, այլ զանոնք իրենց վիճակին մէջ ազատ թողուց, որ անշուշտ քաղաքակրթութեան արժանի մեծ գործ մ'է, որոյ օրինակը դուն ուրեք կը տեսնուի պատմութեան մէջ :

Հ. Այսպիսի ընտիր նախահօր մը սերունդն ինչպէս պէտք է արժանի յաջորդ ըլլայ նորա անուանը :

Պ. Այսպիսի ընտիր նախահօր մը սերունդը պէտք է ըստ ամենայնի արժանի լինի իր քաջարի, ազատասէր, իմաստուն և արդարակորով

նախահօրը , որ փառք ու պարծանքը եղած է  
իր Ազգին ու Հայրենեացը :



## ԳԼՈՒԽ Բ.

(Արմենակէն մինչեւ Հարմա) .  
Նախ քան զբիստոս 2000—1550 տարի :

Հ. Հայկայ ովլ յաջորդեց :

Պ. իր անդրանիկ որդին Արմենակ :

Հ. ի՞նչ ըրաւ Արմենակ :

Պ. իր խոռ և Մանաւաղ որդիքն ու Մանաւաղին Բազ որդին Հարք դաւառը թողուց և  
ինք իր մարդոցմովը արեւելեան-Հիւսիսային կողմերը գնաց , և լեռներով շրջապատեալ դաշտի  
մը մէջ շատ շէնքեր շինեց , և նոյն լերանց ամենէն մեծն իր անունովը Արագած անուանեց , իսկ  
իր շինուածոց տեղին անունը Ոտն-Արագածու-  
դրաւ :

Հ. Արմենակ ի՞նչպէս կառավարեց իւր ազգը :

Պ. Արմենակ իր ազգը շատ տարիներ խաղաղութեամբ կառավարելէ և երկիրը շինութիւններով զարդարելէ ետև՝ մեռաւ :

Հ. Արմենակայ խոռ , Մանաւաղ եղբարց և  
Բազի սերունդն ի՞նչ կոչուեցաւ :

Պ. Ասոնցմէ յառաջ եկան խոռխոսունեանց ,  
Մանաւաղեանց , թզնունեանց , ու Որդունեանց  
նախարարութիւնները :

Հ. Արմենակայ ովլ յաջորդեցի:

Պ. Արմենակայ յաջորդեց իր Արմայիս անդրանիկ որդին :

Հ. Արմայիս ի՞նչ ըրաւ :

Պ. Արմայիս իր հօրը դացած տեղերը բնակելով մեծ գետի մը քով քաղաք մը շինեց , զոր իր անուամբն Արմայիս կոչեց . նոյն գետին անունն ալ իր Արաստ թոռան անունովը երասխ անուանեց . իսկ իր Շարայ որդին՝ որ խիստ շատակեր էր և շատ ալ որդիներ ունէր , նոյն տեղերուն մօտ բերրի դաշտ մը խաւրեց : Սոյն գաւառը Շարայի անունովը Շիրակ կոչուեցաւ :

Հ. Շարայի շատակերութեանը վրայ ի՞նչ գետելիք կայ :

Պ. Շարայի շատակերութիւնն Հայոց մէջ առած դարձած էր , այնպէս որ շատակերներու համար կ'ըսուէր «թէ քո Շարայի որկորն է մեր Շիրակայ ամբարքն չեն » :

Հ. Արմայիսի ովլ յաջորդեց :

Պ. Արմայիս շատ տարիներ ազգը կառավարելէ ետև՝ մեռաւ , և իրեն յաջորդեց իր որդին Ամասիա :

Հ. Ամասիա ի՞նչ ըրաւ :

Պ. Ամասիա՝ որ Երեք որդի ունէր , Փառոխ , Գեղամ և Ցոլակ , Երբոր ասոնք չափահաս եղան , իր հեան առած հարաւային կողմերը գնաց , և բարձր լերան մը մօտ իրամէ մէկ օրուան ճանրայ հեռու Երկու քաղաք շինեց , որոց մին Փառոխին և միւսը Ցոլակին տուաւ :

Փառոխ ու Ցոլակ հոն բնակեցան և իրենց ա-

նունովը կոչուեցան նաև իրենց բնակած քաղաք-ները, Փառոխինը՝ Փառախոս և Ցոլակինն ալ Յոլակերտ :

Հ. Ամասիա սոյն կարդագրութիւններն ընելէ ետև Բնչ ըրաւ :

Պ. Հոն գտնուած բարձր տեղին անունն իր անուամբը Ամասիա՝ Մասիս կոչեց, և քիչ մը ետքըն Արմաւիր գառնալով՝ քիչ ատենէն մեռաւ :

Հ. Ամասիայի ո՞վ յաջորդեց :

Պ. Ամասիայի յաջորդեց իր անդրանիկ որդին Գեղամ :

Հ. Գեղամ Բնչ ըրաւ :

Պ. Գեղամ երբ իր հօրն յաջորդեց, իր Հարմա որդին Արմաւիր թողլով գնաց արեւելեան հիւսիսային կողմերը ճի մը քով, այն տեղուանքը շէնքեր շինեց, բնակիչներ դրաւ և նոյն տեղուանքն իր անունովը Գեղաքունի, լիճը ծով Գեղամայ և հոն գտնուող լերան անունն ալ Գեղ անուանեց : Հոս ծնաւ իր Սիսակ որդին, որ քաջու յաղթանդամ մարդ մը եղաւ և իր քաղզ նայուածքին ու խօսուածքին համար Աղու ըսուեցաւ :

Հ. Գեղամ իր Սիսակ որդւոյն համար ուր բընակութեան տեղ որոշեց :

Պ. Գեղամ իր Բնչքերէն ու ծառաներէն Սիսակին շատ բան տալով՝ Գեղամայ ծովէն մինչեւ Երասի գետին հոսանքը բնակութեան տեղ որոշեց :

Հ. Սիսակ Բնչ ըրաւ նոյն տեղուանքը :

Պ. Շատ շէնքեր շինեց, որք իր անուամբը Սիւնիք, ինչպէս նաև Սիսական կոչուեցան . Սիսակէն յառաջ եկաւ Սիւնեաց նախարարութիւնը :

Հ. Գեղամ ասկէ ետքն Բնչ ըրաւ :

Պ. Գեղամ ասկէ ետքը Գեղարքունեաց կողմերը գարձաւ, ուր Գեղ լերան քով ամուր տեղ մը քաղաք մը շինեց և անունը Գեղամի դրաւ :

Ասոր վրայ շատ տարիներ ապրելէն ետքը մեռաւ, և իր Հարմա որդւոյն պատուիրեց որ Արմաւիր բնակի :

Հ. Հարմայի օրով Բնչ պատահեցաւ :

Պ. Հարմա շատ տարիներ թէպէտ կառավարեց իր աղգը, բայց վերջին տարիները գրացի աղգեր զօրանալով սկսան Հայաստանի վրայ արշաւել և շատ նեղութիւններ տալ :

Հ. Հարմա Բնչ ըրաւ :

Պ. Տեսներով որ Հայրենեաց վրայ յարձակող թշնամեաց դէմ գնելու զօրութիւն չունի, պարտաւորեցաւ քաշուիլ իշխանութենէ, զոր իր Արամ որդւոյն թողուց :

Հ. Հարմայի օրով Հայաստանի զօրութիւնն ինչու տկարացած էր :

Պ. Վասն զի նախարարութիւններն իրենք իրենց մէկմէկ ուրոյն և անկախ իշխանութիւն դառնալով Հայաստանի զօրութիւնը ջլատած և տկարացած էր, հետեւաբար և թշնամիք աղատ ապարէլ գտնելով անդադար կը յարձակէին :



## ԳԼՈՒԽ Գ.

ԶԻՆԻՌԱԿԱԾԵ ՆԱՀԱՊԵՑՈՒԹԻՒՆ  
ԿԱՐ ԿԻՌԱՐՔԱՑՔ

(Արամէն մինչեւ Պարոյր ) :  
Նախ քան զբրեստոս 4500—600

Հ. Հայաստանն այս սպառնացող վտանգէն աշպատելու համար Բ'նչ պէտք էր :

Պ. Պէտք էր երկրին վարչական դրութիւնը փոխել, այն է՝ Հայաստանի ոյժն ու իշխանութիւնը միացնել, որ իշխանութեան բաժանման դրութեամբն արդէն ջլատուէր էր, զի ինչպէս ըսինք, անձնիւր նահապետ ինք կը կառավարէր իր տոհմն. ուստի և շրջակայ ազգերն ու ժողովուրդներն օգուտ քաղելով ասկէ՝ անարդել կասպատակէին Հայաստան աշխարհը : Վտանգն անխուսափելի էր, նորահաստատ նահապետական ազատ իշխանութիւնը պիտի կործանէր, լեզուն անհետանար ու ջնջուէր, ինչպէս անդառնալի կորաւ կրօնքը՝ որ պարզ ու ճշմարիտ աստուածապաշտութիւն էր :

Հ. Հայաստան կրցաւ փրկուիլ, և ով ու Բ'նչ պէս փրկեց :

Պ. Հայաստան կրցաւ փրկուիլ իրեն սպառնացող վտանգէն, վասն զի Հարմայի անդրանիկ որդին՝ Արամ իր, հօրը յաջորդելուն պէս գլխաւոր հոգը եղաւ նախ զինւորական կազմաւորութեան ձեռնարկել, որ մինչև ան ատեն կը պակսէր, ուս-

տի Հայաստան աշխարհի անձնիւր նահապետաց զօրութիւնն իր ձեռքին տակ առաւ և ապահովեց Հայաստանը, անկախութիւնը, Հայութիւնն ու լեզուն, զի հայրենիք, լեզու և անկախութիւն ուրոյն ազգայնութեան մը կենդանի յատկանին է, և հետեւարար այս երեքը ոգւով չափ պաշտպանել ազգի մը անձնիւր անհատի սեպուհ պարտականութիւնն է, որով կրնայ պահպանել իր ազգայն գոյութիւնը, որ իր նուիրական իրաւունքն է :

Հ. Արամ զինւորական կազմաւորութեան մեծ դործն ՚ի յանդ հանելէ ետև ի՞նչ ըրաւ :

Հ. Հայաստան աշխարհը՝ որ արեւելքէն, հարաւէն ու արեւմուտքէն ոտնակոխ եղած էր, ձեռք զարկաւ անմիջապէս ազատել և 50,000 քաջարի զօրաց գլուխն անցնելով՝ դեռ չլուսցած յարձակեցաւ նախ Նիւքար Մարաց Մագէս իշխանին վրայ՝ որ երկու տարիի չափ Հայաստանի մէկ մասն իրեն հարկատու ըրաւ ու Սիւնեաց ցեղին յանձնեց, և Նիւքար Մագէս իշխանն ալ բռնելով՝ Արմաւիր բերաւ, ուր՝ հրամայեց որ ճակատը երկաթէ գամով մը պարսպի աշտարակին ծայրը դամեն :

Հ. Արամ այս պայծառ յաղթութենէն վերջն ի՞նչ ըրաւ :

Պ. Ասորւոց բարշամ իշխանին վրայ քալեց, որ հարաւային կողմէն Հայաստան աշխարհը սաստիկ

\* Կ'ասպատակէր, յարձակեցաւ անոր վրայ և զարկաւ ու սպաննեց, որով և հարաւային կողմէն ալ աղատեց զչայաստան :

Հ. Արամ ասկէ յետոյ ի՞նչ ըրաւ :

Պ. Սիւնեաց ցեղն Հայաստանի հիւսիսային ու արեւելեան կողմերն ու կադմոսեանց ցեղն ալ հարաւային կողմերը պահապան կարգելով՝ իր քաջարի զօրացն հետ արեւմտեան կողմերը գընաց, ուր տիրած էր Պայապիս Քաղեայ անուն մէկը, զարկաւ ու յաղթեց և զինքն ալ մինչե Միջերկրական ծովուն կղղիներէն մէկը փախուց :

Արամ այսպէս զչայաստան արեւմտեան կողմէն ալ աղատելով՝ տիրեց նաև կապադովկիոյ և Պանտոսի մէջտեղի Երկիրներուն ալ, որք Հայաստանի ամբողջացուցիչ մասերն եղան :

Հ. Այս նոր Երկիրն ի՞նչ կոչուեցաւ :

Պ. Փոքր-Հայք, որ Երեք նահանգի կը բաժնուէր, Առաջին-Հայք, Երկրորդ-Հայք և Երրորդ Հայք :

Հ. Արամ ի՞նչ օգտակար կարգադրութիւն ըրաւ այս կողմերը :

Պ. Այս կողմի Հայերն որ Երկսր ատեն օտարաց իշխանութեանը Ենթարկուելով մոռցեր էին Երենց մայրենի լեզուն, պատուիրեց խստիւ որ ամենքն ալ Հայերէն խօսին, և Մշակ անուն մէկն ալ այն կողմերուն կուսակալ գրաւ, որ Առաջին Հայք նահանգին մէջ կը բնակէր, և ուր քաղաք մը շինեց, որ իր անուամբ Մշակ ըստեցաւ, բայց Ցոյները չկրնալով Մշակ ըսել՝ Մաժաք կ'անուա-

նէին, որ ապա կեսարիա կոչուեցաւ :

Արամ այս կողմերու բնակիչներն աւելցուց, ուր արդէն շատ Յոյներ ալ կային :

Հ. Արամայ կառավարութեան վերջին օրերն ի՞նչ պատահեցաւ :

Պ. Նինոս՝ Ասորեստանեայց թագաւորը տեղեկանալով որ իր նախահայրն զիեւ սպաննողը Հային է, մտածեց վրէժ առնուլ Հայոց ազգէն, բայց որովհետև ինք իր իշխանութիւնը մինչև Բակդիրացւոց աշխարհն ու Հնդկաստան տարածած էր և թէ ուրիշ աշխարհակալութեան ալ ձեռնարկած՝ իր այս խորհրդին դործադրութիւնն յարմար առթի թողուլ որոշելով՝ զի կ'ակնածէր միանդամայն Արամայ քաջութիւններէն, որոյ համբաւը տարածուէր էր, չուղեց իրեն դէմ զօրաւոր թշնամի մը աւելցնել, ուստի արժան դատեց Արամայ բարեկամութիւնը շահիլ և այս պատճառաւ մանոր մարդարտաղարդ պսակ մ'ընծայ զըրկեց, զոր՝ նոյն ատենները թագաւորները միայն կը դործածէին, և ահա այս պատճառաւ Արամ և իր յաջորդները մինչև Պարոյր՝ կիսարքայ կոչուեցան :

Հ. Արամ ո՞րչափ ատեն իշխանութիւն փարեց :

Պ. 58 տարի, և Հայաստանի սահմաններն ընդարձակեց, զօրութիւնը միացուց և Ազգն ու Հայրենիքը փրկեց իր ճշմարիտ հայրենասիրական դործերովը, որք իր անուանն ու իր հայրենեացը փառք ու պարծանք բերին և մինչև անգամ օտար ազգեր իր անունովը Ազգն Արմէն ու Հայրենիքն՝ Արմէնիա կոչեցին :

## ԳԼՈՒԽ Դ.

Արայ-Գեղեցիկ :

**Հ.** Ո՞վ յաջորդեց Արամայ :

**Պ.** Արամին յաջորդեց իր անդրանիկ որդին Արայ, որ իր գեղեցկութեանն համար Արայ-Գեղեցիկ կոչուեցաւ :

**Հ.** Արայի օրով ի՞նչ պատահեցաւ :

**Պ.** Ասորեստանցւոց Շամիրամ թագուհին՝ որ այրն զնինսս սպաննելով՝ անոր տեղն անցած էր, լսելով Արայի գեղեցկութիւնն՝ ուզեց անոր հետ ամուսնանալ. ուստի այս նպատակաւ անոր շատ պատուական ընծայներ ու պատգամաւոր զրկեց, լսելով՝ որ իր հետն ամուսնանայ և նիւնոսի երկիրներուն ալ թագաւորէ. բայց Արայ՝ որ 12 տարիէ ի վեր իւր նուարդ կնոջն հետ ամուսնութեան սիրով ու գիտով կապուած, և զաւակաց հայր էր, բացէ ի բաց մերժեց Շամիրամց խնդիրը :

**Հ.** Ի՞նչ եղաւ սոյն մերժման հետեւանքը :

**Պ.** Բազում ազգաց ու երկիրներու յաղթող Շամիրամ՝ յաղթահարեալ իր կիրքէն՝ պատերազմի ելաւ Արայի դէմ, որպէս զի բռնութեամբ հնազանդեցնէ իր կամացը. ուստի բազում զօրք ժողված՝ մտաւ Հայաստան և Արարատայ նահանգը երասիս գետին հարաւային կողմն պատերազմի բռնուեցան երկու կողմէն :

**Հ.** Պատերազմի վախճանն ի՞նչ եղաւ :

**Պ.** Շամիրամ թէպէտ խստիւ պատուէր տուած էր իր զօրավարներուն որ զԱրայն կենդանի բըռնին, բայց Արայ չսպասելով պատերազմի վախճանին, իւր քաջ զինուրացն հետ մտաւ թշնամւեաց բանակը, մեծ ջարդ տուաւ թշնամեաց, սակայն պատերազմին տաքցած միջոցին դիպուածով զարնուեցաւ ու դիւցաղնական մահուամբ մեռաւ : Շամիրամ որովհետև հմուտ էր կախարդութեան, ուզեց դիւթութեամբ կենդանացնել իր բուռն բաղձանքն յագեցնելու համար, բայց երեքօրեայ փորձերէ յետոյ՝ տեսնելով որ նահատակեալ Արայի մարմինը կը հոտի, հրամայեց որ թաղեն :

**Հ.** Հայոց զօրքն ի՞նչ ըրաւ :

**Պ.** Արայի մահուանը վրայ սաստիկ ցաւած՝ ու դրգուած՝ ուզեց նորա վրէժը լուծել, բայց Շամիրամ զանոնք հանդարտեցնելու հնարք մը գտնելով՝ իր մարդոցը մէջէն Արայի նմանող մէկուն հագցնելով Արայի հանդերձներն՝ ըստ «ահա աստուածները լղելով Արայի մարմինը՝ ողջացուցին» :

**Հ.** Զօրքն հաւատաց ասոր :

**Պ.** Այս՝ վասն զի ինչպէս ըսինք, Հարմայի ժամանակ Հայոց պարզ աստուածպաշտութեան կրօնքն անդառնալի կերպիւ կորելով՝ հեթանոսական կրօնը մուտ գտած ու ամեն կողմ հաստատ հիմբանած էր, որ երեք շրջանի կը բաժնուի, առաջին՝ ժամանակ բնութեան պաշտաման, երկրորդ՝ Զբաղաշտականութեան և երրորդ՝ բազմաստուածութիւն՝ ըստ Յունականին :

Հ. Շամիրամ Արայի մահուանէն յետոյ ի՞նչ  
ըրաւ :

Պ. Զմայլելով Հայաստանի օդին, դերքին և  
ականակիտ աղբիւրներուն, բղնունեաց ծովուն  
արեւելեան կողմը մեծ քաղաք մը շինեց՝ մեծ  
մեծ քարաշէն պալատներով, ընդարձակ ճանրա-  
ներով ու գեղեցիկ պարտէզներով, մէջը շաա  
մարդ բնակեցուց և իրեն համար ամառուան բը-  
նակութեան տեղը ըրաւ . քաղաքին քովս ալ կարծր  
ժայռէ բլուրի մը վրայ բերդ մը և ժայռերուն  
մէջ փորուած սենեակներ շինեց . քարերուն վը-  
րայ զանազան յիշատակարաններ փորել տուաւ  
սեպաձև գրերով, որք մինչև հիմա վանայ բեր-  
դին վրայ անարատ մնացած են : Նոյնպէս Հա-  
յաստանի շատ տեղերն արձաններ կանդնեց ու  
վրան յիշատակարաններ գրել տուաւ : Ելնած  
քաղաքը Շամիրամակերտ կոչեց որ ապա վան ան-  
ուանեցաւ :

Հ. Արայի մահուամբն Հայաստան ի՞նչ վիճակ  
ունեցաւ :

Պ. Պատերազմի մէջ Արային մեռնելով՝ Հա-  
յաստան Ասորեստաննեայց հարկատու և անոր  
նահանգներէն մին եղաւ . բայց ներքին կառա-  
վարութիւնը դարձեալ մեր նահապետներուն  
ձեռքը մնաց :



## ԳԼՈՒԽ Ե.

( Կարդոսէն մինչեւ Սկայորդի ) \*

( Կարդոս )

Հ. Արայի մահուրնէն ետև ո՞վ վարեց Հայաս-  
տանի ներքին կառավարութիւնը :

Պ. Շամիրամ Արայի վրայ ունեցած սաստիկ  
սիրոյն համար նորա կարդոս որդին Հայաստանի  
իշխան դրաւ և անունն ալ փոխելով՝ նորա հօրն  
անուամբը Արայ անուանեց :

Հ. Կարդոսն ի՞նչպէս մեռաւ :

Պ. Զըադաշտ մոդ Մարաց իշխանը՝ որուն կը  
յանձնէր Շամիրամ Ասորեստանն ու Նինուէն երբ  
ինք ամառներն Հայաստան կուդար, բանէ մը  
բարկանալով՝ իր թագուհւոյն դէմ պատերազմի  
ելաւ . կարդոս ալ ՚ի պարտաւորութենէ պատե-  
րազմի գնաց Շամիրամին օգնելու, և այս պա-  
տերազմին մէջ զարնուելով մեռաւ :

Հ. Կարդոսին ո՞վ յաջորդեց :

Պ. Կարդոսին յաջորդեց իր որդին Անուշա-  
ւան, որ Ասորեստանցւոց Նինուաս թագաւորին  
քով գերի էր, բայց իր իմաստութեամբն ու ճար-  
պիկութեամբը գրաւելով Նինուասայ և նորա մե-  
ծամեծաց սէրը, դարձաւ Հայաստան և իշխա-  
նութիւնը ձեռք առաւ :

Հ. Անուշաւանին վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Անուշաւան՝ որ իր հօրը պայազատութեանը  
ժամանակ ծնած և Արմաւիրի քով Արմենակայ

տնկած սօսեաց անտառին նուիրուած էր , ասոր  
համար Սոս ալ կ'անուանուէր :

Հ. Սօսեաց անտառին նուիրուելուն պատճա-  
ռըն ի՞նչ է :

Պ. Հայոց զուտ աստուածպաշտական կրօնը  
կորելէն ետեւ՝ Հայք կուապաշտութիւնն ընդու-  
նելով՝ աւելրդապաշտութեանց ալ կը հետեւէ-  
ին , և որովհետեւ Սօսեաց անտառը նուիրական  
համարուած էր և նորա տերեւներուն շարժում  
ներէն հմայութիւն կ'ընէին , և ըստ որում այս ան-  
տառին նուիրեալը սուրբ ու գիւցազն կը հա-  
մարուէր , ուստի և Անուշաւանի ծնողքն ալ զինքն  
իր մանկութեանը ատեն Սօսեաց անտառին նուի-  
րած էին . հետեւարար երախաներ սուրբ տեղ-  
եաց նուիրելու սովորութիւնը շատ հին է մեր  
մէջ :

Հ. Անուշաւան անզաւակ մեռնելով՝ Հայկայ  
անդրանիկ որդւոյն ցեղին իշխանութիւնը դադ-  
րեցաւ և նախարարաց հաւանութեամբն իշխա-  
նութիւնն ուրիշ քաջ Հայոց ձեռք անցաւ , և  
ահա այսպէս Պարէտ անցաւ իշխանութեան գը-  
լուիը :

Պարէտէն մինչեւ Սկայորդի 27 ի չափ իշխան-  
ներ իրարու յաջորդեցին , որոցմէ միայն մէկ  
քանիին վրայ փոքր ինչ ծանօթութիւն ունինք :

Հ. Որո՞նք են այդ իշխանները :

Պ. Արքակ , Զաւան , Փառնաս , Սուր , Հաւա-  
նակ , Վաշտակ , Հայկակ , Ամպակ , Առնակ , Շա-  
ւարշ , Նորայր , Վաստաս , Կար , Գոռակ , Հրանտ ,

Ընձաք , Գղակ , Հաւրոյ , Զարմայր , Պերճ , Ար-  
բուն , Հոյ , Յուսակ , Կայպակ , Սկայորդի :

Հ. Փառնասի օրով ի՞նչ պատահած է :

Պ. Փառնասի օրով Քանանացիք Յեսուէն յաղ-  
թուելով՝ ասդին անդին ցրուեցան , որոնց մէջէն  
Քանանիդէս անունով մեծ իշխան մ'ալ Հայա-  
տան եկաւ , որմէ սերեցաւ գնթունեաց նախա-  
րարութիւնը :

Հ. Զարմայրի վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Տրոյացւոց Պրիամոս թագաւորին խնդրա-  
նօքը Զարմայր՝ Ասորեստանցւոց Տեւտամոս թա-  
գաւորին և Հայոց զօրաց գլուխն անցնելով Տրո-  
յացւոց օգնութեան գնաց ընդդէմ Հելլենացւոց ,  
և պատերազմին մէջ շատ քաջութիւններ ընե-  
լէն յետոյ՝ Աքիւլէսէն վիրաւորուելով՝ մեռաւ :

Հ. Սկայորդիի օրով ի՞նչ պատահեցաւ :

Պ. Ասորեստաննեայց Սենեքերիմ թագաւորին  
որդիքն՝ Ագրամել (Արդամոզան) և Սանասար ի-  
րենց հայրն սպաննելով Հայաստան փախան , զորս  
Սկայորդին սիրով ու պատով ընդունեց և իրենց  
ընակութեան տեղ տուաւ , որոցմէ սերեցան Արծ-  
ըռւնեաց և գնունեաց նախարարութիւնները :



## ԳԼՈՒԽ Զ.

ԺԱՌԱՆԱԿ ԹԱԴԱԿՈՐԱՅ

(Պարոյրէն մինչեւ Վահէ) :

Ղափ քան զբրիստոս 600—550 .

(Պարոյր)

**Հ. Ո՞վ է Պարոյր :**

Պ. Մկայորդիին որդին ու յաջորդը :

Հ. Ասոր օրովին Հայաստանի վիճակը քաղաքական թիւնէ փոփոխութիւն ունեցաւ :

Պ. Արայ-Գեղեցկին պատերազմի մէջ մեռնելին յետոյ՝ Հայաստան իր քաղաքական անկախութիւնը կիսով չափ կորանցնելով՝ Ասորեստանեայց գերիշխանութեանը ենթարկեցաւ և Հայաստանի ներքին կառավարութիւնը միայն Հայ իշխանաց ձեռքըն էր : Բայց Պարոյր Մարաց կիաքսար իշխանին հետ դաշնակցեցաւ աղդային անկախութիւնը ձեռքը ըստ քերելու համար և Ասորեստանեայց Սարդանարադ թագաւորին դէմ պատերազմեցան , (որ թոյլ և կնամարդի մէկն էր և պալատը կանանց հետ ուոք կը մանէր ) յաղթեցին և Ասորեստանեայց մեղկ ու շռայլ թագաւորութիւնը ջընջեցին և կիաքսար Մարաց ու Ասորեստանի վրայ թագաւորեց և Պարոյր ալ Հայաստանի առաջին թագաւորն եղաւ :

Հ. Պարոյրին ո՞վ յաջորդեց :

Պ. Պարոյրին յաջորդեց իր որդին Հրաչեայ ,

որ պայծառ երես և հրային աշեր ունենալուն համար Հրաչեայ կոչուեցաւ :

**Հ. Հրաչեայի օրով ի՞նչ պատահեցաւ :**

Պ. Նաբուգոդոնոսոր Բաբելացւոց թագաւորն Հրաչեայի հետ Երուսաղէմն առաւ և Հրէից շատերը գերի վարեց . ասոնց մէջէն Շամբատ անուն երեւելի իշխանն Հրաչեայ իր հետը Հայաստան բերաւ , որմէ սերեցաւ Բագրատունեաց մեծ նախարարութիւնը :

Հայ թագաւորաց գլուխը թագ գնելու արտօնութիւնն այս նախարարութեան էր :

**Հ. Հրաչեային ո՞վ յաջորդեց :**

Պ. Հրաչեային հետզհետէ յաջորդեցին Փառնաւազ , Պաճոյն , Կոռնակ , Փաւոս , Հայկակ և Երուանդ առաջին (սակաւակեաց) :



## ԳԼՈՒԽ Է.

(Տիգրան Ա.)

**Հ. Ո՞վ է Տիգրան առաջին :**

Պ. Երաւանդ Ա.ի որդին ու յաջորդը , որ իմաստուն ու քաջակորով մէկն էր . իր հօրը գահը եւածին պէս Հայաստանի վիճակը կերպարանավոխեց ու նոր պայծառութիւն և կենդանութիւն տուաւ Հայաստանի , զինւորական վիճակը բարձրացուց , կատարելագործեց , ձիաւորաց գնդերն աւելցուց , զօրաց մէկ մասը զրահով ու վահանով ամրացուց և այս ամեն կարեւոր պատրաստու-

թիւնները տեսնելէ ետև՝ զօրաց գլուխն անցած՝ ոչ միայն Հայաստանի կորուսած տեղերն առաւ, այլ և նորա սահմաններն ընդարձակեց մինչև Գամբեք և Եւղացւոց և Ասիոյ Յունաց մէկ մասն Հարկատու ըրաւ :

Հ. Տիգրանայ օրով ուրիշ ի՞նչ յառաջդիմութիւններ տեղի ունեցան Հայաստանի մէջ :

Պ. Արհեստներն, երկրադործութիւնն ու քաղաքակրթութիւնը մեծ յառաջդիմութիւն ըրին և ըստ որում Հայերն ՚ի բնէ վաճառականութեան ընդունակութիւն ու յարմարութիւն ունէին, շատ հեռաւոր ազգաց հետ վաճառականական յարաբերութեան մտան և Երասխայ, կասպից ծովու և Օդսոս գետին վրայէն՝ որ նոյն ատեն մէկ ճիւղը կասպից ծովը կը թափէր, մինչև Բակորիացւոց երկիրն ու Հնդկաց աշխարհները և Եփրատայ ճանքով ալ Բարելըն կերթային . իսկ կարաւանով կապադովիա և Ասորոց երկրէն՝ Փիւնիկէ :

Հ. Փոխադրութեան և Երթեւեկութեան դիւրութեան համար Հայք ի՞նչ միջոց ՚ի դործ դրին :

Պ. Նաւաշինութեան ձեռք զարկին և կասպից ծովն ու Եփրատ գետը նաւարկելի ըրին, ինչպէս նաև ուրիշ քանի մը գետեր ալ :

Հ. Հայք ի՞նչ բանի վաճառականութիւն կ'ընէին :

Պ. Ամեն տեսակ ապրանաց և լաւ տեսակ ջորի, ձիան և ուրիշ բերքեր Փիւնիկէ տանելով Տիւրացւոց կը վաճառէին և փոխարէն ոսկի, արծաթ, պատուական քարեր և ուրիշ թանկադին

նիւթեր կ'ստանային : Ուրիշ շատ մը հարկաւոր արհեստներու հետ ոստայնանկութիւնը և գարբնութիւնը մեծ յառաջդիմութիւն ըրին . զի այս վերջինը կապուած ըլլալով զինւորական արհեստն՝ բնականաբար մեծ յառաջդիմութիւն պիտի ընէր, և ահա այսպէս պատերազմական գործիքները նոյն ժամանակին համեմատ լաւ կատարելագործուած էին :

Սոյն ատենները Երեմիա մարդարէն Հայերն օգնութեան կոչեց Բարելացւոց զեղիս թագաւորաց դէմ, որք Հրէից ժողովուրդն ու սրբաղան անօթները գերի տարած էին :

Հ. Տիգրանայ փառքն աւելցնող գործը ո՞րն եղաւ :

Պ. Մարաց Աժդահակ թաղաւորին դէմ ըրած պատերազմը :

Հ. Ի՞նչ պատճառաւ պատերազմեցաւ :

Պ. Վասն զի Աժդահակ միշտ վախի մէջ ըլլալով որ իր թոռը՝ Կիւրոս թագաւորութիւնն իր ձեռքէն պիտի յափշտակէ, և երբ լսեց թէ Տիգրան կիւրոսի հետ բարեկամութեան դաշինք կապերէ, վախն աւելցաւ, և ահա ասոր համար կը ջանար այս երկուքին բարեկամութիւնն աւերել :

Հ. Աժդահակ կրցան իր այս նպատակին հասնիլ :

Պ. Ո՛չ :

Հ. Ինչո՞ւ :

Պ. Վասն զի Տիգրանայ հետ պատերազմելով մեռաւ :

Հ. Այդ պատերազմին պարագաները պատմէ :  
 Պ. Աժդահակ՝ որ միշտ վախի ու կասկածանաց մէջ էր, հետեւեալ երազը տեսաւ՝ « երազին մէջ ձիւնով ու սառուցով պատած լերան մը քով երկիր մը գացեր է եղեր, որուն համար ըսեր են թէ չայաստանն է . նոյն լերան գագաթը նայելու ատեն տեսեր է որ կին մը երեք չափահաս մարդիկ ծներ է . ասոնցմէ մին առիւծի վրայ հեծածարեւմուտք վազեր է , երկրորդն ընծի վրայ նըստած հիւսիսային կողմն արշաւեր է , իսկ երրորդն ահագին վիշապի մը վրայ հեծած՝ իր տէրութեանը վրայ յարձակեր է . ինք որ այս միջոցիս իր կոորդ զնէ կը մատուցանէ եղեր, վիշապին վրայ հեծնողը մօտենալով ուզեր է կուռքերը կործանել . Աժդահակ վազեր և երկար ատեն պատերազմեր է նոյն քաջին հետ, բայց ինք վերջապէս ինկեր մեռեր է » :

Հ. Այս երազին հետեւանքն ի՞նչ եղած է :

Պ. Իր մեծամեծները խորհուրդի կանչելով՝ մեկնութիւն խնդրեր է . ամէն մէկը մէյմէկ բան ըսեր են, բայց ինք բնաւ մէկու մը ըսածին չհաւանելով՝ հետեւեալ խորհուրդն յղացեր ու ՚ի գործ դրած էր :

Հ. Ի՞նչ էր այդ խորհուրդը :

Պ. Աժդահակ Տիգրանին նամակ մը գրելով պատգամաւորներ զբկեց, խնդրելով որ իւր Տիգրանուհի քոյլն իրեն կնութեան տայ, և թէ ասով երկու դրացի տէրութեան մէջ տեւական խաղաղութիւն կը հաստատուի և թշնամիներէ ապահով կ'ըլլան :

Տիգրան հաւանեցաւ և կատարեց Աժդահակյ խնդիրը . բայց որովհետեւ Աժդահակ այս միջոցով կ'ուղէր իւր նպատակին համնիլ, ուստի իւր կնոջը՝ Տիգրանուհին ըսաւ . « Քու եղբայրը, Տիգրան, իր Զարուհի կնոջմէն թելադրեալ որ քու տիկնութեանդ ու փառքիդ վրայ կը նախանձի, կ'ուղէ զիս մեռցնել, որպէս զի Զարուհին Մարաց ալ թագուհի ըլլայ : Արդ՝ կամ եղբայրդ պէտք է մեռցնես և կամ աշխարհի առջեւ խայտառակ ըլլաս, և թէ եթէ չկատարես իմ ըսածս, գիտցիր նաեւ որ զքեզ մեռցնել կուտամ» :

Հ. Տիգրանուհի ի՞նչ ընթացք բռնեց :

Պ. Արտաքուստ հաւանութիւն կեղծեց առահի, բայց հաւատարիմ մարդոց ձեռքով գաղտնիքն անմիջապէս իմացուց իւր եղբօրը՝ Տիգրանին :

Հ. Աժդահակ Տիգրանուհին յայտնելէն յետոյ իր դիտաւորաւթիւնը՝ ի՞նչ միջոց բանեցուց զայն իրականացնելու, այսինքն, զՃիդրան սպաննելու համար :

Պ. Աժդահակ վստահ ըլլալով Տիգրանուհին վրայ, մարդ զբկեց Տիգրանին և հրաւիրեց որ երկու տէրութեանց սահմանակից տեղ մը գայ հարկաւոր բանի մը վրայ խորհրդակցելու համար . բայց Տիգրան որ խարդաւանքն իր քրոջը միջոցաւն արդէն իմացած էր, պատասխան զըրկեց թէ շուտով կը տեսնուինք պատերազմի դաշտին վրայ, և անմիջապէս չայոց, վրաց և Պղուանից զօրքը ժողվելով քալեց Մարաց սահմա-

Նը և հոն քիչ մ'ատեն սպասեց մինչեւ որ քոյրը՝  
Տիգրանուհին փախաւ և իր քովը եկաւ :

Հ. Աժդահակի ի՞նչ ըրաւ երբ լսեց այս անակնկալ յարձակումը :

Պ. Աժդահակի այս անակնկալ յարձակումէն շիոթած կամայ ակամայ ժողվեց իր զօրքը և Տիգրանայ դէմ պատերազմի ելաւ, բայց պատերազմին մէջ Տիգրանէն սպաննուեցաւ, որով և վերջացաւ պատերազմը, որ խիստ կատաղութեամբ տեղի ունեցաւ :

Հ. Տիգրան Աժդահակայ մահուանէն յետոյ ի՞նչ ըրաւ :

Պ. Պատերազմի դաշտին վրայ այս պայծառ յաղթութիւնը տանելէն յետոյ՝ յաղթանակաւ մինչեւ Մարաստանի ներքին կողմերը դնաց և Աժդահակայ արքունեաց աւարներն ու անոր առաջին կինը՝ Անոյշ, ըստ Գողթան երդչաց՝ վիշտաց մայրը և 10,000 էն աւելի թագաւորական ցեղէ մարդիկ և ուրիշ գերիներ իւր հետն առած փառօք Հայաստան վերադարձաւ և իր հետը բերած մարդիկը Մասիս լերան արեւելեան կողմը՝ երասխ գետին քով Տամրատ, Ռսկիողայ, Դաժդոյնք ու Վրանջունիք ըսուած տեղերը և մէկ մամն ալ Խրամ, Զուղայ ու Խոշակունիք աւաններուն մէջ բնակեցաւց, որոցմէ յառաջ եկաւ Վիշտապազունք կամ Մուրացան կոչուած մեծ նախարարութիւնը, իսկ Տիգրանուհին՝ Տիգրան իր շինած քաղաքը Տիգրանակերտ դրկեց և նոյն դաւառին եկամուան անոր ռոճիկ կապեց :

Հ. Յիշատակութեան արժանի ուրիշ ի՞նչ գործեր ունեցաւ Տիգրան :

Պ. Պարսից կիւրոս մեծ թագաւորին օդնութեան գնաց զօրքով և անոր հետ Բաբելացւոց թագաւորին և անոր դաշնակցացը դէմ մեծամեծ պատերազմներ մղեց . Նաեւ կիւրոսին Բաբելոնն առած ատեն՝ անոր օդնական ու գործակից եղաւ, ինչպէս որ 100 տարի յառաջ Երեմիա մարդարէն Բաբելոնի կործանումը մարդարէացած ատեն յայտնի գուշակած էր թէ Հայոց թագաւորն ալ անոր կործանիչներէն մին պիտի լինի « առէք նշան ի վերայ Երկրիդ (Բաբելացւոց), փող հարէք ընդ աղդս ամենայն, հրաւիրեցէք ՚ի վերայ գորա գունդս : Պատուէր տուք յինէն Արքունութեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին » . Երեմիա ԾԱ. 27 :



## ԳԼՈՒԽ Ը.

(Տիգրանին յաջորդները մինչեւ Վահէ) :

(Վահագն)

Հ. Տիգրանին ո՞վ յաջորդեց :

Պ. Տիգրանին յաջորդեց իր որդին Վահագն :

Հ. Վահագնի վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Վահագն այնչափ քաջութիւններ գործեց, որ Հայք վինքը դից կարգը գրին և իր մահուանէն յետոյ Վրաստանի կողմերն անոր արձանը կանդնելով պաշտեցին, առանձին քրմաց գաս մը

կարգելով՝ որոնց գլխաւոր պարտաւորութիւնն էր պաշտօն տանիլ իրենց ազգային գիւցազնին : Վահագնի վրայ շատ երգեր շնուած է, որոց մէջ կը պատմուի թէ վիշապներու հետ կռուեր, յաղթեր և չերակլէսին նման շատ քաջութիւններ ըրեր է . ասոր ցեղէն յառաջ եկած է վահնունեաց կամ վահունեաց նախարարութիւնը :

Հ. Վահագնի վրայ շնուած երգերէն կայ պատմութեան մէջ :

Պ. Վահագնի վրայ շնուած երգերէն միայն սա մասը յառաջ կը բերէ Խորենացին, որ մինչեւ իր ժամանակի երդիչները նուագարաններով կը նուագեն եղեր և ինք ալ լսէր է,

« Երկնէր երկին և երկիր .  
« Երկնէր և ծիրանի ծով .

« Երկն ՚ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգնիկն :  
« Ընդ եղեգան փող ծովս ելանէր .  
« Ընդ եղեգան փող բոց ելանէր ,  
« Եւ ՚ի բոցոյն պատանեկիկ վազէր ( վազէր խարտեալ պատանեկիկ ) :

« Նա հուր հէր ունէր ,  
« Ապա թէ բոց ունէր մօրուս  
« Եւ աշկունքն էին արեգակունք » :

Հ. Վահագնի ով յաջորդեց :

Պ. Վահագնի յաջորդեց իր որդին՝ Առաւան . իսկ Առաւանին՝ որդւոց որդի հետզետէ յաջորդեցին ներսէն, Զարեհ, Արմոդ, Բագամե վան, որ Շամիրամակերտ քաղաքը նորոգեց և իր անունովը վան անուանեց : Ասոնց գործոցն ու որ-

չափ ատեն թագաւորելնուն վրայ մեր պատմագիրներուն մէջ տեղեկութիւն մը չկայ . միայն արտաքին պատմիչներէն չերոդոտոս, Քսենովոն և այլք կ'աւանդեն թէ ասոնց օրովն Հայաստանի հարաւային և արեւմտեան մասերը Պարսից իշխանութեանը ենթարկեալ էին ու Պարսիկ կուսակալներով կը կառավարուէին, և Պարսիկ կուսակալներին Խաղտէացւոց, Տայոց, Կորդուաց նահանգներէն և Արարատայ Բասեան գաւառէն զօրք և տարին՝ տուրքի տեղ 20,000 գեղեցիկ ձիան կ'առնուին Պարսից թագաւորին համար, վասն զի այն կողմերու ձիերը փոքր կաղմած և արտաքոյ կարգի աշխոյժ ըլլալնուն համար Պարսկաստանի մէջ շատ յարգի էին :

Հ. Յիշեալնահանգները Բնչ պատճառաւ Պարսից իշխանութեանը ենթարկուած էին :

Պ. Այս մասին եւս մեր ազգային պատմագիրք տեղեկութիւն մը չեն աւանդեր մեզի, միայն արտաքին պատմիչներէն սաշակը կընանք գիտնալթէ Պարսիկք 200 տարիի չափ այդ տեղերուն իշխեր են :

Հ. Վանին ով յաջորդեց :

Պ. Վանին յաջորդեց իր որդին՝ Վահէ, որ Աղէքսանդր մեծին գէմ 40,000 հետեւակ և 7,000 ձիաւոր Պարսից Դարեհ թագաւորին օդնութեան զրկեց . բայց Դարեհ յաղթուեցաւ և Աղէքսանդր Հայաստանի ալ տիրեց . Վահէ փորձ փորձեց Մակեդոնացւոց լուծը մերկանալու, սակայն չյաջողեցաւ և ինքն ալ պատերազմին մէջ Աղէք-

սանդրէն զարնուելով՝ մեռաւ, որով և վերջացաւ Հայկազանց տէրութիւնը Քրիստոսէ 330 տարի յառաջ։

Հետեւաբար Հայաստան Մակեդոնացւոց իշխանութեանը Ենթարկեցաւ։



ՀԱՅՈՅ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՈՆԸ

Հ. Հեթանոսական կրօնքն Հայոց մէջ Երբ մկան մուտ գտնել։

Պ. Արայ գեղեցկի ժամանակները, վասն զի նոյն ատենէն Հայք՝ Արմաւիրի մէջ Արմենակայ տնկած սոսիներու տերեւներուն շարժումէն մկան հմայութիւն ընել, և ինչպէս որ Դօդոնայ քաղաքը Պեղասդացւոց՝ նոյնպէս և Արմաւիրն Հայոց համար նուիրական էր։

Հ. Հայոց հեթանոսական կրօնքը ո՞ր ազգի կրօնին կը նմանէր։

Պ. Հայոց ազգն ըստ որում 'ի սկզբանէ մեծ կապակցութիւն ունէր Արեաց ազգերու հետ, ինչպէս որ յայտնի է շատ մը գետերու անուններէ, մեր նախնեաց նոցա հետ ունեցած միաբանական գործերէն և աշխարհագրական դիրքէն, որով սահմանակից էր Հայաստան այդ ազգաց երկիրներուն և այս պատճառաւ Հայաստանի արեւելեան մասերը լցուած էին Պարսիկներով և Մարերով, հետեւաբար և Հայոց հեթանոսական կրօնքն ալ ըստ մեծի մասին նման էր նոցա Զրադաշտական կրօնին։

Հ. Ասոր համար ուրիշ ի՞նչ ապացոյց կայ։

Պ. Հայք գերագոյն էակին Արամազդ անունը կուտային, Արեաց ազգերն ալ Առւրամաստա ասկէ զատ՝ Հայք և թէ Արեաց ազգերն հոգեղէն երկու էութիւն կը դաւանէին՝ բարի և շարկամ հրեշտակ և դեւ։

Հ. Հայք մեհեաններ ունէին :

Պ. Հայք ՚ի սկզբան մեհեաններ չունէին, վասն զի աստուածութիւնը մեհեաններու մէջ փակելն արդիլուած էր, բայց յետոյ երթալով ուրիշ խառն պաշտամունքներ ալ մուտ գտան առաջ ուան պարզ վարդապետութեան մէջ : Առաջ Փոքր Ասիս կողմերն սկսաւ Մնահիտ չաստուածուհւոյն պաշտօն նուիրելն և հոն հաստատուեցան նմա փառաւոր պաշտամունք և հոյակապ մեհեաններ կառուցուեցան :

Հ. Մեր նախնեաց պարզ կրօնքն երբ աւելի խառնակեցաւ :

Պ. Արշակունի թագաւորաց ժամանակը մեր պարզ կրօնն աւելի խառնակեցաւ և Յունաց դիւցարանութիւնը բոլորովին կերպարանափոխեց, վասն զի մեր Արշակունի թագաւորները Յունաց չաստուածներուն պատկերներն Հայաստան բերին և նոյց համար հոյակապ մեհեաններ կառուցանելով փառաւոր պաշտամունքներ և քրմական նուիրապետութիւն ու կարգեր հաստատեցին : Ամենէն յառաջ Աշտիշատը, յետոյ Թիլը, Անի ամրոցը, Երիզը, Բագայառինը և Բագաւան կամ Դիւցաւանը Հայոց համար նուիրական տեղեր էին, յորս փառաւոր մեհեաններ և քրմաց դասեր կային :

Հ. Քրմապետութեան պատիւը ո՞ր ցեղին յատկացեալ էր :

Պ. Քրմապետութեան պատիւը մինչև Տիգրան Բ. ի օրերը Վահագնի ցեղին յատուկ էր ժառան-

գական իրաւամբ , բայց երբ ասոնք դրկուեցան , ուրիշներ կը կատարէին այդ պաշտօնը և շատ անգամ մեր թագաւորաց որդիքն ու թոռները կ'ստանային այդ բարձր պատիւը մեր թագաւորներէն :

Հ. Ի՞նչ կերպ պաշտամունք կը նուիրուէին չաստուածոց :

Պ. Շատ անգամ անուանի թագիններուն և չաստուածոց ուխտի կ'երթային և զոհ կը մատուցանէին , զորօրինակ՝ ցուլ, նոխազ, ձի և ջորի որք սպիտակ և ոսկով ու արծաթով պէտք էր զարդարուած ըլլապին . նաեւ ոսկի պսակ, ականակապ անօթներ և երբեմն ծաղկանց պսակներ և ծառի ճիւղեր կը նուիրէին :

### ՀԱՅՈՑ ԳԼԽԱՆՈՐ ԶԱՅՏՈՒԱԾՆԵՐԸ

Հ. Ո՞րն էր Հայոց գլխաւոր չաստուածը և ո՞ւր նորա մեհեանը :

Պ. Արամազդ , որ չաստուածոց Հայրը կը սեպուէր , և նորա հոյակապ պատկերն Անի ամրոցը դրուած էր , ուր կը նստէին նաեւ քրմապետները և ուր կը թաղուէին մեր Արշակունի թագաւորները . իսկ քրմապետները թագաւան կը թաղուէին :

Հ. Արամազդայ միւս պատկերն ո՞ւր էր :

Պ. Բագաւանն , ուր թաղուած էր Տիգրան Գ. ի եղբայրը՝ Մաժան քրմապետը . հոս հիւրերը Արամազդայ պատկերին զոհերով և նուէրներով կը

բաւականանային : Այս պատճառաւ այդ պատկերն Արամազդ վանատրի կը կոչուէր :

Մեր Վաղարշ թագաւորը նոռասարդ ամսուան մուտքերը նոյն տեղոյն յատկացուց և ամանորաբեր տօնն հոն հաստատեց , զի նոռասարդ ամիսը մեր ազգային ամանորաբերն է :

Հ. Ո՞րն էր Հայոց երկրորդ չաստուածը :

Պ. Անահիտ չաստուածուհին , որ ծնունդ էր Արամազդայ , մայր զգաստութեան , փառք Հայոց ազգին , կեցուցիչ , շունչ և կենդանութիւն աշխարհին Հայոց :

Հ. Անահիտ չաստուածուհոյն պատկերն ուր կը գտնուէր :

Պ. Եկեղեց գաւառի երիզ աւանը և ուր նորա բագնին խորին ջերմեռանդութեամբ ուխտի կ'երթային , և Հայոց թագաւորներու հիւանդութեան ժամանակ առողջութիւն կը ինդրէին և յաղթութեան ժամանակ շնորհակալութիւն կը մատուցանէին :

Հ. Անահիտ չաստուածուհոյն միւս պատկերն ուր էր :

Պ. Տարօն գաւառի Աշտիշատ դիւզ : Այս պատկերը ոսկեծին , ոսկիսամայր դիք կամ ոսկիսատ կը կոչուէր , վասն զի ամբողջ իրանը (մարմին) ոսկեզօծ պղինձ էր :

Հ. Ո՞րն էր Հայոց երրորդ չաստուածը :

Պ. Վահագն , որոյ պատկերն ու մեհեանը Աշտիշատայ մէջ էր և պատկերը վիշապաքալն վահագնի կը կոչուէր , իսկ մեհեանը վահէվանեան , և նաեւ Հաշտից տեղի :

Վահագնը նոյն էր Հայոց համար ինչ որ էր Հերակլէսն Յունաց համար :

Հ. Թիշեալ չաստուածներէն զատ Հայք ուրիշ ինչ չաստուած կը պաշտէին :

Պ. Տիւր անուն չաստուածը , որ երազներ մեկնող և ուսմանց ու դպրութեանց պաշտպան էր : Ասոր մեհեանը Աշտիշատ քաղաքին մօտ ճանբու վրայ կառուցուած էր և կը կոչուէր երազամոյն , և միանգամայն Դիւան դրչի Արամազդայ կամ ուսման և ճարտարութեան մեհեան:

Նաեւ՝ Մհրական դիք , որոյ առաջին կրակը միշտ անշէջ կը պահէին . ասոր մեհեանը Բագաւան կամ Բագայառին էր :

Նանէական դիք , որ նոյն էր Հայոց՝ ինչ որ էր Աթենամն Յունաց համար . ասոր մեհեանը Թիւն աւանի մէջ էր :

Աստղիկ , որ հոմանիշ է Յունաց Ավրոդիտէն . ասոր մեհեանը Աշտիշատայ մէջ էր :

Բարշամեան դիք , որ միանգամայն Սպիտակափառ դիք կը կոչուն , վասն զի փղոսկրէ , բիւրեղէ և արծաթէ շինուած էր :

Տիգրան Բ. այս կուռքը Միջագետէն թորդան զրկեց :

Կար նաեւ Թարաթա անուն չաստուած մը , զոր մեր Արդար թագաւորը կը պաշտէր :



ԳԼՈՒԽ թ.

ԺԱՄԱՆԱԿ ԱՆԻՇԱԾՆՈՒԹԵԱԸՆ

(Հայաստան Մակեղոնացւոց և մերթ Սելեւկիացւոց  
իշխանութեանը ներբեւ) :

Նախ քան դՔրիստոս 550—450 :

(Կուսակալք)

Հ. Վահէի մահուրնէն ետև Հայաստան ո՞րքան  
ատեն օտարի իշխանութեան ներքեւ մնաց :

Պ. Վահէի մահուրնէն ետև Հայաստան մերթ  
Մակեդոնացւոց և երբեմն Սելեւկիացւոց իշխա-  
նութեանը ներքեւ 180 տարի մնաց և այսքան ա-  
տեն Մակեդոնացւոց և Սելեւկիացւոց կողմանէ  
զրկուած կուսականներով կառավարուեցաւ :

Հ. Մակեդոնացւոց կողմէ ո՞վ եղաւ առաջին  
կուսակալլ :

Պ. Վահէի մահուրնէն ետև Մեծն-Աղեքսանդր  
Հայաստանի վրայ Միհրան անունով մէկը կուսա-  
կալ զրկեց, որ վեց տարի կառավարեց :

Հ. Միհրանին ո՞վ յաջորդեց :

Պ. Մեծն-Աղեքսանդրի մահուրնէն ետև Ա-  
ղեքսանդրի զօրավարները նորա տիրած ընդար-  
ձակ երկիրներն իրենց մէջ բաժնեցին: Հայաստան  
ալ Նէոպաղոմէոսի վիճակեցաւ, որ Հայերը սաս-  
տիկ նեղելով կը կառավարէր :

Հ. Նէոպաղոմէոսի օրով ի՞նչ պատահեցաւ :

Պ. Ասոր օրովը կապադովկիա զրկուելով իր օ-  
րինաւոր իշխանութենէն՝ Մակեդոնացւոց գեր-

դիկկաս մեծ իշխանին իշխանութեանը ենթարկե-  
ցաւ և Մակեդոնիոյ նահանգներէն մին դարձաւ,  
որ Պերգիկկասի կողմէ զրկուած եւմենէս անուն  
կուսակալի մը ձեռքով կը կառավարուէր: Կա-  
պադովկիոյ թագաւորին՝ որդին՝ Արիթէոս կամ  
Արիարաթ ինքինք մահուրնէ աղատելու համար  
Հայաստան փախաւ, ուր մեծ պատառվ ընդուն-  
ուեցաւ. Արիարաթ Նէոպաղոմէոսի դէմ դըրգ-  
ուեց Հայերը և յորդորեց վանել զայն Հայաստա-  
նի սահմաններէն:

Հ. Արիարաթի այս խորհուրդն ի՞նչ արդիւնք  
ունեցաւ:

Պ. Սիւնեաց Աղուարդ Հայ նախարարն Հայոց  
զօրաց գլուխն անցնելով՝ յարձակեցաւ Նէոպա-  
ղոմէոսի վրայ և զայն արտաքսեց Քրիստոսէ 317  
տարի յառաջ և նշկահելով Մակեդոնացւոց տէ-  
րութիւնը՝ սկսաւ ինքնագլուխ պայտագտել:

Հ. Պերգիկկաս երբ լսեց այս անցքն, ի՞նչ ը-  
րաւ:

Պ. Եւմենէսի հրաման զրկեց որ երթայ խաղա-  
ղէ զՀայաստան և ՚ի հնազանդութիւն ածէ նաև  
զՆէոպաղոմէոս, որ սկսած էր ինքնագլուխ կա-  
ռավարել. Եւմենէս տեսնելով Հայոց զօրութիւ-  
նը՝ յորդորեց Աղուարդ քաջ իշխանին ինդիրը  
խաղաղութեամբ վերջացնել, հետեւաբար Նէո-  
պաղոմէոս երկրորդ անդամ մտաւ Հայաստան  
Աղուարդին իրբեւ երկրորդը:

Հ. Նէոպաղոմէոս Եւմենէսին կարգադրու-  
թեամբն Աղուարդին իրբեւ երկրորդը համար-

ուելուն նկատմամբ զգացած դժոհութեան վը-  
րէմը Եւմենէսի դէմլուծելու համար ի՞նչ բանի  
ձեռնարկեց :

Պ. Քիչ մը ժամանակէ ետև Եւմենէսի դէմ  
պատերազմի ելաւ , բայց պատերազմին մէջ Եւ-  
մենէսի ձեռօք սպաննուեցաւ և Աղուարդ այլ  
եւս ինքնադլուխ սկսաւ պայազատել , և Արիա-  
րաթին զօրք տալով՝ զրկեց Եւմենէսի վրայ , որ  
պատերազմին մէջ մեռաւ և Արիարաթ իր հօրը  
աթոռն անցաւ և Հայոց զօրքերը պատռով և ա-  
ռատ նուէրներով Հայաստան զրկեց :

Հ. Աղուարդի ովլ յաջորդեց :

Պ. Աղուարդին յաջորդեց Արտաւազ կամ Ար-  
տաւազան իշխանն՝ ըստ Պողիբոսի՝ Ատրպատա-  
կանի թագաւորը , որուն դէմ Անտիոքոս մեծ՝  
Սելեւկիացւոց թագաւորը պատերազմի ելաւ .  
բայց Արտաւազ առանց պատերազմելու հնա-  
զանդեցաւ և Հայաստան Սելեւկիացւոց իշխա-  
նութեանը ենթարկեցաւ Քրիստոսէ 284 տարի  
յառաջ :

Հ. Արտաւազին մեռնելէն ետեւ Հայաստան  
ի՞նչ վիճակ ունեցաւ :

Պ. Արտաւազին մահուլնէն յետոյ Անտիոքոս  
Հայաստանի կուսակալութիւնը երկու բաժնեց .  
Մեծ-Հայոց վրայ Արտաշէս անուն մէկն իշխան  
դրաւ , իսկ Փոքր-Հայք և Ծոփաց գաւառնին  
վրայ ալ Զահրան կամ Զատրիատէս ( Զարեհ ) իշ-  
խանը կարդեց 189 թուականին :

Այս միջոցիս Աննիբաղ կարքեղոնացւոց զօ-

րավարն Հռովմայեցիներէն յաղթուելով Անտիո-  
քոսին քով փախաւ և երբ Հռովմայեցիք Ան-  
տիոքոսին ալ յաղթեցին , ստիպեցին որ Աննի-  
բաղն իրենց յանձնէ : Աննիբաղ ապահով չսեպե-  
լով իր վիճակը փախաւ Հայաստան և Արտաշէսին  
ապաւինեցաւ : Աննիբաղ օդտակար խորհուրդ-  
ներ տուաւ Արտաշէսին , որ նորա խորհրդովն  
Արտաշատ քաղաքը շինեց Երասխ գետին վրայ :  
Հ. Արտաշէս Սելեւկիացւոց լուծը թօթափե-  
լու ձեռնարկեց :

Պ. Արտաշէս տեմնելով հետղէետէ Սելեւկի-  
ացւոց տկարանալն ու Հռովմայեցւոց զօրանալը ,  
Հռովմայեցւոց հետ դաշնք դրաւ , և Սելեւկի-  
ացւոց լուծը թօթափեց և 12 տարի ինքնադլուխ  
թագաւորեց . Բայց Սելեւկիացւոց Անտիոքոս  
Եպիփան թագաւորը շատ զօրքով Հայաստան ե-  
կաւ . Արտաշէս չկրնալով դէմ դնել , հնազան-  
դութիւն յանձն առաւ և շատ դանձ ու հարկ  
վճարելով ետ դարձուց : Արտաշէս կարծելով որ  
այս բանին պատճառը Զարեհն է , զօրքով անոր  
վրայ քալեց . Զարեհ դէմ դնելու անկարող ըլ-  
լալով՝ խոնարհեցաւ և իր Դորոն կամ Դարան  
որդին պատճանդ տալով՝ ինդիրն հաշտութեամբ  
վերջացաւ :

Հ. Զարեհի ովլ յաջորդեց :

Պ. Զարեհի յաջորդեց իր որդին Միհրորու-  
զան ( Մորփիւղիկէս ) , որ Մակեդոնացւոց Արիա-  
րաթ թագաւորին օգնութեամբ իր հօրը տեղ  
պայազատեց : Արտաշէս խորհուրդ տուաւ Արիա-

ըաթին որ Զարեհի որդիքն սպամնելով՝ երկիրը  
մէջերնին բաժնեն, բայց Արփարաթ չհաճեցաւ  
այս վատ խորհուրդն ՚ի գործ դնել և ընդհաւ-  
կառակն Միհրոբուզանին իր հօրը յաջորդելուն  
նպաստեց : Արտաշէս առանձին ուղեց ՚ի գործ  
դնել իր այս չար խորհուրդը, բայց մահը վրայ  
հասաւ :

Հ. Արտաշէսի հվ յաջորդեց :

Պ. Արտաշէսին յաջորդեց իր որդին Արտա-  
շազդ . ասոր օրովը Պարթեւները եկան տիրեցին  
Հայաստանի Քրիստոսէ 150 տարի յառաջ :

Հ. Հայաստանի այս 180 տարուան անիշխա-  
նութեան վիճակն ինչպէս կը նկարագրէ Մովսէս  
Խորենացի :


Պ. Մովսէս Խորենացին առ Սահակ Բագրա-  
տունի Եշխանն հետեւեալ կերպիւ կը նկարագրէ  
180 տարուան վիճակը :

« Յայսմհետէ (յետ մահուանն Վահէի) մինեւ  
ցթագաւորութիւնն Վաղարշակայ ՚ի Հայս՝ ոչինչ  
ճշմարտագոյն ունիմ քեզ պատմել, քանզի չփոթ-  
իմն ամբոխից լեալ, այլը զարամբ ելանէին ափրել  
աշխարհիս և վասն այսորիկ դիւրամուտ ՚ի Հայս  
լեալ Արշակ մեծ թագաւորեցուցանէ զեզբայր  
եւր Վաղարշակ՝ ու վերայ աշխարհիս Հայոց » :



## ՅԱԻՆԵԼՈՒԱԾ

Ի ՄԱՍՆ ԱՌԱՋԻԿ :



## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հայկազանց հարստութիւնը՝ զոր երեք շրջան-  
ներու (գարագլուխ) բաժնեցինք, վարչական  
կազմաւորութեան մէջ տարրեր դրութիւններ ու-  
նեցած է, ինչպէս որ պատմութեանս ընթացքին  
մէջ կրցած է տեսնուիլ, զոր օրինակ՝ Հայկէն մին-  
չեւ Արամ Հայաստան տեսակ մը ապակեգրոնա-  
ցական եղանակաւ կամ նահապետական ռամկա-  
վարութեամբ կառավարուեր է, վասն զի անց-  
նիւր նահապետ (նախարար) իւր տոհմը տանու-  
տիրական իրաւամբ կը կառավարէր :

Ուստի այս երեք շրջաններուն վրայ կուզենք  
ընդհանուր տեսութիւն մ'ընել :

Ապակեգրոնացական դրութիւնը վարչական  
խիստ լաւ եղանակ մ'է, բայց երբ անցնիւր նա-  
հանդ կեդրոնին հետ կապուած չլինի, կեդրոնը  
կը տկարանայ և երկրին նիւթական և բարոյական  
ոյժը կը ջլատի, որմէ յառաջ կուգան այն չա-  
րիքը, որ տեղի գտած է Հարմայի ժամանակ :

Եւ երբ ՚ի նկատ առնունք մանաւանդ երկրին  
աշխարհագրական դիրքը, ժամանակին հանդա-  
մանքները և դրացի ազգաց բարոյական վիճա-  
կը, որ յայսնի է, այն ատեն այս կերպ վարչու-

թեան մը հետեւանքներն իմաստասիրելը դըժուար չինիր՝ «ամենայն թագաւորութիւն յանձն իւր բաժանեալ աւերի» :

Հետեւաբար այս ամեն պարագաները խորին ուշադրութեան առնլով կրնանք ըսել թէ վարչական այսպիսի ձեւ մը (ռամկավարութիւն) ազատութեան տգեղ կողմն է, որ յանիշխանութիւն և 'ի կործանումն կը տանի :

Մենք հոս դիտաւորութիւն չունինք Հայկացանց նորահաստատ իշխանութեան՝ որով և աղդին պարսաւագետ լինելու, մենք իբրև պատմագիր պարտականութիւն ունինք անաշառապէս քննադատել անցնիւր դէպքի և իրողութեան բուն պատճառները, որ անկողմնակալ պատմաբանի մը աննահանջելի պարտականութիւնն է, որմէ միայն պէտք է սպասուին պատմութեան օգուտները :

Խնդիրը դրութեան վրայ է և հոս մեր ալքնադատութեան միակ առարկան այդ է և ոչ այլ ինչ : Ուստի դովեստի և պարսաւի խնդիր չունինք, մանաւանդ որ մեր յուզած խնդիրը Ազգին աղատասիրութեանը կը վերաբերի, բայց բուն խնդիրն այն է թէ կեդրոնէ անկախ ապակեդրոնացական դրութիւնը Ազգին ու Հայրենեաց անկմանն ու կործանմանը պատճառ կը լինի : Այս կէտն է զոր մենք կուզենք յառաջ բերել, միմիայն անցեալէն օգուտ քաղելու նպատակաւ :

Անցնինք ուրիշ պատճառի մը, որ խնդրոյն

Հոգին և մեր քննադատած վարչական դրութեան շարժառիթը եղած է իր ժամանակին :

Հայկայ հաստատած վարչական դրութիւնը նահապետական կամ որ նոյն է, զուտ հայրական իշխանութիւն էր, միայն բարոյական օրինաց վրայ հաստատեալ առանց զինուորութեան հարիի և պայմանի՝ տանուտիրական իրաւամբ կառավարուելու նախնական սովորութեան համեմատ, որ պարզութեան կողմանէ թէպէտ հաճելի է, բայց ապագայ պատահականութեանց առջև Ազգն ու Հայրենիքը օտարաց յարձակմանը գէմ հզօրապէս պաշապանելու անհրաժեշտ հանդամանք չունենալուն վրայ եթէ աւելցնենք անցնիւր գաւառի կեդրոնին հետ կապուած չըլլալու վնասակարութիւնը՝ որ հաւանականաբար նահապետներու զաւակաց բաղմանալէն և նոցաւրոյն արտօնութիւններ վայելելու իրաւունք ծագած և հետզհետէ մինչեւ զեղծումն յառաջացած և ռամկավարութեան յանգած է, վարչական այս եղանակն յեղաշրջելու և ժամանակին ու երկրին դրիցը յարմար դրութիւն մը յառաջ բերելու հարկն զգալի պիտի լինէր, ինչպէս որ դժանուած էր մանաւանդ Հարմալի ժամանակը :

Արամ այս ամեն պատճառներն 'ի նկատի առնլով և տեսնելով որ վարչական դրութիւնն առանց յեղաշրջելու կամ փոխելու և զինուորութիւն հաստատելու հնար չէ վրկել Ազգն ու Հայրենիքը, հոգ տարաւ նախ երկրին ոյժը զօրացնելու, զինուորութիւն և զինուորական կարգ

ու կանոն հաստատելով և նահանգները՝ դարձեալ ապակեդրոննացական ձեւին մէջ՝ կեղծոնին հետ կապելով, որով կարող եղաւ փրկել Աղջն ու Հայրենիքը :

Եւ ըստ օրում պատմութեան մը շղթային օզակները կազմող առարկաները դէպքերն են, որ յաճախ կը պատահին զարմանալի արագութեամբ, հարկ կ'ըլլայ դիմաւորաբար ասոնց մեծ ուշադրութիւն նուիրել և նոցա պատճառն ու արդիւնքը քաջ իմաստամբերը, որպէս զի աղդայինք կարենան անցեալէն իրական օգուտ քաղելով՝ փորձառութիւն ստանալ :

Քիչ մ'առաջ մեր քննադատած վարչական եղանակին անյարմարութիւնը Հարմայի օրով պատահած դէպքերով հաստատեցինք. այդ դէպքերուն արդիւնքը եղաւ Հայաստանի վարչական եղանակին մէջ Արամայ մոցուցած կարեւոր փոփոխութիւնն ու յարմարագոյն դրութիւնը :

Հայաստանի վարչական եղանակին մէջ Արամայ մոցուցած դրութիւնը որ զինուորական և քաղաքային ու քաղաքական օրինաց վրայ հաստատեալ իշխանութիւն մ'է, իր յաջորդին՝ Արայ դեղեցկին ժամանակ պատահած դէպքին ատենն ալ իր փրկարար ազգեցութիւնն ունեցաւ. վասն զի պատերազմին մէջ Արայի մահուամբը թէպէտ Հայաստան Ասորեստանեայց գերիշխանութեանը ենթարկեցաւ, բայց Աղջն իր զինուորական ոյժն ունենալուն պատճառաւ կրցաւ գոնէ իր ներքին ինքնօրինութիւնը պահպանել, և ապագային

մէջ իր կատարեալ անկախութիւնը ձեռք բերել: Ահա այսպէս ամեն դէպքը պատճառի և արդիւնքի մը կապուած ըլլալով՝ պապագային չըրշջալու համար հարկ է նախընթաց դէպքերէ և պարագաներէ օգուտ քաղել և ապագայ պատահականութեանց առջեւ միշտ պատրաստ դըտնուիլ, ինչպէս որ Շամիրամայ պատճառաւ Արայ գեղեցկին պատահած դէպքին ատեն եթէ չունենար Աղջն իր զինուորական զօրութիւնը, դուցէ Աղջն այլեւս անկախութեան երես չտեսներ և հայութիւնը երթար խառնուէր տիրող ազգին հետ, ինչպէս որ օրինակները կան :

Հետեւաբար ազգաց կենդանութեան պատճառը գլխաւորաբար զինուորութիւնն եղած է միշտ, և ճշմարիտ է թէ առանց զինուորութեան չկայ հայրենիք, և երբ չկայ հայրենիք, չկայ նաեւ անկախութիւն և ազատութիւն, զի ազգի մը ազգայնութեան յատկանիշը գլխաւորաբար երեք է, այն է՝ անկախութիւն, հայրենիք և լեզու, և երբ ազգ մ'առջի երկուքը կորանցնէ, երրորդն ալ՝ լեզուն կ'իյնայ իր բարձրութենէն և կորստեան վտանգի ենթակայ կը լինի, զի ազգի մը քաղաքական վիճակին ծանրութիւնը նոյն ազգին լեզուին վրայ ալ զդալաբար կ'ազդէ ու կը ներդործէ :

Արդ՝ Արամ իր սուր հետատեսութեամբը լեզուին ալ մեծ կարեւորութիւն տուած և իրաւամբ պատուիրած էր որ ամենքն ալ հայերէն խօսին: Դառնանք երրորդ շրջանին :

Հայ աղդն Ասորեստանեայց գերիշխանութեա-  
նը ներքեւ իր կէս անկախ վիճակին մէջ թերեւս  
աւելի երկար ատեն ընթանար . բայց Ասորես-  
տանեայց Սարդանարազ թագաւորին կանացի  
բնաւորութիւնը , ցոփ ու ինքնակալ թագաւորի  
մանվայել վարմունքը ( վասն զի բնաւ պալատէն  
դուրս չէր եներ և կանանց հետ րոք կը մանէր )  
պատճառ տուաւ որ Հայք և Մարք այնպիսի կը-  
նամարդի թագաւորի մը իշխանութեանը ներքե-  
ւն ենելու համար դաշնակցին և իրենց կատար-  
եալ անկախութիւնը ձեռք բերեն , վասն զի ի-  
րաւամբ նախատինք կը համարէին իրենց այնպի-  
սի թագաւորի մը գերիշխանութեանը ներքեւ  
դանուիլը , որ արեւելեան ծանրաբարոյութեան  
և վեհանձնութեան հակառակ է :

Հայք Պարսյրի ձեռքով և Մարաց դաշնակ-  
ցութեամբն իրենց կատարեալ անկախութիւնը  
ձեռք բերին և Մինչև Վահէի ժամանակը վայե-  
լցին զայն՝ միայն երկրին ու Հայրենեաց պաշտ-  
պանութեանն ու ներքին յառաջդիմութեան նը-  
ւիրելով իրենք զիրենք , առանց երրէք երկրա-  
կալութեան ուշ գնելու , որ Հայկազանց հարըս-  
տութեան երկարատև դիմանալուն գրեթէ միակ  
պատճառն եղած է . և եթէ Վահէ Մեծին-Ա-  
ղեքսանդրի գէմ Դարեհի հետ չդաշնակցեր , Մա-  
կեդանացւոց ձեռքով Հայկազանց հարստութիւ-  
նը չէր ջնջուեր :

Վահէի Դարեհի հետ դաշնակցութիւնը թէ-  
պէտ Հայկազանց հարստութեան ջնջուելուն պատ-

ճառ եղաւ , բայց Հայոց իրենց դաշնակցութեա-  
նըն հաւատարիմ լինելուն անջնջելի զօրաւոր ա-  
պացոյց մը թողուց , որ նշան է անշուշտ Հայոց  
հաստատամութեանը :

Հայոց հաստատամութեանն հզօր ապացոյց  
է նաև դարերու արհաւրաց գէմ իր կրօնն ու  
էութիւնը մինչև ցարդ պահպանելը , և այս հաս-  
տատամութեան վրայ մանաւանդ այն ատեն կը  
զարմանայ մարդ հիացմամբ երբ տեմնէ թէ ու-  
րիշ հին աղդերու անունն այսօր պատմութեան  
մէջ միայն կը յիշատակուի և Հայութիւնը կապրի :

Հայոց անյեղի հաստատամութեան այս ըլք-  
նաղ յատկութիւնն անվարձ մնացած չէ ՚ի հնումն:

Պարթեւաց Արշակ մեծ թագաւորը Մելեւ-  
կիացւոց ձեռքէն երբ Հայաստանն առաւ ու  
տիրեց , չէ թէ զայն իր նահանգներէն մին ըրաւ,  
այլ իր Վաղարշակ եղբայրն Հայաստանի վրայ  
թագաւորեցնելով՝ Հայոց Արշակունեաց հարըս-  
տութիւնն հիմնեց :

Արշակայ նպատակը թէպէտ կարելի է որ Հա-  
յոց բարիք մը ընել չէր , զի կուզէր հիւսիսա-  
յին աղդաց գէմ պատուար մը կանգնել , բայց  
յայտնի է որ եթէ Մեծն Արշակ վատահ չընէր  
Հայոց հաստատամութեանը վրայ , դուցէ այն-  
պիսի ձեռնարկութիւն մը չընէր :

Ուստի քառասուն երկար դարերէ ՚ի վեր  
հզօրապէս ապացուցուած Հայոց հաստատամու-  
թիւնը խնդրոյ ներքեւ չլրնար ձգուիլ :

Հայկազանց հարստութեան ջնջուելէն մինչեւ

Արշակունեաց հարստութեան կանդնումը՝ 180  
տարուան ժամանակամիջնոցի մէջ , անդադար քա-  
ղաքական փոփոխութեանց , ներքին խառնակու-  
թեան , արտաքին պատերազմաց , բարբարոսա-  
կան յարձակմանց , թագաւորական աթոռի յա-  
փըտակութեան և ուրիշ զանազան պատճառներ  
թէպէտ Հայոց բնաւորութեանը վրայ քիչ շատ  
աղդեցութիւն յառաջ բերին , բայց Հայուն բուն  
նկարագիրը չկըցին փոխել և երբ Հայն իր աղ-  
դային անկախութիւնն ստացաւ վերստին , դար-  
ձաւ իր բուն նկարագրին : Հետեւաբար այսօր  
եւս Հայոց վրայ նշաբուած ինչ ինչ յոռութիւն-  
ները պէտք չէ իր նկարագրին և բնաւորութեա-  
նը վերագրել , այլ ժամանակին պարագաներուն,  
որոց մէջ ամենէն աւելի վնասակար ներդործու-  
թիւն յառաջ բերողն ստրկութիւնն է , որում  
դարերէ 'ի վեր ենթակայ եղող ժողովուրդ մը  
իր կամքէն անկախ պատճառներով անակնունե-  
մի չէ որ ստացական պակասութիւններ և յոռու-  
թիւններ ունենայ , բայց երբ ժամանակը փոխ-  
ուի և դիւրութիւններ ու յաջողութիւններ ներ-  
կայանան , Հայն ինքնաբերաբար դուրս կը նետ-  
ուի իր վիճակէն , ինչպէս որ պատահեցաւ նախ  
Արտաւազդ կամ Արտաւազանի օրով . վասն զի  
ժողովուրդը բոլորովին դժգոհ և ձանձրացած  
լինելով նորա վատթար արարմունքներէն ու ա-  
նառակութիւններէն զնաց փարեցաւ Մեծին Ար-  
շակայ և զայն փրկիչ համարեց իրեն , այնպէս որ  
Արտաւազդ իր բանեցուցած հնարքներուն 'ի դե-  
րեւ ելնելը տեսնելով և պալատն ու հարճերը

( Հարճ դործածելու սովորութիւնը շատ հաւա-  
նական է որ կուապաշտութեան պատճառաւ և  
անիշխանութեան ժամանակ մուտ գտած լինի ,  
զի առաջներն ասոր յիշատակութիւնը չկայ պատ-  
մութեան մէջ մեր ազգին նկատմամբ ) և ինք-  
զինք անօդնական տեսնելով Արաքս գետին ե-  
զերքը սուրբ միսեց իւր սիրտը և գետն ինկաւ ,  
որով ազգն աղատեցաւ Արտաւազդի ապականա-  
րար իշխանութենէն :

Այսպէս կարող ենք ըսել թէ վարչութեան մէջ  
և իշխանութեան կողմէ տեղի գտած զեղծումնե-  
րն ու ապականութիւններն աւելի վնասաբեր կը  
լինին , ժողովրդեան մէջ անիշխանութիւնը մուտ  
ու ճարակ կը գտնէ և հետեւանքը խիստ աղետա-  
լի կը լինի :

Ժողովուրդն օրինաւոր իշխանութեան հպա-  
տակիլ կը պարտի և փոխադարձաբար իշխանու-  
թեան ալ պարտքն է զեղծումներն հալածել և  
իրաւունք ու արդարութիւն ընել :

Այսու փոխադարձ պարտեօք և իրաւամբ մի-  
այն կրնան ժողովուրդ և իշխանութիւն ներդաշ-  
նակութեամբ ապրիլ և իրական յառաջդիմու-  
թիւն գոյանալ :

Աւասիկ պատմութեանս այս առաջին մասին  
մէջ Ազգին բուն նկարագիրն ու յատկութիւննե-  
րն իմովսանն 'ի վեր հանել ջանալով՝ ազգային  
իշխանութեան գլուխ կեցողներուն ուշադրու-  
թեանը կը յանձնեմ , որպէս զի ընդհանուր դաս-  
տիարակութեան այնպիսի ուղղութիւն մը գծեն ,  
որ ժամանակիս ոգւոյն և պահանջմանցն յարմար

ազգային դաստիարակութեան բնութիւն ունեցող դրութիւն մը լինի, պարտաւորիչ ըստ ամենայնի, որուն համար միջոցներ կրնան գտնութիւն, բաւական է որ կամք և գործունէութիւն չպակսի և բաւական՝ որ մեր վարչութեան դլուխ կեցող անձինքն Ազգին ու Հայրենեաց սիրովը վառեալ կարող անձինք լինին գործելու և ազգին իրական շահն ու բարին մի միայն իրենց դրդեց և նպատակ ունենան :

Արդ՝ ազգի մը բարեկեցութիւնն ու վերածնութիւնն յարդարողը թուղթի վրայ դրուած օրէնքներ չեն միայն, այլ հիմնական դաստիարակութիւնը և ներքին բարեկարգութեան անվթար պահպանութիւնը, վասն զի երբ ժողովուրդի մը սիրտը, միտքն ու կամքը կրթուած չէ, մէկ խօսքով երբ մարդը բարոյական մարդ ընելու հոգ տարուած չէ, որ ըսելէ չզգար իր անձին, ընտանեացն, ազգին, հայրենեացն ու իր նմանեացն համար, կը նշանակէ թէ այնպիսին սիրտ ու կիրք չկրեր :

Ըսել չեմ ուզեր թէ Հայ ազգն զգայուն չէ, բայց դարաւոր ստրկութիւնն իր իմացականութեան կարողութիւնը տկարացնելու և ընթարմացնելու մեծապէս նպաստած է :

Ուստի սոյն տեսակէտով է որ կը պահանջեմ ժամանակիս ոգւոյն ու պահանջմանցն յարմար Հայ-ազգային դաստիարակութեան ուղղութիւն, որպէս զի մանկուոյն միտքը, սիրտն ու կամքն հաւասարապէս կրթուի Հայ-ազգային դաստիարակութեամբ :

## Մ Ա Ս Ն Շ.



### Գ Լ Ո Ւ Խ Ա.

ԱՐԵԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՑՈՒԹԻՒՆ

Նախ քան զՔրիստոս 150 տարի :

(Վաղարշակ)

Հ. Ի՞նչպէս ծագումն առած է Արշակունեաց հարստութիւնը :

Պ. ՄԵՃՆ-ԱՐԺԱԿ Պարթեւաց թագաւորը ՍԵ-ԼԵԿիացւոց ձեռքէն Ասիան՝ ինչպէս նաև Հայաստանն առնլով իւր եղբայրը՝ Վաղարշակ Հայաստանի վրայ թագաւորեցուց՝ Հայաստանի առանձին թագաւորութիւն չնորհելով, որպէս զի թէ իր ընդարձակ տէրութիւնն աղէկ կառավարուի ու պայծառանայ և թէ Հայաստանի թագաւորութիւնն արտաքին թշնամեաց յարձակմանը դէմ իրը պատուար մը ըլլալով՝ Պարթեւաստանը միշտ ապահով մնայ :

Արշակայ անունով Հայոց այս երկրորդ թագաւորութիւնն ալ Արշակունեաց կոչուեցաւ :

Հ. ՄԵՃՆ-ԱՐԺԱԿ Ի՞նչ կապով կապեց Հայաստանի նորահաստատ թագաւորութիւնը Պարթեւաստանի թագաւորութեան հետ :

Պ. ՄԵՃՆ-ԱՐԺԱԿ այս երկու ազգաց միջև անբաժին կապակցութիւն մը դոյացնելու նպատա-

կաւ ստակ կոխելու իրաւունքը Պարթեւաց թագաւորներուն վերապահեց և Հայոց թագաւորութիւնը Պարթեւաց թագաւորութեան երկրորդն անուանեց :

Հ. Վաղարշակ Բնչ բնաւորութեան տէր էր :

Պ. Հեզ, մարդասէր, ռազմագէտ, ուսեալ և վեհանձն մէկն էր, այնպէս որ իւր հպատակաց հետ առանց զանազանութեան կը խօսէր և անոնց խնդիրները կը լսէր :

Հ. Ի՞նչ եղաւ Վաղարշակայ առաջին գործը :

Պ. Վաղարշակայ առաջին գործն եղաւ ազդել իւր ժողովրդեան սրտին ներքին աղատութեան իշխն ու պատերազմական հոգին . ուստի ժողովրդ իւր թագաւորութեան նշանաւոր անձինքն ու զօրավարները՝ մանաւանդ Հայկայ, ինչպէս նաև կադմեանց, Գեղամեանց, Խոռոչուռնեաց, Գուգարաց, Սիսակեանց, Սմբատեանց, Քանանիդեանց և ուրիշ իշխանները՝ հրամայեց որ անցնիւրն իր իշխանութեանը մէջ զօրք ժողուէ . նոյնպէս սոյն նպատակաւ ազդեցութեան տէր զօրաւոր մարդիկ զրկեց Ատրպատական, Վրաստան և ՚ի Միջագետք Հայոց :

Հ. Այս զօրքերն ի՞նչ ըրին :

Պ. Ժամանակ շանցած շուտ մը ժողվուեցան Վաղարշակայ քով . ամենն ալ թագաւորին վրայ անսահման վստահութիւն ունէին և յամենուրեք կատարեալ ուրախութիւն կը տիրէր, այնպէս որ, ինչպէս կը դրեն պատմիչք, քիչ մնաց որ Հայատանի կէմ այս քաջարի երիտասարդ թագաւոր

ըին դրօշակին ներքեւ մտնէր, մեծ փառք համարելով իրեն զինւոր լինելը : Վաղարշակ բոլոր զօրքը դաշտի մը վրայ՝ Արաքսի եզերքն՝ Արմաւիրի մօտ բանակեցուց և հոն բաւական օրեր պատերազմական կարդ ուսցունելու զբաղեցաւ, ըստ ուրում մինչեւ այն ատեն զինւորական կարդ չգիտէին, և զանոնք մէկ քանի գաս բաժնեց, պատերազմական խիստ օրինաց վարժեցուց և զօրավարներուն ալ հարկաւոր հրամաններ տուաւ պատերազմի մասին :

Հ. Վաղարշակ բանակն այսպէս կազմաւորելէ ետև ի՞նչ ըրաւ :

Պ. Դէպ ՚ի Փոքր-Ասիա ճանբայ ելաւ և կապագովկիոյ թագաւորը՝ Մորփիւղիկէս, որ հաւատարիմէր Մակեդոնացւոց և միանդամայն Վաղարշակայ զօրանալէն վտանգ կը նշմարէր իրեն, յաջողեցաւ քիչ միջոցի մէջ զօրք ժողուել Փուխւգիէն, կապագովկիհայէն, Պոնտոսէն, Լազիստանէն և ուրիշ աշխարհներէ և Վաղարշակայ դէմ պատերազմի ելաւ :

Հ. Ի՞նչպէս եղաւ պատերազմը :

Պ. Նախ Վաղարշակ յարձակեցաւ մեծ ուժգնութեամբ . Մորփիւղիկէս յաջողութեամբ գիմարեց քանի մ'օր, իր կողմէն քիչ մարդ կորաւ և զՎաղարշակ բաւական նեղը ձգեց . յետոյ Մորփիւղիկէս յաջող ժամանակի մը մէջ յարձակեցաւ բոլոր զօրքով Վաղարշակի վրայ և մինչեւ անոր կեցած տեղն յառաջացաւ, բայց այս միջոցիս Հայկայ և Սենեքերիմայ ցեղէն՝ որ Վա-

զարշակայ շուրջը պատած էին, յարձակեցան Մորփիւղիկէսի վրայ, զարկին, ձիէն ձղեցին և սպաննեցին. նոյնպէս նորա զօրաց մեծ մասը ջարդեցին, ոմանք փախան և մնացածները գերի ինկան:

Հ. Ի՞նչ արդիւնք յառաջ բերաւ այս պատերազմը:

Պ. Վաղարշակ հետղհետէ տիրեց կապադովկիոյ, Պոնտոսի, Լաղիստանի, Խաղտեաց և Եգեացւոց երկիրներուն. տիրած տեղերուն վրայ կուսականեր դրաւ և ժամանակաւոր օրէնքներ սահմանեց զինւորական և քաղաքային:

Հ. Վաղարշակ սոյն փառաւոր պատերազմէն վերադարձին Բ'նչ ըրաւ:

Պ. Վաղարշակ ետ դառնալու միջոցին քիչ մ'ատեն Տայոց նահանգը մնաց նոյն երկիրը բարելաւելու համար, որ շատ վտանգներ կրած էր, վասն զի այս կողմի բնակիչները՝ մանաւանդ Պարխար լերան շրջակայիցն ու բազ գետի եղերաց բնակիչներն՝ իրենց դրացի լազաց և խալտեաց նման յափշտակիչ, մարդասպան և աւազակ դարձեր էին. ոչ մշակութեան, ոչ վարուցանի, ոչ բարձր հողերն հաւասարելու և ոչ մէկ բանի հոգունէին, այնպէս որ ջրերու անդադար հեղեղները դաշտերու վրայ բարձրացեր և լայնատարած տեղեր ճահճներ դարձուցեր էին:

Հ. Վաղարշակ Բ'նչ բարեկարգութիւններ ըրաւ:

Պ. Այս կողմերն անմիջապէս երեսուն հաղարէ աւելի մշակ բերել տալով ճանապարհներն ու

հողաբլուրներն յարդարեց, ճախճախուտ տեղուանքը ցամքեցուց և մշակութիւն սկսել տուաւ. նոյնպէս ջրերն հետութեամբ փաղ գետը գնալու համար ջրանցքներ փորել տուաւ, և թանձր անտառները՝ որք աւաղակաց որջ էին դարձեր, կտրել տուաւ, որոնց մէջ մեծ ճանապարհներ բացուեցան. վերջապէս սուղ միջոցի մէջ խիստ զուարձափ երկիր մը դարձաւ:

Հ. Վաղարշակ այս երկրին պայծառութեանն համար ուրիշ Բ'նչ ձեռնարկութիւններ ըրաւ:

Պ. Իրեն համար գեղեցիկ ամառանոց մը շինեց, որսի և ձիեր շատցնելու համար տեղեր սահմանեց, կող քաղաքն մօտ պարտէղներ ու այգիներ տնկեց, և կովկասէն բերած բողոք գերիներն այս նահանգը բնակեցուց, խստիւ արդիելով աւաղակութիւնն ու մարդասպանութիւնը և զարտաւորեց օգտակար արհեստներով և մշակութեամբ պարապելու, այնպէս որ Վաղարշակ միւս անգամ նոյն տեղերը գնացած միջոցին յիշեալ աւազակ ու մարդասպան անձանց բնաւորութիւնը բոլորովին փոխուած տեսաւ:

Հ. Վաղարշակ այս կարդադրութիւններն ընելէ ետև Բ'նչ ըրաւ:

Պ. Դէպ ՚ի Արտաշատ գնաց և իւր զօրքը կարգաւորելով բանակն հոն Մեծամօր գետի եղերքն հաստատեց. իր բնակութիւնը Մծրին հաստատեց և գաւառներու ու նահագներու վրայ կուսականեր դրաւ:

Հ. Վաղարշակ ազգին վերածնութեանն համար ի՞նչ օրէնքներ հաստատեց :

Պ. Վաղարշակ նոյն բարբարոսութեան դարերուն մէջ իրեւ օրէնսդիր մեծ արժանաւորութիւն ցոյց տուաւ . ամեն կարդէ ընդհանուր ժողով մը կազմելով՝ քննեց և իմացաւ Հայոց աշխարհի սովորութիւնները , անցեալ կեանքի պատմութիւնը և ըստ այնմ թագաւորական տան , ազնուականաց , հասարակ քաղաքացեաց , արհեստաւորաց , գիւղացւոց , գաւառական կառավարութեան , զինւորական կրթութեան , դատաստանի և ուրիշ բաներու համար իմաստուն օրէնքներ ու կարդադրութիւններ հաստատեց : Երկու հոգւոյ ալ պաշտօն տուաւ որ մէկերնին թագաւորն անիրաւ բան մ'ըրած ատեն , իրաւունքն ու արդարութիւնն իրեն դրով յիշեցնէ , և միւսն ալ երբ թագաւորն յանցաւորները պատժելու անհոգութիւն ընէ , միտքը ձգէ վրէժխնդրութիւն ընելու :

Վաղարշակայ կարգադրութիւնները

Հ. Վաղարշակի ի՞նչ կարգադրութիւնները ըրաւ :

Պ. Որովհետև Հայաստան աշխարհը քանի մը հարիւր նախարարութեան կը բաժնուէր , իւրաքանչիւր նախարարութեան համար մէկ տանուտէր կամ նահապետ ունենալու հինաւուրց սովորութիւնը պահելով՝ որոշեց ըստ առաջնոյն՝ անցնիւր դաւառի ժողովուրդ տանուտէրն անհապետի իշխանութեան ենթարկել ( զի ըստ ազնուապետա-

կամ կամ աւատապետական դրութեան ( ֆէօտալիդէ ) երկիրը նախարարութեան կը պատկանէր և անցնիւր նահապետ իւր երկրին տէրն էր ) պարտաւորելով իւրաքանչիւր տանուտէրն անհապետ որոշեալ թուով զօրք պահելու՝ միշտ թագաւորի հրամանին պատրաստ գտնուելու պայմանաւ , որով Վաղարշակ զինւորական գերագոյն հրամատարութիւնն իրեն կը վերապահէր :

Հ. Վաղարշակ ի՞նչ պատիւններ հաստատեց նախարարութեան մէջ :

Պ. Արշակունի թագաւորաց դլուխը թագ գընելու պատիւը թագաւատունեաց նախարարութեան տուաւ ասպետութեան պատուանով և արտօնութիւն շնորհեց տակէ տակ երեք վարսակալ գնելու :

Թագաւորին հանդերձ զգեցուցանելու պատիւը՝ զնթունեաց նախարարութեան , թիկնապահութեան պատիւը՝ խոռխոռունեաց ( 1 ) նախարարութեան ցեղին , արքունական որսերու վերակացութեան պատիւը՝ վարաժնունեաց նախարարութեան , սպասաւորութեան ( սենեկապետութիւն ) և գահաւորութեան պատիւը՝ Աբեղեանց նահապետ՝ Աբեղ իշխանին և իւր ցեղին . արքունեաց հաղարապետութեան պատիւը՝ գարեղեանց , տակառապետութեան պատիւը՝ Գը-

( 1 ) Որովհետև Վաղարշակայ օրով Խոռխոռունեաց նախարարութեան տանուտէրն անհապետը Մալխազն էր , ուստի և իր անունովը թիկնապահութեան պատիւը նաև Մալխազովութիւն ալ ըսուեցաւ :

նունեաց, քրմապետութեան պատիւը՝ Ապանդունեաց (Վահագնի ցեղին) տուաւ և թագաւորաց երկրորդն ընտրուելու իրաւունքն ալ Աժդահակայ սերնդեան, որք Մուրացան-տէր կը կոչուէին:

Հ. Վաղարշակ զինւորութեան մէջ Բնչ փոփոխութիւններ ու կարգադրութիւն ըրաւ:

Պ. Թագաւորին թիկնապահները չորս գունդի բաժնեց, իսկ մերացեալներն առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ են. աստիճաններով մէկզմէկէ որոշեց. Հայաստանի բազմաթիւ նախարարութիւններէն եօթը՝ որք իրենց քաջութեամբն ու առ թագաւորն մտերմութեամբը խիստ նշանաւոր հանդիսացած էին, Հայաստանի սահմանաց վերակացու կարգեց, որոնց տանուտէր-նահապետները կուսակալը կամ սահմանակալը և ասոնցմէ ալ չորսը բդեշին կը կոչուէին և իւրաքանչիւրն իր ձեռքին ներքե տասնական հազար զինւոր ունէին:

Հ. Վաղարշակ աղդային պատմութեան մտսին Բնչ երեւելի գործ ունեցաւ:

Պ. Մար Աբաս կատինսա անունով գիտուն և հանճարեղ մէկը նամակով մ'իր եղբօրը դրկեց վաղարշակ՝ խնդրելով որ թոյլ տայ Մար Աբասին Նինուէի արքունական գիւանին մէջէն Հայոց աղդին վերաբերեալ տեղեկութիւններն հաւաքելու. Արշակ-Մեծ ըստ խնդրոյ իւր եղբօրը՝ գոհութեամբ թոյլատրեց և հոն Մար Աբաս Հայկազանց ցեղին պատմութիւնը գտաւ և Յունարէն ու Ասորերէն գրելով Վաղարշակին բերաւ, որ մեծ

խնդութեամբ ընդունեց և նոյն պատմութեան մէկ մասն արձաններու վրայ փորել տուաւ:

Վաղարշակ սահմանեց նաև որ թագաւորի անդրանիկ որդիքը միայն Մծրին մնան, իսկ միւսներն Հաշտենից գաւառը բնակին:

Հ. Վաղարշակ յիշատակութեան արժանի ու ըեւ Բնչ գործեր ալ ըրաւ:

Պ. Վաղարշակ ինչպէս բարեկարգութեան՝ նաեւ աշխարհայնութեան ալ շատ հոգ ունեցաւ, բազում գիւղեր և քաղաքներ շինեց. Վան քաղաքը նորոգել տուաւ. իսկ Արմաւերի մէջ ալ արեգական, լուսնի և իր նախնեաց արձանները կանգնեց և 22 տարի փութաջնն գործունէութեամբ ազգը կառավարելէ ետե մեռաւ:



ԳԼՈՒԽ Բ.

(Արշակ Ա.)

Նախ քան զՔրիստոս 426 տարի :

Հ. Վաղարշակին ով յաջորդեց:

Պ. Իր անդրանիկ որդին Արշակ առաջին, որ ըստ ամենայնի իր հօրը շաւղայն հետեւեցաւ. ասոր օրովը Պոնտացիք գլուխ վերցուցին, բայց Արշակ շուտով զապեց և Սեւ ծովու եղերքն արձան մը կանգնեց, զոր Պոնտացիք երկար ատեն պաշտեցին. բայց երբ Արշակին որդին Արտաչէս իրենց գէմ պատերազմի ելաւ, բարկանալով ծովը նետեցին:

Հ. Արշակ առաջինի ներքին քաղաքականութեան առաջնորդն ի՞նչ էր :

Պ. Արշակ առաջին իր հօրը նման կը ջանարմիշտ ներքին կարգադրութիւններով չայստան աշխարհը բարգաւաճեցնելու, հետեւաբար այս երկու Արշակունի մեծ թագաւորներն աշխարհակալութեան ողի չեխն կրէր, այլ կը նայէին որ նորահաստատ կարգադրութիւններն ազդին մէջ հիմու արմատ ձգեն, և շատ իրաւունք ունէին, վասն զի բարեկարգութեան կարօտ վերածնեալ ազդ մ'ամեն բանէ աւելի երկարատե խաղաղութեան պէտք ունի, վասն զի ամեն տեսակ յառաջդիմութիւն և բարեկարգութիւն միայն խաղաղութեան ժամանակ կարելի է ձեռք բերել և ասոր հակառակ՝ անդադար պատերազմները՝ մանաւանդ աշխարհակալութեան նպատակաւ մըդուած պատերազմներն արդելք կը լինին երկրն զարդացմանն ու յառաջդիմութեանը մասին :

Սակայն Արշակայ յաջորդներն իրենց նախնեաց ուղղութեանը չհետեւեցան :

Հ. Կրօնի տարածման մասին Արշակ ի՞նչ խըստութիւն բանեցուց :

Պ. Բագրատունիները շատ չարչարեց որ Հրեց կրօնը թողուն (զի մինչև այն ատեն Բագրատունիք աղատաբար իրենց կրօնքը կը պաշտէին) ու կուռք պաշտեն, բայց անոնք յանձն չառնըլով Արշակ անոնցմէ երկու հոգի սպաննել արուաւ . իսկ միւսներն յանձն առին շաբաթ օրերը որսի և պատերազմի երթալ և թէ որ աղայ ու-

նենան չթլիատել (որովհետեւ կին չունէին) . Արշակ ալ հրաման ըրաւ որ նախարարներն ատոնց ամենեւին կին չտան, եթէ թլիատութիւն չընելու դաշինք չդնեն :

Արշակ 13 տարի թագաւորեց և մեռաւ :

### ԳԼՈՒԽ Գ.

(Արտաշէս Ա.)

Նախ քան գթրեստաս 145 տարի :

Հ. Արտաշէս առաջին ի՞նչ բնաւորութեան տէր էր :

Պ. Քաջ ու կայտառ մէկն էր . ուստի երբ իր հօրը գահն ելաւ, իւր մեծագործութեամբն ու վստահ աշխարհակալութեամբը գերազանցեց իր նախորդները, և Արշակունի թագաւորներն որ մինչև այն ատեն Պարթեւաց երկրորդը կը համարուէին, առաջին եղան, զի Պարթեւաց Արշակաւան կամ Արշակ թագաւորը նախագահութիւնըն յօժարակամ Արտաշէսին առւաւ և դրամ կոխելու իրաւունքն՝ որ նոյնպէս Պարթեւաց թագաւորներուն կը վերաբերէր, Արտաշէս իրեն սեպհականնեց և իր անունովն ու պատկերովը ըսկըսաւ դրամ կոխել: Հայստանի արեւելքն իրեն հնազանդեցուց և Պոնտացի Միհրդատ եւպատոր թագաւորին՝ իւր Արտաշամ աղջիկն ՚ի կնութիւն տուաւ :

Հ. Արտաշէս ի՞նչ աշխարհակալութիւնները ը-  
րաւ :

Պ. Հայաստանի հիւսիսային և արեւելեան ազ-  
դաց զօրքերն Հայաստանի զօրաց հետ միացնե-  
լով Միհրդատայ հնտ բոլոր Փոքր-Ասիան (Անա-  
տոլու) իրեն հնազանդեցուց, այն կողմի տէրու-  
թիւնները նուածելով. ապա անցան Եւրոպա և  
նաւատորմղով Արշիպեղագոսը լեցուցին, Թրա-  
կիան նուածեցին, գիւրութեամբ Ելլագա մտան,  
Յունաստանի և Լիւդիոյ տիրեցին, (այն ատեն-  
ներըն Յունաստան Հռովմայեցուց նահանգներէն  
մին եղած էր) : Հռովմայեցիք լսելով այս եղա-  
ծը, բազում զօրօք Միղղան դրկեցին և թէպէտ  
Հայք Աթէնքի մէջ ամրացած էին, սակայն սովը  
դիրենք սաստիկ նեղելուն պարաւորեցան քաշ-  
ուիլ և գալ Փոքր-Ասիա :

Հ. Զօրաց նահանջելու ժամանակ ի՞նչ դէպք  
պատահեցաւ :

Պ. Նահանջելու ժամանակ զօրաց մէջ սաստիկ  
շփոթութիւն ինկաւ և սկսան իրար սպաննել.  
Արտաշէս այս շփոթութենէն վախնալով՝ փախչե-  
լու ատեն զօրքէն զարնուելով մեռաւ, և Միհր-  
դատ պարտաւորեցաւ Միղղայի հետ խաղաղու-  
թեան դաշինք հաստատել, որոյ տրամադրու-  
թեամբ ետ տուաւ Փոքր-Ասիոյ մէջ նուածած եր-  
կիրները :

Հ. Արտաշէսին զօրաց բազմութիւնն օտարազ-  
դի պատմագիրք ի՞նչպէս կը նկարագրեն :

Պ. Արտաշէս բոլոր Յունաստանն ու Փոքր-Ա-

սիան և ուրիշ շատ տեղեր իր ձեռացը ներքե-  
նուածելուն համար զինքն Ազեքսանդրէն վեր կը  
դասեն և նորա զօրաց բազմութեանն համար կ'ը-  
սեն թէ « Ազեքսանդրին Դարեհին հետ ըրած  
պատերազմն Արտաշէսինին քովը շատ փոքր է,   
որովհետև անոնց զօրացն հանած փոշիէն ցորեկո-  
ւան լցուը քիչ մ'աղօտացաւ . իսկ Արտաշէսին  
զօրքը նետ նետելով արեւուն լցուը խաւարեցու-  
ցին և ցերեկը կէս գիշերի դարձուցին » :

Հ. Այս մասին ուրիշ ի՞նչ կը պատմուի :

Պ. Նոյնպէս օտարազգի պատմագիրք կ'ըսեն  
թէ « Հեղեղները գետերուն ջուրը չկրցին շատ-  
ցընել, վասն զի Արտաշէսի զօրքը խմելով կը քիչ-  
ցընէին, որոց թիւն իմաննալու համար հարկ ե-  
ղաւ չափել համրելն անկարելի ըլլալով » :

Հ. Արտաշէսի զօրաց բազմութիւնն իմայնելու  
համար խորենացին ի՞նչ կը պատմէ :

Պ. Խորենացին կ'ըսէ թէ՝ « Արտաշէս հրաման  
առուած էր որ իրենց բազմութեամնը նշան մ'ըլ-  
լալու համար բանակած տեղերնին ամեն զինւոր  
մէյմէկ քար նետէ, ասով այն տեղն ահագին  
բլուր մը կը ձեւանար » :

Հ. Արտաշէս առաջին քանի տարի թագաւո-  
րեց :

Պ. Արտաշէս առաջին քսան և հինգ տարի թա-  
գաւորեց և իր ժամանակը գրեթէ մեծամեծ պա-  
տերազմներով ու պայծառ յաղթութիւններով  
անցուց և մեռած ժամանակը սա նշանաւոր խօս-  
քըն ըսաւ « Աւազ փառացս անցաւորի » :

ԳԼՈՒԽ Դ.

(Տիգրան Բ.)

Նախ քան զՔրեառու 90 տարի :

Հ. Տիգրան երկրորդ որպիսի՞ կրթութիւն առած և ի՞նչ բնաւորութեան տէր էր :

Պ. Արտաշէս Տիգրանն իր պղտիկութեանն առենը վարժնունեաց վարաժ իշխանին կրթութեանն յանձնած էր, որպէս զի զինւորական արհեստն ամբողջովին ուսուցանէ . ուստի և Տիգրան լաւ ուղմագէտ եղաւ և իր բարձր հանճարով ու մեծամեծ գործ քերով հայրենեաց փառքն ու անունը բարձրացուց և ամենուն առջև նախանձելի ըրաւ Հայ անունը :

Հ. Տիգրան Երբ սկսաւ թագաւորել:

Պ. Արտաշէս իր արշաւանքներէն առաջ Տիգրանն Հայաստանի վրայ թագաւորեցուց, և Արտաշէսի մահուրնէ ետև երբ տիրասպան զօրքն ետ դառնալով կուզէր երկիրն ասպատակել, կարծելով թէ Հայաստան անդլուխ է, Տիգրան իր խոհեմութեամբն ու ներհուն քաղաքագիտութեամբը զօրաց առջեւն ելաւ և զանոնք կարգի բերաւ, Փոքր-Ասիան վերստին իր ձեռացը ներփեւ նուաճեց և Հայաստանի մէջ բարեկարդութիւններ ըրաւ :

Հ. Տիգրան իր հօրն՝ Արտաշէսին, Յունաստանէն զրկած կուռքերն ի՞նչ ըրաւ :

Հ. Յունաց քուրմերուն խորհրդովը՝ (որ կուռ-

քերուն հետ եկած էին և չէին ուզեր Հայաստանի խորերն երթալ, ուստի ըսկն թէ աստուածներն հոս կուզեն մնալ) Տիգրան դիոսի բագինն Անի ամրոցը կամ կամախաք, Աթենասայ բագինը՝ Թիլն աւան, Արտեմիսինը՝ Երիզա, Հեփեստոսինը՝ Բագայառինն, Ափրոդիտէսինը՝ (Աստղիկ) Տարօնոյ Աշտիշատ գիւղը Վահագնի քովը կանգնել տուաւ :

Վահագնի քուրմերն Հերակլէսի արձանը կարծելով թէ իրենց վաղեմի վահագնի արձանն է, առանց թագաւորին հրամանին իրենց սեպհական երկիրը՝ Տարօն տանելնուն վրայ՝ Տիգրան բարկանալով՝ զրկեց զանոնք քրմապետութեան պատիւէ : Հրամայեց նաև որ յիշեալ արձաններուն համար փառաւոր մէհեաններ շինուի :

Հ. Տիգրան ի՞նչ հրաման տուաւ :

Պ. Հրաման ըրաւ որ նախարարները կոոց զոհ և երկրպագութիւն մատուցանեն . թագրատունիք չուզեցին յանձն առնուլ և որպիշետև Ասուղիշխանն անարգական խօսքեր ըրած էր կոոց, լեզուն կտրել տուաւ . միւս թագրատունիք սպառնալիքէն վախնալով՝ սկսան խոզի և զոհի միս ուտել, միայն պաշտօն չէին մատուցանէր . ուստի Տիգրան զանոնք ՀՀարշարեց, այլ միայն զօրապետութեան իշխանութիւնը ձեռուընուն առաւ՝ թագադրութեան արտօնութիւնն իրենց վերապահելով :

Հ. Մելեւկիացիք (Ասորիք) ի՞նչ պատճառաւ Հայոց իշխանութեանը ներքեւ մտան :

Պ. Վասն զի նոյն ատենակը Սելեւկիացւոց մէջ թագաժառանգութեան նկատմամբ մեծ աղմուկ ու երկպառակութիւն ծագած էր . ուստի յետ երկար խորհրդակցութեան լաւ համարեցան չայոց իշխանութեանը ներքեւ մտնել և ահա հրաւիրեցին զՃիգրան որ իրենց վրայ ալ թագաւորէ :

Հ. Տիգրան ընդունեց Սելեւկիացւոց հրաւէրը :

Պ. Տիգրան սիրով ընդունեց Սելեւկիացւոց հրաւէրը , գնաց Սելեւկիա , խաղաղեցուց և (Ն. Ք. դթ.) 85 թուականին Սելեւկիացւոց թագը հանդիսիւ գլուխը դրաւ :

79 թուականին (Ն. Ք. դթ.) Անտիոքոս Պիոսի (Սելեւկիացւոց թագաւորութեան հետամուտներէն միոյն) կինը՝ Սեղինէ կամ կղէոպատրա՝ փիւնիկեցիներն ու դրացի ազգերն չայոց գէմ գլուգըռեց , բայց Տիգրան շուտ վրայ հասաւ , պաշարեց Պաղոմայիս քաղաքն , ուր էր իրենց գլխաւոր զօրութիւնը . յաղթեց և Սեղինէն սպաննեց և մինչեւ Պաղեստին տիրեց . Ասորւոց Բարչամինա չաստուածին արձանն ալ չայաստան զրկեց :

Հրէայք լսելով չայոց քաջադործութիւններն՝ իրենց Աղեքսանդրիա թագուհւոյն խորհրդովը մեծամեծ ընծաներով Տիգրանին դեսպաններ զրկեցին և իրենց աշխարհին վրայ նորա պաշտպանութիւնը խնդրեցին :

Հ. Տիգրան երկրորդ Ասորւոց երկրէն դառնալէն ետև ի՞նչ ըրաւ :

Պ. Իր ուշադրութիւնը Վայկուն բոնաւորին

դործած ասպատակութեանցը վրայ դարցուց որ զՃայաստան կը խռովիէր , և ըստ արժանուոյն պատժեց նորա յանդգնութիւնն ու սպաննեց զայն . Վայկունի ամրացած տեղերը Վայկունիք կոչուեցան :

Հ. Միհրդատ ի՞նչ բանի կը պարապէր այս միջոցիս :

Պ. Միհրդատ որ անհաշտ ոխերիմ էր Հռովմայեցւոց , Սիղզայի գաշնադրութենէն ի վեր իր մտադրութիւնը նուիրած էր իւր ծովայինն ու ցամաքային զօրութիւններն ստուարացնելու , միւս կողմէ ալ Հռովմայեցւոց հպատակ ազգերն Հըռովմայեցւոց դէմ կը դրդուէր :

Հ. Այս պատրաստութիւններն ի՞նչ բանի ծառայեցին :

Պ. Տիգրան կապագովիկոյ կողմերը պատերազմելով յաղթական փառօք դարցաւ ի Տիգրանակերտ . իսկ Միհրդատ Հռովմայեցւոց դէմ մեծամեծ պատերազմեր մղեց , որոց առաջինն է Քաղկեդոնի պատերազմն , յորում չայոց զօրքերը սարսափելի մեծ ջարդ տուին Հռովմայեցւոց և նոցա 60 ի չափ նաւերն այրեցին և կիղիկոն անուանի քաղաքը պաշարեցին , յաղթելով ըստ ամենայնի Հռովմայեցւոց կոտտաս զօրավարին , որուն յանձնուած էր Պրոպոնտոսն ու Բիւթանիան . իսկ Կիլիկիան ու կապագովիկան՝ Ասիական նահանգ անուամբ Ղոկուդղոս զօրավարին :

Հ. Ղուկուդղոս անտարբեր կեցաւ :

Պ. Ղուկուդղոս լսելով կոտտասի պարտութիւ-

Նըն ու Քաղկեդոնի կոտորածը, իր հետ շատ զօրք առած Միհրդատայ վրայ եկաւ, ՚ի փախուստ դարցուց զայն և ընդ երկար հալածեց, բայց Միհրդատ վերստին զօրացած եկաւ նորէն պատերազմեցաւ Գայլ գետին քով, յաղթեց և զՊոմ պէոս՝ թշնամոյն ձիաւոր զօրաց գլուխը՝ գերի վարեց :

Հ. Միհրդատայ բաղդը մինչեւ վերջն յաջող գնաց :

Պ. Ղուկուղղոս տեսնելով որ դաշտի վրայ պատերազմիլը խիստ վտանգաւոր է, ըստ որում Միհրդատայ ձիաւորները խիստ քաջամարտիկ էն, գնաց լեռնային ամուր տեղեր ապաւինեցաւ : Միհրդատ քանի մանդամ հոն ալ զարնուեցաւ, բայց բան մը չկրցաւ ընել. իր զօրացը մէջ ալ խոռվութիւն իյնալով՝ իշխաններէն ու զօրապետներէն շատերն սպաննեցին . Հռովմայեցիք ալ պատեհութենէն օգուտ քաղելով՝ Միհրդատայ զօրացը վրայ յարձակեցան, որք փախչելու երես բռնած էին :

Հ. Վտանգէն ազատելու համար Միհրդատ ինչ հնարք բանեցուց :

Պ. Միհրդատ իր գանձը կրող ջորիններէն մին թշնամոյն զօրացն առջև զրկեց, որք տեսածնուն պէս ամեն բան թողուցին և գանձն աւարելու համար սկսան իրարու հետ կռուիլ, որով Միհրդատ ատեն գտաւ փախչելու և գնաց ՚ի Տիգրանակերտ Տիգրանին ապաւինեցաւ . բայց Տիգրան սաստիկ բարկացած չուզեց անոր երեսն անդամնայիլ:

Հ. Ղուկուղղոս պահանջեց զՄիհրդատ :

Պ. Տիգրան՝ որ Ասորւոց և Փիւնիկեցւոց ապրատամբութիւնը զապելով՝ դարցած էր ՚ի Տիգրանակերտ, Ղուկուղղոս դեսպանի միջոցաւ պահանջեց զՄիհրդատ . բայց Տիգրան մերժեց բայէ ՚ի բաց՝ և ընդունեց պատերազմի հրաւէրը :

Հ. Այս պատերազմին պարագաներն ինչպէս կը պատմուին :

Պ. Տիգրան Միհրդատին 10,000 ընտիր ձիաւոր և բազում հետեւակ զօրք տալով Պոնտոսի կողմերը զրկեց, որ գնաց Խորիմ (Բոսֆոր) Սկիւթացւոց ազգէն շատ մարդ առաւ և Եւքսինեան Պոնտոսի հիւսիսային կողմէն Հռովմայեցւոց տիրած երկիրներն անցաւ և Գաղղիացիներն ու այլք Հռովմայեցւոց գէմ գրգռեց . իսկ Տիգրան բազում զօրաց գլուխն անցած յառաջ խաղաց :

Հ. Ղուկուղղոս ինչ ընթացք բռնեց :

Պ. Ղուկուղղոս հասկնալով Տիգրանայ միտքը որ Կիլիկիոյ վրայ յարձակիլ է, փութաց և անմիջապէս Ծոփիաց գաւառին վրայէն յարձակելով մուա Հայաստան և քանի մը փոքր պատերազմներէ ետք՝ աւելի Յունաց օգոնութեամբը՝ որոց ծանր կուգար Հայոց հպատակութեան ներքեւ գտնուիլը, Տիգրանակերտը սաստիկ պաշարեց :

Հ. Ի՞նչ արդիւնք ունեցաւ այս պատերազմը :

Պ. Տիգրան ՚ի սկզբան Հռովմայեցւոց պաշար կրելու ճանբան կտրեց և ապա 6000 խիստ ընտիր ձիաւոր զրկեց, որք Հռովմայեցւոց բանակը զարկին ճեղքեցին ու մոտան քաղաք և շատ թանկա-

դին ու պատուական բաներ առած Տիգրանին  
բերին :

Հ. Ասով վերջացաւ խնդիրը :

Պ. Ղուկուղղոս Տիգրանայ մօտենալն իմանաւ-  
լով իր զօրապետներուն խորհրդովը Մուրինաս  
զօրապետին հրամատարութեան ներքև Տիգրա-  
նակերտի առջև քիչ մը զօրք թողուց և ինք իր  
ստուար բանական Հայոց վրայ յարձակեցաւ :  
Տիգրանակերտի առջև Հոռվմայեցւոց քիչորու-  
թիւնը տեմնելով Տիգրան հպարտութեամբ ըսաւ  
«թէ որ ասոնք դեսպան են, խիստ շատ են, իսկ  
թէ որ պատերազմիկ զօրք, խիստ քիչ են » ուս-  
տի և անհոգ կեցաւ :

Հ. Ղուկուղղոսի այս խորամանկ հնարքն ինչ  
արդիւնք ունեցաւ :

Պ. Ղուկուղղոս յանկարծ Հայոց վրայ յարձա-  
կեցաւ . Տիգրան շփոթեցաւ, բայց բանակն իս-  
կոյն կարդաւորելով ճակատեցան . սակայն Հայոց  
բանակը չկրնալով Հոռվմայեցւոց սաստիկ յար-  
ձակմանը դիմադրել, սկսան ցրուիլ ու յետս նա-  
հանջել : Տիգրան ալ գնաց ամուր տեղ մ'ապա-  
ւինեցաւ :

Հ. Ղուկուղղոս ինչ ըրաւ ասկէ ետքը :

Պ. Դարցաւ նորէն Տիգրանակերտը պաշարեց  
և Յունաց մատնութեամբը քաղաքն առաւ, բո-  
լոր հարատութիւնը դրաւեց, Տիգրանակերտի մէջ  
Տիգրանին շնորհ տուած մեծ ու փառաւոր թատ-  
րոնին Յոյն դերասանները՝ զորս յատկապէս բե-  
րել տուած էր, Ղուկուղղոս իր յաղթական հան-

դէմներուն դործածելու համար հետն առաւ և ան-  
տի կորդուաց նահանգն երթալով մեծահանդէս  
փառաւորութեամբ կորդուաց Զարուէն նախարա-  
րին յուղարկաւորութեան հանդէսը կատարեց,  
զոր սպաննած էր Տիգրան Ապահանսուին խորհը-  
դովն իրմէ ապստամբած ըլլալուն համար :

Հ. Տիգրան միւս անդամ պատերազմեցաւ Ղու-  
կուղղոսին հետ :

Պ. Ղուկուղղոս ըստ որում կ'ասպատակէր Հա-  
յաստանի սահմանները, որպէս զի զՃիգրան պա-  
տերազմելու հարկադրելով խորսոակէ անոր բոլոր  
զօրութիւնն, ուստի Տիգրան թէ կրած պարտու-  
թեան վրէժը լուծելու և թէ Ղուկուղղոսին սաս-  
տիկ հարուած մը տալու նպատակաւ ժողուեց  
բոլոր բանակն ու եկաւ . Որածանի գետին քով  
ու ժգնութեամբ պատերազմեցաւ ու յաղթեց,  
որովհետեւ Ղուկուղղոսի զօրքերը չկրցան տոկալ  
Հայոց ձիւաւորաց սլաքներուն :

Հ. Այդ սլաքներն ինչպէս էին :

Պ. Սլաքներուն ծայրերը կրկին էին, մէկն  
հաստատուն և բունին վրայ, իսկ երկրորդը շար-  
ժուն և առաջին սլաքին վրայ մոցուած . ուստի  
եթէ նետն հանուելու ըլլար, շարժուն սլաքը  
մարմնոյն մէջ կը մնար, որով վէրքն ամենեւին  
չէր բժշկուէր :

Հ. Ղուկուղղոս այս պարտութենէն ետև ինչ  
ըրաւ :

Պ. Մնացած զօրօքն հանդերձ գնաց Մծրինը  
պաշարեց, որ խիստ անտոիկ քաղաք մ'էր և ա-

մուր պարսպով ու խորունկ փոսով պատաժ . Հուկուղոս ամբողջ ամառը զանազան հնարքներ բանեցուց , բայց չկրցաւ բան մընել , ուստի և քաղաքացիք ալ անհոգ եղան . սակայն ձմեռը անձրեւոտ ու թուխ ամպոտ գիշեր մը , յորում սաստիկ անձրեւ կը տեղար ու կը փայլատակէր և պահապաններն ալ իրենց տուները քաշուած էին , զօրքը սանդուխներով վեր ելան , տիրեցին առաջին պարսպին և Տիգրանայ Գուր եղբայրը՝ որ քաղաքապետ էր , երդում առնլով որ վնաս չը հասցնէ , քաղաքն յանձնեց :

Հ. Տիգրան Բնչ կ'ընէր այս միջոցիս :

Պ. Տիգրան Հայաստանին արեւմտեան կողմերըն երթալով՝ Հռովմայեցւոց տիրած երկիրները վերստին առաւ և Հռովմայեցւոց ֆաննիոս զօրապետին յաղթեց . իսկ Միհրդատ Փոքր-Հայաստանի ու Պոնտոսի մէջ գտնուող լազմաթիւ Հռովմայեցւոց վրայ յարձակելով՝ յաղթեց և շատ գաւառներու տիրեց , նոյնպէս Պոնտոսի կողմը Հռովմայեցւոց ֆաբիոս զօրապետին յաղթեց և նորա զօրաց մեծ մասը ջարդեց :

Հ. Հուկուղոս այս գոյժերը լած ատեն Բնչ ըրաւ :

Պ. Հուկուղոս շատ տրտմեցաւ և երբ լսեց մանաւանդ որ Տիգրան ալ Միհրդատին միանալու կերթայ , փութաց ինք ալ յառաջ խաղալու . սակայն Հռովմայեցւոց Տրիարոս զօրավարը Հուկուղոսին մօտենալը լսելով և յաղթութեան փառքը միայն ինք վաստկիլ ուղելով աճապարեց

պատերազմեցաւ Միհրդատայ հետ , բայց չայց զօրքերն հուսկ ապա յաղթութեան փառքն ըստացան և մինակ այս պատերազմիս մէջ 7000 Հռովմայեցի 24 մեծ և 150 փոքր սպա մեռան , որ մինչև այն ատեն այսպիսի մեծ չարաբաղդութիւն պատահած չէր Հռովմայեցւոց :

Հ. Այս գժբաղդութիւններն չռովմի մէջ լրսուած ատեն Բնչ ըրին :

Պ. Կիկերոն զմայլելի ճարտարախօսութեամբ մը համոզեց զժողովուրդը որ փոխեն զղուկուղղոս և նորա տեղ Պոմպէոսը սպարապետ կարգեն Ասիական ամբողջ բանակին : Ծերակոյտն համոզութեցաւ կիկերոնի առաջարկութեան և պէտք եղած հրովարտակը շուտ մը արուելով Պոմպէոսի , անմիջապէս ճանբայ ելաւ :

Հ. Պոմպէոս Բնչ ըրաւ :

Պ. Պոմպէոս շուտ մը դնաց Միհրդատին վրայ , որ ամուր լերան մը վրայ կեցած էր , և սկըսաւ հնարք մտածել այն տեղին հանելու , քանզի Միհրդատայ կեցած տեղը ռազմագիտական նկատմամբ խիստ ապահով էր :

Հ. Պոմպէոս հասաւ իր նպատակին :

Պ. Միհրդատ այն տեղն անջրդի կարծելով (Միհրդատ թէպէտ լեզուագէտ էր , սակայն գիտութեանց վրայ կ'երեւայ թէ գաղափար չունի եղեր ) ինքնին քաշուեցաւ . Պոմպէոս դնաց շուտ մը բռնեց և ծաղկներէն ու պարարտ խոտերէն մակարերելով թէ ջուր պիտի կենաց , հորեր փոքրել տուաւ և ստուգիւ առատ ջուր գտաւ :

Հ. Ասկէ ետքն ի՞նչ ըրաւ Պոմպէոս :

Պ. Գնաց Միհրդատայ բանակը պաշարեց . Միհրդատայ զօրքն անմիջապէս կազմ ու պատրաստ ճակատեցան և առտուան չափասելով՝ գիշերը լուսնի լուսով՝ պատերազմեցան , սակայն քիչ մ'ետքն Հռովմայեցիք Միհրդատայ բանակը զարկն ցրուեցին , և Միհրդատ հազիւ 800 զօրքով փախաւ և Տիգրանին ապստինեցաւ , սակայն Տիգրան զինքը շընդունելով՝ կողքիս փախաւ :

Հ. Ուրիշ ի՞նչ դժբաղդութիւն պատահեցաւ Հայոց :

Պ. Տիգրանայ որդին Տիգրան փոքր՝ որ հօրմէն ապստամբած և Պարթեւաց Արտաշէս (Արշէզ) թագաւորին դիմելով անոր հետ հօրը դէմ պատերազմած ու յաղթուած էր , փախաւ Պոմպէոսին քով ու Հայաստան մտցուց , որով Պոմպէոս քանի մը քաղաքներու ախրեց :

Հ. Տիգրան ի՞նչ ըրաւ :

Պ. Չուզեց Պոմպէոսին հետ պատերազմիլ և որովհետև Տիգրան Պոմպէոսին քաղցր բնութիւնն ու հեղութիւնը լած էր , խաղաղութեան դաշինք դնելու համար անձամբ բանակը գնաց :

Հ. Պոմպէոս ի՞նչպէս ընդունեց զՏիգրան և իրենց բանակութիւնն ի՞նչ արդիւնք ունեցաւ :

Պ. Պոմպէոս պատւոյ համար հազարապետներ և ձիաւորաց մեծ սպաներ ընդ առաջ դրկեց , որ մեծ պատով բերին . Պոմպէոս իր քովը դահի վրայ բազմեցուց զՏիգրան և նորա որդին Տիգ-

րան փոքրն ալ միւս կողմը , և հաշտութեան վըրայ խօսեցան :

Տիգրան Եփրատայ անդիի կողմն ու Կիլիկիոյ և կապաղովկիոյ մէկ մասն ու Գաղատիսն Հռովմայեցոց թողուց . Պոմպէոս զանի սեղանի հրաւիրեց և հոն որդին իրեն հետ հաշտեցուց և խնդրեց որ Ծոփաց դաւառին վրայ թագաւոր և իրեն յաջորդ լնէ : Տիգրան ընդունեց և Պոմպէոսին ու անոր զօրապետներուն և զօրաց ամեն մէկուն աստիճանին համեմատ առատ պարգեւներ տուաւ :

Հ. Միհրդատ իր փառքը վերականգնելու համար ի՞նչ ձեռնարկութիւն ըրաւ :

Պ. Պոմպէոս Տիգրանին հետ դաշինք դնելէ ետք՝ իր բոլոր զօրքովն անցաւ Ասորւոց ու Արաբացոց կողմը գնաց . Միհրդատ ալ ելաւ ու նոր յաղթութիւններով վերստին տիրեց իր երկիրներէն մէկ քանիին , բայց զօրապետներէն ոմանք և մինչեւ իսկ իր ֆառնակէս որդին Հռովմայեցոց խորամանկութեամբն իրմէ ապստամբեցան և սկսան Միհրդատին դէմ պատերազմիլ . Միհրդրդատ տեսնելով որ ազատութեան ճար չկայ , բոլոր ընտանեացը թոյն խմցուց , ինքն ալ խմեց և սրով ալ վիրաւորելով ինքնինք մեռաւ :

Հ. Պոմպէոս Միհրդատայ մահուան լուրը առնըլուն վրայ ի՞նչ ըրաւ :

Պ. Շատ ուրախացաւ , բոլոր զօրացն աւետիս սուաւ և քիչ մ'ետքն ինք ալ Հռովմ գնաց և իր տեղը դարիանոս զօրապետն Ասորւոց բանակին սպարապետ դրուեցաւ :

Հ. Տիգրան Հռովմայեցւոց դէմ նորէն ղէնք  
առաջ :

Պ. Տիգրան ըստ որում քաջ դիտեր Հռովմա-  
յեցւոց խորամանկ բնաւորութիւնն ու ծուղակը ,  
Միհրդատայ մահուընէն ետև Ասորւոց կողմը Գա-  
բիանոսի վրայ քալեց , բայց Գաբիանոս Տիգրա-  
նայ հետ պատերազմելու չհամարձակելով Տիգ-  
րանայ հետ դադունի հաշտութիւն ըրաւ , Մի-  
հրդատայ որդին փոքր Միհրդատը՝ զոր Հռով-  
մայեցիք պատերազմի մէջ բռնած էին , անոր  
տուաւ և ինք Եփրատը անցնելով դէպ ի եղիպ-  
տոս գնաց :

Հ. Հռովմայեցւոց կողմէ Ասիական բանակին  
ով դրուեցաւ սպարապետ :

Պ. Այն ատեններն Հռովմայեցւոց ընդարձակ  
պետութիւնն երեք մեծ իշխաններու , այսինքն ,  
Յուլիոս Կեսարի , Պոմպէոսի և կրասոսի միջեւ  
բաժնուած էր . այս վերջինը՝ կրասոս խիստ ա-  
դահ և մնափառ մէկն ըլլալով արեւելեան կող-  
մերն ինք առաւ և կարծելով թէ արեւելեան աղ-  
դաց յազմելով դիւրին բան է , միտքը դրաւ որ  
Հայոց և Պարթեւաց երկիրներուն վրայ արշաւե-  
լով անոնց աւարներովը ճոխանայ . ուստի անհա-  
մար զօրօք գնաց նախ Պաղեստին , Ասորւոց մէկ  
քանի գաւառներն ու երուսաղէմն առաւ ու տա-  
ճարին բոլոր գանձերն ու ինչքերը կողոպտեց և  
անտի մեծաւ բազմութեամբ Պարթեւաց երկրին  
վրայ քալեց :

Հ. Տիգրան ինչ ընթացք բռնեց :

Պ. Ինչպէս ըսինք , Տիգրան Հռովմայեցւոց

վրայ բնաւ վստահութիւն չունենալով՝ Պարթե-  
ւաց Արտաշէս թագաւորին հետ դաշնակցեցաւ ,  
նախադահութիւնը վերստին Պարթեւաց տալով՝  
և այսպէս երկու դրացի դաշնակցաց բանակներն  
ընդ առաջ ելան կրասոսին :

Հ. Այս ահաւոր պատերազմն ինչ արդիւնք  
ունեցաւ :

Պ. Հայոց և Պարթեւաց զօրքերը կրասոսի զօ-  
րաց լաւ ջարդ մը տուին , և Պարթեւաց թագա-  
դեր Սուրէն իշխանը՝ որ Պարթեւաց զօրքերուն  
ընդհանուր հրամատարն էր , հաշտութեան վրայ  
խօսելու պատրուակաւ զկրասոս ձեռք ձգելով՝  
կտրեց անոր գլուխն և 'ի Հայաստան զրկեց , ուր  
կը գտնուէր նաւ Պարթեւաց Արշէղ թագաւորը՝  
որ Տիգրանին աղջկան իր բակուր որդւոյն հետ  
հարսանեաց հանդիսին ներկայ գտնուելու եկած  
էր , և փառաւոր շքեղութեամբ կատարուեցաւ :

Կրասոսին ճոխ աւարներն Հայք ու Պարթեւք  
բաժնեցին :

Հ. Հռովմայեցիք կրասոսին տեղ ով զրկեցին :

Պ. Կասսիոս զօրապետը զրկեցին , որ եկաւ  
Եփրատայ անդիի կողմը բանակեցաւ . սակայն  
Տիգրան ծերութեան պատճառաւ չկրնալով ան-  
ձամբ պատերազմի երթալ Պարթեւաց Արշէղ թա-  
գաւորէն օգնութիւն ինդրեց , որ իր բակուր  
որդւոյն հրամանին ներքեւ զօրք զրկելով օգնեց .  
Տիգրան Ռշտունեաց Բարզափրան նախարարն ընդ-  
հանուր հրամատար կարգեց :

Հ. ի՞նչ ըրաւ բարզափրան :

Պ. Տիգրանին հրամանաւ նախ Ասորւոց ու Պաղեստինացւոց հետ հաշտութիւն գոյացուց և ազա Հռովմայեցւոց վրայ յարձակելով զարկաւ, կէսը քաղաքներու և կէմն ալ նաւերու մէջ փախուց : Ասոնցմէ ետև Հայոց թագաւորին տակառապետ գնէլ գնթունի իշխանը ձիաւորաց դընդովլ մը երուսաղէմ զրկեց, Անտիոքոսը թագաւորեցուց և զՀիւրկանոս քահանայապետն ու բազում Հրեայ գերիներ Բարզափրանին զրկեց, որ Տիգրանին հրամանաւը Վան քաղաքին մէջ բնակեցուց :

Հ. Հռովմայեցիք այս պարտութեան դէմինչ ըրին :

Պ. Հերովդէս, որ Հիւրկանոսին բռնուելէն ետև (ըստ որում Հերովդէս չորրորդապետ կարգուած էր Հռովմայեցւոց կողմէ) Հռովմ փախաւ և հոն իր հաւատարմութիւնն ապացուցանելով Անտոնիոսին բոլոր Հրէաստանի թագաւոր դրուեցաւ և վէնդիդիս զօրապետին հետ բազում զօրօք Հայաստան եկաւ . Վէնդիդիս Հայերն Ասորիքէն փախուց ու Սիղոն զօրապետը զօրքով Եփրատի մօտ թողլով երուսաղէմ գնաց :

Հ. Հայք ինչ ըրին :

Պ. Պարթեւաց հետ միանալով սաստիկ ջարդը տուին Հռովմայեցւոց, սակայն Անտոնիոս այս բանս լսելով անձամբ եկաւ Հայաստան, Շամշատ քաղաքն առաւ, և Սովմիս զօրապետին միջոցաւ զՀերովդէս Հրէաստանի վրայ թագաւորեցուց և ինք Եղիպատոս գնաց :

→→→♦♦♦←←←

## ԳԼՈՒԽ Ե.

(Արտաւազդ Ա.)

Նախ քան զՔրիստոս 56 տարի :

Հ. Տիգրան Երկրորդին ովլ յաջորդեց :

Պ. Տիգրան Երկրորդին յաջորդեց իր որդին Արտաւազդ առաջին, որ հօրը մահուընէն Երկու տարի յառաջ վերին Հայաստանի վրայ թագաւոր դրուած էր, և Տիգրան 53 տարի մեծամեծ ու փառաւոր յաղթութիւններ տանելէ և արքայից արքայ տիտղոսն ստանալէ և փառօք թագաւորելէ ետև մեռաւ :

Հ. Արտաւազդ ինչ բնութիւն և ձիրք ունէր :

Պ. Արտաւազդ իր հօրը քաջութիւնն ու արիութիւնը բնաւ չունէր, աւելի գրական և թէ թոյլ մարդ էր, որ շատ ողբերգութիւններ շնած և պատմութիւններ ու ճառեր գրած է, որոցմէ ոմանք մինչև հիմա կան կըսէ Պլուտարքոս :

Հ. Արտաւազդ իր հօրը յաջորդելէն ետև ինչ ըրաւ :

Պ. Իր Եղբայրներն ու քոյրերն Աղիովիտ ու Առքերանի գաւառները զրկեց, այն կողմերու թագաւորական կալուածներն իրենց պարգև տալով և մասնաւոր մուտք կապելով :

Հ. Արտաւազդ ինչպիսի քաղաքականութեան հետեւեցաւ :

Պ. Անտոնիոս Հռովմայեցւոց մեծ իշխանն որ

նոյն ատեն Պարթեւաց Փրաատ թագաւորին գէմ պատերազմի ելած էր, Արտաւազդ նախ սխալեցաւ որ Անտոնիոսի հետ դաշնակցեցաւ և 13000 զօրքով օգնութեան դնաց և երկրորդ՝ Հոկտաւիանոս իշխանին խորհրդովը՝ որ Անտոնիոսի բարձակիցն ու հակառակորդն էր, պատճառ մը բըռնելով Անտոնիոսի դաշնակցութենէն բաժնուեցաւ. Հոռվմայեցիք յաղթուեցան և իրենց այս պարտութեան պատճառն Արտաւազդայ երկդիմի քաղաքականութեանն ընծայելով՝ ոխ պահեցին :

Հ. Անտոնիոս իր վրէմն Բնչպէս լուծեց :

Պ. Խարդաւանութեամբ մը բռնելով զԱրտաւազդ, ոսկի շղթայի զարկած եղիպտոս կղէոպատրա թագուհւոյն զրկեց, որ զայն 'ի բանտ դրաւ, և ուր ատեն մը մնալէ և չորս տարի ալ թագաւորելէ ետեւ՝ կղէոպատրա զայն դլխատել տուաւ :

Անտոնիոս բազում ստակ ձեռք ձգեց և զԱրտաւազդ բռնելուն 'ի յիշատակ ստակ տպել տըռտաւ, որուն մէկ կողմն իր գլուխը կայ առջեւը Հայոց թագաւորական թագը դրուած և չորս կողմն ալ այսպէս գրուած է « Անտոնիոս. Հայաստան նուաճեաւ » : Իսկ միւս կողմն ալ կղէոպատրային պատկերը կայ :



## ԳԼՈՒԽ Զ.

(Արշամ)

Նախ քան զբընասս 55 տարի :

Հ. Արտաւազդի բռնուելէն ետեւ Հայաստանինչ վիճակ ունեցաւ :

Պ. Արտաւազդի բռնուելէն ետեւ Հոռվմայեցիք Հայաստանի մէկ մասը՝ մանաւանդ Հայոց Միջադէտքն իրենց հարկատու ըրին (<sup>1</sup>), Արշամ Տիգրանայ Արտաշէս եղբօրը որդին թագաւորեց Հայոց վրայ 'ի Մծբին : Այս ատենէն դադրեցաւ Հայոց անկախ թագաւորութիւնը :

Հ. Արշամ ետքէն իր աթոռը ուր հաստատեց :

Պ. Այն ժամանակներն Արշամ Եղեսիացւոց խնդրանօքը նաեւ Ուռհայեցւոց վրայ ալ թագաւոր եղաւ : Ուռհայեցիք նոյն ատենները փոքր տէրութիւն մը կը կաղմէին և ժողովուրդն ըստ

---

(<sup>1</sup>) Արտաւազդի մահուընէ ետեւ Հայաստանի իշխող թագաւորաց նկատմամբ պատմութեան մէջ շփոթութիւն մը կը տիրէ . վասն զի արտաքին պատմիչներն այնպիսի թագաւորաց անուններ կը յիշատակներն իրենց գործերովը մէկտեղ և անոնց զրամներուն վրայ ծանօթութիւններ կուտան, որ արդարեմնչեւ հիմա կայ . սակայն մեր ազգային պատմագրաց զրամներուն հետ երեք չեն յարմարիր :

Մէք այս շփոթութիւնը լուծելու համար կ'ըսենք թէ Արտաւազդի բռնուելէն ետեւ Հայաստան երկումասի բաժնուեցաւ . որոյ մէկ մասը՝ Միջադէտք Հա-

մեծի մասին Յոյն ու Ասորի էին, և Ուռհայեցիք իրենց թագաւորները դրեթէ միշտ ուրիշ ազգաց իշխաններէ կընտրէին, մանաւանդ Հայոցմէ. հետեւաբար և Արշամ բոլոր Միջագէտքի տիրեց<sup>(1)</sup>, և իր աթոռն ու արքունական բոլոր դիւններն ու կուռքերը Եղեսիա հաստատեց :

Հ. Արշամ որչափ ատեն թագաւորեց, և Բնչ դործ ունեցաւ :

Պ. Արշամ 30 տարի թագաւորեց և յիշատակութեան արժանի դործ մը չունեցաւ :



յոցն Հռովմայեցւոց գերիշխանութեանը ենթարկեցաւ և միւսը Պարթեւաց :

Մեր այս ըսածը չէ թէ սոսկ կարծիք կամ ենթագրութիւն է, այլ իրողութիւն, զի Արտաւազի որդին Արտաշէսը՝ որ նոյնպէս գերի բռնուած էր, Անտոնինոսի ձեռքէն աղատելով՝ Պարթեւաց օգնութեամբը վերին Հայաստանի վրայ թագաւորեց, ասոր յաջորդեց իր եղայրը՝ Տիգրան փոքր և իր քոյրը՝ Երատոյ (20 տարի Ն. Ք. դթ.) և այսպէս բաւական ատեն առանձին թագաւորաց անուններ կըյիշեն արտաքին պատմապիրք, որով մեր ըսածն աւելի եւս հաստատութիւն կը գտնէ :

(1) Միջագետքի սահմանն է հիւսիսէն Մասիսն ու Կորդուաց լեռները, արեւմուտքէն Եփրատ գետն ու արեւելքէն Ասորեստան :

## ԳԼՈՒԽ Է.

(Արգար)

Նախ քան զՔրիստոս 5 տարի :

Հ. Արշամին ովլ յաջորդեց :

Պ. Արշամին յաջորդեց իր որդին Արգար, որուն օրովան Հռովմայեցիք սկսան բոլոր Հայաստաննեն ալ հարկ ու տուրք առնուլ :

Հ. Արգարի ՚ի գահ ելնելէն ետեւ Բնչ բան պատահեցաւ :

Պ. Օդոսառոս կայսրն հրաման ըրած էր ամեն տեղ աշխարհագիր ընել. Հռովմայեցի գործականեր Հայաստան ալ եկան. Արգար հրամայեց Օդոսառոս կայսեր պատկերը Մեհեաններու մէջ կախել. Հերովդէս ուղեց որ իր պատկերն ալ կախուի. Արգար յանձն չառաւ և Պարթեւաց հետ միանալով՝ Հերովդէսի զրկած բանակին լաւ ջարդ մը տուաւ :

Հ. Ուրիշ Բնչ դէպք պատահեցաւ :

Պ. Նոյն ատեններն Օդոսառոս կայսրը մեռնելով՝ Տիգրերիս յաջորդեր էր. Արգար շնորհաւորութեան համար գեսպաններ զրկեց. բայց Տիգրերիս զանոնք անարդեց Արգարին Հերովդէսին դէմ պատերազմելուն համար. Արգար երբ իմացաւ, շատ բարկացաւ և միտքը դրաւ որ այլեւս Հռովմայեցւոց տուրք տալլը դադրեցնէ, և հետեւաբար սկսաւ ամեն կերպ պատրաստութեան ձեռնարկել:

Հ. Արդարի այս խորհուրդն իրականացաւ :

Պ. Ո՞չ. վասն զի նոյն օրերը Պարթեւաց Արշաւիր թագաւորը մեռնելով՝ յաջորդութեան համար մէջերնին մեծ խնդիր ծագած էր. Արդար Պարթեւաստան գնաց և հոն խնդիրը խաղաղութեամբ վերջացուց, իրաւարարութիւն ընելով:

Հ. Արդարի Պարթեւաստան Երթալէն Բ'նչ հետեւութիւն ծագեցաւ :

Պ. Արդարի թշնամիքը՝ մանաւանդ Հերովդէս չորրորդապետն Արդարու վրայօք ամբաստանութիւն ըրին չոռվմայեցւոց. Արդար զինքն արդարացնելու համար չոռվմայեցւոց դործականերուն դեսպաններ զրկեց, որոց խօսքին չհաւատացին : Արդար այս բանիս վրայ աւելի նեղացած Արարացւոց (Պատրիացւոց) Արէտ կամ Արիդաս թագաւորին, որ Հերովդէսի դէմ պատերազմի ելած էր, զօրքով օդնեց :

Հ. Արդար Բ'նչպէս արդարացուց ինքզինք չոռվմայեցւոց առջեւ :

Պ. Հոռվմայեցիք նոյն ատեն Ասորւոց Երկրին վերակացու դրին Մարինոս անուն իշխանը, որ խելացի և խաղաղասէր մէկն էր. Արդար դեսպաններ զրկեց՝ Աղձնեաց բգեշխ Մարիհաքը, Ապահունեաց նահապետ Շամշադրամն ու իր հաւատարիմ սուրհանդակն՝ Անանէ, որք Արդարին Պարթեւաստան Երթալուն պատճառը բացարեցին. Մարինոս զանոնք մեծաւ պատով ընդունեց, խնդիրն հասկցաւ և ըսաւ որ իրենք

տուրքերնին վճարեն միշտ և բնաւ բանէ մը չը վախնան, խոստանալով որ հարկ եղածը կը գրէ ի Հռովմ:

Հ. Ի՞նչ նշանաւոր դէպք պատահեցաւ այս միջոցիս :

Պ. Արդարի դեսպաններն Ասորւոց Երկրին մէջ Փրկի հրաշագործութեանց համբաւը լսելով՝ մինչեւ երուսաղէմ գացին ու հոն աչքովման տեսան և ի դարձին եկան Արդարին պատմեցին : Արդար՝ որ Դ տարիէ ՚ի վեր հիւանդութեամբ կը տառապէր հրաւերեց զՅիսուս որ գայ զինքը բժշկէ և հոն բնակի, ուր, ըսաւ, Հրէից ձեռքէն ըստ ամենայնի աղատ կը լինի : Բայց Քրիստոս թովմաս առաքեալին ձեռքով թուղթ գրեց այսպէս. « Երանի անոր որ զիս չէ տեսած ու կը հաւատայ . վասն զի ինծի համար գրուած է թէ ոլ որ զիս տեսնէ, ինծի պիտի չհաւատայ . իսկ անոնք որ ինծի չտեսած հաւատան, պիտի փըրկուին . բայց այն բանին համար որ գրած ես թէ քեզի գամ, պէտք է որ ես Բ'նչ դործի համար որ զրկուեր եմ, կատարեմ, և երբ կատարեմ զիս զրկողին քովը պիտի համբառնամ. իսկ համբառնալէս ետեւ իմ աշակերտներէն մէկը կը զրկեմ քեզի որ գայ քու ցաւերդ բժշկէ և քեզի ու քու հպատակներուդ կեանք պարզեւէ » :

Հ. Քրիստոսի համբառնալէն ետեւ ով եկաւ ի Հայաստան :

Պ. Թովմաս առաքեալին ընտրութեամբը Քրիստոսի 72 աշակերտներէն թագէոս եկաւ, որ

բժշկեց Արդարը և ամենուն ալ Քրիստոնէութիւն սորվեցուց, թագաւորին խոյրարարն՝ Աղդէ, եպիսկոպոս ձեռնադրեց, խիստ շատեր մլրտեց և ապա դնաց վերին Հայաստան։ Արդար քրիստոնէութեան պաշտպան կանգնեցաւ և Տիբեր կայսեր, Ասորեստանի Ներսէհ և Պարթեւաց Արտաշէս թագաւորին նամակ դրեց որ Քրիստոնէութիւնն ընդունին։ բայց դեռ պատափանը չառած՝ մեռաւ Արդար 38 տարի սրբութեամբ թագաւորելէ ետքը։



### ԳԼՈՒԽ Ը.

(Անանուն, Սանատրուկ)  
Քրիստոնէ 55 տարի ետք։

Հ. Արդարու մահութնէն ետեւ թագաւորութիւնն ինչ վիճակ ունեցաւ։

Պ. Արդարու մահութնէն յետոյ թագաւորութիւնն երկուքի բաժնուեցաւ, եղեսիոյ վրայ Արդարի որդին Անանուն և Միջագիտաց վերին մասերուն վրայ ալ Արդարի Աւդէ քրոջ որդին՝ Սանատրուկ թագաւորեց։

Հ. Անանուն ինչ ըրաւ։

Պ. Իր հօրը յաջորդելուն պէս մեհեանները բացաւ և Աւդէ եպիսկոպոսը նահատակեց որ իւրին խոյր չէր շնած՝ նորա հեթանոսութեանը պատճառաւ։ Անանուն արքունական պալատը վերանորոգել տուած ժամանակ վրան սիւն մ'ինալով մեռաւ։

Հ. Սանատրուկ ի՞նչ ըրաւ։

Պ. Սանատրուկ որ Անանունի թագաւորութիւնն յափշտակելու հետամուտ էր, նորա մահութնէն յետոյ եղեսիացւոյ հրատիրմամբն Անանունի թագաւորութիւնն ալ ժառանգեց։ արքունական բոլոր դանձն ու ինչքը յափշտակեց և Արդարի արու զաւակները բոլորն ալ սրէ անցուց բացի աղջիկներէն, զրոս Հաշտենից գաւառը դրկեց և զՀեղինէ։ Արդարու կինը, Միջագիտաց թագուհի ըրաւ և խառան քաղաքը դրկեց, վասն զի ժամանակին անկէ շատ բարիք տեսածէր։ սակայն Հեղինէ կռապաշտներու մէջ կենալ չուզելով երուսաղէմ դնաց և հռն մեծ սովին ատենը քաղաքացւոյ շատ բարիքներ ըրաւ։

Հ. Սանատրուկ քրիստոնէութեան մէջ հաստատ կեցած։

Պ. Սանատրուկ նախարարաց վախէն քրիստոնէութիւնը թողուց, թագէ էսու առաքեալն սպաննել տուաւ, ինչպէս նաև իր Սանդուխտ կոյս աղջիկն՝ իշաւարշան նահատակեց քրիստոնէութեան մէջ հաստատ կենալուն համար։

Թէպէտ քրիստոնէութիւնը վերին Հայաստանի մէջ մեծ յառաջդիմութիւն չունէր, բայց Եղեսիոյ մէջ հաստատ մնաց, ուր թէպէտ եկեղեցիները գոցուած էին, սակայն այրերու մէջ գաղտնի պաշտօն կը կատարէին և որքան հալածում լինէր, այնքան ալ հիմ ու արմատ կը բռնէր քրիստոնէութիւնը։

Հ. Սանատրուկ ի՞նչ նշանաւոր գործ ունեցաւ։

Պ. Սանատրուկ նշանաւոր գործ մը չունեցաւ .  
Միայն Մծբին քաղաքը վերստին նորոգեց որ երկ-  
րաշարժի պատճառաւ մեծ մասամբ փլած էր :  
Սանատրուկ բոլոր ունեցածն այս քաղաքին շի-  
նութեանը վատնեց , իր արձանը կանդնել տուաւ ,  
որուն ձեռքը դրամ մը կար ՚ինչան իր բոլոր  
դանձն սպառած ըլլալուն :

Հ. Սանատրուկ ո՞րքան ատեն թագաւորեց :

Պ. 30 տարի թագաւորելէն ետև օր մը որսի  
ատեն դիպուածով նետէ մը զարնուելով մեռաւ :



### ԳԼՈՒԽ Թ.

(Երուանդ Բ.)

Քրիստոնէ 65 տարի ետքը :

Հ. Սանատրուկին ո՞վ յաջորդեց :

Պ. Երուանդ անունով իշխան մը որ մօր կող-  
մանէ Արշակունի էր . այս անձը յաղթանդամ և  
կորովի մէկն էր . Սանատրուկի օրով իր մեծամեծ-  
ծառայութեանցն համար մեծ պատոյ հասաւ և  
նորա մահուընէն յետոյ բռնութեամբ եղեսիոյ  
վրայ թագաւորեց . Բագրատունիք իրեն չհպա-  
տակելով Սանատրուկի որդւոյ կողմը բռնեցին .  
Երուանդ ալ Սանատրուկի որդիքը թրէ անցընել  
տուաւ և միայն Արտաշէս անուն որդին իր ստըն-  
տուին միջոցաւն ազատեցաւ . Սմբատ Բագրա-  
տունին ճանքան Արտաշէսն իր ստնտուին հետ  
գտնելով մեծ ինամքով տարաւ զայն Պարթեւաց

Դարեհ թագաւորին , որ սկրով ու պատով մեծ-  
ցուց ; և Սմբատն ալ մեծ պատով իր քովը պա-  
հեց , Պարթեւաց զօրավարներուն կարգը դրաւ  
և բատ ու Ռզոմի գաւառներն անոր բնակութեա-  
նըն յատկացուց :

Հ. Երուանդ ի՞նչ ըրաւ :

Պ. Արտաշէսի և Սմբատայ Պարթեւաստան կե-  
նալուն վրայ , կասկածելով Պարթեւաց կողմէ , իր  
յոյն Հռովմայեցւոց վրայ դրաւ . Միջագետքն  
անոնց տուաւ . թողուց Եղեսիան և գնաց վերին  
Հայաստան Հայկաղանց թագաւորանիստ Արմաւիր  
քաղաքը նստաւ , և թէպէտ շատ ջանք ըրաւ Ար-  
տաշէս մանուկը մեռցնել տալու , բայց իր բոլոր  
ջանքերն ապարդիւն մնացին . ուստի սկսաւ իր  
պաշտպանութեանն համար միջոցներ ձեռք առ-  
նուլ . Երասխ գետին եղերքն Որձաքար բլրին  
վրայ Երուանդաշատ քաղաքը շինեց բարձրապա-  
րիսպ միջնաբերդերով (1) և պղնձէ գոներով . քա-  
ղաքին շինութիւնն աւարտելէ ետև բոլոր ինչ-  
քերն հոն բերել տուաւ և կուռքերուն համար  
ալ Երուանդաշատէն 40 մղոն հեռու Սխուրեան  
գետին քովը Բագրատն քաղաքը շինել տուաւ  
և իր Երուազ եղբայրն ալ քրմապետ կարգեց .  
նոյնպէս Երուանդակերտ անունով գեղեցիկ քա-

(1) Այս միջնաբերդը ելնելու համար Երկաթէ սան-  
դուկներ շինել տուաւ , որոնց վրայ որոգայթներ կա-  
յին , այնպէս որ եթէ չգիտցող մէկը դադանի ելնել  
ուզէր , անոնց մէջը կը բռնուէր :

Ղաք մը շինեց և Ծննդոց անտառը տնկել տուաւ :  
Հ. Երուանդ այս շինութիւններով զբաղած աւ  
տեն Բնէ պատահեցաւ :

Պ. Սմբատ ՚ի նպաստ Պարթեւաց Աղուանից ու  
Ալանաց գէմ մեծամեծ քաջութիւններ ըրած ըլ-  
լալուն ՚ի վարձատրութիւն մեծ օգնութիւն տրը-  
ուեցաւ իրեն որ երթայ Արտաշէմն Հայաստանի  
վրայ թագաւորեցնէ , որ արդէն սիրելի էր Պար-  
թեւաց . Սմբատ գարնան ժամանակը մտաւ Ու-  
տէացւոց աշխարհն և անտի մինչ ՚ի Գեղամայ ծո-  
վակն յառաջացաւ . ամեն կողմէ Հայոց նախա-  
րարները Սմբատայ կողմն անցան և շուտով Եր-  
ուանդայ բանակն հառան , որ Ախուրեան գետի  
մօտը կը գտնուէր :

Հ. Երուանդայ բանակն Բնէ ըրաւ :

Պ. Երուանդայ բանակը բազկացած էր Հայոց ,  
վրաց և Գամբաց զօրքերէ . Հռովմայեցւոց լէդէ-  
ններն ուշացեր էին . ուստի և Երուանդ ալ զօր-  
քերն ու նախարարներն հազիւ թէ ստակով և  
պատիւներով կարող կը լլար պահել . սակայն երբ  
Արտաշէսի զօրքն երեւցաւ , Մուրացան նախա-  
րարարութեան տանուտէր-նահապետ Արդամն՝  
որ բազում զօրք ունէր , իր առջի պատիւը վե-  
րըստին ստանալու խոստում առնլով Արտաշէսի  
կողմն անցաւ . նոյնպէս ըրին նաև ուրիշ նախա-  
րարներ ալ և միայն Գամբաց ու վրաց զօրքերը  
մնացին , որ թէպէտ քաջութեամբ գիմադրե-  
ցին , բայց վերջապէս անհնարին կոտորած կը ե-  
ցին . Երուանդ փախաւ գէպ ՚ի Երուանդաշատ ,

բայց Սմբատ զօրքով ետեւէն ինկած գ  
կաւ սպաննեց . Երուանդ 20 տարի թագու  
եցիկ ,

ԳԼՈՒԽ Ժ.

(Արտաշէս Բ.)  
Քրիստոնէ 85 տարի ետքը :

Հ. Արտաշէսի առաջին գործը ո՞րն եղաւ :

Պ. Երուանդ մօր կողմանէ միայն Արշակունի ըլ-  
լալուն համար Արտաշէս անոր փառաւոր թաղում  
ընել տալով շիրմին վրայ մահարձան մը կանգնեց .  
իսկ Սմբատ արքունի գանձատունը մտնելով՝ գը-  
տաւ Սանասարուկի թագն և ըստ իւր ասպետական  
իրաւանցն Արտաշէսի գլուխը դրաւ :

Հ. Արտաշէս Բնէ հատուցում ըրաւ :

Պ. Մարաց և Պարթեւաց զօրքը մեծ պատով  
ետ դարձուց . Մուրացան նախարարութեան տա-  
նուտէր նահապետ Արդամնն ըստ առաջնոյն թա-  
գաւորի երկրորդն ըլլալու պատիւը տուաւ և ար-  
տօնութիւն չնորհեց յակնթակապ պսակ կրելու ,  
գինդ ու կարմիր կոշիկ և ոսկի պատառաքաղ ու  
գրդալ գործածելու . Սմբատին՝ թագադիր աս-  
պետութեան պատիւէն զատ՝ արեւմտեան զօրաց  
զօրավարութեան պաշտօնին հետ նաև Հայոց ընդ-  
հանուր զօրաց սպարապետութեան պաշտօնը տը-  
ւաւ և բոլոր գործակալաց և նահանդաց վերա-  
տեսուչ անուանեց . Գիսակ՝ որ Արտաշէսի ստըն-  
տուին որդին էր , պատերազմին մէջ իր գէմքին

կէսը կորսնցնելուն համար անոր որդին նախարարութեան կարգ անցուց դիմաքսեան անունով . իսկ Մոդպաշտէ անուն մէկուն ալ քրմապետութեան պաշտօն տուաւ . նոյնպէս Տուրն անուն մէկու մը երէց որդւոյն նախարարութեան պատիւ տուաւ , որ Տրունիք կոչուեցաւ :

Հ. Արտաշէսի երկրորդ գործը ո՞րն եղաւ :

Պ. Արտաշատ քաղաքը նորոգել տարով կուռքերն հոն բերել տուաւ . իսկ մեհեաններու և երտաղայ դանձերը Սմբատայ ձեռօք Արեաց Դարեհ թագաւորին ընծայ զրկեց ՚ինշան իւր երախտագիտութեանը :

Հ. Արտաշէսի երրորդ գործը ո՞րն եղաւ :

Պ. Ալանք ըստ իւրեանց սովորութեան՝ ուրիշ Ըեռնական ազգաց հետ Հայաստանի վրայ արշաւեցին . Արտաշէս դէմելաւ անոնց , յաղթեց և Ալանաց թագաւորին որդին գերի բռնեց . Ալանաց թագաւորն ուղեց հաշտութիւն ընել և ամեն բան յանձն առաւ , միայն թէ իր որդին ետ դարձնէ . բայց Արտաշէս չուղեց լսել . սակայն Ալանաց թագաւորին աղջիկը՝ Սաթինիկ իր խելացի խօսքերովն ու վեհ կերպարանօքն հաւանեցուց . Արտաշէս զՍաթինիկ իրեն կնութեան առաւ , որով և մէջերնին հաշտութիւն ու խաղաղութիւն գոյացաւ :

Հ. Հայոց վիպասաններն Արտաշէսին զՍաթինիկ իրեն կնութեան առնլու պատմութիւնն իւրենց երդերուն մէջ ՚ինչպէս կը պատմեն :

Պ. Հայոց վիպասաններն իրենց երդերուն մէջ

սոյն այլաբանութիւնը կ'ընեն ,

« Հեծաւ արի արքայն Արտաշէս ՚ի սեաւն գեղեցիկ , եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն , եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն (1) եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն ընկէց ՚ի մէջը օրիորդին Ալանաց եւ շատ ցաւեցոյց զմէջը փափուկ օրիորդին Արագ հասուցաններով ՚ի բանակն իւր » :

Հ. Հայոց վիպասաններն Արտաշիսի հարսանեաց չըեղ փառաւորութիւնն Բնչպէս կը նկարագրեն :

Պ. Սոյն երկու տողով շատ բան կը հասկցնեն ,

« Տեղ ոսկի տեղայր ՚ի փեսայութեանն Արտաշիսի , Տեղայր մարգարիտ ՚ի հարսնութեան Սաթինիկանն » :

Հ. Խորենացին առաջին երդին մեկնութիւնն Բնչպէս կուտայ :

Պ. Խորենացին կ'ըսէ , որովհետեւ Ալանաց առջեւ կարմիր կաշին շատ յարդի եր , Արտաշէս ալ Ալանաց թագաւորին Սաթինիկին համար շատ ոսկին զատ՝ նաեւ շատ մ'ալ Լայքա տուաւ (կաշի ներկելու համար տեսակ մը ներկ ) . աս է երդին մէջ Ոսկէօղ շիկափոկ պարան ըսուածը . իսկ հարմակին համար ըսածնին սա է որ Հայոց թագաւորներուն սովորութիւնն եր իրենց հարմակին առենն ստակ նետել , և թագուհիներուն ալ մարգարիտ :

(1) Կուր գետն :

Հ. Արտաշէսինչ հանրօղուտ դործեր ունեցաւ :  
 Պ. Հայաստան աշխարհը զանազան դաղթականութիւններով լեցուց , որոց առաջինն է Ալանաց դաղթականութիւնը , զոր Սմբատ Ալանաց Արտազ դաւառէն բերաւ և ՚ի Շաւարշան բնակեցուց . ասոնց բնակած տեղն իրենց վաղեմի տեղին անունովն Արտազ կոչուեցաւ . երկրորդն էր Առաւելին դաղթականութիւնը , որ Սամինկայ հետ եկած և նորա ազգականներն էին ըստ մեծի մասին . երրորդն էր Կասպից դաղթականութիւնը և չորրորդն Ամասունեաց , որ Մանու Հրէին սերնդէն էին և Արեաց աշխարհէն եկած : Սամինկայ ցեղը նախարարութեան կարդ անցաւ :

Արտաշէս իւրաքանչիւր դիւզի և ագարակի ասհմաններն որոշեց՝ քառանկիւնի կոփածոյ քարեր տնկել տալով . երկրագործութիւնը շատ յառաջ տարաւ զի մինչեւ այն ատեն Հայք փոյթ չէին ըներ , և ընդհանրապէս մնեղէն կուտէին . Արտաշէսի օրովն ափ մը պարապ հող չկար , ոչ լեռներու վրայ և ոչ դաշտերու մէջ . գետերն ու ծովակները նաւերով լեցուց , ճանբաներ և կամուրջներ շինել տուաւ , ուսումն ու քաղաքակրթութիւնը ծաղկեցուց և շաբաժներու , ամիսներու ու տարիներու շրջանը կարգի դրաւ :

Հ. Արտաշէս ի՞նչ դժբաղդութիւն ունեցաւ :  
 Պ. Արտաշէս Սամինիկէն Սրտաւազդ անուն անդրանիկ դաւակն ունեցաւ , որ խիստ անձնահաճ և նախանձու ու մոլի մէկն եղաւ . Արտաւազդ Արդամին ձեռքէն երկրորդութեան պա-

տիւր խլեց և Արդամն ու նորա ցեղին մեծ մասը թրէ անցուց . Սմբատին ալ նախանձելով՝ սպարապետութիւնն առաւ ձեռքէն և նա ալ կորդուաց աշխարհը Ճմորիք դաւառը բնակեցաւ . Արտաւազդ բոլոր պատիւներն ու իշխանութիւններն իր ձեռքն առնըլով եղբարցը նախանձը դրդուեց . ուստի Արտաշէս ալ քրմապետութեան պատիւր իւր Մաժան որդւոյն տալով՝ Անի ամբոցը դրկեց . իսկ զօրքն իր նախորդացը պէս չորսի բաժնելով՝ արեւելեան կողմն Արտաւազդին , արեւմուտքը Տիրանին , և հիւսիսը Զարեհին , իսկ հարաւն ալ Սմբատին տուաւ և զվրոյր ալ տէրութեան հազարապետ կարգեց :

Հ. Արտաշէս զՀայաստան անկախ ընելու համար ի՞նչ ձեռնարկութիւն ըրաւ :

Պ. Հռովմայեցւոց միջեւ ծագած ներքին խռովութենէն օդուտ քաղելու ուղելով՝ տուրքք դադրեցուց . Հռովմայեցիք զօրք զրկեցին , որք հուսկ ապա յաղթուեցան . այս յաջողութենէն քաջալերեալ Պարթեւներն ալ Հայոց հետ դային Հռովմայեցւոց երկիրներն ասպատակեցին . Եգիպտացիք ու Պաղեստինցիք ալ Հայոց օրինակին հետեւելով Հռովմայեցւոց տուրք տալը դադրեցուցին . բայց Տրայիանոս կայսրն անձամբ ահագին բանակաւ մը նախ Եգիպտացիներն ու Պաղեստինցիներն հնագանդեցուց և ապա Պարթեւաց վրայ քալեց : Արտաշէս շուա մը անոր առջեւը գնաց և հարկերն ու շատ ալ ընծաներ տալով՝ հաշտութիւն ըրաւ , որով Հայաստան աղատեցաւ Հռովմայեցւոց յարձակումէն :

Հ. Արտաշէս ո՞րչափ ատեն թագաւորեց :

Պ. Արտաշէս 41 տարի թագաւորելէն ետեւ՝ Մարանդ գաւառի Բակուրանակերտ աւանն հիւանդանալով մեռաւ, և խիստ մեծահանդէս յուղարկաւորութիւն եղաւ. դագաղը ոսկիէ էր, անկողինը բեհեղէ, ոսկւով բանուած զգեստ հագած, գլուխը թագ, ոսկւով գործուած զէնքերն իր դիմացը դրուած. չորս կողմն իր որդիքն ու ազգականները կեցած էին. ասոնց քովը թագաւորական պաշտօնատարներն ու նախարարներն իրենց գնդերովը, նոյնպէս բոլոր զօրքն իրենց զէնքերովը պատերազմի երթալու պէս շարուած. առջեւէն պղնձէ փող կը հնչէր, ետեւէն սեւ հագուած լավկաններ և ասոնց ետեւէն ալ ժողովրդեան բաղմութիւնը կ'երթար :

Ոչա այսպիսի մեծավայելուչ շքով տարին թաղեցին, որոյ գերեզմանին քովն իր սիրելի կիներէն, հարճերէն ու ծառաներէն շատեր կամփին իրենք զիրենք մեռուցին :



### ԳԼՈՒԽ ԺԱ.

(Արտաւազդ Բ.)

Քրիստոնէ 150 տարի ետքը :

Հ. Արտաշէսին ովլ յաջորդեց :

Պ. Արտաշէսին յաջորդեց իր որդին Արտաւազդ Բ. որուն բնաւորութեանը վրայօք արդէն խօսեցանք :

Հ. Արտաւազդ ի՞նչ ըրաւ :

Պ. Իր քոյրերն ու եղբայրներն Աղիովիտ ու Առբերանի գաւառները զրկեց և միայն Տիրան եղբայրն իր քովը պահեց, վասն զի ինք անորդի էր. թագաւորելէն քիչ վերջն օր մը ձիով որսի գնացած ատեն վրան խելացնորութիւն գալով՝ խորունկ փոսի մը մէջ ինկաւ ու կորսուեցաւ :

Հ. Գողթան երգիներն այս գէպքն ի՞նչպէս կը պատմեն :

Պ. Արտաշէսին մահուանն օրը շատ մարդիկ անոր սիրոյն համար իրենք զիրենք կամովին մեռուցած ըլլալով՝ Արտաւազդայ շատ գժարն եւկաւ, ու հօրը գէմ գանդատելով ըսաւ. « գուն երթալու ատենդ բոլոր աշխարհ հետդ տարիիր, ես աւերակներուն ի՞նչպէս թագաւորեմ ». անոր համար Արտաշէս զինքն անիծեց և ըսաւ թէ « որսի ելած ատենդ գերեզ բաշերը բռնեն ու Մասիս լեռը տանին. հոն մնաս և ամեններին լցյս շտեմնես » :

« Եթէ դու յորսս հեծցիս,

Յազատ ՚ի վեր ՚ի Մասիս

Զքեզ կալցին Քաջը

Տարցին յազատ ՚ի վեր ՚ի Մասիս .

Անդ կացցես և զլոյս մի տեսցես » :

Հ. Հին ատենուան պառաւներն ի՞նչ կ'ըսէին :

Պ. Անոնք ալ կ'ըսէին թէ Արտաւազդ այրի մը մէջ շղթայով կապուած կեցած է և երկու շուն շղթան միշտ կը կրծեն որ փրթի և Արտաւազդեց աշխարհիս վերջ տայ. բայց գարրիններուն սալի վրայ երկաթ ծեծելու ձայնէն շղթաները

Նորէն կը զօրանան : Ասոր համար պարզամիտ գարբիներ կիրակի օրերն ալ քանի մանդամ ուռը սալին կը զարնէին որպէս զի Արտաւաղդին շղթաները զօրանան :

Ոմանք ալ կ'ըսէին թէ Արտաւաղդ ծնանեւ լուն պէս Աժդահակայ ցեղին՝ Մուրացան նախարարութեան կանայքը զինքը կախարդեցին . իսկ Գողթան երդիչները կ'ըսէին թէ այս կիները վլրտաւաղդ գողցան ու տեղը սատանայ մը դրին . անոր համար Արտաշէս զանոնք շատ չարչարեց :



### ԳԼՈՒԽ ԺԲ.

(Տիրան Ա.)

Գրիստոսէ 150 տարի ետքը :

Հ. Արտաւաղդին ով յաջորդեց :

Պ. Իր եղբայրը Տիրան Ա. որուն Հոռվմայեցւոց Անտանիոս Պիոս կայսոր թագաւորական թագու ծիրանի զրկեց և սորա յիշատակին համար մասնաւոր ստակ մը տպել տուաւ , վրան Տիրանին ու իր պատկերը , ձեռքը Տիրանին ուսին վրայ դրած և այսպէս դրուած « թագաւոր Հայոց տուեալ » :

Հ. Տիրան յիշատակաց արժանի ինչ դործ ունեցաւ :

Պ. Տիրան յիշատակաց արժանի դործ մը չունեցաւ , ինքինք որսի և զբօսանաց տուած էր . ուստի Եկեղեց գաւառին Զրմէս աւանը բնակե-

ցաւ և 21 տարի թագաւորելէն ետև օր մը սաստիկ ձիւնի բռնուելով՝ ճանրան մեռաւ :

### ԳԼՈՒԽ ԺԲ.

(Տիրան Գ.)

Գրիստոսէ 151 տարի ետքը :

Հ. Տիրանին ով յաջորդեց :

Պ. Տիրանին յաջորդեց իր փոքր եղբայրը Տիգրան Գ. որ Պարթեւաց Պերով թագաւորին հետ Հոռվմայեցւոց գէմ պատերազմեցաւ և երկուքն ի միասին յաղթեցին . Տիգրան սոյն յաղթութենէն քաջալերեալ իւր բանակաւը գէպ ի փոքր Ասիա յառաջացաւ , ուր նոյն կողմերը տիրով թագուհի մը զինքը բռնեց ու բանաւ դրաւ . բայց նոյն ժամանակը Ղուկիոս Վերոս՝ Մարկոս Աւերգոս կայսեր գահակիցը Պարթեւաց ու Հայոց գէմ պատերազմի գալով երբ լսեց Տիգրանին բռնուիլը , ազատեց զայն և իր աղդականներէն Ոռվի՛ անուն աղջիկ մի կնութիւն տուաւ և այս բանիս ՚ի յիշատակ ստակ ալ տպել տուաւ , որոցմէ մինչեւ հիմա ալ կը գտնուի՛ ոսկի , արծաթ և թէ պղինձ :

Տիգրան Հայաստան գառնալէն ետև զանազան կարգադրութիւններ ըրաւ . Ոռվի՛ կնոջմէն ծնած չորս զաւակները նախարարաց կարգն անցուց , որ Ոռվի՛սեան կոչուեցաւ և 42 տարի թագաւորելէն ետև մեռաւ :



## ԳԼՈՒԽ ԺԴ.

(Վաղարշ)  
Քրիստոնէ 195 տարի ետքը։

Հ. Տիգրանին ովլ յաջորդեց։

Պ. Տիգրանին յաջորդեց իր որդին Վաղարշ, որ իր հօրը դահը ելածին պէս բասեն գաւառին մէջ Մուրց գետին երասխայ խառնուած տեղն՝ ուր ինքը ծնած էր՝ մօրն Արարատ երթալու ատենը, մեծ աւան մը շինեց և իր անուամբը վաղարշաւան անուանեց. նոյնպէս՝ շինել տուաւ Ծաղկոտն գաւառին մէջ Վաղարշակերտ քաղաքը որ հիմա Ալաշկերտ կը կոչուի։

Հ. Վաղարշ Հռովմայեցւոց հետ ինչպէս վարուեցաւ։

Պ. Սեպտիմիոս Սեւերոս կայսրը զօրքով այս միջոցիս Ասիա եկած էր և կուղէր Հայաստանի վրայ ալ յարձակիլ. բայց Վաղարշ շատ ընծաներ զրկելով անոր՝ բարեկամութիւն հաստատեց և այսպէս զՀայաստան պատերազմէ ազատ կացուց։

Հ. Վաղարշ ինչ տօն հաստատեց։

Պ. Հայոց տարեգլխոյն, այն է Նուասարդ ամայ առաջին օրը կռոց ՚ի պատիւ մեծ տօն մը հաստատեց, որ ամեն տարի նոյն օրը բագաւանի մէջ իր հօրեղբօրը՝ Մաժան քրմապետին գերեզմանին վրայ մեծ հանդիսիւ կը կատարուէր և նոյն օրն ՚ի պատիւ կռոց եղջերուներ կը վազնէին։

Հ. Վաղարշ ո՞րքան ատեն թագաւորեց և ինչպէս մեռաւ։

Պ. Հիւսիսային կողմերը Խաղբաց ու Բասլաց ազգերն իրենց վնասեալ Սուրհապ թագաւորին առաջնորդութեամբն Հայաստանի վրայ յարձակեցան ձորայ-կապան կամ Ալանաց-Դուռ ըսուած կապանէն անցնելով՝ կուր գետին ասդի կողմը եկան. Վաղարշ զօրքով անոնց դէմն ելաւ և աղէկ ջարդ մը տալէն ետքը՝ ետեւնուն մինչև ձորայ-կապանէն անդին հալածեց. հոն նորէն ճակատեցան. Հայերը դարձեալ յաղթեցին. բայց այս պատերազմիս մէջ Վաղարշ նետէ մը զարնուելով՝ 20 տարի թագաւորելէն ետքը մեռաւ։

→→→○○←←←

## ԳԼՈՒԽ ԺԵ.

(Խոսրով-Մեծ)  
Քրիստոնէ 215 տարի ետքը։

Հ. Վաղարշին ովլ յաջորդեց։

Պ. Վաղարշին յաջորդեց իր որդին Խոսրով, որ իր հօրը վրէմն առնլու համար անցաւ կովկաս լերանց հիւսիսային կողմը և հոն ձորայ կամ Ալանաց Դուռ կոչուած տեղը պատերազմելով չարաչար յաղթեց և լաւ մը պատժեց Սկիւթացիներն և ՚ինչան իւր ընդարձակ տէրութեամնն Յոյն գրով արձան մը կանգնեց, և յետոյ իր նուածած ազգերէն հարիւրէն մէկ հոգի իր հետն առնլով դարձաւ ՚ի Հայաստան։

Հ. Խոսրով ասկէ ետքն ի՞նչ ըրաւ :

Պ. Անտոնիոս կարակալլա կայսեր կողմէ թէոկրիտէս զօրապետն անհամար զօրօք Հայաստան եկաւ Հայաստանն իսպառ Հռովմայեցւոց ներքենուաճելու պաշտօնով. Խոսրով իր բանակաւն Հռովմայեցւոց դէմ ելնելով՝ լաւ ջարդ մը տուաւ և մասցածներն ալ իրենց զօրապետին հետ մէկտեղ հազիւ թէ փախչելով պատեցան :

Հ. Խոսրովի օրով ի՞նչ պատահեցաւ :

Պ. Իր թագաւորութեանը 28րդ տարին Պարթեւաստանի մէջ մեծ խռովութիւն ծագեցաւ. Ստահր գաւառէն Արտաշիր անուն Պարսիկ իշխան մը Պարսիկ նախարարներէն շատն իր հետ ունենալով Պարթեւաց Արտաւան թագաւորէն ապստամիեցաւ. Արտաւան յաղթուեցաւ ու մեռաւ և Պարսիկ նախարարները զԱրտաշիրն իրենց թագաւոր դրին, որուն հետ միարանեցան նաև Պարթեւաց Սուրէնեան և Սպահապետի Պահլաւ ցեղերը: Խոսրով ասոնք իմանալով՝ ըստ որումինք ալ Արշակունի ցեղէ և Արտաւանին ազդական էր, զօրք ժողուեց և օգնելու համար Պարթեւաստան գնաց. բայց հոն լսելով բոլոր եղածն ու Արտաւանի մահը, արտօմած Հայաստան եկաւ և Հայաստանէն, վրաստանէն ու Աղուաններէն, Հմաց աշխարհէն և Փելիպպոս կայսեր հրամանաւն եղիպտոսէն ու Պոնտոսէն շատ զօրք ժողուելով՝ ահագին պատրաստութեամբ Արտաշիրն վրայ գնաց, մինչև Տիգրոս յարձակեցաւ և Պարսիկ երկիրներն աւրշտկեց և զԱրտաշիր մինչև Հնդկաստան փախուց :

Հ. Խոսրովին ի՞նչ վտանգ պատահեցաւ :

Պ. Արտաշիր չկրնալով գէմ գնել Խոսրովին, ետեւէ եղաւ զՄոսրով սպաննելու, ուստի և այս գործն ՚ի գլուխ հանել կրցողին մեծ վարձատրութիւն ու մեծ պատիւ խոստացաւ. Պարթեւաց Սուրէնեան ցեղին Անակ նախարարն այս բանս յանձն առաւ և զինք Պարսիկ թագաւորէն ապստամբած ձեւացնելով՝ իր ընտանեօքն Հայաստան եկաւ, ուր զայն մեծ պատուով ընդունեց Խոսրով և իր թագաւորութեան երկրորդնըրաւ. բոլոր ձմեռն ուրախութեամբ անցուցին. իսկ դարնան Խաղիսաղէն (<sup>1</sup>) վազարշապատ դարձան, ուր Անակայ Ողոհէ կինը ծնաւ զԱ. Գրիգոր Լուսաւորիչ :

Հ. Անակ ի՞նչպէս կատարեց իր վատ խորհուրդը :

Հ. Օր մը թագաւորին հետ որսի գնացած ժամանակ՝ Անակ իրը թէ գաղտնի բան մը լսել ձեւացնելով՝ հեռուն տարաւ և Անակն ու իր եղբայրն յանկարծ սուրերնին քաշելով՝ չարաչար վիրաւորեցին և իրենք ձիերնին վազցնելով փախան. Խոսրով գեռ չմեռած հրաման ըրաւ որ Անակայ ցեղը թրէ անցնեն: Նախարարներն ինկան Անակի ետեւէն և երասխ գետին քով անոնց համելով գետը խեղդեցին և նորա ամբողջ ընտանի քը թրէ անցուցին, այնպէս որ միայն Ա. Գրիգոր ը Լուսաւորիչն ու եղբայրը կրցան աղատիլ

(1) Խաղիսաղ Հայոց թագաւորաց ձռումեւան բընակութեան տեղին էր:

Ա. Գրիգոր Լուսաւորիչը Բուրդար անուն մէկը  
Կեսարիա փախուց և նորա Եղբայրն ալ՝ զՍուրբէն՝  
դայեակները Պարսկաստան փախուցին . Խոսրով  
48 տարի թագաւորեց և նորա մահուընէն ետեւ  
Քրիստոսի 261 թուականին Արտաշիր Հայաստանի  
տիրեց :

### ԳԼՈՒԽ ԺԶ.

(Հայաստան Պարսիկ իշխանութեան ներքեւ),  
Քրիստոսէ 261 տարի ետքը :

Հ. Խոսրով մեծի աղետալի մահուընէն յետոյ  
Հայաստան ինչ վիճակ ունեցաւ :

Պ. Խոսրովի մահուընէն յետոյ Արտաշիր առիթ  
գտնելով մոտաւ Պարսկաստան և միտքը դրաւ որ  
Հայաստանն ալ իր ձեռքին ներքեւ նուածէ .  
Հայերը Փուիւգիայէն քիչ մ'ալ Յունաց զօրք բերել  
տալով Պարսիկ դէմ պատերազմի պատրաստուեցան . Հռովմայեցիներէն ալ օգնութիւն  
ուղեցին . բայց Վաղերիանոս հիւսիսային ազդաց  
հետ պատերազմի բանուած ըլլալով չկրցաւ օգնել,  
իր յաջորդները՝ կղաւտիոս և Աւրեղիանոս  
ալ՝ որ շուտ շուտ իրարու յաջորդեցին , չօգնեցին Հայոց . Արտաշիր անհամար զօրօք մոտաւ  
Հայաստան . Հայք միաբանական հոգւով Արտաշիրի զօրութեանը երկար տտեն դէմ դրին . բայց  
վերջապէս չկրնալով տոկալ հնագանդեցան , նախարարներէն շատեր Յունաց երկիրը փախան .  
Արտաւազդ՝ Մանդակունեաց նախարարն զջրդատ

Հռովմ փախուց և Հռովմայեցւոց Տակիտոս կայսեր յաջորդը Պրոբոս Արտաշիրի հետ համաձայնելով Հայաստան աշխարհը մէջերնին բաժնեցին և Արտաշիր Հայաստանի մեծ մասին տէր եղաւ ,  
որով և Հայաստան ալ Պարսիկ նահանգներէն մին դարձաւ :

Հ. Արտաշիր ի՞նչ ըրաւ Հայաստանի մէջ :

Պ. Յունաց երկիրները փախչող Հայոց նախարարներն ետ դարձուց , ամուր բերդերու մէջ ապաւինողները վար իջուց , բայց Ամատունեաց Օտա նախարարը՝ որ Խոսրովին Խոսրովիդուխա աղջիկն ու բոլոր թագաւորական դանձն առած Անի բերդը մոտած էր , բնաւ տեղէն չարժեցաւ ,  
վասն զի խիստ ամուր և անառիկ էր . Արտաշիր իմանալով որ Խոսրովին որդին զջրդատ Մանդակունեաց Արտաւազդ իշխանն ՚ի Հռովմ փախուցեր է , Մանդակունեաց ցեղը բոլորովին ջնջել տուաւ . սակայն Աշոտայ Տաճատ իշխանն Արտաւազդայ քոյլերէն մին կեսարիա փախցնելով՝ հետն ամուսնացաւ : Արտաշիր զանազան կարգադրութիւններ ըրաւ . Արշակունեաց ցեղը վերըսին Արարատ նահանգը բնակեցուց և ըստ առաջնոյն՝ թագաւորական ցեղին ոռնիկ կապեց . հրամայեց որ Բագաւանին մէջի կրակատան կրակը միշտ վառ պահուի , և կուոյ ալ պատիւ տրուի . Վաղարշակին կանգնած արձանները կոտրել տուաւ . սահմանագլուխներու վրայ Արտաշէս երկրորդին տնկել տուած քարերը նորոգեց և զանոնք իր անուամբն Արտաշիրական ան-

ուանեց, և չայաստանի տուրքերն ալ որոշելով  
Պարսիկ մարզպան մը դրաւ:

Հ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ ի՞նչ եղաւ:

Պ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր գայեակին ձեռ-  
ոօքը կեսարիա խնամուեցաւ, և երբ քիչ մը  
մեծցաւ, վարժարան մը գրուեցաւ, ուր Յունա-  
րէն, Ասորերէն և քրիստոնէութիւնը կատարե-  
լավէս ուսաւ. չափահաս եղած ատեն դաւիթ  
անուն բարեպաշտ մէկու մը Մարիամ աղջկանն  
հետ ամուսնացաւ, որմէ երկու զաւակ ունեցաւ,  
որոց առաջնոյն անունը Վրթանէս և երկրորդինն  
Արիստակէս էր. Ս. Գրիգոր Մարիամին հաւա-  
նութեամբը բաժնուելով չոռվմ գնաց Տրդատին  
քով ծառայելու, որպէս զի իր հօրն սպանու-  
թեանը հատուցում ընէ. Մարիամ Արիստակէսին  
հետ կուսանաց վանք մը գնաց և Վրդանէս ալ  
գայեակներուն քով մնաց:

Հ. Տրդատ ի՞նչ եղաւ:

Պ. Արտաւազդ Մանդակունին չոռվմի մէջ  
խիստ լաւ խնամեց զՏրդատ, և երբ մեծցաւ,  
Լիկիանոս կոմին քով դրաւ: Տրդատ իր սաս-  
տիկ զօրութեամբն ու ձի հեծնելու և զէնք գոր-  
ծածելու մասին ունեցած արտաքոյ կարգի յա-  
ջողակութեամբն չոռվմայեցւոց մէջ մեծ անուն  
ստացաւ. Յունաց Աղիմպիական խաղերուն ըս-  
տէպ կը մասնակցէր և մեծ յաղթութիւններ կ'ը-  
նէր. անգամ մը մէկ ձեռքով երկու վայրենի  
ցուլերու եղջիւրներէն բունելով քաշեց փրցուց  
և զանոնք սպաննեց. որ մ'ալ ձիարշաւի ատեն ու-

բիշի մը հետ կառք վաղցնելու միջոցին հակառա-  
կորդին ճարտարութեամբը Տրդատ կառքէն վար  
ինկաւ. ասոր վրայ սաստիկ բարկացած վազեց  
ետեւէն և այնպիսի ուժով բռնեց, որ ալ ձիերը  
չկրցան շարժիլ. բոլոր տեմնողները զարմացան:

Դարձեալ՝ երբ կարոս կայսրն Արտաշիրի գէմ  
պատերազմի ելաւ, Տրդատ ալ անոր բանակին  
մէջ էր. կայսրն յաղթուեցաւ ու զօրքը ցրուե-  
ցան. Տրդատին ձին վիրաւորուած ըլլալով և չը  
կրնալով փախչողներուն հետ երթալ, իր բոլոր  
զէնքերն ու ձիուն վրայ եղածները կոնակն ա-  
ռած՝ լրզալով Եփրատէն անցաւ և Հռովմայեց-  
ւոց բանակն հասաւ: Սոյն պատերազմիս մէջ կա-  
րոս և իր որդին կարիքանոս սպաննուեցան. քիչ  
մը ետքը Նումերիանոս՝ որ կայսր գրուած էր,  
սպաննուելով՝ տեղը Դիոկղետիանոսն անցաւ,  
որուն օգնութեամբը Տրդատ իր հօրը թագաւո-  
րութիւնն ստացաւ:



### ԳԼՈՒԽ ԺԷ.

(Տրդատ)

Գրիստոնէ 286 տարի ետքը :

Հ. Տրդատ ի՞նչ առթիւ չայաստանի թագա-  
ւորեց:

Պ. Պարսից Արտաշիր թագաւորը 26 տարի  
չայաստանի վրայ տիրելէ ետեւ՝ մեռաւ, և իրեն  
յաջորդեց իր որդին՝ Շապուհ, որուն թագաւո-

բութեանն առաջին տարին Գթաց թագաւորն  
անհամար զօրօք Հռովմայեցւոց Երկիրն արշա-  
ւեց և Դիոկղետիանոսի պատղամ զրկեց ըսելրվ  
թէ՝ « փոխանակ իրարու հետ պատերազմելու և  
պարապ տեղն իրարու զօրաց արիւն թափելու՝  
եկուր քեզի հետ մենամարտինք, և եթէ ես  
յաղթեմ, բոլոր Յոյներն ինձ հնագանդին, և  
եթէ գու յաղթես, մենք ամենքս քեզի հար-  
կատու ըլլանք » : Դիոկղետիանոս կազմուած բոլ  
տկար ըլլալրվ՝ չէր յուսար թէ ինք յաղթէ .  
ուստի բոլոր զօրապետացն հետ խորհուրդ կազ-  
մեց . Լիկիանոս ալ իր զօրքովն հոն եկաւ : Դի-  
ոկղետիանոս Լիկիանոսի խորհրդովը Տրդատին  
կայսերական զգեստ հագցուց, կայսերական նշան-  
ներով զարդարեց և Երկրորդ օրը Տրդատ զօրաց  
դլուխն անցած ձին վազցնելով Գթաց թագաւո-  
րին բանակը մօտեցաւ . Երկուքն սկսան մենա-  
մարտիլ . Տրդատ Գթաց թագաւորին վրայ յար-  
ձակելով՝ բուռն ուժով ու մեծ քաջութեամբ  
բռնեց զայն, և Դիոկղետիանոսի առջեւ բերաւ :  
Դիոկղետիանոս յանչափս ուրախացած՝ ուզեց հա-  
տուցում ընել, և եղր իմացաւ որ Տրդատ Հա-  
յոց թագաւորին որդին է, թագաւորական  
զգեստ հագցուց, դլուխը թագ դրաւ, և բազ-  
մաթիւ զօրքով Հայաստան զրկեց, որպէս զի Եր-  
թայ իր հօրը թագաւորութիւնն առնու :

Հ. Տրդատ ի՞նչպէս մտաւ Հայաստան :

Պ. Տրդատ փառօք ուղղակի կեսարիա գնաց,  
ուր ժողվուած էին նախարարներէն շատերը, որոնց

հետ մտաւ 'ի Հայաստան և Երկրորդ անդամ  
կանդնեցաւ Արշակունեաց հարստութիւնն, Հա-  
յաստան 25 տարի Պարսից լուծին ներքեւ մնա-  
լէն ետք :

Հ. Տրդատ Հայաստան մտնելէ ետեւ ի՞նչը ըրաւ:

Պ. Ամատունեաց Օտա իշխանը Խոսրովիդուխ-  
տըն ու բոլոր արքունական գանձերն հաւատար-  
մաբար պահած ըլլալրուն 'ի վարձատրութիւն՝ Հայոց  
տէրութեան Հազարապետ՝ Արտաւազդ Մանդա-  
կունին՝ սպարապետ կարդեց Տրդատ և Աշոտայ  
Տաճատ իշխանն ալ Աշոտայ նահապետ անուանեց .  
ասկէ ետքը Պարսիկներն Հայաստանէն հալածեց  
և Ասորեստանի ու Պարսից նահանգներէն շատե-  
րուն տիրեց (1) . ապա շաստուածոց շնորհակա-  
լութեան համար Եկեղեց գաւառը Երիզա գիւ-  
ղն մէջ մեծ հանդիսիւ Անահիտ շաստուածոյն զոհ  
մատուցին . Տրդատ Ա. Գրիգորին հրաման ըրաւ  
որ պսակ ու կանաչ սատեր ընծայէ Անահիտին .  
Ա. Գրիգոր՝ որովհետեւ քրիստոնեայ էր, յանձն  
չառաւ . Տրդատ նախ քաղցրութեամբ համոզել  
յանաց որպէս զի քրիստոնէութիւնը թողու ,  
բայց եղր տեսաւ թէ իր համոզմանը վրայ ան-

(1) Տրդատին այս քաջութիւններն Հայոց մէջ ա-  
ռածի կարգ անցած էին, որ իրարու կ'ըսէին « իր-  
բեւ զէդն Տրդատ՝ որ սիզալովն աւերեաց զթումբս  
գետոց, և ցամաքեցոյց իսկ 'ի սիգալ իւրում զյոր-  
ձանս ծովուց » որ ըսել է՝ սէդ Տրդատին պէս՝ որ  
իր սէդ քալուածքովը գետերուն թումբերն աւրեց և  
ծովուն յորձանքները չորցուց :

Դըրդուելի է, սկսաւ զանազան դառն տան ջանքներ տալ, որոց ամենուն ալ սքանչելի համբերութեամբ տոկաց, և երբ իմացաւ որ Ս. Գրիգոր Անակայ որդին է, ձեռուըներն ու ոտուըները կապած հրամայեց որ Ալտաշատ բերդին խորվիրապը նետեն, որ մահապարտներու յատկացեալ տեղի մ'էր :

Հ. Տրդատ որո՞ւ հետ ամուսնացաւ և քրիստոնէութեան դէմինչ վճիռ հրատարակեց :

Պ. Ալանաց Աշխատար թագաւորին Աշխէն աղջիկն իրեն կնութեան առաւ, զանիկա Արշակունի գրել տալով՝ գլուխը թագ գրաւ և ծիրանի հաղցուց : Ետքը երկու հրովարտակ հանեց, որոցմով մահ կ'սպառնար անոնց՝ որ քրիստոնէութիւն կը դաւանէին և խստիւ կը պատուիրէր որ Ալքամազդայ, զգաստ Անահտայ և քաջ Վահագնի ջերմեռանդութեամբ պաշտօն մատուցանեն :

Հ. Այս միջոցներուն ի՞նչ պատահեցաւ :

Պ. Քրիստոսի 300 թուին Հռիփսիմէի և Գայիանէի հետ Հռովմի կուսանաց վանքէն կուսութեան նուիրեալ խումբ մ'աղջկունք Դիոկղետիանոսի ձեռքէն փախան Հայաստան և վաղարշապատու քովիրն այդիի մը մէջ ապաստանեցան . վասն զի Դիոկղետիանոս անոնց մէջէն Հռիփսիմէի արտաքոյ կարդի գեղեցկութեանն հաւնելով՝ կ'ուզէր զայն իրեն կնութեան առնուլ : Դիոկղետիանոս երբ լսեց ասոնց փախչիլը թուղթ գրեց Տրդատայ որ անոնց մէջէն միայն Հռիփսի-

մէին զատ՝ միւսներն սպաննէ և զայն կամ իրեն զրկէ և կամ եթէ հաճի, իրեն կնութեան առնու : Տրդատ զանոնք դանել տուաւ . Հռիփսիմէի գեղեցկութեանն զմայլեցաւ, ուզեց զայն կնութեան առնուլ . հարսանեաց պատրաստութիւնն սկսաւ, զՀռիփսիմէ բռնութեամբ բերին, բայց երբէք անձնատուր չեղակ, մինչեւ կէս գիշեր կռուեցաւ Տրդատայ հետ, փախաւ և գնաց եր ընկերներուն քով, ուր և ամենքն ալ նահատակեցան :

Հ. Տրդատ ի՞նչ պատուհաս կրեց :

Պ. Յիշեալ նահատակութենէն վեց օր ետքն երբ Տրդատ մեծ հանդիսիւ որսի ելած էր, վկան յանկարծ խելագարութիւն եկաւ և վայրի անասուններու նման սկսաւ անտառները թափառիլ . նոյնպէս և քաղաքին մէջ իշխաններէն և ժողովուրդէն ոմանք դիւահարեցան և սաստիկ կը տանջուէին : Խոսրովիդուխտ երազին մէջ տեսաւ որ Կըսէին իրեն թէ միայն Ս. Գրիգորը կարող է բժշկել . Խոսրովիդուխտի այս ըսածին ականջ չդրին, բայց նոյն երազն երբ անդամ մ'ալ կրկնուեցաւ, այն ատեն Օտա Ամատունին Քրիստոսի 301 թուին գնաց Արտաշատ, ուր Ս. Գրիգորի կենդանի ըլլալն իմանալով՝ գուրս հանել տուաւ . Ս. Գրիգոր զանոնք բժշկեց, Հռիփսիմէնց և Գայիանեանց համար վկայարաններ շինեց . Տրդատ և նախարարներն իրենց ըրածին համար թողութիւն խնդրեցին . Ս. Գրիգոր անոնց քրիստոնէութիւն սորուեցուց և Տրդատ զՍ. Գրիգոր 16 մեծ նախարարներով կեսարիա

զրկեց Քրիստոսի 302 թուին և հոն Ղեւոնդ արքեպիսկոպոսին Հայոց աշխարհի համար ընդհանուր կաթողիկոս օծուեցաւ, Հայոց ազգը քրիստոնէութեամբ լուսաւորելուն համար Լուսաւորիչ կոչուեցաւ և Տրդատայ օգնութեամբը էջմիածինը շինեց, ուր կը նստի Հայոց ընդհանուր կաթողիկոս :

Հ. Ա. Գրիգոր կեսարիային դառնալէն ետեւ Բ'նչ ըրաւ :

Պ. Տարօն գնալով՝ Աշտիշատայ, Անահտայ, Վահագնի և Սատղկան մեհեանները քանդել տուաւ և անոնց տեղ եկեղեցիներ հիմնեց. Տրդատ Ա. Լուսաւորչի ընդ առաջ ելաւ մինչ ՚ի Բագաւաւան իր ընտանիքովն ու զօրքովը. հոն ամիս մը Ա. Գրիգոր քարոզելէ յետոյ Եփրատ գետին մէջ մկրտեց զջրդատ, նորա ընտանիքն և չորս միլիոնէն աւելի մարդիկ: Ա. Գրիգոր և Տրդատ քրիստոնէութիւնն աւելի հաստատելու համար շինեցին վանքեր ու դպրոցներ, ուր զարդացածները եպիսկոպոս և եկեղեցւոյ պաշտօնեայ կը ձեռնադրուէին. եպիսկոպոսաց թիւը 200 ի և ըստ ոմանց 400 ի հասաւ, յորս անուանի էին Ալբիանոս, Մովսէս, Ագապէս և անկէ ետեւ կաթողիկոսութիւնն Արիստակէսին տրուեցաւ, վասն զի Ա. Գրիգոր սկսաւ առանձնական կեանք վարել:

Հ. Ա.յս միջոցներուս Բ'նչ բան պատահեցաւ :

Պ. Տրդատ և Ա. Գրիգոր լսելով որ կոստանդիանոս կայսրն ալ քրիստոնէութիւնն ընդուներ է, իրենց խնդակցութիւնն յայտնեցին և այսպէս

Ա. Գրիգոր Լուսաւորիչ ամենէն ալ Հայոց ընդհանուր կաթողիկոս ճանցուեցաւ. քիչ ատենէն յետոյ նիկիոյ մէջ առաջին տիեզերական ժողովը գումարեցաւ, ուր և հրաւիրեցաւ Ա. Գրիգոր, բայց նկատելով որ իր կրած չարչարանացն ու գործոցը համար պատիւներ պիտի ընծայուին իրեն, յանձն չառաւ երթալ և իր տեղն Արիստակէս հայրապետը զրկուեցաւ: Արիստակէս նիկիոյ որոշումն իր հետը բերաւ, զոր և հաստատեց Ա. Գրիգոր Լուսաւորիչ և այլ եւս բոլորովին Մանեայ այրն առանձնացաւ և մեռաւ Քրիստոսի 334 թուին :

Հ. Ա. Գրիգորի ով յաջորդեց :

Պ. Իր որդին Արիստակէս հայրապետը՝ որ արդէն իր հօրը կենդանութեանն հօրմէն կաթողիկոս ձեռնադրուած էր: Ա. Արիստակէս Դ տարի կաթողիկոսութիւն ընելէ յետոյ՝ Արքեղայոս՝ Զորբրորդ Հայոց Եղիսաբենն անոր տուած յանդիմանութիւններուն համար սաստիկ բարկացած՝ օր մը Ծոփաց գաւառին մէջ անոր պատահեցաւ և սրով զարնելով մեռուց ու ինքը փախաւ: Ասոր յաջորդեց իր մեծ եղբայրը՝ Վրթանէս :

Հ. Տրդատ ուրիշ Բ'նչ գործեր ունեցաւ :

Պ. Հիւմիսային ազգաց, ինչպէս և Պարսից դէմ պատերազմեցաւ, յաղթեց, Հայաստանի անունը փառաւորեց, քրիստոնէութեան զարդացմանը մեծապէս նպաստեց, բայց վերջապէս նախարարաց իրարու դէմ տածած սխակալութենէն զրգուելով՝ թողուց թագաւորութիւնը և քաշուե-

ցաւ Մամեայ այրն , ուր կ'ըսուի թէ զի՞նքը թունաւորեցին և 56 տարի թագաւորելէն ետև մեռաւ :

## ՅԱԽԵԼՈՒՍՃԱԿԱՆ ՄԱՍՆ

(Հայոց նոր բաղաքականութեան հանգամանքը . — Սղկունեաց Սղուկ իշխանին ապստամբութիւնը . — Տրդատայ Սկիւթացոց դէմ պատերազմն ու զօրավարութեան բաժանումը ).

Քանի որ Արեաց աշխարհէը կը թագաւորէին Արշակունիք և մինչ Հայք հեթանոսական կրօնը կը պաշտէին , Հայաստանն առաւել Պարթեւաց հետ կապուած էր , բայց երբ Պարթեւաստանի մէջ Սասանեանք (Պարսիկք) թագաւորեցին և Հայաստան ալ քրիստոնէութիւնն ընդունեց Տըրդատայ օրով , այն ժամանակն և մեր Հայաստան աշխարհի քաղաքականութիւնը փոխուեցաւ . և Հայք Արեւմտեան քաղաքականութեան մօտեցան , և Տրդատ անձամբ Հռովմ գնալով՝ կոստանդիանոսի հետ սերտ դաշինք կապեց 319 ին :

Բնական էր որ Պարսից Շապուհ թագաւորն հաշտ աչօք չպիտի նկատէր Հայոց քաղաքականութեան այս փոփոխութիւնը . ուստի և Տրդատին Հռովմ գտնուած ատեն Սղկունեաց Սղուկ նախարարը՝ որ Տարօն կը գտնուէր , յորդորեց որ ապստամբի . ասկէ զատ նաեւ Սկիւթացիներն ալ գրդռեց որ Հայաստանի վրայ յարձակին :

Տրդատ վրայ համնելով և եղածն հասկնալով՝ նախ Սկիւթացւոց արշաւանացը դէմ ելաւ Սկիւ-

թական բասլաց Գեղրեհն թագաւորն սպանաց , նորա զօրացն յաղթելով . բայց այս պատերազմիս մէջ Հայոց ընդհանուր սպարապետ Արտաւազդ . Մանդակունին ալ սպաննուեցաւ :

Տրդատ Սղկունեաց Սղուկ իշխանին ապստամբութիւնը պատժելու համար , որ Օտայ իշխանն ալ սպաննած և Տարօնոյ Սղկայ ամրոցն ապաստանած և Սիմ լերան բնակիչները թագաւորին դէմ ոտքի հանած էր , չկրնալով անձամբ անոր դէմ երթալ հիւսիսայնոց հետ զբաղած ըլլալուն՝ խոստացաւ ամենամեծ վարձատրութիւն Սղուկը ձերբակալողին :

Մամդուն ձենացին , որ Զինաց աշխարհէն գաղթած էր , յանձն առաւ . ուստի և թագաւորէն հալածեալ ձեւանալով՝ գնաց Սղուկին քով և յաջող առթիւ մսպաննեց զայն և իւր գերդատանը : Տրդատ յատուկ հրովարտակաւ Տարօնոյ աշխարհն իրեն տուաւ և զայն նախարարց կարգ անցուց , որ Մամիկոնեան նախարարութիւն ըստեցաւ :

Տրդատ՝ ընդհանուր սպարապետի մահուընէն յետոյ՝ զօրավարութիւնն՝ ըստ հին օրինաց՝ չորսի բաժնեց և հիւսիսային զօրաց զօրավար կարգեց Վրաց քրիստոնեայ Միհրան թագաւորը , արեւելելեան զօրաց վրայ՝ Ամատունեաց վահան նախարարը , Հարաւային զօրաց վրայ՝ Ռշտունեաց Մանաճիհը նախարարն և արեւմտեան զօրաց վրայ ալ թագրատ նախարարը :

Երբ Հռովմայեցիք Ասորեստան մոտան , Տրդատ

ալ Պարսկաստանի վրայ քալեց, մինչեւ երկրորդ երկրատան գնաց (ըստ հաւանականութեան դաւրէժ), հոն մարզպան դրաւ և կոստանդիանոսին հետ նրբ հապուհ հաշտութիւն կնքեց, ինք ալ դարձաւ Հայաստան :

(Քրիստոնէութեան առաջին քարոզութիւններն եւ նորա Հայաստանի մէջ ուշ մտնելուն պատճառները) .

Հայաստաննեայց եկեղեցին ալ արեւմտեանին պէս առաքելական է և Հայաստանի մէջ քրիստոնէութիւնն առաջին անդամ զթադէոս և Բարթուղիմէոս առաքելոց ձեռօքն ու քարոզութեամբը մուտ դտաւ և Եւսեբիոս Յոյն պատմագիրն զթադէոս Հայոց առաջին առաքեալը կ'ընդունի :

Այս առաքելոց քարոզութիւններն այնքան խոր արմատ չըռնեցին, և նոցա աշակերտներն՝ Ռահեանք թէպէտ Արտաշէս երկրորդի արքունիքը մտան և Սաթինկայ ազգականներն հաւատացին ՚ի Քրիստոս, այսու ամենայնիւ Քրիստոսի հաւատքը չուրանալնուն համար մոլի Արտաւազդի հրամանաւ (Արտաշէսի որդին ու յաջորդը) Բագրատունեաց լեռներուն վրայ գլխատուեցան:

Նոյնպէս եղան և Սուքիասեանք և ահա այսպէս մինչեւ Քրիստոնէութեան չորրորդ դարն Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը կը հալածուէր:

Այսպէս Քրիստոնէութիւնն Հայաստանի մէջ ուշ արմատ ձգելուն պատճառը կարելի է ըստ

թէ Հայաստանի Հրէից ըստ մեծի մասին հետանոսացած լինելն և աւետարանի վարդապետութիւնն՝ որ իրենց հայրենակիցներու ձեռոք կը տարածուէր, Հայաստանի մէջ ազատ չքարոզուիլն էր, ինչպէս էր նաև Հռովմայեցւոց մէջ ալ, երկրորդ պատճառն ալ կարելի է ըստ հեթանոսութեան պատճառաւ Հայոց մոքերը թանձրացած ըլլալն և նոյն ատեններու անդադար պատերազմներն ու ներքին խռովութիւններն եղած ըլլան :

Տրդատի մահուրնէն յետոյ Հայաստանի քաղաքական վիճակը .

Որովհետեւ կրօնական գաղափարներն ազգի մը քաղաքական կեանքին վրայ ալ մեծ ներգործութիւն կ'ընեն, այսպէս և շատ ճշմարիտ է որ քրիստոնէութիւնը մտնելին ետեւ Աստուածաշունչ գերքը մեր թագաւորաց վարչական ընթացքին վրայ ալ մեծ ազդեցութիւն ունեցաւ, ինչպէս նաեւ մեր ազգի քաղաքական կեանքին վրայ :

Պատերազմական ողին մարեցաւ թագաւորաց վրայ և ազգը կարծես մոռնալով իւր թագաւորն ու հայրենիքը՝ մէկ ուրիշ թագաւորի մը ու հայրենիքի մը ետեւ է կ'ընթանար :

Տրդատայ բոլոր յաջորդները՝ գըեթէ ամենքն ալ չունեցան անոր քաջութիւնն ու լուսաւորութիւնը, և առանց թագաւորաց մասնակցութեանը տեղի կ'ունենալին պատերազմները . ասոնցմէ շատեր արեւելեան պարթեւական չար սովորութիւններն իրենց մէջ պահելով դեռ երկար ա-

տեն , բազմակին էին և ներքինեաց խաղալիք :

Ահա այս պատճառաւ թագաւորի հրամանը զօրութիւն չունէր անձնասէր նախարարաց վրայ , որ արդէն անկախաբար իշխանութիւն վարելով , մէկմէկու հետ կը պատերազմէին և միմեանց կործանման պատճառ կը լինէին , երբեմն մէկմէկու հետ կը պատերազմէին և միմեանց կործանման պատճառ կը լինէին , երբեմն մէկմէկու հետ թագաւորին ընդդէմ կը միաբանէին և երբեմն ալ Պարսից կամ Յունաց կողմը կը բռնէին :

Ուստի ամեն անդամ երբ թագաւորի մահը պատճէր , յաջորդութեան համար մեծ խնդիր ու վասնդ կը ծագէր :

Աղդային խարիսուլ իշխանութեան միակ յոյն ու նեցուկը եկեղեցին և նորա պաշտօնեայքը մնացեր էին , որ լաւ գիտէին քրիստոնէութեան ընտիր բարոյականը :

Հայաստանեայց եկեղեցին միշտ կը խորչէր արեւմտեան անհաստատ քրիստոնեաներէն , որ եկեղեցին գրեթէ անդադար զանազան փոփոխութեանց և նորութեան կ'ենթարկէին . նոյնպէս կը խորչէր և արեւելքէն , որ միխրապաշտ էր և մաքուր ու ընտիր բարոյականէ խիստ հեռի կը գըտնուէր , ուստի և իւր ախտացեալ ոչխարն աւելի լաւ կը համարէր օտարի առողջ գաղանէն :

Տրդատէն յետոյ Հայոց աշխարհի քաղաքականութիւնն ալ փոխուեցաւ . որովհետեւ մինչեւ այն ատեններն որ Հայերը երբեմն արեւելեան կողմն էին և երբեմն արեւմտեան (թէպէտ շատ

անդամ արեւելեան) ալ այնուհետեւ թիւզանդացւոց քրիստոնեայ տէրութեան կողմը կը բռնէին . Տրդատի յաջորդները շատ անդամ խնամութիւն կ'ընէին և մոտաւոր կրթութիւնն իսկ արեւմտեւքէն կ'ստանար ազգը . թէպէտ մեծամեծներու և թագաւորներու կեանքը նման էր Պարսից թագաւորաց և մեծամեծներուն զեղիս ու շոայլ կենացը :

Հետեւաբար և Հայոց այս քաղաքականութեան փոխուելուն և գէպ 'ի քրիստոնեաներն առընչութիւն ու յարաբերութիւն հաստատելուն պատճառաւ Պարսից ազգն իր մողպետներուն դրդութեամբը կը ջանային միշտ կործանել Հայոց ազգն ու կրօնքը , որոյ համար անդադար յարձակումներ տեղի կ'ունենային :



## ԳԼՈՒԽ Ժ.Բ.

(Տրդատայ մահուընէն յետոյ Հայաստանի ներքին վիճակը )

Հ. Տրդատայ մահուընէն յետոյ Հայաստանի ներքին վիճակն ի՞նչ եղաւ :

Պ. Տրդատայ մահուընէն յետոյ Հայաստան ցաւալի երկառակութեան ենթակայ եղաւ : Արշակունեաց ցեղէն Սամատրուկ իշխանն՝ որ Տրդատէն վերակացու կարդուած էր Փայտակարանի և Աղուանից վրայ , ապստամբեցաւ . թագկապէց գլուխը և Փայտակարանի մէջ սկսաւ առանձին թագաւորել . նոյնպէս ըրաւ նաեւ հարաւային կողմերն Աղձնեաց Բակուր բղեշիքը և

այս երկուքն ալ իրենց յոյսը Պարսից վրայ դրած էին :

Հ. Այս ապստամբութիւնն ի՞նչ աղետալի արդիւնք յառաջ բերաւ :

Պ. Այս պատճառաւ մեր Հայապոան աշխարհն անդլուխ մնաց և շատ նախարարութիւններ՝ բըզնունեաց , Որդունեաց և այլք միմեանց հետ անդադար արիւնահեղ վէճեր ու պատերազմներ կ'ընէին : Այս գժբաղդութենէն զատ՝ նաեւ հեթանոսութեան ջերմ պաշտպաններն ալ ոտքի ելնելով՝ կ'ուղէին քրիստոնէութիւնն արմատախիլ ընել . Ս. Վրթանէսին որդին Ս. Գրիգորիս Աղուանից կաթողիկոսն , որ փայտակարան զրկուած էր , Սանարուկ ձիու մը պոչին կապեց և վաղցնելով սպաննեց զայն կասպից ծովուն մօտ՝ վատնեան կոչուած դաշտին մէջ , և Ս. Վրթանէս ալ , որ իր եղբօրը Ս. Արիստակէսի յաջորդած էր , շատ նեղութիւններ կրեց ի Տարօն , ուր մեհեաններ շատ կային և հազիւ կրցաւ թիւ աւանը փախչիլ , ուր թաղուած էր իր երանաշնորհ եղբայրը , և հոն ողբաց այս ամեն թշուառութիւններն որ հայուն ձեռքով կու դային Հայաստան աշխարհի վրայ :

Հ. Երկրին այս աղետալի վիճակին ի՞նչ դարման տարուեցաւ :

Պ. Հայրենեաց կործանմանն ու աղէտից պատճառ լինող վատոգի նախարարներէն զատ՝ կային նաեւ հայրենասէր նախարարներ ալ , որք Ս. Վրթանէսի մօտ հաւաքուելով՝ խորհուրդ ըրին

Հայրենեաց ցաւալի վիճակին վրայ և դարմանը մոտածելով՝ Մար և Գագ Ծոփաց ու Հաշտենից իշխանները կոստանդիանոս կայսեր զրկեցին , ինդրելով որ ըստ Տրդատայ քաղաքական դաշտնցը օգնէ և Տրդատին Խոսրով որդին թագաւորեցնէ :

ԳԼՈՒԽ ԺԹ.

(Խոսրով թ.)  
Քրիստոնէ 545 տարի ետքը :

Հ. Ցիշեալ պատուիրակութիւնն ի՞նչ արդիւնք ունեցաւ :

Պ. Կայսրն՝ ըստ խնդրոյ Հայոց , իւր պալատան վերակացու Սնտիոքոս զօրավարը բաղում մէդէոններով Հայաստան զրկեց , ինչպէս նաեւ Խոսրովին ալ թագ ու ծիրանի : Սնտիոքոս Խոսրովը թագաւորեցուց և Տրդատայ կարդած չորս զօրավարները վերստին հաստատեց իրենց պաշտօնին վրայ , այսինքն , Բագրատ Բագրատունին արեւմտեան կողմը , Միհրան՝ Գուդարաց բգեշին՝ հիւսիսային , Վահան Ամատունին՝ արեւելեան և Մանածիր Ռշտունին ալ հարաւային կողմը : Անտիոքոս սոյն կարդագրութիւններն ընելէ և Միհրանին հետ Սանարուկը Փայտակարանէն հալածելէ և հարկերն ստանալէ յետոյ կայսեր քով դարձաւ :

Հ. Աղձնեաց Բակուր բգեշին ապստամբութիւնն ի՞նչ վախճան ունեցաւ :

Պ. Մանաճիհր Ռշտունին իր գնդերովը բակու-  
րին դէմ գնաց , սպաննեց զայն և միանդամայն  
յանցաւորն ու անմեղն առանց որոշելու՝ գրեթէ  
ամենն ալ սուր 'ի բերան տուաւ , բազում անմեղ  
շինականներ ու եկեղեցականներ գերի վարեց .  
Ա. Յակոր Մծրնայ հայրապետն աղաչեց որ գէթ  
անմեղներուն խնայէ , բայց անագորուն իշխանը  
ոչ միայն չանսաց , այլ և բարկանալով՝ նորա ութ  
սարկաւաղներն Աղթամարայ ծովը նետել տուաւ .  
Հայրապետը դառն սրտիւ անիծեց Մանաճիհրն  
ու Ռշտունեաց բոլոր գաւառը , որ պտղաբերու-  
թենէ շուտով ամայացաւ և Մանաճիհր ալ սաս-  
տիկ ցաւերու մէջ հոգին փչեց :

Հ. Խոսրով ի՞նչ ըրաւ :

Պ. Խոսրով՝ որ իր հօրը քաջութիւններէն զուրկ  
բայց միայն նորա առաքինութիւններն ունէր ,  
Մանաճիհրի եղեռնագործութեանցը վրայ սաս-  
տիկ զայրացած էր . որսորդութեան կը պարա-  
պէր , անտառներ տնկել տուաւ , Ազատ դետի  
մօտ խոսրովակերտ քաղաքը կանդնեց և իր բը-  
նակութիւնն ալ դուին փոխադրեց :

Ա.յս միջոցներուս հիւսիսային աղդերն ապօ-  
ստամբ Սանատրուկին դրգումամբն Հայաստանի  
վրայ եկան . բագարատ և Վահան զօրավարներն  
անոնց վրայ դացին , յաղթեցին և մինչև Օշական  
քշեցին . հոն թշնամիք վերստին զարնուեցան ,  
դարձեալ յաղթուեցան , նոցա զօրավարը Վահան  
Ամատունիէն սպաննուեցաւ և Հայք յաղթանա-  
կաւ Ծոփաց գաւառը դարձան , ուր բագրատ

Վահան Ամատունիին քաջութիւնները թագաւո-  
րին պատմեց . Խոսրով Օշականը ( պատերազմին  
տեղը ) Վահանին պարզեւեց :

Հ. Պարսից հետ ի՞նչպէս վարուեցաւ Խոսրով :

Պ. Լսելով որ Պարսից Շապուհ թագաւորն հիւ-  
սայնոց հետ իրեն դէմ միաբաներ է , Պարսից  
տուած քիչ մը հարկն Յունաց կայսեր տալով՝  
օգնութիւն ինդրեց , բայց դեռ բան մը չըրած .  
քիչ ատենէն մեռաւ , 9 տարի թագաւորելովն  
ետքը . Ա. Վրթանէս կաթողիկոսն անմիջապէս նա-  
խարարները ժողուեց և Արշաւիր կամսարականն  
Հայաստանի վերակացու գնելով՝ Խոսրովին որդին  
Տիրանն առաւ և կոստանդնուպօլիս կայսեր գը-  
նաց , որպէս զի Տիրանն իր հօրը տեղ թագաւո-  
րեցնէ :

Հ. Ա. Վրթանէսին Կ. Պօլիս երթալուն վրայ —  
Պարսիկը ի՞նչ ըրին :

Պ. Շապուհ թէ այս և թէ Խոսրովին մահը լը-  
սելով կարծեց թէ Հայաստանն անտէր մնացեր  
է , ուստի իր Ներսէ եղբայրը շատ զօրքով Հա-  
յաստան զրկեց , որպէս զի երթայ նուաճէ : Ար-  
շաւիր կամսարական շատ մը զօրքով նորա դէմ  
ելաւ և սաստիկ ջարդ մը տալով՝ փառաւ որպէս  
յաղթեց , և զանոնք վանեց :

Ա.յս պատերազմին մէջ Հայոց նախարարներէն  
շատեր մեռան :

## ԳԼՈՒԽ Ի.

(Տիրան Բ.)  
Քրիստոնէ 555 տարի ետքը :

Հ. Խոսրովին տեղ ո՞վ յաջորդեց :  
 Պ. Իր որդին Տիրան երկրորդ , զոր Յունաց  
 կայսրն Հայոց վրայ թագաւորեցուց :  
 Հ. Տիրան ինչպէս մարդ էր , և ինչ ըրաւ :  
 Պ. Տիրան իր հօրն առաքինութիւնները բնաւ  
 չունէր . բոլորովին մոլի մէկն էր : Կ'ուզէր որ  
 Յունաց և Պարսից հետ խաղաղութեամբ վար-  
 ուի . սակայն Յունաց և Պարսից պատերազմին  
 ժամանակ իւր դաշնադրութեամն հակառակ Յու-  
 նանոսի օգնեց . յաղթութիւնը Պարսից կողմը  
 մնաց . բայց Շապուհ բարեկամութիւն կեղծե-  
 լով՝ Տիրանն իր քով կանչեց պատով իրր թէ  
 կարեւոր գործի մը պատճառաւ : Շապուհ իւր  
 զօրաց ներկայութեանը զանիկա լաւ մը յանդի-  
 մանելէ և իւր ուխտադրութութիւնը երեսին  
 զարնելէ ետեւ՝ աշուշներն հանել տուաւ և կու-  
 պարնելէ աւանը զրկեց : Տիրան ընդամենը 11 տարի  
 թագաւորեց :

Հ. Տիրան ինչ անդթութիւն ու ամբարշտու-  
 թիւն ըրաւ :

Պ. Յուլիանոսի (Քրիստոնէութեան ոխերիմ )  
 պատկերը եկեղեցեաց մէջ կախել տուաւ . Ա.  
 Յուստիկ հայրապետը (Ա. Վրդանէսի որդին ու  
 յաջորդը) Յուլիանոսի պատկերը խորտակեց . Տի-

րան ծեծիներքև մեռցնել տուաւ զայն և փառ-  
 ներսէն անուն մէկը կաթողիկոս դրաւ :

## ԳԼՈՒԽ Ի.Ա.

(Արշակ Բ.)  
Քրիստոնէ 564 տարի ետքը :

Հ. Տիրանին ո՞վ յաջորդեց :  
 Պ. Շապուհ ուղելով միայն Պարսից աղդեցու-  
 թիւնը տարածել Հայաստանի վրայ , Տիրանին որ-  
 դին՝ Արշակ երկրորդն Հայաստանի վրայ թագա-  
 ւորեցուց և ստուդիւ ալ այս բանն յաջողեցաւ .  
 Շապուհ Վահան Ամատունին տեղ՝ իր սիրելի  
 Վաղինակ Սիւնեցին արեւելեան գօրաց վրայ ըս-  
 պարապետ կարգեց , և Արշակ երկրորդի թագա-  
 ւորութիւնը միայն Պարսիցմէ ճանչուեցաւ : Վա-  
 ղենտիանոս Յունաց կայսրը հին դաշնադրութիւ-  
 նըն յիշեցուց Արշակայ և ըստ այնմ հարկ պա-  
 հանջեց . Արշակ դեսպաններն անարդութեամբ  
 ետ դարձուց . Վաղենտիանոս Արշակայ եղբօրոր-  
 դին Տրդատը՝ որ Տիրանի ժամանակէն պատանդ-  
 էր , սպաննել տուաւ , և Թէոդոս զօրավարն ալ  
 բազում զօրօք Հայաստան զրկեց :

Հ. Խնդիրն ինչպէս վերջացաւ :

Պ. Արշակ Խիատ ուշ զգաց իր տկարութիւնը ,  
 սակայն փութաց և զլբեծն-ներսէն՝ Յուստիկի թու-  
 որ՝ հաշտութեան միջնորդ ձգեց , սովորական  
 հարկը տալ խոստանալով . կայսրը զիջաւ . Տըր-

սպաննել տուաւ . Արշակ նաև Սիւնեաց վաղինակ նախարարն ու Ներսեհ կամնարականի ցեղն սպաննել տուաւ . Արշակաւան քաղաքը շինելով՝ ամեն տեսակ չարագործ մարդիկներով լցուց , և հրաման ըրաւ որ գատաստանէ ազատ ըլլան . նախարարներն այս բանիս վրայ աւելի նեղացան , որովհետեւ իրենց ծառաներէն շատերն անոնց ինչքերը գողնալով Արշակաւան գացին ապաստանցան . նախարարները բողոքեցին , բայց Արշակ ամենեւին չանսաց և ոչ իսկ Մեծին Ներսիսի ձայնին լսեց :

### Հ. Նախարարք Բնչ ըրին :

Պ. Պարսից Շապուհ թագաւորին դիմեցին . Շապուհ ալ որ արդէն բարկացած էր Արշակայ՝ տուրք ու հարկերը չտալուն վրայ , Ալանողան Պարթև իշխանը բազում զօրօք Հայաստան ղըրկեց , որ եկաւ շատ չարիք հասուց , նախարարաց հետ Արշակաւանը կործանեց և զԱրշակ ալ բըռնելով Շապուհին ղրկեց . Շապուհ շղթայակապ Ծնյուշ բերդը ղրկեց , ուր բաւական ատեն մնաւին յետոյ՝ օր մը դանակը փորը խոթեց ու ինքնքը սպաննեց . Արշակայ թագաւորութիւնը 18 տարի տեւեց :

### Հ. Ա. Ներսէս ինչո՞ւ Կ. Պօլիս գնաց և հոն Բնչ ըրաւ :

Պ. Շապուհին անմտութեամբն Յոյները պատերազմի եկած էին . նախարարք ալ զգուած բոլորովին մեկուսացեր էին իրմէ . Արշակ երկու թագաւորաց թշնամի և նախարարաց ալ ատելի ըլ-

դատայ որդւոյն՝ զնէլին հիւպատոսութեան պատիւ տուաւ և մշտնջենաւոր բարեկամութիւն հաստատելու համար ալ իր ազգականներէն Ողիմպիադան Արշակայ ՚ի կնութիւն տուաւ :

Հ. Արշակ երկրորդ այնուհետև Բնչ քաղաքականութիւն բռնեց :

Պ. Արշակ բնութեամբ անխոհեմ , մոլի և անկենցաղագէտ մէկն ըլլալով՝ ինքինք բոլորովին գեղիսութեան ու անկարգութեան տուաւ . արհամարհեց Պարսից արքունիքը և այսպէս պատճառ տուաւ Պարսից վրէժինդրութեանն , ինչպէս ըրած էր յառաջադոյն ալ թունաց : Պարսից թագաւորն իր խնդիրը հիւսիսայնոց հետ վերջացնեցաւորն իր խնդիրը հիւսիսայնոց հետ վերջացնեց . Արշակէն . Արլով՝ միտքը դրաւ որ վրէժ լուծէ Արշակէն . Արշակ՝ ըստ որում դիմադրելու անկարող՝ իր սիրեցակ ըստ որում դիմադրելու անկարող՝ իր սիրեց իմ Տիրիթին ու Վարդան Մամիկոնեան զինակիրն հաշտութեան միջնորդ ձգեց և խոստացաւ թունաց դէմ իրեն օգնել և կատարեց իսկ :

Հ. Արշակ ինչո՞ւ ատելի եղաւ Հայ նախարարաց :

Պ. Արշակ իր վատ ու մոլի դործերովը երկրորդ անդամ եւս ատելի եղաւ նախարարաց . վասն զի առաջին անդամ Մեծին Ներսիսի միջնորդութեամբն հաշտութիւն դոյցեր էր , Արշակ Տիրանն իր սենեկապաններուն ձեռքովը խեղդել տուաւ , զնէլն սպաննեց ու նորա կինը՝ Փառանտաւաւ , որ ամբարիշտ քահանայի մը ձեմն իրեն առաւ , որ ամբարիշտ քահանայի մը ձեռքով Ա. Հաղորդութեան մէջ թոյն խառնել ձեռքով՝ Արշակայ օրինաւոր կինն՝ Ողիմպիադան տալով՝ Արշակայ օրինաւոր կինն՝ Ողիմպիադան

լալով, շատ նեղը մնաց և Ա. Ներսիսի դիմեց, երդմամբ զղջում յայտնեց իր ըրածներուն և նորա պաշտպանութիւնը խնդրեց . Ս. Ներսէս հաւանեցուց Յունաց Թէոդոս զօրավարը և Արշակայ Պապ որդին հետն իբր պատանդ կայսեր գնաց ՚ի Պօլիս . բայց Վաղէս առանց Ս. Ներսիսի երեսը տեսնելու անմարդաբնակ կղզի մաքսորեց զայն :

ԳԼՈՒԽ ԻԲ.

(Արշակայ մահուընէն յետոյ Հայաստանի վիճակը) .  
(Պապ)

Քրիստոսէ 582 տարի ետքը :

Հ. Արշակայ մահուընէն յետոյ Հայաստանի ի՞նչ վիճակ ունեցաւ :

Պ. Շապուհ՝ Մերուժան Արծրունի ուրացեալ նախարարը բաղում զօրօք Հայաստան զրկեց և իր Որմղդուխտ քոյլին ալ անոր կնութեան տուաւ, խոստանալով որ եթէ նախարարները նուաճէ և Հայերը Պարսից աղանդին դարձնէ, զինքն Հայոց թագաւոր կ'ընէ : Մերուժան Հայաստան եւ կածին պէս՝ նախ զանազան պատճառներով եպիսկոպոսներն ու քահանաները բռնեց ու Պարսկաստան զրկեց, Յունաստան դրեբերն այրել արւաւ, սաստիկ արդելք դրաւ որ Յունաստան չուսնին, այլ միայն Պարսկերէն, որպէս զի Յունաց հետ յարաբերութիւննին խզի, և Հայաստանէն փախչող նախարարաց կիները բռնելով՝ բերդերու մէջ դրաւ, որպէս զի նախարարք Հայաստան դառնաւ :

Հ. Հայք ի՞նչպէս ազատեցան Պարսից լուծէն, Պ. Թէոդոս կայսերական գահն ամբառնալուն պէս Ս. Ներսէսն աքսորէն դարձնելով՝ պատով՝ իր քովը կը պահէր . Ներսէս երբ լսեց Արշակայ մահն ու Հայաստանի դառնաղէտ վիճակը, խընդրեց Թէոդոսէն որ Արշակայ որդին՝ զՊապ, որ նոյնպէս Պօլիս կը կենար իբր աւանդ, Հայաստանի վրայ թագաւորեցնէ . Թէոդոս հաճեցաւ և Տերենտիանոս զօրավարին հետ Հայաստան զըրկեց Պապը բազմաթիւ զօրքով և Ս. Ներսէսն ալ ՚ի միասին, որոց հետ գացին նաև Յունաստան ապաւինող Հայ նախարարներն ալ :

Պապ մտաւ Հայաստան Պարսիկները վանեց . Մերուժան փախած միջոցին հրամայեց բերդապահներուն որ բերդերուն մէջի նախարարաց կիները պարիսպներէն կախեն :

Հ. Շապուհ երբ այս գործողութիւններն իւմացաւ, ի՞նչ ըրաւ :

Պ. Շուտ մամեն կողմ հրաման զրկեց և բազում օգնութիւն հասան Մերուժանին, որ նորէն Հայաստանի վրայ եկաւ . բայց չարաչար յաղթուեցաւ . Սպանդարատ կամսարական՝ զեկաց Շերդիր թագաւորը զարկաւ սպաննեց և Մուշեղ՝ Վասակ Մամիկոննեանի որդին ալ՝ Աղուանից Ուռնայր թագաւորը վիրաւորեց . Մերուժան, որ փախչելու վրայ էր, Մմբատ Բագրատունին ետեւէն հասաւ և կրակի մէջ տաքցած շամփուր մը անոր ճակտին դնելով՝ ըստ « Պսակեմ զքեզ, Մերուժան, քանզի ՚ի խնդիր էիր թագաւորել Հայոց, և ինձ ասպետիս պարտ է պսակել զքեզ »

ըստ իմումն հայրենի իշխանութեան » որով և սատակեցաւ հոն վատն Մերուժան, և Հայաստան ալ ազատեցաւ Զրադաշտականութեան սոսկալի արհաւիրքէն, որ սկիզբն էր ասպագայ մոլեռանդական պատերածղմաց :

Հ. Հայաստան այս կերպիւ ազատուելէ ետք Բնչ ըրաւ Ս. Ներսէս :

Պ. Մեծն-Ներսէս նախարարները ժողուեց և նախ յօրդորեց Պապը որ չարութիւններէ և անիրաւութենէ հեռի կենայ ու քրիստոնէավայել կեանք անցնէ . նախարարներն ալ խրատեց որ թագաւորին հաւատարիմ կենան միշտ :

Հ. Պապ Բնչ ընթացք բռնեց :

Պ. Պապ Ս. Ներսիսի խրատուցն անսաց . նախարարաց հատուցում ըրաւ իր հօրմէն կրած վնասնուն փոխարէն . Սպանդարատ կամսարականին տուաւ նորէն Շիրակ և Արշարունիք գաւառներն ի հատուցումն Ղեկաց թագաւորը մեռցընելուն :

Հ. Պապ մինչև վերջը շարունակեց իր այս ընթացքը :

Պ. Ոչ . այլ կամաց կամաց սկսաւ շեղիլ . Ս. Ներսէս յանդիմանեց զայն և Պապ ալ նորա այս յանդիմանութիւններէն ազատելու համար գաղտնի թոյն խցուց Հայաստանի երախտաւոր Հայրապետին, որոյ մահն ընդհանուր ցաւ ու մեծ վիշտ պատճառեց :

Հ. Մեծն-Ներսէս Բնչ նշանաւոր գործեր ունեցաւ :

Պ. Մեծն-Ներսէս իր կենդանութեանն ատեն շատ անդամ միջնորդ էր եղած Հայ թագաւորաց ու նախարարներուն և Հայոց ու Յունաց միջեւ, հետեւարար և իր պերճախօսութեամբն ու քաղաքագիտութեամբը մեծ պատիւ ու համարում ստացած և ընդհանուր Աղդին սիրելի եղած էր :

Մեծն-Ներսէս իրեւ հոգեւորական մարդ և Հայաստանի ընդհանրական կաթողիկոս զանազան բարեպաշտական հաստատութիւններով զարդարեց Հայաստան աշխարհը : Յունաստանէն վերադարձին եպիսկոպոսաց ժողով գումարելով ինչ ինչ կարեւ որ կանոններ հաստատեց . ամեն գաւառի մէջ աղքատանոց ու հիւանդանոց շինել տուաւ, մասնաւոր մուտք կապեց և իր Խագարկաւագն անոնց վերատեսուչ գրաւ . Գիւղերու մէջ հիւրանոցներ հաստատեց և ուսեալ եկեղեցականներ հացնելու համար ալ յատուկ վարժարաններ բացաւ . մէկ խօսքով՝ Մեծն-Ներսէս Հայաստանի միփթարութիւնն ու պահապան հրեշտակն էր, զոր իրաւամբ նաև բարերար Հայաստանի կանուաննենք :

Հ. Պապ Բնչ ըրաւ Մեծին-Ներսիսի մահուընէն յետոյ :

Պ. Որովհետև իր բուն գիտաւորութիւնն էր Յունաց ազգեցութիւնը մերժել, ուստի Մեծին Ներսիսի մահուընէն յետոյ Շահակ անուն մէկը կաթողիկոս գրաւ . յոյն զօրավարներն հայածեց և գլուխ քաշեց Յունաց կայսրէն . Թէոդոս Տերենտիանոս զօրավարը զօրքով վերսախն Հայաս-

տան զրկեց . Տերենտիանոս դիւրութեամբ իր գործն յառաջ տարաւ , Պապը բռնեց ու կ . Պօլիս զրկեց , ուր գլխատեցաւ , ընդ ամենն եօթը տարի թագաւորելով :



### ԳԼՈՒԽ ԻԳ .

(Վարազդատ)

Քրիստոսէ 591 տարի ետքը :

Հ . Պապին ով յաջորդեց :

Պ . Թէոդոս կայսրը Վարազդատ անուն մէկը՝ որ Արշակյ ժամանակ Յունաստան փախած էր Նախարարաց հետ , իր քաջութեանն համար Հայոց վրայ թագաւոր դրաւ . բայց Վարազդատ Հայաստան երթալէն ետեւ փոխեց իր միտքը , ուղեց Յունացմէ բաժնուիլ և այս պատճառաւ Պարսկաց գեսպան զրկեց , որպէս զի անոնց հետ դաշնադրութիւն հաստատէ . Թէոդոս՝ յոյն զօրավարաց միջոցաւ այս եղածն իմանալով՝ Պօլիս բերել տուաւ և շղթայակապ թուղիս (Խալանտ) կղզին զրկեց :

Վարազդատ ամենը տարի մը թագաւորեց :

Հ . Վարազդատէն յետոյ Հայաստանի թագաւորութիւնն ինչ վիճակ ստացաւ :

Պ . Թէոդոս Պապին երկու որդիքը՝ Արշակն ու Վաղարշակը որ պատճանդ էին իր քովը՝ երկուքն ալ Հայաստանի վրայ թագաւորեցուց , որպէս զի այս եղածնակաւ կարենայ ապատամբութեան առաջըն առնուլ :



### ԳԼՈՒԽ ԻԳ .

(Արշակ երրորդ , Վաղարշակ երկրորդ եւ Խոսրով երրորդ) Քրիստոսէ 592 տարի ետքը :

Հ . Արշակ Հայաստանի որ մասին վրայ թագաւորեց :

Պ . Արշակ Հայաստանի Արեւելեան մասին վրայ թագաւորեց և ինք Արարատայ մէջ բնակեցաւ :

Հ . Վաղարշակ որ մասին վրայ թագաւորեց :

Պ . Վաղարշակ ալ արեւմտեան մասին վրայ թագաւորեց և իր աթոռը Եկեղեց գաւառին երիզա քաղաքն հաստատեց :

Հ . Այս միջոցներուս ինչ մեծ քաղաքական փոփոխութիւն պատահեցաւ :

Պ . Թէոդոս կայսրը մեռնելով՝ Հռովմէական կայսրութիւնը բաժնուեցաւ և կրօնական վէճերն այլ եւս արեւելեան կայսերաց քաղաքականութեան հիմք եղան . միւս կողմանէ ալ Զրադաշտական կրօնը՝ որ հաշտ աչօք չէր նայեր մանաւանդ Հայոց աշխարհի քրիստոնէութեան վրայ , սկսաւ յայտնի զինուորիլ քրիստոնէութեան գէմ . բայց Հայոց ազգն իր տկարութիւնն ու կործանումն յայտնի տեսնելով , գէթ իր ազգայնութիւնն ու կրօն քը պահպանելու սկսաւ փայթ տանիլ , համոզուած ըլլալով՝ որ Հայաստանի անկախութիւնը երկրին աշխարհագրական դրութեամբ՝ որ երկու թշնամի տէրութեանց հակընդգէմ քաղաքականութեան կեդրոն էր , չէր կարելի եր-

կար ատեն պահպանել, վասն զի ներքին պառակտմանց և տեսակ մ'անխխանութեան պատճառաւ ջլատեր ու սպառեր էր իր ներքին ոյժը։  
Հ. Վաղարշակ ո՞րքան ատեն թագաւորեց։

Պ. Տարի մը։

Հ. Վաղարշակայ մահուընէն յետոյ Հայաստան բնչ վիճակ ունեցաւ։

Պ. Վաղարշակի մահուընէն յետոյ Արկադէոս կայսեր և Շապուհ երկրորդի միջեւ բաժնուեցաւ։ Արշակ երրորդ չուզելով հեթանոս թագաւորի ծառայութեան մէջ գտնուիլ, Արարատէն ելաւ ու Յունաց մասը գնաց . նախարարներէն շատեր ալ իր հետը գնացին . Պարսից թագաւորը նախարարներն ետ դարձնելու համար խօսրով Գ. Արշակունին իր մասին վրայ թագաւորեցուց, և յայտարարեց որ փախչող նախարարներուն կալուածներն յարքունիս պիտի գրաւին, եթէ չվերագառնան։

Հ. Շապուհի այս խորամանկ հնարքն յաջողութիւն ունեցաւ։

Պ. Արշակ Գ. իր անխոհեմութեամբն արդէն նախարարներէն շատերը ցրտացուցած և ոմանց քսութեանն անսալով քաջ Սմբատ թագարատունին իրմէ հեռացուցած էր . Սուրէն խոռխոռունի, Վահան Առաւելեան և Աշխադար Դիմաքսեան ալ նորա օրինակին հետեւեցան, իրենց գանձերուն հետ նաեւ թագաւորին գանձերն ալ տարին . Արշակ այս բանիս գէմ բողոքեց խոսրովին. բայց խոսրով բնաւ հոգ չտարաւ . ուստի և Արշակ պատերազմի ելաւ։

Հ. Երկու համադդի թագաւորաց միջեւ ծագած պատերազմն բնչ հետեւութիւն ունեցաւ։

Պ. Երկու կողման զօրքերը ճակատեցան ՚ի վանանդ ՚ի մեծ ուրախութիւն Պարսից և Յունաց, որք գոհ էին թէ Հայք այսպէս մնացած ուժերնին իրենց ձեռքովը կը տկարացնեն։

Արշակ յաղթուեցաւ, գարձաւ Եկեղեց գաւառը և հոն շուտով մեռաւ։

Յոյները պահ մ'առանձին թագաւոր չգրին իրենց մասին վրայ, այլ յոյն կոմիերու ձեռքով կը կառավարէին։



### ԳԼՈՒԽ ԻԵ.

(Խոսրով Գ. առանձին)

Քրիստոնէ 400 տարի ետքը,

Հ. Յունաց մասի Հայ նախարարներն բնչ ըրին։

Պ. Առանց Արշակունի թագաւորի մնալ չուզելով՝ ամենն ալ միահաւան թուզիթ գրեցին խօսրովին որ իրենք ալ կը փափաքին Պարսից մասը դալ, այն պայմանաւ որ անցեալը մոռցուի, իրենց սեպհական կալուածներն ու իրաւունքներն ստանան և ինք ալ պաշտպանէ զիրենք Յոյն կուսականերուն դէմ։

Պայմաններն հաստատուեցան, նախարարաց իրաւունքն իրենց տրուեցաւ և այսպէս Հայ նախարարները միացան Պարսից մասին մէջ, բաց ՚ի Սամէլ Մամիկոնեանէն, որ կ. Պօլիս գնալով եղելութիւնն իմացուց կայսեր։

Հ. Խոսրով Գ. Բնապէս թագաւորեց Յունաց  
մասին ալ :

Պ. Խոսրով, որ արդէն կը փափաքէր Յունաց  
մասին վրայ ալ թագաւորել, նախարարաց իրեն  
կողմը դառնալէն յետոյ Յունաց Արկադ կայսրէն  
ինդրեց որ իր մասն ալ իրեն յանձնէ, խոստա-  
նալով որ հարկ եղած տուրքն ու հարկը կանո-  
նաւորապէս կը վճարէ :

Արկադ նկատելով որ եթէ յօժարակամ չկա-  
տարէ Խոսրովի խնդիրը, Հայք միաբանելով բըու-  
նութեամբ կ'առնուն իր մասը և Պարսից կուտան,  
ուստի կամայ ակամայ կատարեց Խոսրովի խնդիրը,  
որով Պարսից և Յունաց մասին վրայ միանդամայն  
թագաւորեց :

Հ. Խոսրով իր նպատակին հասնելէն ետքն Բնա-  
լըրաւ :

Պ. Որովհետեւ Ասպուրակէս կաթողիկոսը վախ-  
ճաներ էր, Մեծին Ներսիսի որդին Ս. Սահակը  
կաթողիկոս դրաւ :

Ս. Սահակ զՀայաստան ծաղկեցնելու և քրիս-  
տոնէութիւնն ու բարեկաշութիւնն յառաջա-  
ցնելու մեծ փոյթ ունեցաւ, օգնական ունենա-  
լով իրեն արքունական քարտուղար Ս. Մեսրոպ,  
որ Հայոց թագաւորութեան տկարանալու և իշ-  
նալու ատենը Գողթն գաւառը քաշուած կը ճըգ-  
նէր և Սիւնեաց նահանգին մէջ յառաջուց մնա-  
ցած հեթանոսները կը դարձնէր :

Հ. Խոսրովի գլխուն Բնա աղէտ պատահեցաւ :

Պ. Խոսրով առանց Շապուհի գիտութեամն ու  
հրամանին զԱ. Սահակ կաթողիկոս գնելուն և Ար-

կադ կայսեր հետ բարեկամութիւն հաստատե-  
լուն վրայ սաստիկ բարկացած՝ ըրածն յանդիմա-  
նեց ու շատ սպանալիք ըրաւ . Խոսրով նեղա-  
նալով՝ խիստ պատասխան մը զրկեց և անմիջա-  
պէս Արկադ կայսեր գրեց որ իրեն օդնէ . Հայ  
նախարարներէն ոմանք եղածը գաղտուկ իմա-  
ցուցին Շապուհին, որ իր Արտաշիր որդին շատ  
զօրքով Հայաստան զրկեց :

Հ. Արկադ օդնեց Խոսրովին :

Պ. Ոչ. ուստի և անօգնական մնալով՝ Խոսրով  
Արտաշիրին քով գնաց, որ թագաւորութենէ ձգեց  
զայն . նախարարներն ու զԱ. Սահակ իշխանու-  
թենէ հանեց և Հայաստանի մէջ բաւական զօրք  
թողլով՝ Խոսրովն ու Գաղաւոն կամսարականը  
հետն առած Տիղրոն գնաց :

Շաւարչ Գաղաւոնին եղբայրն, ու Պարգեւ՝  
Ամասունեաց իշխանն ուղելով իրենց թագաւորը  
գերութենէ ազատել, 700 զինւորով յանկարծ  
Արտաշիրին զօրացը վրայ յարձակեցան, բայց  
Խոսրով ամուր շղթաներով կապուած ըլլալուն  
չկրցին աղատել և Շաւարչ ու Պարգեւին որդին՝  
Մանուէլ պատերազմին մէջ մեռան . իսկ Պար-  
գեւ գերի բռնուեցաւ : Արտաշիր հրամայեց որ  
անոր մորթն հանեն ու միշտ Խոսրովին առջեւը  
դնեն :

Խոսրով 5 տարի թագաւորելէն ետքն Անյուշ  
բերդը զրկուեցաւ :



## ԳԼՈՒԽ ԻԶ.

(Վոամշապուհ)

Քրիստոնէ 401 տարի ետքը :

**Հ.** Խոսրովին յետոյ ովլ թագաւորեց :

**Պ.** Արտաշիր Խոսրովին տեղն անոր վոամշապուհ եղբայրը թագաւորեցուց, որ իր խոհեմ կառավարութեամբն ու խմաստուն հեռատեսութեամբը շատ բարեաց պատճառ եղաւ և Պարմից թագաւորին հետ քաղցրութեամբ վարուելով՝ նորա սէրն ու յարդանքը վայելեց :

Իր օրովը դադրեցան քանդիչ ու աւերիչ ներքին երկպառակութիւններն ու անդադար առելութիւններն, որ այնքան սուզի նստան. տիրեց բաղձալի խաղաղութիւնը, որում մեծապէս պէտք ունէր չայաստանի ապագայ վիճակը և ահա մեծ յեղաշրջում մը տեղի ունեցաւ չայոց քաղաքական, մոտաւորական և բարոյական վիճակին վրայ :

Վոամշապուհ ոչ միայն Պարսից, այլ և Յունաց արքունեաց հետ ալ շատ սիրով կը վարուէր և շատ անդամ այս երկու պետութեանց միջեւ հաշտարար դատաւորի դեր կը կատարէր :

**Հ.** Վոամշապուհ իր դիտաւորութեանց իրականացմանն ովլ իրեն աջակից ունէր :

**Պ.** ԶՈ. Սահակ, զոր Արտաշիրի կամօքն ու հածութեամբը վերստին կաթողիկոս դրաւ. Ս. Սահակ որ արդէն կը փափաքէր իր փեսան՝ չամազասպ Մամիկոնեանն սպարապետ կարգել տալ, բացաւ իր միտքը վոամշապուհին, որ շատ սի-

բովլ ընդունեց նորա առաջարկը, բայց չուզելով ինքիրեն կատարել, յանձնարարական թղթով մը Արտաշիրին զրկեց զԱ. Սահակ որ գնաց հաւանեցուց, կամսարականաց և Ամատունեաց ցեղերուն ներումն ստացաւ և հաճեցուց որ յարգունիս գրաւուած նոցա ինչքերն ու կալուածներն իրենց չնորհուի. Արտաշիր միանդամայն հրովարտակ մը զրկեց վոամշապուհին, որպէս զի Ս. Սահակայ բոլոր խնդիրները կատարէ :

**Հ.** Վոամշապուհի օրովլ ինչ մեծ գիւտ եղաւ :

**Պ.** Մինչեւ նոյն ժամանակիներն չայերէն գիրչկար, և Յունաց ու Ասորուց գիրերը կը գործածէն չայք. Ս. Սահակ իրեն գործակից Յ. Մեսրոպի հետ չայերէն լեզուի գրերն հնարեց, և կրթութիւնն ու ուսումն ծաւալելու համար վարժարաններ բացուեցան, ընդունակութիւն և յաջողակութիւն ունեցող շատ մը երիտասարդներ Աթէնք զրկուեցան ուսումնին կատարելագործելու համար. վերջապէս վոամշապուհի օրովլ և նորա ու Ս. Սահակի և Ս. Մեսրոպի անդադար ջանից չնորհիւ չայաստան նոր կեանք ու կենդանութիւն ստացաւ :

**Հ.** Վոամշապուհ քանի տարի թագաւորեց :

**Պ.** Վոամշապուհ 21 տարի թագաւորելէ և բաղում բարութեանց պատճառ լինելէ ետեւ մեռաւ խաղաղութեամբ՝ բոլոր ազգն ու հայրենիք սգոյ մէջ թողլով :



ԳԼՈՒԽ ԻԵ.

(Խոսրով Գ. երկրորդ անգամ)  
Քրիստոնէ 424 տարի ետքը :

(Ճապուհ Պարսիկ)  
Քրիստոնէ 422 տարի ետքը :

Հ. Վռամշապուհին ով յաջորդեց :

Պ. Որովհետեւ Վռամշապուհի որդին 10 տարեկան ըլլալով՝ թագաւորելու բաւական չէր, Ա. Սահակ Յազկերտին երթալով՝ աղաչեց որ ըզ Խոսրով՝ որ նոյն ժամանակները շղթաներէն արձակուած Ծիյուշ բերդը կը կենար, նորէն Հայոց վրայ թագաւորեցնէ. Յազկերտ կատարեց այս խնդիրքը, Խոսրովն Հայաստան դրկեց. բայց տարի մը թագաւորելէն յետոյ մեռաւ :

Հ. Խոսրովին ով յաջորդեց :

Պ. Յազկերտ Խոսրովի մահէն յետոյ չուզեց Հայ թագաւոր դնել, այլ իր Շապուհ որդին թագաւորեցուց, որպէս զի նախարարք միշտ անոր քովը մտնելով, Պարսից տօները տեսնելով և միանդամայն Պարսից հետ խնամութիւն ընելով՝ ընտելանան Պարսից աղանդին և դիւրութեամբ ընդունին զայն :

Հայք թէպէտ մոտադիր էին դէմ կենալ, բայց նոյն ատեններն Համազասպ Մամիկոնեան մեռած և հաւատարիմ առաջնորդ մը չկենալուն պատճառաւ Շապուհ դիւրութեամբ մտաւ Հայաստան, իր հետը բերելով Հրահատ կամսարակա-

նըն ու Պարսկաստան գտնուող ուրիշ Հայ նախարաները :

Հ. Շապուհ Բնչպէս թագաւորեց :

Պ. Շապուհ չկրցաւ հաճելի ըլլալնախարարաց, միշտ անոնցմէ կ'անարդուէր ու կը նախատուէր և այսպէս անարդութեամբ 4 տարի թագաւորելէ յետոյ իւր հօրը մահուան լուրն առնլով՝ չուտ մը Պարսկաստան գնաց, բայց իր նպատակին չը կրցաւ համնիլ, ըստ որում սպաննուեցաւ. Հայերըն աւներսէս ձիճրակացւոյն առաջնորդութեամբը Պարսիկներն հալածեցին Հայաստանէն :



ԳԼՈՒԽ ԻԵ.

(Արտաշէս Գ. կամ Արտաշիր)  
Քրիստոնէ 427 տարի յեռաց .

Հ. Արտաշիրի երթալէն ետեւ Հայաստան Բնչ վիճակ ունեցաւ :

Պ. Յազկերտի յաջորդը Վռամ Ե. զօրք դրկեց Հայաստան. բայց Հայ նախարարներն իրենց անառիկ ամրոցներն ամրացած ըլլալով՝ Պարսից շատ վնաս հասուցին, թէպէտեւ Հայաստան աւերում կրեց երեք չորս տարի անտէր մնալով :

Պարսից թագաւորը տեսնելով որ առանց նախարարներուն կամացն անկարելի է տիրել Հայաստանի և թէ այսպիսի պատերազմներն օդուած չունին, Սմբատ Բագրատունիին ձեռքով ուզեց հաշտութիւն գոյացնել. նախարարք Ս. Սահակի յորդորմամբը միաբանելով՝ Սմբատն ու Վար-

գան սպարապետը՝ Ա. Սահակին թոռը, վռամին զրկեցին, որ վռամշապուհի որդին՝ Արտաշէսն Հայոց վրայ թագաւորեցուց, որով և հաշոռ-թիւն դոյցաւ :

Հ. Արտաշէսի օրով Հայաստան Բնչ կերպարան առաւ :

Պ. Վերստին կենդանութիւն առաւ. Հայաստան, վասն զի Ա. Մեսրոպ Յունաց մասէն՝ ուր ուսում և կրթութիւն ծաւալելու կ'զբաղէր, բազում վարժարաններ բանալով և ընտիր եկեղեցականներ հասցնելով՝ վերստին Ա. Սահակին քովը դնաց և ձեռք ձեռքի տալով մեծ մղում տուին յառաջդիմութեան մեծ դործին և Հայաստանի մեջ արտաքին գիտութիւնները ծաղկեցնելու համար իրենց աշակերտներէն Եղնիկ, Կորիւն, Յովսէփ Պաղնեցի, Ղեւոնդ, Յովհան և Արձան Կ. Պոլիս. Մովսէս Խորենացին, Գաւիթ անյաղթ, Մամբրէ և ուրիշներ Աղէքսանդրիա զրկեցին, որպէս զի ուսում ստանան. իսկ քանի մը հոգի ալ Եղեսիա դրկեցին, որպէս զի Ա. Հարց գործքերն Հայերէնի թարգմանեն: Այս ժամանակը մեր Աղդային Դպրութեան ոսկեդարն է:

Հ. Արտաշիր Բնչպէս թագաւորեց :

Պ. Արտաշիր իր երիտասարդ ական մոլութիւններուն հետեւելով՝ սկսաւ ամեն տեսակ անկարգութիւններ կատարել, որովք ատելի Եղաւ նախարարաց, այնպէս որ իրմէ բոլորովին զղուելով՝ Խորհուրդը ըրին որ Արտաշիրն ամբաստանեն Պարսկաց թագաւորին և խնդրեն որ թագաւորութե-

նէ հանէ զայն ու Պարսիկ իշխան մը զրկէ. ուստի և Ա. Սահակն ալ կանչեցին և իրենց այս խորհուրդն անոր ալ յայտնեցին :

Հ. Ա. Սահակ Բնչ ըրաւ :

Պ. Ա. Սահակ ամենեւին յանձն չառաւ և ըստ « ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ ախտացեալ ոչխար և ոչ պատել զհիւանդացեալն կամ զրժշկեալն, այլ գահավէժ առնել . . . : Զի՞արդ լինիցի այդ, փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազանի, որոյ առողջութիւնն է մեծ պատուհաս » :

Հ. Նախարարներն հաճնցան :

Պ. Նախարարք այս բանս պատրանք համարելով և կարծելով թէ Ա. Հայրապետին նպատակն է ժամանակ տալ թագաւորին, որպէս զի եր վրէժը լուծէ, ուստի խորհուրդը ըրին և վատաբար որոշեցին վերջացնել Հայոց թագաւորութեան հետ նաեւ Ա. Լուսաւորչայ տան հայրապետութեան իրաւունքը. հետեւաբար Արծիւցի Սուրմակ անուն չքահանայ մ'ալ իրենց ընկեր առնով՝ գային Պարսից թագաւորին, ամբաստանեցին զԱ. Սահակ և զԱրտաշէսն՝ ըսելով թէ Յունաց հետ միացեր են և թէ իրմէ պիտի ապստամբին :

Հ. Ի՞նչ հետեւութիւն ունեցաւ վատողի նախարարաց այս գաւաճանութիւնը :

Պ. Վռամ զԱրտաշիրն ու զԱ. Սահակ Պարսկաստան կանչեց. առաջինը թագաւորութենէ և վերջինն ալ կաթողիկոսութենէ ձգեց, Պարս-

կաստան արգիլեց զանոնք . նախարարաց առատ պարդեւներ տուաւ . Սուրմակը կաթողիկոս դրաւ և վեհ Միհրշապուհ անուն մէկն ալ Հայաստանի մարզպան դրաւ , որով և վերջացաւ Արշակունեաց թագաւորութեան հետ Հայաստանի քաղաքական անկախութիւնը՝ Արտաշէս Յ տարի թագաւորելէն յետոյ :

### ԸՆԹՀԸՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարսիկք 200 տարիներէ ՚ի վեր ունեցած նպատակնուն հասան վերջապէս վատոդի նախարարաց քիսախնդրութեամբը , որք իրենց անձնական կիրքն ու ատելութիւնը նախամեծար համարեցին Ազգի ու Հայրենեաց շահէն , զոհելով հասարակաց բարին ու օգուտն իրենց եսու թեանը , որով թէ Ազգին ու Հայրենեաց և թէ իրենց կործանմանը պատճառ եղան :

Պարսիկ արքունեաց բաղձանքն Հայաստանի քաղաքական անկախութենէն աւելի նորա եկեղեցին քանդել էր , վասն զի Հայաստանեայց եկեղեցին Հայոց բարոյական կեանքի խանձարուրն ու միութեան կեդրոնն էր , ուստի և քանի որ եկեղեցին կանդուն մնար , Պարսիկք լիովին հասած չէին ըլլար իրենց նպատակին . հետեւարար իրենց բոլոր ջանքն ու աշխատութիւնն Հայաստանեայց եկեղեցւոյ կործանմանը գործածելու ետեւէ եղան , բայց այդ ամեն ջանքն ու աշխա-

տութիւնն ՚ի գերեւ ելան Ազգին համոզմանն առջեւ , որ սերտիւ կապուած է իր եկեղեցւոյն հետ , և քաջ գիտէ թէ բարբարոսութեան ժամանակներու մէջ իր ազգայնութիւնը մի միայն իր եկեղեցւոյն միջոցաւը պիտի կրնար պահպանել , որում բարոյական մեծ ոյժ տուած էր :

Կային թէպէտ Հայաստանի մէջ այնպիսի բաղդախնդիր իշխաններ որ Արշակունեաց թագն աչքի առջեւ ունենալով՝ պատրաստ էին յանձն առնուլ ամենայն վատութիւն , ինչպէս որ հետեւեալ գլուխն մէջ ակներեւ պիտի տեսնուի , սակայն նոքա Ազգին հաստատամութեանն առջեւ իրենց յուսոյն ու ակնկալութեանցն հետ իրենց կեանքն ալ վրայ տուին , վասն զի չըսեմք անհնար , սակայն ամենադժուարին է ժողովուրդի մը՝ մանաւանդ Արեւելեան ժողովուրդի մը ներքին համոզումը խախտել բունութեամբ և կամ շլացումներով :

Հասած էր այն ժամանակն՝ յորում քրիստոնէութիւնն արեւելքի մէջ Հայոց ձեռքով իր վսեմութիւնը ցոյց պիտի տար , Հայոց ձեռքով , որ քրիստոնէութեան զոհն է արեւելքի մէջ այն օրէն մինչեւ այսօր :

Արեւմտեան քրիստոնեայք , Յանք և Հոռովայցիք , մանաւանդ Յոյնք միմիայն ներքին կրօնական վէճերով զբաղած՝ աչք անդամ չէին վերցներ արեւելից վրայ :

Իրաց այս վիճակին առջեւ պարսկական ոյժը տիրած էր արեւելից , և այս բաւական չէր , կու-

զէր նաեւ Զբագլաշտական ուսումն ալ ծաւալել  
ի սփիւռս նորա :

Արեւելեան քրիստոնէից մայրն էր Հայաս-  
տանեայց Եկեղեցին և Աղուանից , Վրաց և մա-  
սամբ Ասորւոց Եկեղեցիները նորա ծնունդն էին :

Պարսկական բռնութիւնը տարածեցաւ Հայոց  
Եկեղեցւոյն վրայ . բայց սորա հիմք Հայոց քա-  
ղաքականութեան նման խախուտ չըլլալուն տո-  
կաց մինչեւ ցայսօր :

Եկեղեցւոյ պաշտօնեայք , քահանայ , վար-  
դապետ , եպիսկոպոս , կաթողիկոս ամենքն ալ  
(նուազ բացառութեամբ) , իրենց կոչմանը կը պա-  
տասխանէին՝ հաւատարմաբար և աննկուն արի-  
ութեամբ Աւետարանի լոյսը տարածելով :

Թէ ի՞նչ էին այն ատենուան Եկեղեցւոյ հան-  
գամանքներն և ի՞նչ հիման վրայ հաստատուած ,  
բաւական է միտք բերել մէկ քանի Աստուածա-  
յին անուններն և Աւետարանի վարդապետները՝  
Թագէոս և Բարթողիմէոս , Գրիգոր Լուսաւո-  
րիչ , նորա որդիքն ու թոռները , Մեծն Ներսէս ,  
Սահակ Պարթեւ , Մաշտոց , Մեսրոպ , նոցա ծա-  
ռայութիւններն ու կարդադրութիւններն , և ա-  
սոնք այնպիսի ժամանակի մը մէջ երեւցան , յորում  
կռապաշտութիւնը պատած էր մեր աշխարհը :

Պարսիկք , ինչպէս ըսինք , 200 տարիէ ՚ի վեր  
կը ջանային Հայաստանեայց Եկեղեցին քանդել .  
ուստի Հայաստանի միայն գերիշխանութիւնը վա-  
րած ատեննին խակ անօրէն նախարարաց խորհըր-  
դովս անարժան առաջնորդներ կը կարգէին՝ զոր-

օրինակ՝ Սուրմակ , Բրքիշոյն և Շմուէլ , բայց որով-  
հետեւ ինչպէս ըսինք , Հայաստանեայց Եկեղե-  
ցին՝ Հայոց քաղաքական դրութեանը նման խա-  
խուտ չինելուն՝ հետեւութիւն մը յառաջ չեկաւ :

Ահա Հայոց քաղաքական դրութիւնն անհաս-  
տատ հիման վրայ յեցած ըլլալով՝ կրցաւ կոր-  
ծանիլ և նորա քաղաքական անկախութիւնը ,  
բայց կրօնականը միշտ կանգուն մնաց :

Կան դիտողներ թէ Հայոց քաղաքական ան-  
կախութեան իյնալուն մեծապէս նպաստած է և  
երկրին աշխարհագրական դիրքը :

Արդարեւ Հայաստան կեդրոն է շատ մը դրացի  
աշխարհներու , բայց եթէ նորա վարչական դրու-  
թիւնը խախուտ հիման վրայ հաստատուած չի-  
նէր , եթէ թագաւորներն ու նախարարք Աղդին  
ու Հայրենեաց սիրով վառուած լինէին , եթէ  
արքունիքն ազգային ուրոյն քաղաքականութեան  
մը հետեւէր , և եթէ , կըսենք , մերթ արեւելե-  
ւան (Պարսից) և մերթ արեւմտեան (Հռովմա-  
յեցւոց և Յունաց ) քաղաքականութեանը չիե-  
տեւէր , ըստ ամենայն հաւանականութեան՝ Հա-  
յաստանի անկախութիւնը չեր վտանդուէր , մա-  
նաւանդ եթէ , ինչպէս ըսինք , տէրութիւնն ի-  
րեն համար յատուկ քաղաքականութիւն մ'ու-  
նենար և արքունիքն ու նախարարք մոլութենէ  
զերծ լինէին :

Հայոց քաղաքական անկախութեան կործան-  
ման և կրած կրօնական հալածանաց դիխաւոր  
պատճառը՝ քրիստոնէութիւնն ընդունելէ յետոյ՝

Յունաց և Հռովմայեցւոց հետ շատ անդամ՝ ունեցած յարաբերութիւնն եղած է, որմէ կասկած ծագած է Պարսից մտացը մէջ և իր հետեւանք իրենց այս կասկածանացը՝ ջանացած են միշտ զրկել զչայաստան իր եկեղեցիէն ու քաղաքական անկախութենէն, և իր այն՝ ներքնապէս ու արտաքուստ աշխատած են իրենց նպատակին յաջողութեանն համար :

Ահա այսպէս արեւելից մէջ Հայք արեւմտեան քրիստոնէից հետ յարաբերութիւն և նոցա վրայ շատ անդամ համակրութիւն տածելնուն համար զոհ գացած սակայն արեւմտեան քրիստոնեայ պետութիւններէ ոչինչ օգնութիւն չեն վայելած :

Յայտնի է որ քրիստոնեայ Հայն եթէ արեւելից մէջ կեցած լինէր, թէ քրիստոնէութիւնն անդ հիմ չէր գտներ և թէ արեւմտեան քրիստոնեայք երկիւղի կասկածանքէ աղատ չէին լիներ, մանաւանդ այն ատեններն, յորում Հռովմէական կայսրութիւնն ինկած և Բիւզանդեան կայսրութիւնն ալ ներքին կրօնական փցուն խընդիրներով կ'զբաղէր :

Սակայն յայտնի է թէ Յունական կայրսրութիւնը վաղ կամ անագան վայելեց վերջապէս իր մոլեկրօնութեան և ցուրտ անտարբերութեան գառն հետեւանքը, որ այնքան աղէտարեր եղաւ իրեն և զոհ գնաց իր գոռող ամբարտաւանութեանն ու անհաշտելի և անմիտ քաղաքականութեանը, որ իր և միանդամայն արեւելից կործանմանը պատճառ և հեթանոսական տարերաց

զարդացմանն ու յառաջխաղացութեանը ձեռլնտու և նպաստամատոյց եղաւ :

Աւելորդ է ըսել որ Յունական կայսրութիւնն եթէ այնպիսի անմիտ ու անբարհաւած քաղաքականութեան մը չհետեւէր, եթէ յունական եկեղեցին մոլեւանդական նկատումներն ի բաց թողուր և ճշմարիտ քրիստոնէական ոգւով վարուէր Հայաստանեայց եկեղեցւոյ հետ, քրիստոնէութիւնը կը յաղթանակէր, Պարսիկք, Արաբացիք և Հագարացիք աղատ ասպարէզ չէին գտներ, և հետեւարար ոչ Հայաստան կը կործանէր և ոչ յունական կայսրութիւնը կը ջնջուէր :

Բայց Յոյները միշտ իրենց աւանդական մոլար քաղաքականութեանն հետեւելով՝ չուզեցին հասկընալ արեւելից մէջ Հայուն պաշտօնն ու կարեւորութիւնը և թոյլ տուին որ քրիստոնեայ Հայը զոհ լինի արեւելից մէջ յանուն քրիստոնէութեան, կարծելով որ Հայուն անկումն իրենց փրկութիւնն է . . . . . :

Պատմութիւնն ակներև կը ցուցնէ թէ քանիօն սխալ էր իրենց այս կարծիքը նոյն իսկ իրենց պատային համար :



## ԺԱՄԱՆԱԿ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵ 340 տարի եաբէ :

### ԳԼՈՒԽ Ա.

(Մարզպանք եւ ՌԱՄԱՆԱՎԱՆՔ)

Հ. Արշակունեաց հարստութեան ջնջուելէն յետոյ Հայաստան թնչ վիճակ ունեցաւ :

Պ. Արշակունեաց հարստութեան ջնջուելէն յետոյ Հայաստան բոլորովին Պարսից նահանգներէն մին դարձաւ, որ մարզպաններու ձեռօք կը կառավարուէր :

Ջ. Ո՞վ եղաւ առաջին մարզպանը :

Պ. Վեհմիհրշապուհ անուն պարսիկ մը, որ բոլոր իր իշխանութեանը ժամանակ խաղաղութեամբ կառավարեց և զՀայաստան հանգիստ պահեց. սակայն Սուրմակ չար կաթողիկոսն իր փառամոլութեամբն ու բազում անկարգութիւններով այս խաղաղութիւնը վրդովեց, ոյր վասն և նախարարք տարիէ մը յետոյ պաշտօնանկ ըրին զայն ու վանեցին :

Հ. Սուրմակին տեղ ո՞վ դրուեցաւ կաթողիկոս :

Պ. Պարսից Վռամմ թագաւորը Սուրբմակին տեղ Բրգիշոյ Ասորին կաթողիկոս դրաւ. բայց սա ալ իր յափշտակութեանցն համար նախարարաց հաճելի չլինելով՝ վռամմէն ուրիշ կաթողիկոս մը ուղեցին. ոմանք ալ վերատին Ա. Սահակը խընդ-

բեցին: Թագաւորը երկու կողման ալ կամքը կատարելու համար Շմուէլ Ասորին կաթողիկոս դըրաւ, պաշտօն տալով միայն հարկերն ու դատաստաններն և ուրիշ աշխարհային բաներն հոգալ. Ա. Սահակն ալ Հայաստան դրկեց՝ միայն հոգեւորական խնդրոց կարգադրութեանն համար, պայմանաւ որ Շմուէլին հաւանութիւն տուած անձինքը ձեռնադրէ:

Հ. Շմուէլ ի՞նչպէս կատարեց իւր պաշտօնը :

Պ. Շմուէլ Հայաստան եկածին պէս փոքր պատճառներու համար սկսաւ եպիսկոպոսաց կալուածներն յափշտակել. շատերն իշխանութենէ ձգեց և այս եղանակաւ 5 տարի պաշտօն վարելէ յետոյ մեռաւ. այն ատեն նախարարք Ա. Սահակին դացին, որ թագարեւանդ գաւառը քաշուած կը կենար, և իրենց ըրածին վրայ թողութիւն խընդրելով՝ աղաչեցին որ կաթողիկոսութիւնը վերըստին յանձն առնու. բայց նա բացէ 'ի բաց մերժեց, Հայաստանի ապագային համար իր տեսած տեսիլքն անոնց պատմեց և քանի մը տարիէն յետոյ Բլուր գիւղին մէջ վախճանեցաւ իր ծննդեան օրը, և նորա մարմինը Տարօնոյ Աշտիշատ գիւղը թաղեցին. 6 ամիս յետոյ ալ Ա. Մեսրոպ վախճանեցաւ վաղարշապատ քաղաքին մէջ և Օշական գիւղը թաղուեցաւ :

Հ. Ո՞վ դրուեցաւ կաթողիկոս :

Պ. Ա. Մեսրոպի աշակերտաներէն Յովսէփ Պաղնեցի քահանան, որ եկեղեցականաց և աշխարհականաց միջև մտած մէկ քանի անկարգութեանց

գարման տանելու նպատակաւ իր իշխանութեան եօթերորդ տարին Շահապիվան եկեղեցականաց ժողովք մը կազմեց՝ յորում քսան կանոն հաստատեցաւ :

Հ. Պարսիկ.ք Հայաստանի տիրելէ ետե ի՞նչ չարիք հասուցին :

Պ. Վուամի յաջորդն Յազկերտ Բ. 'ի դահ բարձրանալուն պէս ետեւէ եղաւ Սասանեան Պարսից աւանդական քաղաքականութիւնը ձեռք առնըլու, այն է, արեւելեան քրիստոնեաները • Զրադաշտական կրօնին դարձնելու . և ըստ որում արեւելեան երկիրներէն շատերն Յունաց ձեռքէն խլած էր մեծամեծ յաղթութիւններով, և ասոնց մով յզփացած՝ Հոնաց դէմ պատերազմ հրատարակեց և հրաման ըրաւ որ իր իշխանութեանը ներքեւ գտնուած բոլոր իշխաններն իրենց զօրքերն առած Հոնաց դէմ՝ երթան, որք Օքսու և Եաքսարդէս գետերուն մէջտեղի երկիրները կը բնակէին : Այս պատերազմիս մէջ մեր նախարարներէն և զօրքերէն բաւական ջարդուեցան Պարսից խորամանկութեամբը, վասն զի միտքերնին դրած էին հաստատապէս որ եթէ Հայոց աշխարհի զօրքն ու զօրավարներն ոչնչանան, ժողովուրդն այնուհետեւ առանց ընդդիմութեան կը խախտի իւր հաստատամութենէն և Զրադաշտական կրօնը կ'ընդունի :

Հ. Պատերազմէն ողջամբ դարձող նախարարներուն հետ ի՞նչպէս վարուեցաւ Յազկերտ :

Պ. Փոխանակ վարձատրելու գանոնք, որ քա-

ջութեամբ նշանաւոր հանդիսացեր էին, արձակ համարձակ իւր միտքն յայտնեց անոնց հրամայելով որ արեգական երկրպագութիւն մասուցանեն . բայց նոքա յանձն չառին . Յազկերտ բանտարկեց զանոնք . Ստոմ Գնունի ու Մանաճիհր Ուշունի իշխաններն իրենց զօրքն հանգերձ փախան, սակայն Պարսից զօրքն անոնց ետեւէն համակելով՝ ջարդեցին, որք Քրիստոսի սիրոյն համար նահատակեցան և այս կոչուեցաւ Ատովմեան նահատակութիւն . իսկ Հայոց զօրքը վերստին պատերազմի զրկեց ճանբան չարչարելով և անարդելով :

Հ. Միհրներսեհէն ետեւ ովկուսակալդրուեցաւ :

Պ. Դենշապուհ անուն խորամանկ Պարսիկ մը, որ արտաքուստ խաղաղասիրութիւն կեղծելով՝ տակաւ առ տակաւ սկսաւ Հայաստանի ներքին կապերը քակել, մնացած նախարարներուն միջն խռովութիւն սերմանեց, եկեղեցեց վրայ հարկ գրաւ, եկեղեցականները ցրուեց, հարկերը կըրկնապամտիկ աւելցուց, որպէս զի այսպիսեաւ կարենայ տկարացնել զՀայաստան, սակայն այս ամենն օգուտ մը չըրին Հայերն իրենց համազում խախտելու : Այս ատեն մոգպեատին խորհրդուվը Միհրներսեհ՝ Պարսից տէրութեան հազարապետը, Հայոց գլխաւորներուն նամակ դրեց, յորում Պարսից աղանդը մեկնելով և քրիստոնէական սուրբ կրօնին խորհուրդներն իրը ստութիւն ցոյց տալով՝ կը հրամայէր որ կամ իր գրածներն հերքեն մի առ մի և կամ Պարսկաստան գան :

Հ. Այս նամակին վրայ ի՞նչ ըրթն Հայերը :

Պ. Յովսէփ կաթողիկոս Հայոց եպիսկոպոսները, քահանաներն ու աղդին նշանաւոր անդամներն Արտաշատայ մէջ ՚ի ժողով գումարեց, ուր պատուական պատասխան մը խմբադրեցաւ . ցոյց տալով Պարսից աղանդին ստութիւնն ու անպիտանութիւնը և քրիստոնէական սուրբ կրօնին ճշմարիտ ու գերազանց լինելը յայտնի ապացուցանելով, և զայն՝ անմիջապէս զրկեցին, ընդ որ թէ զարմացան, բայց կատաղին թաղկերտ զայրացած ու բորբոքած հրաման զրկեց որ նախարարաց երեւելիներն առ ինքն դան :

Հ. Որո՞նք գացին և ի՞նչ ընդունելութիւն դտան:

Պ. Վասակ Սիւնեաց իշխանը, Ներշապուհ Արձրունին, Արտակ Ռշտունին, Գաղիշոյ Խոռխոռունին, Վարդան Մամիկոնեան՝ Ա. Սահակին թուն ու Հայոց սպարապետը, Արտակ Մոկացին, Մանէճ Ապահունին, Վահան Ամատունին, Գիտ Վահեւունին և Շմաւոն Անձեւացին, որք թէպէտ Յաղկերտին դիտաւորութեանը տեղեակ էին, սակայն իրենց աղդականներէն շատերը Պարսկաստան նեղութեան մէջ ըլլալով՝ կը յուսացին որ իրենց երթալովը կրնան թերեւս զանոնք աղատել, ուստի ճանրայ ենելէ առաջ հաւատքնուն վրայ հաստատ մնալու համար Ս. Յովսէփ կաթողիկոսին խոստում տուին : Յաղկերտ սպարական ընդունելութիւնը չընելէ զատ՝<sup>(1)</sup> անոնց հետ յան-

ցաւորի պէս վարուեցաւ և հրամայեց որ երկրորդ օրն իրեն ներկայանան :

Հ. Յաջորդ օրն ի՞նչ եղաւ :

Պ. Յաջորդ օրը որոշեալ ժամուն Պարսից իշխաններուն և մոգերուն հետ Հայ նախարարները թագաւորին ներկայացան, որոց խստութեամբ պատուիրեց որ հետեւեալ օրն իրեն հետ արեգական երկրպագութիւն ընեն, յայտնելով որ եթէ չանսան իւր հրամանին, զիրենք սաստիկ տանջանաց պիտի ենթարկէ և թէ իրենց երկիրը բազում զօրք զրկելով՝ ազգն ու իրենց ընտանիքը պիտի ջնջէ :

Նախարարք առ թագաւորն իրենց հաւատարիմ ծառայութիւննին յիշելով՝ ջանացին նորաբարկութիւնը ցածուցանել, բայց երբ տեսան թէ ընաւ օգուտ մը ընէր իրենց խօսքը, իրենք ալ այն ատեն բացայացտ ըսին թէ չեն թողուր իրենց հաւատքը, յայտնելով թէ պատրաստ են ամենայն տանջանաց :

Յաղկերտ զանոնք բանտարկել տուաւ և զօրք պատրաստեց թէ իր սպառնացած չարիքն Հայաստանի հասցնելու և թէ զիրենք հեռաւոր տեղեր աքսորելու, որով գուցէ պիտի կրնար իւր չար նպատակին հասնիլ, վասն զի Ազգն անդլուխ

---

կաստան երթար գործի մը համար, թագաւորն անոր դիմացը մարդ կը զրկէր և իրեն ու Հայաստանի որպիսութիւնը կը հարցնէր . հոն գալուն համար ըսնորհակալ կ'ըլլար և ըրած ծառայութեանցն համար գովութիւն կը խօսէր :

(1) Սովորութիւն էր որ երբ Հայ իշխան մը Պար-

մնալով՝ շատ հաւանական է թէ չկարենար դիմագրել:

Հ. Նախարարք բանտին մէջ այս պատրաստութիւններն երբ լսեցին ի՞նչ ըրեն:

Պ. Նախարարները՝ որ Պարսկի մը միջոցաւ իմացեր էին եղած պատրաստութիւնները, տեսնելով որ հեռաւոր տեղեր իրենց աքսորմամբն ու հայրենի երկրէն իսպառ տարագրեալ լինելով Հայաստան անհօւն փորձութեանց պիտի ենթարկի, խոչեմութիւն համարեցին արտաքուստ համակերպիլ թազկերտի կամացը, և այսպէս կըցին աղատիլ ու Հայաստան գառնալ, որոց ընկերացն նաեւ զօրք և 700ի չափ մոդեր ու մոդպետ մը, և վասակայ երկու որդիքը՝ Բարկիիկ ու Ամիրներսէ և Գուգարաց Աշուշայ բգեշին իր քովը պատճեղ պահեց Յազկերտ:

Հ. Մոդերն ի՞նչ ընդունելութիւն դտան՚ի Հայաստան:

Պ. Երբ ազգն իմացաւ հաւատուրաց նախարարներուն վերադարձն հանդերձ մոդերով, Յովսէփի կաթողիկոս, Եպիսկոպոսունք, մնացեալ նախարարք և Ազգն համայն զէնք առած նոցաընդդէմ գնացին հաստատապէս մոդերնին գնելով որ բնաւ մէկու մը չխնայեն, այսինքն, ոչ ազգականի, ոչ եղբօր, ոչ հօր և ոչ մէկու մը և սոյն զգացմամբ կանայք իսկ զէնք առին ու զրահ զգեցան: Նախարարները Տրէ (Նոյեմբեր) ամսոյ մէջ Հայաստան հասնելով՝ Ծաղկուն նահանգի Անդղ գիւղը ամսոյ մը չափ հանդիսաւ առնլէ յե-

տոյ, կիւրակէ օր մը մոդպետը մոդերուն հետեկեղեցի մը գնաց և կ'ուզէր կործանել զայն: Ս. Ղեւոնդ քահանան որ ուրիշ եկեղեցականներով պաշտօն կը վարէր անդ, դէմ ելաւ և ժողովուրդն ալ նոցա դէմ ելնելով՝ հաստ դաւաղաններով լաւ մը բրածեծ ըրին, գլուխնին պատռեցին ու լեղապատռո փախուցին:

Հ. Մոդպետն ի՞նչ ըրաւ այս անակնկալ պատահարին վրայ:

Պ. Մոդպետն ասոր վրայ զարհուրած և Հայոց իրենց հաւատքին վրայ հաստատամութեան փորձն անձամբ առած և զՀայերը մոդրեցնելէ յուսահատած: Վասակ Սիւնին, որ մարզպան դրուած էր, իրեն կանչելով սաստիկ յանդիմանելէ յետոյ, ըստ « եթէ դու ալ մեր կրօնն ընդունիլ չես ուզեր, ըսէ բացայայտ և ես դրեմ մեծ մոդպետին ու Միհրներսէին որ համոզեն թագաւորը, որպէս զի ազատ թողու զձեզ ձեր կրօնին մէջ և 'ի զուր ձեր երկիրը չապականի »: Բայց անօրէն վասակ որ իր փառասիրութիւնն յագեցնելու և իր որդւոցը սիրոյն համար սըրտանց ուրացած էր հաւատքը, շատ մը խօսքերով յանայ համոզել մոդպետը և Սիւնեաց նահանդէն բազում զօրք ժողուելով՝ զօրացուց իր բանակը, որպէս զի կարող լինի բռնի կատարել թագաւորին հրամանը, և սկսաւ կէս մը ստկով և կէս մ'ալ պատիւներ ու պարզեւներ տալով մարդ վաստիկը իր կողմը և իր այս նպատակին փութով հասնելու համար մոդերը նախարարաց տուները բաժնեց:

Հ. Եկեղեցականք ի՞նչ ընթացք բռնեցին :

Պ. Եկեղեցականք երբ տեսան վասակայ չարութիւնները , ճարտարութեամբ մը բաժնեցին ուրացեալներն Հայոց բանակէն և ետքն ՚ի խորհուրդ նստելով՝ վարդան Մամիկոնեան սպարապետն ու բոլոր ուխտապահ նախարարները կանչեցին ու ըսին «թէ որ դուք ալ հաւանութիւն ունիք Վասակայ ըրածներուն , նախ զմեղ մեռուցէք և ապա ձեր ուզածն ըրէք . իսկ եթէ հաւանչէք , փութոյ պնդութեամբ նորա չարեաց վրէժն առէք : Նախարարք , որ առ երեսս ուրացեր էին իրենց հաւատքն և արդէն սրտովի զղջում յայտներ էին , երդմամբ հաստատեցին թէ համամիտչեն երբէք և անմիջապէս պատրաստուեցան ուրացելոց վրայ երթալու : Մէջերնուն Զանդազան անուն Սեպուհ մը միաբանիլ չուզելուն համարքարկոծեցին և այս բանը մեծ տպաւորութիւն յառաջ բերաւ :

Հ. Այս պատրաստութիւններն ի՞նչ արդիւնք ունեցան :

Պ. Նախարարք իրենց զօրքը երեքի բաժնած Վասակին բանակը շրջապատեցին և սստիկ ջարդառուին , շատ երեելի իշխաններ ձեռք ձգեցին ու բերդերու մէջ դրին , Վասակն ալ ձերբակալեցին , բայց սա եպիսկոպոսաց ոտքն իյնալով և երդմամբ խոստանալով որ այլ ևս քրիստոնէութեան դէմ չարթիր և իր բուն հաւատքին վրայ հաստատուն կը մնայ , նորէն աղատեցաւ : Ասկէ յետոյ Հայաստանի մէջ Պարսից զօրացը վրայ քալե-

ցին , բերդերուն տիրեցին , մոգերը կէս մը ջարդեցին ու կէս մը փախուցին , կրակատունները կործանեցին և այս բաներուս մէջ կատարելապէս յաջողեցան :

~~~~~

### ԳԼՈՒԽ Բ .

(Աղուանից երկրին պատահարները , — Հայոց օգնութիւնը ) .

Քրիստոնէ 450 տարի յետոց

Հ. Աղուանից երկիրն ի՞նչ անցք անցաւ :

Պ. Սեբուխս զօրավարին հրամանատարութեանը ներքև Պարսիկք Աղուանսաց երկրին վրայ յարձակելով շատ չարիք կը հասցնէին և նոցա եկեղեցիները կործանելով կրակատուններ կը կանդնէին . Աղուանք Հայոցմէ օգնութիւն խնդրեցին , Հայք ալ Յունաց թէոդոս կայսեր աղաչանաց թուղթ գրելով նորա օգնութիւնը խնդրեցին ՚ի պաշտպանութիւն քրիստոնէութեան , սակայն նորա մահը վրայ համնելով՝ իր յաջորդը ոչ միայն չօգնեց , այլև Պարսից հետ բարեկամութեան դաշնք գրաւ իր զօրապետաց խորհրդովք : Հայք առանց լքանելու , զօրքը երեքի բաժնած՝ Ներշապուհ Արծրունին Ատրպատականի կողմը դրկեցին , որպէս զի Պարսից ՚ի Հայաստան յարձակումըն արգելու , Վարդան Մամիկոնեան սպարապետը երկրորդ բանակաւ Աղուանից յօգնութիւն դրկեցին , իսկ երրորդը Վասակ Սիւնիկն յանձնեցին , որ տակաւ առ տակաւ սկսաւ դարձեալ իր

գոյնը դուրս տալ և այս ամեն եղածները դադա-  
նապէս իմացուց Սերուխտին :

Հ. Վարդան Բնչ ըրաւ աղուանից Երկիրը :

Պ. Սերուխտ Հայոց սակաւութիւնն առ ոչինչ  
դրելով՝ հոդ չըրաւ և կուր դետն անցնելով՝  
Խաղսաղ քաղաքին մօտ Հայոց զօրացն հանդիպե-  
ցաւ, սակայն Սերուխտի ամբողջ բանակը ջախ-  
ջախեցաւ Վարդան Մամիկոնեանի սակաւաթիւ  
բանակին առջե . Հայերը մոտանից Երկիրը  
և հոն ատրուշանները կործանեցին, մոդերը ջար-  
դեցին և Հոնաց ազգին հետ ալ դաշինք հաստա-  
տեցին :



#### ԳԼՈՒԽ Գ.

(Հայաստանի մէջ Վասակայ ըրածներն եւ Վարդանայ ժամանելը),  
Քրիստոսէ 454 տարի ետքը .

Հ. Վասակ Բնչ ըրաւ 'ի Հայաստան :

Պ. Վասակ՝ որ Աղուանից Երկիրն մէջ Վարդա-  
նայ ըրածներուն վրայ տեղեկութիւն չունէր .  
սկսաւ դարձեալ իր չար դիտաւորութիւնն 'ի դործ  
դնել և զՀայաստան տակն ու վրայ ընել . շատ  
ամուր բերդեր կործանեց, ուխտապահ նախա-  
րարաց ընտանիքը բոնեց ու Սիւնեաց աշխարհի  
բերդերուն մէջ դրաւ, Արարատայ երեւելի քա-  
ղաքներն ու դիւղերն այրեց, իրեն համամիտ  
նախարարաց հետ ատրուշաններ կանգնեց, և  
գրեթէ բոլոր Սիւնեաց աշխարհի բնակինները կրա-  
կապաշտ դարցուց : Այս ամեն չարեաց դոյժն

Հայերը վարդանայ հասուցին, որ կայծակի արա-  
գութեամբ հասաւ Հայաստան . անօրէն վասակը,  
Երկուտ աղուէսի նման թողով Արարատը՝ գնաց  
ապաստանեցաւ Սիւնեաց աշխարհի ամբութիւն-  
ները . ձմեռն արդէն վրայ հասած լինելով՝ Վար-  
դան դարնան թողուց պատերազմը և միայն մէկ  
քանի հրոսակներ զրկեց վասակայ Երկիրները և  
հրաման ըրաւ որ դարնան ատեն գան և իր քովը  
դումարուին . որովհետեւ ասոնք պահելու բաւա-  
կան սլաշար չունէր :

Հ. Եպիսկոպոսունք Բնչ ըրին :

Պ. Եպիսկոպոսներն այս եղածին վրայ խորին  
ցաւ զգացած՝ պատուէր տուին ժողովրդեան որ  
բոլոր բաղոց ամիսը պահք պահեն և Աստուծոյ  
աղաչեն որ իրենց ողորմի, և գերի բռնուած  
Պարսկի մը միջոցաւ բոլոր այս եղածներն Յաղ-  
կերտի իմացուցին, ամեն չարեաց բովանդակ  
պատճառ և շարժառիթ ցուցնելով զվասակ Սիւ-  
նին : Յաղկերտ սկսաւ իր գործը խարդաւանու-  
թեամբ ու խորամանկութեամբ յառաջ տանելու-  
եաւեւէ ըլլալ և որովհետեւ Հոնաց կողմանէ կաս-  
կածանաց մէջ էր, ուստի առ երեսս կրօնի ա-  
զատութիւն հրատարակեց, չարչարանաց մէջ ե-  
ղող քրիստոնեաններն ազատեց, քահանայից պատ-  
ուէր զրկեց որ եկեղեցեաց մէջ իրենց պաշտօնն  
համարձակ կատարեն և հրովարտակ մ'ալ զրկե-  
լով՝ քրիստոնէութեան կատարեալ ազատութիւն  
և ընդհանուր ներողութիւն տուաւ :

Հ. Յաղկերտին սոյն վարման նպատակն Բնչ էր:

Պ. Յազկերտին դիտաւորութիւնն այն էր որ  
շողոմարար միջոցներով Հայերը քնացնէ, որպէս  
զի յետ այնորիկ կարող լինի իւր նպատակն հեշ-  
տութեամբ յառաջ տանիլ. սակայն երբ տեսաւ  
թէ Հայերը խարէական խոստումներով և շնոր-  
հումներով խարուող ազգ մը չեն, այն ատեն վեր-  
ջին միջոցին դիմեց, և Միհրներսէի հրամանա-  
տարութեամբ բազում զօրք զրկեց: Պարսից զօրքը  
Փայտակարան բանակեցաւ, Միհրներսէ վասակն  
իրեն կանչելով ամեն բան անոր յանձնեց. Վա-  
սակ իրեն կողմնակից նախարարներն իրենց զօր-  
քով իր կողմը ժողուեց, որոց դվասւորներն էին  
Տիրոց Բագրատունի, Արտակ Ռշտունի, Գաղիշոյ  
Խորխոռունի, Գիտ Վահեւունի, Մանէճ Ապա-  
հունի, Արտէն Գաբեղեան, Ներսէ Ուրծացի,  
Ընջիւղ Ակէացի, Վարազշապուհ Պալունի և ու-  
րիշ իշխաններ. ասկէ զատ ամեն կողմ նամակ  
գրելով ջանաց ստութեամբ խափել թէ թագա-  
ւորը կրօնի կատարեալ ազատութիւն շնորհած է  
և քանի մը չար ու անպիտան քահանայից ձեռ-  
քով ժողովուրդն ալ այսպէս խարեց. Հոնաց  
սահմանը բազում Պարսիկ զօրք զրկել տուաւ,  
Վարդանայ զօրութեանը վրայ ճիշդ տեղեկու-  
թիւն հաղորդեց Միհրներսէին, որ ամեն բան  
իմանալով զօրքը Մուշկան Նիւսալաւուրտի յանձ-  
նեց ու Հայոց վրայ զրկեց:

Հ. Վարդան Բնչ ըրաւ:

Պ. Վարդան Մամիկոնեան Հայոց արիասիրտ  
սպարապետն առանց երբէք լքանելու, իր հետ

միաբանած նախարարներն ու զօրքերը՝ որք 60,  
000ի չափ էին, Արտաշատ քաղաքը ժողուեց,  
բանակը կազմաւորեց և Արտազու դաշտին վրայ  
բանակեցուց. հոն եկան Ս. Յովհէփ կաթողիկոսն  
ու Գեւոնդ քահանան և ուրիշ բազում եկեղե-  
ցականք ամեն կարգէ ու աստիճանէ: Վարդան  
ամեն բան կարգաւորելէ, զանոնք քաջալերելէ  
ու առատ ռոճիկ բաժնելէ յետոյ՝ երբ տեղեկա-  
ցաւ թէ Պարսիկը Հեր ու Զարեւանդ դաւառ-  
ներն հասեր և անոնցմէ մէկ քանի գունդեր աս-  
դիս անդին կ'ասպատակեն, Առանձար Ամասունի  
Սեպուհը նոցա վրայ զրկեց, որ շատ վնաս պատ-  
ճառեց. սակայն Պարսիկը Միջին Հայաստան յա-  
ռաջ կը խաղային դէպ ՚ի Արտազ դաւառը. Հայք  
Վարդանայ առաջնորդութեամբ կտրեցին նոցա  
առաջը և Աւարայրի դաշտը, Ցղմուտ գետի միւս  
ափը բռնեցին: Պարսից զօրավարն ու Վասակ  
դեսպանական բանակցութեանց մուան. բայց Հա-  
յերն ամենեւին ականջ չդրին:

~~~~~

### ԳԼՈՒԽ Դ.

(Վարդանանց պատերազմը)  
Քրիստոնէ 451 տարի յեաց

Հ. Քրիստոնէութիւնն այսպէս հալածանաց մէջ  
եղած միջոցին Յոյնք Բնչ կ'ընէին:

Պ. Քրիստոնէութիւնն արեւելից մէջ այսպէս  
դառն հալածանաց ենթակայ եղած միջոցին կրօ-  
նամն Յոյներն անդին Քաղկեդոնի մէջ Աստուա-  
ծային բնութեան վրայ քննութիւններով կը պա-

ըապէին և բնաւ հոգերնին չէր ըլլար այս ամեն եղածներուն վրայ, և դուցէ դո՞հ կը լինէին Հայոց գլխուն պատահածներուն, առանց ինկատ առնու թէ արեւելից այս դէպքերն օր մ'անշուշտ իր հետեւութեամբը պիտի ծանրանար և իրենց վրայ :

Հայք օդնութիւնն Աստուծմէ և իրենցմէ սպասելով՝ արիաբար մարտնչեցան և իրենց անկախ եկեղեցին ու էռութիւնն իրենց արեամբը պահպանեցին :

Հ. Հայք Բնէ հոգեւոր պատրաստութիւն տեսան :

Պ. Ա. Ղեւոնդ Ա. Յովսէփին հրամանաւ առջի իրիկունը զօրաց հոգելից ճառ մը խօսեցաւ և երկրորդ առաւտուն Ա. պատարագ մատուցուելով՝ զօրքն հաղորդուեցաւ և լոյսը ճեղքուածին պէս երկու կողմէն պատերազմն սկսաւ : Հայոց զօրքն անցաւ Տղմուտ գետը, Պարսից զօրքը նեղն ընկաւ . բայց նոյն միջոցին Հայոց դունդ մը ճակատէն գուրս ելաւ, Հայք շիոթեցան թէեւ, սակայն Վարդանայ խրախուսանօքը սիրտ առած առիւծի նման պատերազմեցան և քաջութեան հրաշքներ գործեցին :

Հ. Այս պատերազմիս մէջ որո՞նք նշանաւոր հանդիսացան :

Պ. Վարդան՝ Հայոց եկեղեցւոյ ու հայրենեաց քաջարի պաշտպանը, Խորէն, Արտակ, Տաճատ, Հմայեակ Դիմաքսեան, Վահան Գնունի, Ներսէս, Արսէն Ընձայեաց և Գարեգին Սրուանձտեան, որք Պարսից դէմ արիաբար պատերազմելով ու մեծ

Փաս պատճառելով՝ ինկան և իրենք պատերազմի դաշտին վրայ՝ 1036 զինուորներով և նուիրելով իրենց վարդագոյն արիւնն ազդի ու եկեղեցւոյ ազատութեան համար :

Հ. Պարսից կորուստը ո՞րչափ Եղաւ :

Պ. 3544 դիմուոր և 9 մեծամեծ իշխաններ :



## ԳԼՈՒԽ Ե.

(Ատրորմիզդ մարզպան . — Ա. Ղեւոնդինանց նահատակութիւնը  
եւ Վասակայ սատակումը)

Քրիստոնէ 454 տարի ետքը :

Հ. Վարդանայ մահուրնէն յետոյ Բնէ անցք անցաւ :

Պ. Հայերն ըստ որում արձակ դաշտերու վրայ Պարսից դէմ ենելլ վտանգաւոր կը համարէին, ուստի եկեղեցական Հայք և ուխտապահ նախարարներն ամուր բերդերու մէջ ապաստանած՝ ազատ լեռներու վրայէն մեծ չարիք կը հացընէին Պարսից, այնպէս որ պարսկական բանակը խիստ մեծ կորուստ կրեց . և թէպէտ անօրէնն վասակ բազում գիւղեր ու քաղաքներ կործանեց, շատ անմեղներու արիւնը մտաւ, ՚ի վերայ այսր ամենայնի չկրցաւ Հայոց հաստատամութեանն յաղթել, որովհետեւ ուխտապահ նախարարներն ու եկեղեցականք միասիրտ և միակամ նորա բոլոր հնարքներն ՚ի դերեւ կը հանէին :

Վասակ և Մուշկան նիւսալաւուրտ տեսնելով որ բռնութեամբ իրենց նպատակին հասնիլն ան-

կարելի է, դարձեալ խորամանկութիւն ձեռք աւ ուն, կրօնի աղատութիւն հրատարակեցին, բայց իրենց այս խոստումներուն հաւատացող չկար բնաւ, և ահա քաջարի Հայերը մէկ կողմէ կորդուաց լեռ ներէն ընկան Պարսից վրայ և պատուական ջարդ տուին. Պարխարի կողմէն ալ Հմայեակի առաջնորդութեամբ Հայաստանի մէջ եղող Պարսիկները սրախողիսող ըրին և Արցախի լեռներէն Վասակայ Երկիրներուն վրայ յարձակեցան և անտից վարդանայ ժամանակի դաշինքն յիշեցուցին Հոնաց, որք մեծ վնաս պատճառեցին Պարսից :

Հ. Յաղկերտ Բ'նչ ըրաւ :

Պ. Խորին տարակուսանաց մէջ ընկաւ, և տեսնելով որ ամբողջ ազգի մը խղճմտանացը դէմ մաքառիլլ կատարեալ անխոհեմութիւն է, Մուշկանին հրաման դրկեց, որպէս զի պատերազմական դործողութիւնները դադրեցնէ, և ջանայ Հոնաց առաջքն առնուլ. Վասակայ տեղ ալ Ատրորմիզդ Պարսիկ մը մարզպան դրաւ և յանձնարարեց որ ժողովուրդն ՚ի խաղաղութեան պահէ, և զիրենք իրենց կրօնին մէջ ազատ թողու, մինչեւ իսկ բռնութեամբ ուրացեալներն իրենց վաղեմի կրօնին դարձնելով։ Եկաւ Ատրորմիզդ, կատարեց Յաղկերտի հրամանները, խաղաղեցուց զՀայաստան և Ս. Ղեւոնդ իր ընկերներովը կաշնաւորեալ դրկեց Պարսկաստան՝ իբր պատճառ ամենայն շարեաց ցոյց տալով։

Հ. Նախարարներն Բ'նչ ըրին :

Պ. Յաղկերտի բողոքեցին և իրենց անձին վր-

նաս մը չվնելու համար երդ մամր խոստում առ նըլով՝ Պարսկաստան գային, որպէս զի Վասակայ անօրէնութիւններն հաստատեն. Վասակ անոնցմէ յառաջ փութացաւ և ամեն բան ըստ կամաց նկարագրեց։ Միհրներսէհի նախագահութեամբ ատեան կազմեցաւ, ուր Հայ նախարարք Վասակայ վրայօք ունեցած ամբաստանութիւննին հաստատեցին. Վասակ յանցապարտ վճռուեցաւ, ինկաւ պատիւներէն և մահապարտից բանտը դրուեցաւ, ուր և 452 ին որդնալից սատակեցաւ Ազդի և Հայրենեաց մատնին ու դաւաճանը, և որով արդարութիւնն իր տեղը գտաւ, և անօրէնն Վասակ մինչև իսկ գերեզման չունեցաւ։

Հ. Նախարարներն Բ'նչ եղան :

Պ. Նախարարներն՝ որ թուով 37 ի չափ էին՝ ըստ մեծի մասին Արծրունեանք, Մամիկոնեանք, Ամատունիք, Գնունիք և ուրիշ համբաւաւոր նախարարներ, Վրկանայ Նիւշապուհ քաղաքը Պըրկուեցան ու հոն բանտարկուեցան դառն տանձանօք, ինչպէս որ անդ բանտարկուած էին նաև Յովսէփ կաթողիկոսը, Ղեւոնդ երեցը, Ս. Սահակ՝ Ռշտունեաց եպիսկոպոսն, Ս. Մուշէ, Ս. Արսէն և ուրիշ քահանայիներ ու Քաջաջ սարկաւագք, որք նոյնպէս շղթայակապ էին։

Հ. Ողուանք և Քուշանք այս միջոցիս ինչո՞ւ յարձակեցան Պարսից վրայ :

Պ. Ասոնք լսելով Հայաստանի և Պարսկաստանի միջև անցած անցքերը, յարձակեցան Պարսկաստանի վրայ. Յաղկերտ շուարեցաւ, բայց անօրէն

մոդերն ըսին իրեն որ այս եղածներուն պատճառը քրիստոնեայներն են, ուստի և պէտք է որ զանոնք սպաննես . Յաղկերտ անսալով նոցախորհը դոցը, նահատակել տուաւ Ա. Ղեւոնդեանքը և նախարարներն ալ բանտին մէջ սաստիկ նեղել տուաւ, որք Աւետարանի երկնային լուսով վառուած, ամեն տանջանք առ ոչինչ կը համարէին . իսկ նոցա կանայքն Հայաստանի մէջ իրենցմէ վարչէին մնար ճգնութեան մասին, որք զրկուած լինելով եկեղեցիներէ, իրենց անձը եկեղեցի էին ըրած և բնաւ չէին դադրէր փառաբանութիւն մատուցանելէ և իրենց դիւցազնական օրինակաւն իրենց աղդայինները քաջալերելէ :

Հ. Նախարարներն ի՞նչպէս ազատեցան :

Պ. Յաղկերտ այնքան անօգուտ փորձերէ յետոյ հաղիւ հազ մեղմացաւ և նորմապուհ անուն պարսկին միջնորդութեամբը նախարարները բանտէն արձակելով՝ պատւով պահեց և մուգիր էր զանոնք իրենց հայրենիքը դարձնել, բայց մահը վրայ հասաւ և իր որդին Պերող զանազան պատճառներով զանոնք վեց տարի եւս 'ի Պարսկաստան պահելէ յետոյ՝ պատւով իրենց հայրենիքը զրկեց 461 ին :

Հ. Նախարարք ի՞նչ վիճակի մէջ դտան դշայստան :

Պ. Յարեպաշտ նախարարներն իրենց ցանկալի հայրենիքը գալով՝ բոլորովին փոխուած ու ամենախեղճ վիճակի մը մէջ դտին զայն : Ամեն կողմ կուապաշտութիւնն ուրացեալ իշխաններուն և

Պարսից մեծամեծներուն ձեռքով տարածուած և քրիստոնէութիւնը դրեթէ ինկած էր :

Իսկ ժողովուրդն և ուրացեալ նախարարներն իրենց վաղեմի քաջութենէն թուլցած ու մեղկացած՝ և միայն աշխարհային զրօսանաց դիետ եղած էին, այնպէս որ Պարսիկք սկսած էին նախատել զչայերն, և վատ ու անպիտան ազդ անուանել :

Այս ամենն առաքինի նախարարաց սրտին մեծ ցաւ ու անհնարին վիշտ պատճառելով՝ ըսկըսան միաբան ու միասիրտ աշխատիլ և ջանալ որ քրիստոնէութիւնը նորէն պայծառացնեն և մեղկացած ազդին կենդանութեան նոր ոգի, եռանդ ու աշխոյժ ազդեն :

## ԳԼՈՒԽ Զ.

(Պարսից խորամանկ բաղարականութիւնը .— Վահան Մամիկոն. եան եւ իւր զործքերը)  
Քրիստոնէ 484—85 տարի ետքը :

Հ. Պերող ի՞նչ հնարագիտութիւն բանեցուց :

Պ. Տեսնելով և երկարատեւ փորձերով վերահսառու լինելով որ Հայերը բռնութեամբ խոտորեցնելն անհնար է, և նկատելով որ Հայոց կրօնական հոգեխնութեամն առջեւ խորտակեցան Պարսից զօրութիւնն ու մեքենայութիւնները և թէ հալածանքն ամենեւին անօգուտ է, ուստի փոխեց Փերող իր քաղաքականութիւնը, և Հայստանի կրօնական ազատութիւնն տալէ ու նայապաշտութիւնն ուրացեալ իշխաններուն և

խարարներն իրենց Հայրենիքը զրկելէն յետոյ՝  
ոռճիկ կապեց և բարձր աստիճանի ու իշխանութեան հասուց այն մարդիկներն , որ իրենց փառասիրութիւնն յադեցնելու համար հակամէտէն իրենց կրօնը փոխելու : Այսպիսեաւ փառքն ու մեծութիւնը շացուց շատերն ու սկսան աւելի թուլանալ ու մեղկանալ :

Գիւտ կաթողիկոսը՝ որ Յովսէփայ յաջորդածէր , դարձուց իր ուշադրութիւնն այս բաներուս վրայ , ընդդիմացաւ սոյն վատ յեղափոխութեան , իրատեց , յորդորեց ու յանդիմանեց թուլցեալ նախարարներն և կեռար ու կը բոցավառէր Հայրենեաց վրայ , զի ակներեւ կը տեսնէր Պարսիկ արքունեաց դաւն ու խորամանկ քաղաքականութիւնը , և կը ջանար ուխտապահ նախարարաց հետ դարման մատուցանել :

### Հ. Պերող Բնչ հնարք բանեցուց :

Պ. Իրազեկ լինելով Գիւտի արարմանցն ու ընթացիցը , Պարսկաստան կոչեց . երանելին Գիւտ ամեն վտանգ Հայրենեաց ու հաւատոյ սիրոյն համար յանձն առած՝ գնաց Պարսկաստան , յայտնեց եղած անիրաւութիւնները , բայց հոն արդիուեցաւ , զրկուելով քահանայապետական աթոռէն : Պարսից արքունիքն այսպիսի միջոցներով կը զրկէր զՀայաստան իր անձնուէր հովիւներէն , որպէս զի գիւրաւ կարենայ համնիլ իւրնպատակին , ինչպէս որ քիչ շատ իր ներդորձութիւնն սկսած էր ընել . վասն զի թէեւ սատակեցաւ Վասակ , բայց Պարսից այս խորամանկ քա-

շաքականութիւնը բազում Վասակներ կը յարուցանէր , որք Պարսից հաճոյացած և Հայաստան աշխարհի կառավարութիւնն իրենց ձեռքն առած՝ կը ջանային Մամիկոնեան և ուրիշ հայրենասէր և ուխտապահ նախարարաց ազդեցութիւնն ու իշխանութիւնը բեկանել և զրկել զիրենք իրենց պատիւներէն :

Հ. Նախախնամութիւնն ովկ յարոյց պաշտպան Ազգի , Հայրենեաց ու Եկեղեցւոյ :

Պ. Վահան Մամիկոնեան՝ Ա. Վարդանայ Հմայեակ եղբօրը որդին , որ իր մօրմէն դաստիարակուած և ճշմարիտ հայրենասիրութեան դասն անկէ առած , և սրտի ու մտաց ընտիր յատկութիւններով օժտեալ մէկն էր :

Վարդանանց օրերը պիտի նորոգուէին . ներքին և արտաքին ազդեցութիւններ մեծ դեր կը խաղային , Եկեղեցին ու Հայրենիքն ի վտանգի էր , մէկ խօսքով՝ Վարդան մը պէտք էր , և այն ալ Վահան Մամիկոնեանն էր :

Հ. Ուրացեալ Հայերն Բնչպէս վարուեցան :

Պ. Ասոնցմէ մէկ քանին զայն իրեւ ապստամբ զրպարտեցին Պերողի առջեւ . Վահան անձամբ Պարսկաստան գնաց , ներկայացաւ արքայից արքային և իր հպատակութիւնն ու հաւատարմութիւնը ցոյց տալու համար առերես կրօնափոխութիւն յանձն առաւ . դարձաւ ի Հայաստան , զզլաց իր ակամայ ուրացութեանը վրայ և սկսաւ միջոցներ մոռածել Հայրենիքն ու Եկեղեցին սպառնացող վտանգէն աղատելու : Շատ Հայեր Եկան

միաբանեցան կրեն հետ : Վրաստան այս միջոցիս  
վարդանայ օրինակին կը հետեւէր : Պերող Հեթ-  
թաղաց դէմ պատերազմ բացաւ և Հայոց զօ-  
րութիւնն Ատրվնասապ մարզպանի առաջնորդու-  
թեամբ Աղուանից կողմը պահպանելու զրկուեցաւ :

Հ. Պատերազմին արդիւնքն ի՞նչ եղաւ :

Պ. Պատերազմն անյաջող արդիւնք ունեցաւ  
Պարսից . Հայերն օդուտ քաղել ուղեցին և եկան  
Շիրակ գաւառը բանակեցան . Վրաստան դեռ  
խռովութեան մէջ էր . Վահան ուխտապահ նա-  
խարարներուն հետ խորհուրդ ըրաւ , և Վրայ  
Վախթանկ թագաւորին հետ միաբանեցան . Յովլ-  
հան Մանդակունին՝ որ կաթողիկոս ընտրուած էր,  
մկաւ եկեղեցւոյ զարդացման ձեռք զարնել և  
նոր աղօթքներով ու շարականներով ճոխացուց  
Ս. Եկեղեցւոյ պաշտամունքը : Ամենայն ինչ կա-  
տարեալ էր . Սահակ Բագրատունի , Վահան Մա-  
միկոնեան , Վասակ Մամիկոնեան , Բարկէն Սիւ-  
նի , Ատոմ և Ռոստոմ Գնունի , Գարջոյլ Խորխո-  
ռունի , Ներսես և Հրատ կամսարական և ուրիշ  
բարեպաշտ նախարարներ յարձակեցան իրենց զօ-  
րօքը Պարսից վրայ և ահա Ատրվնասապ մարզ-  
պանն և ուրացեալ նախարարներն Ատրպատական  
փախչելով հազիւ ուրեմն աղատեցան :

Հ. Հայք ի՞նչ ըրին յետոյ :

Պ. Ուրախութեամբ Դուին մտան 481ին և Սա-  
հակ Բագրատունին մարզպան և Վահան Մամի-  
կոնեանն սպարապետ դրին :

Ատրվնասապ և ուրացեալ նախարարներն ա-

ռանց ժամանակ կորսնցնելու վերստին մտան  
ի Հայաստան , և որովհետեւ Մարզպանն ու Սպա-  
րապետը բարեկարդական ինդիներով զբաղած  
էին , միւսուխտապահ նախարարներն իրենց զօրքը  
Ակոռի գիւղն համախմբելով՝ յարձակեցան Պար-  
սից վրայ և փառաւորապէս յաղթեցին . սոյն  
պատերազմիս մէջ մեռան Ատրվնասապ և մէկ քանի  
ուրացեալ իշխաններ :

Հ. Պարսիկք սոյն պարտութեան վրայ ի՞նչ ըրին:

Պ. Գարնան սկիզբն Ատրներսեհի առաջնոր-  
դութեամբ Հայաստան արշաւեցին . Վահանայ  
զօրքը քիչ էր . Վախթանկէն օդնութիւն կսպա-  
սէր ըստ իր խոստմանը , բայց առ չօգնեց . նա-  
խարարաց շատերը քաշուեցան . ուստի Վահան  
իր քիչւոր զօրքերը խրախուսելով՝ և զինք Աս-  
տուծոյ յանձնելով հաղորդուեցաւ և Արտազու-  
ներսեհապատ դիւզին մօտ իր քիչւոր զօրքովն  
այնպէս լաւ պատերազմեցաւ , որ յաղթեց Պար-  
սից զօրութեանը :

Վահան ուրիշ մէկ քանի պատերազմներ ալ  
ըրաւ և ամենուն մէջ ալ յաղթող ելաւ միշտ իր  
քիչւոր զօրքերովը : Վրացիք շատ նենդաւոր ըն-  
թացք բռնեցին քանիցու , բայց չկրցին մեծ մնաս  
հասցնել , վրացիք , որ մեծ օգնութիւն և շնորհ  
վայելած էին Հայոցմէ , սակայն ապերախտը միշտ  
ապերախտ է և վատ ու գաւաճան . իսկ վեհանձ-  
նութիւնը միշտ յաղթող և յարդելի :

Հ. Վահան ի՞նչպէս հասաւ վերջապէս իր  
նպատակին :

Պ. Պերողէն յետոյ վաղարշ թագաւորեց . Շապուհ Միհրանեան, որ վահանայ քաջութեանն և անվեհերութեան փորձն անձամբ առած էր , պատմեց մի ըստ միոջէ : Վաղարշ Նիւխոր իշխանը դեսպանական պաշտօնով Հայաստան դրկեց վահանին . Երկուքը բանակցեցան և վահան հաշտութեան համար պայման առաջարկեց՝ առաջին՝ կրօնի կատարեալ ազատութիւն . Երկրորդ՝ չար ու անպիտան մարդոց պաշտօն և պատիւ չարուի , այլ միայն անոնց՝ որ Երկրին պայծառութեանն ու օգտին կ'աշխատին , և Երրորդ՝ թագաւորն եղած ամբաստանութեանց հաւատ չընծայէ , այլ ինք անձամբ քննէ Երկու կողմն և ըստ այնմ վճիռ արձակէ արդար դատաստանաւ :

Հ. Վահանայ առաջարկութիւններն ընդունուեցան :

Պ. Այս , և ապա վահան անձամբ Պարսկաստան գնաց վազարշին , որ մեծ պատով ընդունեց . կատարեց իր բոլոր ուղածներն և առաջարկած պայմաններն ընդունելով՝ հրովարտակով մը հաստատեց . ճանցաւ նորա սպարապետութիւնն Հայոց զօրացը վրայ և ուրիշ ուխտապահ նախարարաց ալ՝ որ վահանայ ընկերացած էին , մեծամեծ պատիւներ ու պարգեւներ ընծայեց և արտաքոյ կարգի պատիւներով իրենց տեղը դարձուց , որք եկան ՚ի Հայաստան և վաղարշապատու Մայր Եկեղեցին չորհակալութեան մեծ հանդէս կատարեցին :

Հ. Վաղարշ ով մարզպան դրաւ Հայաստանի :

Պ. Անդեկան անուն Պարսիկ մը որ խաղաղութեամբ կառավարեց զՀայաստան և վահանայ վրայ մեծ սէր կապեց՝ տեսնելով նորա իմաստութիւնն ու համճարը և յաջողակութիւնը , և երբ ինք կարեւոր գործի մը համար Պարսկաստան կանչուեցաւ , վահանայ գործքերը վաղարշին պատմելով՝ ըստ , Հայաստանն աղէկ ծաղկեցնելու և ՚ի խաղաղութեան պահելու համար վահանը պէտք է մարզպան դնել :

Հ. Վաղարշ ընդունեցաւ Անդեկանի սոյն խորհուրդը :

Պ. Այս , և անմիջապէս հրովարտակ զիկելով՝ մարզպանութիւնը վահանին յանձնեց 485 ին :

Հ. Վահան ի՞նչ ըրաւ :

Պ. Վահան սոյն հրովարտակն ստանալուն պէս ուխտապահ նախարարներուն հետ եկեղեցի գնաց . ժողովրդեան բազմութիւնն ամեն կողմէ հոն խոռնեցաւ , ուր չորհակալութեան մեծ հանդէս կատարեցին և անդ Ս. Յովհան կաթողիկոսը գեղեցիկ ատենաբանութիւն մ'ըրաւ , ըսելով՝ « Օրհնեալ Տէր Աստուած Խորայէլի , որ ետ ինձ տեսանել զորդիս եկեղեցւոյ»՝ որ ինձ հաւատացաւ՝ պատով և շքեղութեամբ պայծառացեալ ՚ի Քրիստոսէ : Փախեաւ Աղոնիտ , որ առանց Աստուծոյ կարծէր թագաւորել , օդնականացն ըղգեցեալ զամօթ՝ սլացեալք՝ ընդ սեղանովն թագչին : Այլ ձեռն տուք գթալով , չէ աստ ՚ի քարեղէն սալս գրեալ անթողութիւնք օրինայն : Քըրիստոսէ աստ՝ որ ասէ , ոչ եկի կոչել զարդարս , այլ զմեղաւորս յապաշխարութիւն » :

## ԳԼՈՒԽ Ե.

(Վահանայ միւս գործերը. — Մահն ու իր յաջորդները մինչեւ  
Վ. զոն ձի՞ր)

Քրիստոնէ 510—578 տարի եռքը :

Հ. Վահան ուրիշ ի՞նչ նշանաւոր գործեր ու-  
նեցաւ :

Պ. Հայաստան 8 տարիի չափ խաղաղութիւն  
և հանգստութիւն վայելելէ յետոյ՝ Պարսից կա-  
ւատ թագաւորը՝ որ արիւնարբու Պերողի որդին  
էր, մոդերուն գրդուելովը վերստին հալածանք  
հանեց և 493ին մոդերը զօրաց հետ վերստին  
Հայաստան գալով կրակատուններ շինեցին. Վա-  
հան յարձակեցաւ, ջարդեց զօրքերն ու մոդերը  
և կործանեց կրակատունները. կաւատ սաստիկ  
բարկացած՝ ուղեց անձամբ երթալ, բայց Յունաց  
արշաւանացը պատճառաւ ստիպուեցաւ Հայոց  
հետ խաղաղութիւն ընել և այսպէս Հայոց միջո-  
ցաւ Պարսիկներն Յունաց Ռուփինոս զօրավարին  
յաղթեցին.

Հ. Վահան ո՞րչափ ատեն պաշտօն վարեց :

Պ. Վահան 25 տարի զՀայաստան կառավարելէ  
ետեւ մեռաւ 510 թուականին :

Հ. Վահանայ ո՞վ յաջորդեց :

Պ. Վահանայ յաջորդեց իր Վարդ եղբայրը,  
որոց իշխանութեանը երրորդ տարին կաւատ մարզ-  
պանութենէ ձգեց զայն և նորա տեղը Բուրդան  
անուն Պարսիկը դրաւ : Ասոր օրովն Հոնք Հայա-

տան արշաւեցին և մինչև Սասուն գաւառն հա-  
սան, ուր Մժէժ գնունի քաջ իշխանն իր զօրքովն  
անոնց դէմ ելաւ և լաւ ջարդ մը տալով փա-  
խուց զանոնք : Կաւատ Մժէժին քաջութեանն  
համար Հայաստանի վրայ մարզպան դրաւ զայն,  
որ 30 տարի խաղաղութեամբ կառավարեց զՀա-  
յաստան :

Հ. Մժէժին ո՞վ յաջորդեց :

Պ. Մժէժին մահուընէն յետոյ Պարսից Խոսրով  
թագաւորը դենշապուհ անուն պարսիկը մարզ-  
պան դրաւ, որ շատ նեղեց զՀայերը : Մովսէս թ.  
որ այս ատեններս նոր կաթողիկոս եղած էր, Հա-  
յոց Տոմարը նորոգելու նպատակաւ գիտուն ու ե-  
րեւելի անձինքներէ ժողով մը գումարեց ՚ի Դը-  
ւին, ուր Հայոց Տոմարը կարգաւորեց և Հայոց  
թուական մ'ալ հաստատեց, որ Քրիստոսի 551  
թուականէն կ'սկի : Ասկէ յետոյ դենշապուհին  
հալածանացը պատճառաւ Խոսրով թագաւորին  
աղաչանաց թուղթ գրելով՝ վահանայ օրով վա-  
ղարշին հրովարտակն յիշեցուց : Խոսրով ասոր  
վրայ դենշապուհը փոխելով վշնասպ վահրամ իշ-  
խանը դրկեց, որոյ հետզհետէ յաջորդեցին Վա-  
րազդատ և Սուրէն պարսիկ իշխանները :

Հ. Սուրէն ի՞նչ ըրաւ :

Պ. Սուրէն շատ դէշ վարուեցաւ Հայոց հետ,  
կրօնի պատճառաւ հալածանք հանեց, մեծա-  
մեծները նեղեց և վարդի թոռը՝ Մանուէլ Մա-  
միկոնեանն սպաննեց : Վարդան՝ Մանուէլի եղ-  
բայրն՝ որ Սուրէնի ըրածներէն սաստիկ դառնա-

յած էր, իր եղբօրն սպաննուելուն վրայ աւելի եւս զայրանալով՝ Յունաց Յուստինոս կայսեր դեսպան զրկելով և Պարսից տուած հարկերնին այլ եւս Յունաց տալ խոստանալով՝ օգնութիւն խընդրեց: Վարդան իրեն տրուած ապահովիչ խոստումներուն վստահացած և նախարարներն ալ իրեն յանկուցած՝ ապստամբութեան գլուխ բարձրացուց, ժողուեց զօրքն Արտաշատու դաշտը և ընկաւ Սուրէնի վրայ, սպաննեց զայն, չնջեց Հայաստանի մէջ Պարսից զօրութիւնն ու բոլոր իշխաններն ու մոգերն ալ սրէ անցուց:

Հ. Պարսիկք Բնչ ըրին:

Պ. Խոսրով այս եղածը լսելով սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել Յունաց և Հայոց դէմ ելնելու. Իշխաններն համոզեցին որ խնդիրը խաղաղութեամբ վերջացնէ. Խոսրով Յունաց հետ ըանակցութեան մտաւ, և երբ բանակցութիւնն անյաջող գնաց, Խոսրով անհամար զօրօք Հայատանի վրայ եկաւ:

Հ. Վարդան Բնչ ըրաւ:

Պ. Վարդան Յունաց Յուստինոս կայսեր խոստման գործադրութիւնը իմնդրեց. Բայց կայսրը՝ որոյ միակ զբաղմունքներն էին զբօսանքներ և շռայլ կենցաղավարութիւն, որովք հիւսիսային մասն ալ իր ձեռքէն կորմնցուցեր էր, դարտավիան ալ իր ձեռքէն կորմնցուցեր էր, դարձեալ անփոյթ կեցաւ, չկատարեց իր խոստումը և Վարդան առանց երբէք յուսահատելու, կարգաւորեց իր բանակը, յարձակեցաւ Պարսից բագաւորեց իր բանակը, յարձակեցաւ Պարսից բագաւորեց իր բանակը, և երկար պատերազմէ մը յետոյնակին վրայ, և երկար պատերազմէ մը յետոյ

յիր ու ցան ըրաւ: Խոսրով այն պարտութեան վրայ աւելի մեծկակ բանակ մը զրկեց Վահրամ զօրավարին հրամատարութեանը ներքեւ. Հայ նախարարաց մէջ երկպառակութիւն ծագելով՝ Վարդան դիմադրելու անկարող եղաւ, ուստի և իր ընտանիքն առած կ. Պոլիս գնաց: Հ. Վարդանայ կ. Պոլիս երթալուն արդիւնքն Բնչ եղաւ:

Պ. Յուստինոս կայսրը Մարկիանոս զօրավարին հրամատարութեանը ներքեւ բանակ մը զրկեց Հայոց օգնութեան համար, որուն ընկերացաւ նաև Վարդան. Բայց վերջապէս Խոսրով յաղթող ելնելով՝ տիրեց Հայաստանի և Հայոց սիրաը շահելու համար սկսաւ քաղցրութեամբ վարուիլ ամենուն հետ, ընդհանուր ներողութիւն հրատարակեց, իւրաքանչիւրին ստացուածքն իրեն դարձուց ու Վղոն ձիհր անուն պարսիկ իշխանը մարդպան դրաւ:



## ԳԼՈՒԽ Ը.

( Սմբատ Բագրատունի եւ Դավիթ Սահառունի )

Քիւստոսէ 592 տարի ետքը :

Հ. Վղոն ձիհրի օրով Բնչ եղաւ Հայաստանի վիճակը:

Պ. Խոսրովին մեռնելէն յետոյ՝ Որմիզդ Յունաց դէմ պատերազմի ենելով՝ Հայաստանի վիճակը դարձեալ վատթարացաւ, որ բաւական ատեն տեւեց. Բայց Մօրիկ հայազգի քաջ իշխանն

Յունաց կայսր ընտրուելով՝ պատերազմներուն վերջ տուաւ ու խաղաղութիւն հաստատեց : Այս միջոցիս Խոսրով Բ. առաջին Խոսրովին թոռը՝ որ Որմղի տեղ թագաւոր դրուած էր, իր իշխանները վռնտեցին զինքը . Խոսրով Մօրիկ կայսեր դիմեց : Կայսրը Ներսէս Հայ իշխանն Յունաց բանակաւ անոր օգնութեան զրկեց, և Մուշեղ Մամիկոնեան և Սմբատ Բագրատունի Հայոց սպարապետն ալ միացան իրենց զօրօքը և մեծ քաջութեամբ պատերազմելով Խոսրովի թշնամեացը դէմ, յաղթեցին և զիոսրով վերստին իր աթոռը նստուցին :

Հ. Խոսրով Բ. Երեք Հայ իշխաններուն չնորհիւ վերստին իր աթոռը Ենելէն յետոյ թնչ ըրաւ :

Պ. Այս Երեք Հայ իշխաններուն շատ պարգեւներ ու մեծամեծ պատիւներ տուաւ, մանաւանդ Սմբատ Բագրատունիին, որոյ արտաքոյ կարդի քաջութեանն համար Պարսից սպարապետ ըրաւ զինքը և Երբ իր միւս թշնամիներն ալ նուաճեց, Հայաստանի և Վրկանից կողմերուն մարզպան դրաւ 592 թուին, և Հայոց վրայ մասնաւոր սէր կապեց : Սմբատ մարզպանութեան պաշտօնն ստանալուն պէս իր Երկիրներուն այցելութեան ելաւ և Վրկանից դաւառն Երթալով՝ տեսաւ որ հոն գերի տարուած շատ Հայեր կան, որք իրենց ազգային լեզուն մոռցեր էին, Հայաստանէն վարժապետներ բերել տուաւ, անոնց Հայերէն սորվեցուց և Հարէլ անուն եկեղեցական մանոնց վրայ եպիսկոպոս դրաւ :

Հ. Սմբատ ո՞րքան ատեն իշխանութիւն վարեց : Պ. Խոսրով Հեփթաղներուն և ուրիշ թշնամեացը դէմ պատերազմի ենելով, Սմբատն ընդհանուր սպարապետ դրաւ, որ քաջութեամբ ամենուն ալ յաղթեց . Հեփթաղաց թագաւորին հետ երկու անդամ մենամարտեցաւ ու սպաննեց զայն : Սոյն մեծամեծ յաղթութիւններէն ետեւ դեռ Հայաստան չգարձած՝ Տիգրանի մէջ հիւանդանալով մեռաւ, որուն իշխանութիւնը 8 տարի տեւեց :

Հ. Սմբատին տեղ ո՞վ դրուեցաւ մարզպան :

Պ. Սմբատին տեղ Դաւիթ Սահառունի Հայ իշխանը մարզպան դրուեցաւ Քրիստոսի 600 թուին :

Հ. Ասոր օրով ի՞նչ պատահեցաւ :

Պ. Մօրիկ կայսրն այս միջոցիս իր զօրքերէն սպաննուեցաւ . Խոսրով Բ. իր բարերարին սպաննուելուն վրայ վշտացած՝ ուզեց վրէժ լուծել . ուստի 140,000 զօրքով Յունաստան արշաւեց և Հայաստանէն անցնելու միջոցին հրաման զրկեց Մուշեղին որ ինք ալ Յունաց դէմ Երթայ : Մուշեղ Պարսից դէմ սաստիկ ատելութիւն ունենալուն համար Հնազանդեցաւ և սկսաւ իր գաւառն (Տարօն) ամրացնել : Խոսրով շատ բարկացաւ, և Յունաստանէն դարձած ատեն Կարին դալով իր Միհրան քեռորդին 30,000 զօրքով Մուշեղին վրայ զրկեց : Միհրան բանակն Արձան բլուրին վրայ դրած 8000 զօրքով Մեղոնի և Աստեղօն բերդին վրայ քալեց . Մուշեղ ալ Գայլ-Վահան իշխանն անոր դէմ զրկեց, որ զանազան հնարքներով ու

ճարտարութեամբ ջարդեց նորա զօրքը և զինքն  
ալ սպաննեց :

Հ. Խոսրով վերստին զօրք զրկեց :

Պ. Խոսրով վերստին 30,000 զօրք անգամ մը ,  
20,000 անգամ մը և 50,000 զօրք ալ անգամ մը  
զրկեց , բայց ասոնց ամենքն յաղթուեցան Մա-  
միկնէիցմէ և մինչեւ Արաբացւոց ՚ի Հայաստան  
արշաւելը դադրեցան Պարսիկք Տարօնոյ վրայ  
զօրք զրկելէ :

### ԳԼՈՒԽ թ.

(Վարազտիրոց մարզպան, Դաւիթ, Վարազտիրոց, Հա-  
մազասպ եւ Գրիգոր կիւրապաղատները )

Գրիստոնէ 622—695 տարի ետքը :

Հ. Դաւիթ Սահառունիի օրով Բնէ մեծամեծ  
դէպքեր տեղի ունեցան :

Պ. Պարսից և Յունաց միջև եղած այն մեծ ու  
ահագին պատերազմը տեղի ունեցաւ՝ որ եղաւ  
Խոսրով Բ. ի ու Հերակլէսի օրով , և ՚ի սկզբան  
յաղթութիւնը Պարսից կողմը գտնուած էր մինչեւ  
622 և Եդիպտոսը , Երուսաղէմը , Ասորւոց Երկիրը  
և Փոքր-Ասիան Խոսրով Բ. ի ձեռքն անցեր և Ս.  
Խաչը գերի էր գացեր . բայց 622 ին Յոյնք Մի-  
ջերկրականէն ու Սեւ ծովին ահագին զօրութեամբ  
յարձակելով՝ Պարսիկները մինչեւ բուն Պարսկաս-  
տան հալածեցին , Ս. Խաչն ազատեցին գերութենէ ,  
Խոսրով իր կաւատ որդիին սպաննուեցաւ և նո-  
րա տեղն անցաւ կաւատ . Պարսից և Յունաց

սահմանները որոշուեցան և Հայաստանի մէկ մեծ  
մասը դարձեալ Պարսից ձեռքն ընկաւ և Դաւիթ  
Սահառունիի մարզպանութեան 23րդ . տարին  
Սմբատ մարզպանին որդին Վարազտիրոց բագ-  
րատունին մարզպան գրուեցաւ :

Հ. Վարազտիրոց որչափ ատեն իշխանութիւն  
վարեց :

Պ. Վարազտիրոց իր մարզպանութեանն ութե-  
րորդ տարին իմանալով որ Ատրպատականի Ռոս-  
տոմ իշխանը՝ որ Պարսից արքունեաց խռովու-  
թենէն օգուտ քաղած Մարաստանն ու Հայա-  
տանը գրաւելու ու զինք սպաննելու ետեւէ է ,  
ընտանիքն առած Յունաց Երկիրը փախաւ , որուն  
տեղ Հերակլ կայսրը յիշեալ Դաւիթ Սահառու-  
նին կիւրապաղատ դրսւ 633 ին , բայց հազիւ թէ  
Երեք տարի անցած էր , իշխաններն ու զօրքն  
իրեն դէմ ենելով՝ վանտեցին զինքը և իրենք  
սկսան իրարու հետ հակառակութիւն ընել և  
զՀայաստան խռովել : Այս միջոցիս միայն թէու-  
դորոս Ռշտունի բարեպաշտ ու քաջ իշխանն իր  
զօրքովը խռովութիւնը դադրեցնելու և Հայաս-  
տանի վրայ օտար թշնամեաց յարձակումը վանե-  
լու կ'աշխատէր :

Հ. Այս միջոցիս Բնէ նոր դէպք պատահեցաւ :

Պ. Այս միջոցիս Արաբացիք իսլամութեան օգ-  
ուով վառուած՝ դուրս ելան Արաբիոյ թերակըզ-  
զիէն , գրաւեցին Պաղեստինն ու Ասորիքը և Պար-  
սից արքունեաց ներքին խռովութենէն օգուտ  
քաղելով՝ Պարսից ընդարձակ տէրութիւնն ալ

նուաճեցին և Օմարի ժամանակ (Քրիստոսի 640 թուին) Ապտրահման իշխանն 18000 զօրօք Ասորեստանի կողմէն Հայաստան մտաւ : Հերակլէս այս միջոցիս մահուան անկողինն էր և Հայ նախարարներն ալ անփոյթ էին : Տիրան Մամիկոնեան՝ Գայլ վահանի թոռան որդին հրաւիրեց Հայ նախարարներն, որպէս զի միաբանութեամբ վանեն հասարակաց թշնամին, բայց չընդունեցան նորա հայրենասիրական հրաւէրը : Տիրան իր սակաւաթիւ զօրօքն Արաբացւոց առջեւ ելաւ հարաւային կողմէն, բայց Գրգուռ լերան մօտ մեռաւ :

### Հ. Ապտրահման ի՞նչ ըրաւ :

Պ. Արձակ համարձակ մտաւ Հայաստան, մինչեւ մարզպանական դուին քաղաքը քալեց և 35,000 հոգի գերի վարեց. բայց այս արշաւանքը փայլակի նման բան մ'եղաւ . Հայաստան վերստին Յունաց ձեռք անցաւ և կոստանդ կայսրը 640 ին վարազտիրոցը կիւրազապատ դրաւ և յետոյ 642 ին նորա որդին Սմբատը դրուեցաւ : Այս միջոցներուս Եղիշ կաթողիկոսը վախճանած ըլլալով՝ նախարարք Տայոց եպիսկոպոսը՝ Ներսէս Գ. կաթողիկոս դրին, որ ամենայն ճգամբ ազգին թըշուառութեանը դարման տարաւ . իր ինդրանօքը թէոդորոս Բագրատունին սպարապետ կարգեց Յունաց կայսրն և այսպէս երկիրը քիչ մը հանդէցաւ :

Հ. Այս հանդստութիւնը կրցած երկար ատեն տեւել :

Պ. Ոչ. վասն զի Արաբացիք աւելի եւս զօրանալով՝ վերստին Հայաստան մտան, շատ մը գաւառներու տիրեցին ու շատ մարդիկ ջարդեցին, նախարարք տեսնելով որ ահագին թշնամնոյն դիմագրելն անկարելի է և Յունաց կողմանէ ալ օգնութեան յոյս չկայ, Արաբացւոց ամիրապետին դիմելով հպատակութիւն խոստացան . կոստանդին կայսրն այս բանս լսելով սաստիկ զայրացած միտքը դրաւ որ Հայերը բնաջինը ընէ . բայց Ներսէս կաթողիկոսին աղաչանօքն հաշտութով՝ իր զօրքէն պահապան դրաւ և ինք մեկնեցաւ :

### Հ. Արաբացիք ի՞նչ ըրին :

Պ. Վերստին Հայաստանի վրայ յարձակեցան, Յունաց զօրքը վանեցին, երկիրը նուաճեցին և իշխաններուն կիներն ու որդիքը պատանդ առած և վրանին ալ խիստ ծանր տուրք դրած ետ դարձան : Նախարարք արոց ծանրութենէն սաստիկ նեղուելով՝ դարձեալ կայսեր դիմեցին ու անոր հպատակեցան . կայսրը Ս. Ներսէսի ինդրանօքը Համազասպ Մամիկոնեանը կիւրազապատ դրաւ, Արաբացւոց ամիրապետն այս բանիս վրայ բարկացած բոլոր պատանդներն սպաննել տուաւ և մինչ ինք ալ կը պատրաստուէր Հայաստանի վրայ արշաւելու, զօրացը մէջ խոռվութիւն իյնալով՝ սպաննեցին զիսքը և երկար ատեն իրարու հետ կռուեցան, մինչև Մատի կամ Մաւիէ զօրապետը խոռվութիւնը դադրեցնելով՝ ինք եղաւ ամիրապետ, որուն կամաւ հնազանդեցան Հայերն Յու-

նացմէ՝ մանաւանդ նոցա կրօնամոլութենէն զըզ-  
ուած ըլլալով և Ա. Ներսէսի խնդրանօքը Համա-  
զասպէն յետոյ՝ նորա եղբայրը Գրիգոր Մամիկոն-  
եան վերակացու գրուեցաւ :

Հ. Գրիգոր Բ'նչպէս կառավարեց :

Պ. Գրիգոր Մամիկոնեան երկիրը միշտ խաղաղ  
ու հանդ իստ պահելու ջանաց և շատ օգտակար  
շնութիւններ ու բարեկարգութիւններ ըրաւ .  
Խաղրաց զօրքը բազմութեամբ Հայաստանի վրայ  
արշաւեցին . Գրիգոր իր զօրքովն անոնց դէմ ե-  
լաւ , յաղթեց , բայց ինք ալ վիրաւորուելով մե-  
ռաւ . ասկէ ետքը քանի մը տարի Հայաստան  
դարձեալ խոռվութեան մէջ ընկաւ : Աշոտ բագդ-  
րատունի թիւրատեան իշխանն սկսաւ երկրին քիչ  
մը խնամ տանիլ . Սոյն խառնակութեան միջոցին  
Յօնները մեծ բազմութեամբ Հայաստանի վրայ  
յարձակեցան , բազում չարիք գործեցին և Ա-  
րաբացիք ալ հարաւային կողմէ Հայաստան մըտ-  
նելով՝ նոյնպէս մեծամեծ չարիքներ գործեցին և  
Աշոտ իշխանն ալ սպաննեցին :

Հ. Ի՞նչ եղաւ սոյն յարձակմանց վախճանը :

Պ. Յուստիանոս կայսրն ասոր վրայ անձամբ իր  
բանակին գլուխն անցած եկաւ Հայաստան , թըշ-  
նամիներն ամեն կողմէ վանեց , երկիրն իր իշխա-  
նութեանը ներքե նուածեց , նախարարաց և իշ-  
խանաց որդիները պատանդ առաւ , որպէս զի  
իրմէ չափատամբին , Ներսէ կամարականը պատ-  
րիկ դրաւ և իր զօրքէն 30,000 հոգի պահապան  
թողարկ կ. Պօլիս դարձաւ : Բայց տարիէ մը յե-

տոյ Յունաց զօրքը քաշուեցան ու ալ Հայաստան  
չդարձան . Արաբացիք եկան վերստին , երկիրը  
նուածեցին և Արաբացի իշխաններով սկսան կա-  
ռավարել զՀայաստան :

~~~~~

## ԳԼՈՒԽ Ժ.

(Արդարացին ստիկանութենէն մինչեւ Եղիտ թ.)

Քրիստոսէ 694—786 տարի յետոյ

Հ. Արաբացիք զով զրկեցին ստիկան :

Պ. Արդարացի անուն անգութ ու անագորուն  
մէկը զօրքով զրկեցին ՚ի Հայաստան ստիկանի  
պաշտօնով , որ շատ չարիք գործեց , Սահակ կա-  
թողիկոսն ու Հայ իշխանները շղթայակապ Դա-  
մակոս զրկեց , եկեղեցեաց զարդերը կողոպտեց  
և ազգը սաստիկ նեղեց . բայց Դամակոս զրկուած  
Հայ իշխաններուն մէջէն Սմբատ թիւրատեան բագդ-  
րատունի իշխանը փախաւ Հայաստան եկաւ , և  
ազգին իսեղծութիւնները տեսնելով՝ Յուստիանիա-  
նոս կայսրմէ օգնութիւն ինգրեց Արաբացիներն  
Հայաստանէն վանելու համար : Կայսրը Լեռն իշ-  
խանը մեծ բանակով յօգնութիւն զրկեց , որուն  
միացնետով Սմբատ իր ժողուած զօրքերը , ջար-  
դեցին Արաբացի զօրքերը :

Հ. Ամիրապետն Բ'նչ ըրաւ :

Պ. Լեռն կայսր լինելով՝ կ. Պօլիս գացած էր .  
ամիրապետը Մոհմատ զօրապետը զրկեց , որպէս  
զի Հայերը նուածէ , այն ինչ վանանդ դաւառն

հազիւ հասած էր , Ներսեհ կամսարականը դէմ ենելով՝ նորա զօրացը սաստիկ ջարդ մը տուաւ : Մոհմատ վերստին զօրք ժողուած կատաղաբար Հայաստան մոտաւ . բայց Ս. Սահակ<sup>(1)</sup> կաթողիկոսի աղաչանաց թղթոյն վրայ՝ խնդիրը խաղաղութեամբ վերջացուց և Հայք Արաբացւոց հպատակեցան :

Հ. Արդղայէն յետոյ ովկ գրուեցաւ ոստիկան : Պ. կոշմ զօրապետը , որ Հայ իշխաններն ու զօրքերը խարէութեամբ նախիջեւան ժողուեց , ու զէնքերնին ձեռքերնէն առնլով՝ ամենն ալ եկեղեցւոյն մէջ խոթեց ու այրեց . ասկէ յետոյ արաբացի զօրքն ամեն տեղ ասպատակեցին . Դրւն քաղաքն առին , բնակիչներէն շատերը ջարդեցին և շատ ալ գերի դամասկոս դրկեցին :

Հ. կոշմին ովկ յաջորդեց :

Պ. Նորա սատիկանութեան 13րդ. տարին Վիլթ սատիկանն յաջորդեց , որուն ժամանակի Յովհան իմաստամէր կաթողիկոս եղաւ : Ո.յս եռանդուս հայրապետը իր քաղցր վարմունքով Վիլթին և նոյն իսկ ամիրապետին սիրելի ըլլալով՝ անոնցմէ շատ պատիւ գտաւ և իր կաթողիկոսութեանը

(1) Ս. Սահակ կաթողիկոսը , որ միշտ Հայաստանի անդորրութեանը վրայ կը մտածէր , հնարքով մը բանտէն աղատեցաւ և Մոհմատի բարկութիւնը շեղուցանելու համար ընդ առաջ զնացած միջոցին Խառան չհասած մեռաւ , աղաչանաց թուղթն ի ձեռին ունենալով :

ժամանակ Հայաստանը հանդիսաւ պահեց : Վիլթին ոստիկանութեան տամներորդ տարին Մոհմատ անուն անպիտան ու խոռվարար իշխանը ուստիկան դրկուեցաւ , որ 4 տարի աղդը չարչարելէն յետոյ ամիրապետէն կանչուեցաւ և տեղն Արդղայիդ անուն մէկը դրուեցաւ :

Հ. Արդղայիդի ովկ յաջորդեց :

Պ. Մըուան իշխանն , որուն օրով Հայաստան շատ հանդսութիւն վայելեց . Մըուան Աշոտ Բագրատունին իրեն օգնական առաւ և զանիկա իշխանաց իշխան անուանեց , և երբ Արաբացւոց մէջ խոռվութիւն ծագելով ամիրապետն սպաննուեցաւ և ինք Հայոցմէ և ուրիշ աղդերէ զօրք առած՝ խոռվութիւնը դադրեցնելու գնաց , Հայաստանի կառավարութիւնը բոլորովին Աշոտին յանձնեց , բայց քանի մը տարիէն յետոյ Մըուան , որ ամիրապետ նատած էր , մեռաւ , և իրեն յաջորդը Եղիտ անուն իշխանը ոստիկան դրկեց :

Հ. Եղիտ ինչ ըրաւ :

Պ. Եղիտ խիստ ծանր տուրքերով ու զանազան նեղութիւններով շատ տառապեցուց . Նախարարք սաստիկ ցաւելով՝ ուզեցին ապստամբիւլ . Աշոտ Բագրատունին նկատելով՝ որ ապստամբութեամբ աւելի դէշ պիտի ըլլայ , յորդորեց որ ետ կենան . Գաւիթ և Գրիգոր Մամիկոննեան իշխաններն որ արդէն թշնամութիւն ունէին , բռնեցին զանիկա և աչուցներն հանեցին . բայց ետքն իրենք ալ տեսնելով որ ապստամբութեամբ բան մը չեն կըրնար ընել , ետ կեցան իրենց խորհրդէն :

Հ. Եղիտ ո՞րքան ատեն մնաց :

Պ. Երկու տարի , և յետոյ Պալտաստ կանչուելով՝ Սմբատ Բագրատունին Հայոց պատրիկ դըռաւ . բայց Սմբատայ իշխանութեան վեցերորդ տարին Սիւլէյման իշխանը ոստիկան դրուեցաւ : Ասոր ալ յաջորդեց Պէքիր անուն իշխանը , որ Հայոց շատ նեղութիւն տուաւ և այս պատճառաւ շատ կողմեր ոտք ենելով՝ Արարացւոց զօրքը ջարդեցին : Պէքիր Միջագետաց Մուսի իշխանէն զօրք բերել տալով ապստամբները դարձեալ նուածեց , Սմբատ ալ բռնուելով՝ սպան նուեցաւ :

Հ. Պէքիրին ո՞վ յաջորդեց :

Պ. Պէքիրին յաջորդեց Հասան ոստիկանն , որ Հայաստանի խեղճութիւնը վերջին աստիճանի հասուց , հարուստներուն ինչքերն յափշտակեց և ամեն կողմ ասպատակ զրկելով՝ քաղաքներն ու գիւղերը թալիեց : Մուշեղ Մամիկոնեան իր զօրքովն ասոնց գէմ ելաւ և անոնց մեծ մասը ջարդեց ու ցրուեց . ուրիշ նախարարներ ալ սիրտ առած եկան իրեն հետ միացան և Արաբացիներէն ապստամբեցան . բայց Արաբացիք վրանին 30,000 հոգի զրկելով՝ 3000 հոգի ջարդեցին և Մուշեղն ալ սպաննեցին և դարձեալ սկսան ապատակել . միայն Աշոտ Մսակեր Բագրատունի իշխանն իր Շապուհ եղբօրը հետ կրցաւ մէկ քանի գաւառը անոնց յարձակումէն աղատ պահել . Նոյնպէս Սահակ , Մերուժան և Համազասպ իշխանները վասպուրականը կրցին պահպանել :

Հ. Հայերն իսպառ նուածելու համար ո՞վ դըրկուեցաւ :

Պ. Հարոն Արաբացւոց ամիրապետ ըլլալով շատ զօրքով Եղիտ անուն ոստիկանն Հայաստան զրկեց , որ եկաւ ամեն կողմը նուածեց և ստիպեց որ Սահակ , Համազասպ և Մերուժան իշխաններն իրենց հաւատքը ուրանան : Սահակ և Համազասպ յանձն չառնով նահատակեցան . իսկ Մերուժան հաւատքն ուրանալով՝ տեղը դառնալու ատեն՝ Դաւիթ Մամիկոնեան վրայ հասնելով՝ զարկաւ սպան նեց :

### ԳԼՈՒԽ ԺԱ.

(Խուզիմա , Հող , Ապուսէթ )

Գրեստառէ 792—849 տարի ետքը :

Հ. Եղիտին ո՞վ յաջորդեց :

Պ. Եղիտին իշխանութեան եօթերորդ տարին յաջորդեց Խուզիմա իշխանն , որ 10 տարի կառավարելէն յետոյ մեռաւ , և իրեն յաջորդեց Հոլ :

Հ. Հոլի օրով ինչ պատահեցաւ :

Պ. Մեւադա անուն Պարսիկ իշխան մը , որ Բագրատունեաց նախարարութենէ կին առածէր , Սմբատ Բագրատունի իշխանն , Միւնեաց Սահակ իշխանն և ուրիշ նախարարներ իրեն հետ միաբանելով՝ Հոլին գէմ ելաւ , որպէս զի զանիկա վլնտէ և ինք Հայաստանի իշխան ըլլայ : Հոլ չուզեց որ պատերազմի , ուստի ըստաւ , եթէ չէք ուզեր ինձ հնաղանդիլ , թողէք որ ես եր-

թամ, բայց Սեւադա մտիկ չըրաւ : Հոլ 20000 քաջ զօրքով յանկարծ վրանին յարձակեցաւ, շատերը ջարդեց, որոց մէջ էր նաեւ Սահակ Սիւնին ալ, իսկ Սեւադա և Սմբատ փախչելով հազիւ աղատեցան : Հոլ Հայ իշխաններուն նկատմամբ Դաւիթ կաթողիկոսին գանդատեցաւ և նորա միջնորդութեամբը Սմբատին հետ հաշտուելով՝ 15 տարի խաղաղութեամբ կառավարեց և ամիրապետէն կանչուելով՝ Բագարատ Բագրատունին Հայոց պատրիկ դրուեցաւ :

Հ. Բագարատ ո՞րչափ ատեն իշխանութիւն վարեց :

Պ. Ասոր իշխանութեամբ չորրորդ տարին Բարան անունով Պարսիկ մը ուղելով Պարսից վրայ թագաւոր ըլլալ և զանոնք ամիրապետին իշխանութենէն աղատել, զօրք ժողուեց ու ապստամբեցաւ և քանի մ'անդամ յաղթեց : Ետքն Հայաստան եկաւ և մեծ պատրաստութիւն տեսաւ, որպէս զի Հայերն ալ իրեն հնաղանդեցնելով՝ միաբան ամիրապետին դէմ դնէ : Ամիրապետն ալ ապստամբին դէմ ահագին բանակ մը զրկեց . Սմբատ ալ Արաբացւոց ընկերացաւ և յաղթեցին և զինքն ալ բոնեցին : Զօրապետը շատ դովեց Սմբատն ու նորա որդին Սահլը, երբոր ամիրապետին քով դնաց և Բագարատը սաստիկ վարզարկաւ : Ամիրապետն Ապուսէթ անուն իշխանն սատիկան դրաւ և շատ զօրքով Հայաստան զրկեց և հրաման ըրաւ որ Բագարատը բռնէ ու իրեն զրկէ :

Եկաւ Ապուսէթ և Տարօնի մէջ բռնելով զանիկա՝ 10 տարի պատրիկութիւն ընելէն յետոյ շըղթայակապ ամիրապետին զրկեց : Սաստնցիները (Տարօն գաւառին սահմանակից) այս բանիս վրայ սաստիկ բարկացած՝ և մէջերնին միաբանած՝ Ապուսէթին վրայ յարձակեցան ու սպաննեցին, և քովի զօրքն ալ ցիր ու ցան ըրին :

Հ. Ամիրապետն ի՞նչ ըրաւ :

Պ. Բուզա անուն անդութ ու անագորուն մէկը շատ զօրքով Հայաստան զրկեց, պատուէր տալով որ Ապուսէթին մահուան վրէմն առնու, Հայ իշխաններն իրեն զրկէ, ժողովրդեան երիտասարդ մասը մահմետականութեան դարձնէ և մնացածներն ալ սրէ անցնէ :

Բուզա իրեն տրուած հրամանն արտաքոյ կարգի մոլեռանդութեամբ կատարեց և աննկարագրելի չարիք գործեց . բռնած գերիներն ստիպեց որ հաւատքնին ուրանան, և երբ յանձն չառին, սաստիկ տանջանքներով նահատակեց :

Իշխանները շղթայակապ ամիրապետին զրկեց և Հայոց սպարապետը՝ Սմբատն ալ իրեն կանչեց, խոստանալով որ իր հաւատարմութեանն համար մեծ պատիւ ու պարգեւներ պիտի ընծայէ, և այսպէս հաւանեցաւ որ ամիրապետին երթայ . բայց երբոր իշխանները շղթայակապ ամիրապետին ներկայացան, հրամանեց որ զանոնք բանտ դնեն . Սմբատն ալ կապել տուաւ և միւմներուն հետ բանտարկեց, որպէս զի հաւատքնին ուրանան :

Ոմանք յանձն առին և աղատեցան , յանձն  
չառնողները նահատակեցան . Սմբատ ալ իր հա-  
ւատքին վրայ հաստատուն կենալով՝ բանտին մէջ  
մեռաւ , և ասոր համար խոստովանող կոչուեցաւ :

### ՎԱԽՈՒ Ա. ՀՈՏՈՐՈՅԾ

## ԴԱՐԲ ԵՒ ԾՐՋԱՆՔ

Հայոց Պատմութեան մէծ դարերը , նոցա շրջան-  
ներն ու իւրաքանչիւր դարու և շրջանի պարունա-  
կութիւնը :

### Ա. ԴԱՐ

Առաջին կամ հին դար կը կոչուի Հայոց տէրու-  
թեան սկզբնաւորութենէն մինչեւ Արշակունեաց հա-  
ստութեան անկումը , կամ աշխարհի 2200 թուա-  
կանէն մինչեւ Քրիստոսի 430 թիւը :

### Բ. ԴԱՐ

Միջին դար կը կոչուի Արշակունեաց հարստու-  
թեան վերջանալէն մինչեւ Ռուբինեանց հարստու-  
թեան անկումը , կամ Քրիստոսի 430 թուականէն  
մինչեւ 1400 թուականը :

### Գ. ԴԱՐ

Նոր դար կը կոչուի Ռուբինեանց հարստութեան  
անկումէն մինչեւ մեր օրերը , կամ Քրիստոսի 1400  
թուականէն մինչեւ մեր ժամանակը :



## ԱՌԱՋԻՆ ԿԱՄ ՀԻՆ ԴԱՅ

Հայք հեթանոս էին այս դարուս մէջ, յորում Հայոց տէրութիւնն հիմնեցաւ, զարդացաւ, զօրացաւ և պատերազմական մեծամեծ փառքէր ունեցաւ:

Այս դարը կը բաժնուի չորս լրջաններու :

ԱՌԱՋԻՆ լրջանին Հայաստան կառավարեցաւ բուն Հայկացանց հարստութեամբ . նահապետք աղզի աղզի մինութիւններով զարդարեցին զՀայաստան . հիմնեցան նահապետական փոքր տուներն՝ անցնիւրն իւր կալուածն ու Ռստանն ունենալով :

Դարձեալ՝ այս լրջանին մէջ է որ Հայոց թագաւորական իշխանութիւնն հաստատուած է :

Այս միջոցը տեւած է Հայկէն մինչեւ վահէի մահը, կամ աշխարհի 2200 թուականէն մինչեւ Քրիստոսէ 330 տարի յառաջ :

ԵՐԿՐՈՐԴ լրջանին Աղզը զրկուեցաւ իր օրինաւոր իշխանութենէն, կորոյս իւր անկախութիւնը, ընկաւ նախ Մակեդոնացւոց և ապա Սելեկիացւոց իշխանութեանը ներքեւ . բայց ազատութեան հոգին կենդանի լինելով Հայոց սրտին մէջ, յեղափոխեցան, և իրենց մէջէն տեղ թագաւորներ զրին : Այս միջոցը տեւած է վահէի մահուրնէն մինչեւ Արշակունեաց հարստութեան ծագումը :

ԵՐՐՈՐԴ լրջանին Արշակունեաց հարստութիւնն սկսած և նահապետական կարգն ու վարչութիւնը մեծ փոփոխութեան ենթակայ եղած է . նահապետութեան աւերակացը վրայ հաստատուած են նախարարական տուներն իրենց գոռողութեամբը :

Այս միջոցիս Հայոց զէնքը դողացուցած է լրջա-

կայ աղդերն, և Հայք պանծալի քաջութեամբ պատերազմած են Հռովմայեցւոց, Պարսից, Ակիւթացւոց և ուրիշ աղդաց հետ, և Հայաստանի տարածութիւնն ընդարձակուած և սա իր փառաց զէնիթն հասած է :

Այս միջոցը տեւած է նախ քան զԲրիստոս 150 և յետ քան զԲրիստոս 230 տարի :

ՉՈՐՐՈՐԴ լրջանին թոյլ ու կնատ Արշակունի թագաւորաց մոլութեամբն Հայաստանի փառքը նսեմացաւ . Սասանեան արքունիքը նոցա թշնամացած՝ ամեն հնարք կը հնարքէր կործանել Հայոց տէրութիւնը :

Վատողի նախարարը իրենց մոլութեամբն ու գոռողութեամբը կուրացած և այսպէս իրենց չար կիրքն յագեցնելու պատճառաւ Պարսից գործիք դարձած՝ դէմ ելած են Արշակունի թագաւորաց և ուղած են ընդարձակել իրենց իշխանութիւնն ու անգլուխ լինել, և հետեւաբար վախճան տուին Արշակունեաց հարստութեան :

Այս միջոցիս Քրիստոնէութիւնն ոկսած է աւելի տարածում, և այսպէս Աղզին մէջ նոր կետնը ու հոգի է ծնած :

Հայկական տառերու զիւտը եղած, գլութիւնը ծաղկած, աղգային լւուն իր բարձրութեանն հասուծ և վանքերն աղգային բառացիմութեան վառարաններն եղած ու աղգային նշանաւոր գրագէտներ ( Սահակ Պարթեւ, Մեսրոպ, Եղիշիկ եւայլն ) գուրս եկած են :

Այս լրջանը, որ Քրիստոսի 230 թուականէն մինչեւ 430 թուականը կը տեւէ, իր մէջ ունի մեր աղային գլութեան ոսկեգալը :



Միջին դարուն Հայք արդէն Քրիստոնեայ են, և  
այն ինչ ազգային իշխանութեան կապերը կը քակ-  
ուէին, քրիստոնէութիւնն օր քան զօր կ'աճէր և եւս  
քան զեւս խորարմատ հիմ կը բռնէր :

Աղքին բոլոր ջանքն եղած է իր ազգային անկախ-  
եկեղեցւոյն հետ իր ազգային էութիւնը պահպանել,  
և ահա այս պատճառուած հոգւով չափ պատերազմած  
է Պարսից, Յունաց, Արաբացւոց և այլոց դէմ:

Հայք վերջին ճիզն ՚ի գործ դրած են իրենց երկ-  
րին մէջ պահպանել իրենց եկեղեցին, ազգութիւնն  
և նորա հետ կապուած սովորութիւններն և ամրա-  
պինդ ու հաւատարիմ մնացած են իրենց այս անյեղ-  
մի սկզբանն առջև՝ ամենայնի տոկալով և արիաբար  
տանելով:

Հայոց մէջ գաղթականութիւնն այս դարուս վեր-  
ջերն սկսած է :

Միջին դարը նոյնական կը քաժնուի չորս շրջանի:  
ԱՌԱՋԻՆ Ճիշտին Պարսիկք Հայոց քաղաքական ան-  
կախութիւնը բառնալով՝ մտեն ջանք ու հնարք ՚ի  
գործ դրած են բառնալ նաև քրիստոնէութիւնը. կը-  
րակապաշտութիւնն ՚ի Հայաստան մտցնելով՝ ջանա-  
հնար եղած են ձուլել Հայերն իրենց մէջ, բայց սո-  
քա ընդդիմացած են աննկուն արիութեամբ :

Յոյներն ալ այս միջոցիս ջանացած են մեր աղ-  
պային եկեղեցին ու սովորութիւնները նորածեւու-  
թեանց փոխակերպել :

Այս շրջանը կը տեւէ Արշակունեաց անկումէն  
մինչև Արաբացւոց ՚ի Հայաստան արշաւելը, կամ  
Քրիստոսի 430 թուականէն մինչև 630 թուականը :

ԵՐԿՐՈՒԹ Ճիշտին Յոյներն աշխատած են բոլոր

Հայաստանը գրաւել, բայց նոցա կրօնամոլութիւնը  
միութեցւոցած է Արաբացւոց տիրապետութիւնն, որ  
նախարարական դասին մեծ հարուածներ առւած է :

Այս շրջանը կը տեւէ Արաբացւոց երեւալէն մին-  
չեւ Բաղրատունեաց հարստութեան ծագումը, կամ  
Քրիստոսի 630 թուականէն մինչև 860 թուականը:  
ԵՌՐՈՒԹ ՄՇԱՆԻՆ Հայերը վերսափին զօրացած ու  
ոգեւորուած՝ մի քանի թագաւորական հարստութիւն-  
ներ գուրս եկած են, որք են Բաղրատունեաց, Արծ-  
րունեաց, Կարուց, Սիւնեաց, Լուսու և այլն :

Հայաստան վերսափին ծաղկիլ ու զարգանալ սկսած  
է. վանքերը բաղմացեր են, դպրութիւնը կենդանա-  
ցեր, և վարժարանները բաղմացեր են. բայց այս  
միջոցիս ալ Սելջուքեան կամ Տուղթիւն թուրքերը  
երեւան ելեր են, և Յունական մոլեռանդութիւնն  
ու նենգութիւնը մէկ կողմէն և Սելջուքեան սուքը  
միւս կողմէն վերը տուեր են Բաղրատունեաց հա-  
րստութեան :

Այս շրջանը կը տեւէ Քրիստոսի 860 թուականէն  
մինչև 1050 թուականը :

ԶՈՐՈՌՈՒԹ Ճիշտին Հայերն այլ եւս ճարահատեալ  
ստիպուեր են թողուլ իրենց արեամբը պահպանած  
հայրենի աշխարհն և սկսեր են գաղթել. բայց և ա-  
զատութեան ողին, որ մարած չէր Հայոց սրտէն,  
մղեր է նոցա շատերը Տաւրոսի անառիկ լեռներն,  
ուր հիմեր են Ռուբինեանց հարստութիւնն և հե-  
տրզէնետ նուածեր են Կիլիկիան ու Փոքր Հայաստա-  
նի հարաւը: Մեծին Հայաստանի հարաւը անդորրա-  
ցեր է Վրաց Հայկազն զօրավարաց ձեռօք: Շատ տե-  
ղեր անկարգութիւնք անհետացեր են. վանքերը գիտ-  
նական միաբաններով զարդարուեր են, արեւելեան

վտանգեալ քրիստոնէութիւնը ողի առեր է . Յոյնք  
վերջին ճիզերնին թափեր են Հայաստանեայց անկախ  
ու անարատ եկեղեցին իրենց եկեղեցւոյն հետ միա-  
ցընելու :

Մօղոլք Հայոց դաշնակից եղեր են . յաղթութիւն-  
ներ կատարեր են Հայք, վտանգներ դռւրս են եկեր,  
խաչակրութիւն տեղի ունեցեր և Մեմլուքներն արե-  
ւելեան քրիստոնեայ թագաւորութեան թշնամի դար-  
ձեր են :

Հռովմայ Պապերն Հայոց օդնելու խոստման փո-  
խարէն կրօնափոխութեան պահանջում ըրած են .  
կրօնական փձուն վէճեր ՚ի վեր ելեր են, Մօղոլք  
մահմետական կրօնն ընդուներ են, Հռովմայ հետ  
յարաբերութեան պատճառաւ Ռուբինեանց հարրա-  
տութիւնը կործաներ են Մեմլուքներն անդադար  
յարծակումներով և բուռն հարուածներով :

Այս շրջանը կը տեւէ Քրիստոսի 1050 թուակա-  
նէն մինչեւ ց1400 :

## Ն Ո Ր Պ Ա Ր

Այս դարը՝ որ Ռուբինեանց հարստութեան կոր-  
ծանումէն մինչեւ մեր օրերը կը հասնի, մեր Ազգին  
համար թշուառութեան ամենէն դառն ժամանակն  
է : Ազգին դժբաղգութիւնն այս դարուս մէջ իր վեր-  
ջակէտն հասած է և ազգաւեր դադիւականութիւնն  
որ ամեն հարուածներէ աւելի խիստ մեծ վնասուց  
պատճառ եղած է, այս դարուս մէջ շատ աւելի տեղի  
ունեցած է :

Վերջին դէպքեր, ազգային շարժումներ և կեն-  
դանութեան ու վերածնութեան շանքեր :

10n

2361

2013

Ի ԳՐԱԾԱՆ ՅՈՂԱԵՓԱՅ ՎԱՀԱՅԵԱՆ.

(Արձ. մէջուր շն պէտքալ)

|                                        | ԴՐ. ՎՐ. |
|----------------------------------------|---------|
| Աղինաշան . Հագան և Ծնիերցարան          | — 20    |
| Աշխարհագրութիւն Գաղ. Բնա. Կարտզաշ. ան  | 5 20    |
| Աշխարհագր. Նուու. Բնա. Գաղ. Գարվազ.    | 8       |
| Աստվազիուսան Ակգրունը                  | 20      |
| Գորգիտութիւն առևնոն Ե. Մորանանը.       | 10      |
| Գեղագրութ. Ակուրնան Հայ Գ-դկ. Յն. Տն.  | 5       |
| Գեղագրամիւն Առարայի տիպ                | 10      |
| Երզարան Խոր կամ Քնար Հայաստանի         | 4       |
| Իններց. ան կամ Գաստիարակ. Կարազաշ      | 2       |
| Թուարան Գին ընդարձակ Տ հօգածիան        | 10      |
| Ժողովրդական Մատենադարան Ա. Բ. Գ. մաս   | 6       |
| Համբարք բարուածք ի նախնաց Գրզ.         | 10      |
| Հեղայան                                | — 20    |
| Սան ուսմունք Վրիտոնիւսիան Գ. Վարդ.     | 1 20    |
| Նոր Ըսթայթ գրաբան լուսի Ապորաւունի     | 2       |
| Պատմ. Հոյոց Ա. Խառոր Ա. Գափաւունան     | 5       |
| Պատմ. Սրբազն Ա. Գովազդուն              | 5       |
| Պարտը Տպոյց                            | 4       |
| Պատու Արբազն Ա. Գարազաշ.               | 5       |
| Սկզբունք Պատիարակութեան Ա. Խոր.        | 5       |
| Ըստգամ Ֆ. Ֆ. Ֆ.                        | 2 20    |
| Ժորիկ Խարուուզար կամ Կամսկանի          | 8       |
| Ժերականութիւն Գործնական Գարազաշ.       | 6       |
| Հ. բնագրանկան Հ. համառօս               | 6       |
| Հ. համառօս                             | 5       |
| Հ. ըստիւսան Ակգրունը                   | 2       |
| Հ. ըստիւսան ըստ Օլեյալորդի, Դադի.      | 20      |
| Իրէն բն Հայերէն Գարազաշ.               | 5       |
| Քերս սկը առ թիւն Եթշաննանի Հայերէն     | 7       |
| Ք. աղ. Հայ.                            | 7       |
| Լորդիրի . . .                          | 5       |
| Հայ բազմապատկեր կամ Ս լուսարու.        | 50      |
| Քերտ, ոտ կը ու ոլ յի իրենարան ին ու ոլ | 10      |